

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	1
ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ	3
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՄՐԱՊԵՆԴՈՒՄ	4
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ	8
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ	10
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ	16
ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ	24
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.1	24
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.2	28
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.3	32
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.4	38
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.5	44
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.6	47
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.7	53
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.8	58
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.9	62
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.10	68
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.13	72
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.14	77
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.15	83

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.16.....	88
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.17.....	92
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.18.....	96
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.19.....	106
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.20.....	110
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.21.....	117
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.23.....	125
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.25.....	129
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.1.....	134
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.2.....	138
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.4.....	143
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.6.....	151
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.7.....	154
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.8.....	159
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.10.....	164
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.11.....	167
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.12.....	171
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.13.....	175
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.14.....	178
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.17.....	182
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.18.....	189
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.19.....	192
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.20.....	196

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.1	203
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.2	207
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.3	211
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.4	216
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.5	220
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.6	224
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.7	228
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.8	230
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.9	233
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.10	236
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.11	240
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.12	244
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.13	249
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.14	252
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.1	256
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.2	260
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.3	263
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.4	268
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.5	272
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.7	279
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.8	283
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.9	288
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.10	294

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.11	297
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.13	300
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.14	303
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.15	308
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.1	314
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.2	317
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.3	320
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.4	323
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.5	326
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.6	330
ՀԱՎԵԼՎԱԾ 2	352

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մոնիթորինգի և գնահատման սույն տարեկան զեկույցով (այսուհետ՝ Ձեկույց) ներկայացված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1871-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության **հակակոռուպցիոն ռազմավարությամբ և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրով** (այսուհետ նաև՝ Հակակոռուպցիոն ռազմավարություն) 2024 թվականին կատարման ենթակա աշխատանքների իրականացման ընթացքը, ինչպես նաև իրականացված աշխատանքների մոնիթորինգի և գնահատման արդյունքները (այսուհետ նաև՝ գործոնային մոնիթորինգ): Ձեկույցում արտացոլված են նաև Հակակոռուպցիոն ռազմավարության **կատարող** մարմինների կողմից իրականացված աշխատանքները և դրանց բովանդակությունը (առաջընթացը), շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցությունը Հակակոռուպցիոն ռազմավարության **գործողությունների** իրականացմանը, հանրային քննարկումները և դրանց արդյունքները, ինչպես նաև **գործողության կատարմանը** խոչընդոտող կամ անհնարին դարձնող կամ **գործողության** կատարումը ձգձգող հանգամանքները (մարտահրավերները):

Գնահատման շրջանակներում համադրվել են յուրաքանչյուր **գործողության** շրջանակում իրականացված աշխատանքները և տվյալ **գործողության՝ 2024 թվականի համար սահմանված կատարողականի թիրախը** և **ստուգման միջոցը** (այսուհետ նաև՝ արդյունքային ցուցանիշներ)՝ կատարված աշխատանքների՝ Հակակոռուպցիոն ռազմավարությանը համապատասխանելու, հնարավոր շեղումները և դրանց պատճառները պարզելու, ձեռք բերված առաջընթացը և **գործողության** կատարման կարգավիճակը գնահատելու նպատակներով:

Հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսված աշխատանքների իրականացման (առաջընթացի) գնահատման արդյունքն արտահայտված է հետևյալ վարկանիշային ցուցանիշներից որևէ մեկով.

1) կատարված է ամբողջությամբ (դիտարկվող ժամանակահատվածի համար **գործողությամբ** նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են)՝ 1 միավոր.

2) կատարված է մեծ մասամբ (դիտարկվող ժամանակահատվածի համար **գործողությամբ** նախատեսված աշխատանքների կեսը կամ կեսից ավելին են կատարվել)՝ 0.75 միավոր.

3) կատարված է մասնակի (դիտարկվող ժամանակահատվածի համար **գործողությամբ** նախատեսված որոշ աշխատանքներ կատարվել են, սակայն դրանք չեն գերազանցում նախատեսված աշխատանքների կեսը)՝ 0.5 միավոր.

4) կատարված չէ (դիտարկվող ժամանակահատվածի համար **գործողությամբ** նախատեսված որևէ աշխատանք իրականացված չէ)՝ 0 միավոր:

Այն դեպքում, երբ արտաքին ազդեցության հանգամանքերի պատճառով դիտարկվող ժամանակահատվածի համար **գործողությամբ** նախատեսված աշխատանքների կատարման ընթացքը կասեցված է, վերստուգիչ ցուցանիշին կից կատարվում է «կատարման ընթացքը կասեցված է» գրառումը:

Գնահատումն իրականացվել է վարիացիոն շարքի համակշռված միջինի մեթոդով հետևյալ բանաձևով՝ (ամբողջությամբ կատարված **գործողությունների** քանակx1+մեծ մասամբ կատարված **գործողությունների** քանակx0.75+մասնակի կատարված **գործողությունների** քանակx0,5+չկատարված **գործողությունների** քանակx0)/69*100:

Զեկույցում ամփոփված են նաև միջանկյալ ժամանակահատվածում արդյունքային մոնիթորինգի արդյունքները (այսուհետ՝ Արդյունքային մոնիթորինգ): Արդյունքային մոնիթորինգի շրջանակներում, ըստ Հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված **ռազմավարական** նպատակների, ուսումնասիրվել և վերլուծվել են Հակակոռուպցիոն ռազմավարության ընդունումից (2023թ.) մինչև օրս իրականացված բարեփոխումների արդյունքում փաստացի գրանցված արդյունքները, վիճակագրական տվյալները, ոլորտային քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքները, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտի միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների գնահատման արդյունքները:

Զեկույցով ներկայացվում է նաև մոնիթորինգի և գնահատման պատասխանատու մարմնի՝ Արդարադատության նախարարության գնահատման և Հակակոռուպցիոն ռազմավարության կատարող մարմինների ինքնազնահատման արդյունքների համառոտ համեմատականը:

Եզրափակիչ մասում ամփոփված են մոնիթորինգի և գնահատման արդյունքները, բացահայտված խնդիրները, ինչպես նաև ներկայացված են բացահայտված խնդիրների և մարտահրավերների լուծման հնարավոր ուղիները:

Զեկույցի մշակման շրջանակներում հիմք են ընդունվել **գործողությունների ծրագրի կատարող** մարմինների կողմից Արդարադատության նախարարություն ներկայացված՝ Հակակոռուպցիոն ռազմավարությամբ 2024 թվականին կատարման ենթակա աշխատանքների իրականացման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունները (որոնց շրջանակներում կատարող մարմիններն իրականացրել են նաև ինքնազնահատում), իրականացված աշխատանքների վերաբերյալ համացանցում առկա, ինչպես նաև Արդարադատության նախարարության կողմից մոնիթորինգի շրջանակներում ձեռք բերված տեղեկատվությունը, նախկին տարվա և 2024 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությունները, կոռուպցիայի կանխարգելման և կառուպցիոն հանցագործությունների բացահայտման վերաբերյալ վիճակագրական տվյալները, ոլորտային քաղաքացիական հասարակության

կազմակերպությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը և վերջիններիս կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքները:

Զեկույցը մշակվել է Արդարադատության նախարարության կողմից:

ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Արդյունքային մոնիթորինգն իրականացվել է՝ հաշվի առնելով հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական ուղղությունները: Հակակոռուպցիոն քաղաքականությունն իրականացվում է հակակոռուպցիոն ռազմավարության դրա իրականացման 2023-2026թթ. **գործողությունների** ծրագրի (այսուհետ՝ Հակակոռուպցիոն ռազմավարություն)¹ հիման վրա, համաձայն որի՝ հակակոռուպցիոն քաղաքականության ուղղություններն են՝

- ✓ կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգերի ամրապնդում.
- ✓ կոռուպցիայի հակազդման իրավական և ինստիտուցիոնալ համակարգերի կատարելագործում.
- ✓ հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման կառուցակարգերի կատարելագործում.
- ✓ գործարար բարեվարքություն, գործարար իրավունքների պաշտպանություն և պետություն-քիզնես վարչարարության ղյուրացում.
- ✓ հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման համակարգի կատարելագործում:

Արդյունքային մոնիթորինգի շրջանակներում ուսումնասիրվել և վերլուծվել են Հակակոռուպցիոն ռազմավարության ընդունումից՝ 2023 թվականից ի վեր իրականացված հակակոռուպցիոն քաղաքականության ոլորտում իրականացված բարեփոխումների արդյունքները, վիճակագրական տվյալները, ոլորտային քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքները, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտի միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության գնահատման արդյունքները, որից պարզ է դարձել հետևյալը.

¹ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=184674>

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՄՐԱՂՆԴՈՒՄ

2019-2022 թթ. հակակոռուպցիոն քաղաքականությունն իրականացվել է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի շրջանակներում, որի արդյունքում ձևավորվել է հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ ԿԿՀ)՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մասնագիտացված ինքնավար մարմին՝ համապատասխան անկախության երաշխիքներով, Հակակոռուպցիոն կոմիտեն՝ որպես կոռուպցիոն հանցագործությունների գործերով մասնագիտացված և անկախության երաշխիքներ ունեցող քննչական մարմին, որն իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն, Գլխավոր դատախազության կազմում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդաստական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը, Գլխավոր դատախազության կազմում Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը, հակակոռուպցիոն դատարանները:

Հակակոռուպցիոն ռազմավարության 2023-2026թթ. դրա գործողությունների ծրագրի նպատակն է հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի շարունակական հզորացումը, կոռուպցիայի դեմ պարքարի գործիքակազմի շարունակական կատարելագործումը, արդիականացումը և համապատասխանեցումը միջազգային հակակոռուպցիոն ստանդարտներին: Այսպես, Ռազմավարությամբ կոռուպցիայի կանխարգելման կարևորագույն ուղղությունների շարքում դիտարկվում են կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ համակարգի բարելավումը, իրավական ակտերի և դրանց նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության երաշխավորումը, հանրային ոլորտում կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ամրապնդման կառուցակարգերի կատարելագործումը, բարեվարքության համակարգի շարունակական կատարելագործումը:

2019-2022 թվականներին ընդունված օրենսդրական փոփոխությունների արդյունքում էականորեն ընդլայնվել են ԿԿՀ-ի իրավասությունների շրջանակը և գործիքակազմը: Մասնավորապես, իրավասությունների ընդլայնման արդյունքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին են վերապահվել նաև օրենքով նախատեսված դեպքերում բարեվարքության ուսումնասիրության և բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության իրականացման գործառույթները: Նշվածի շրջանակներում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին օրենսդրական հիմքով հասանելիություն է տրվել պետական սվյալների շտեմարաններին, ինչպես նաև ֆինանսական, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններին, արժեթղթերի հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկություններին, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններին, վարկային տեղեկատվությանը:

Սահմանվել է դատավորների, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի, Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, դատախազների (այդ թվում՝ գլխավոր դատախազի և նրա տեղակալների) թեկնածուների, Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների, առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող դատավորների և դատախազների, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառնություններ իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրել հավակնող թեկնածուների բարեվարքության ուսումնասիրության պահանջ և ներդրվել են համապատասխան կառուցակարգեր:

Բարեվարքության համակարգի կատարելագործումը շարունակվել է նաև 2023-2026 թվականների Հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում: Նշված ռազմավարությունից բխող համապատասխան գործողությունների կատարման նպատակով մշակվել են «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերը, որոնք ընդունվել են ԱԺ կողմից 2024 թվականի ապրիլի 11-ին: Իրականացված օրենսդրական փոփոխություններով սահմանվել են բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության կառուցակարգեր դատավորների, դատախազների և քննիչների համար: Բացի այդ, սահմանվել են բարեվարքության ուսումնասիրության կառուցակարգեր՝ Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոնների թեկնածուների, ինչպես նաև Քննչական կոմիտեում և Հակակոռուպցիոն կոմիտեում առաջխաղացման ենթակա անձանց համար: Վերոգրյալի շրջանակում հստակեցվել են նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված բարեվարքության ուսումնասիրության առկա կառուցակարգերը: Արդյունքում ներդրվել է դատավորների բարեվարքության գնահատման հավասարակշռված կառուցակարգ, որը մի կողմից թույլ է տալիս արդյունավետ պայքար մղել դատական իշխանությունում կոռուպցիայի, հովանավորչության, անձնական կապերով առաջնորդվելով դատական ակտ կայացնելու դեմ, մյուս կողմից՝ հնարավորություն է ընձեռնում չխաթարել դատական համակարգի անկախությունը և կայունությունը:

Բարեվարքության ուսումնասիրության, այդ թվում՝ բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության կառուցակարգերի ամբողջականացման նպատակով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համապատասխան որոշումն ընդունվել է 2024 թվականի հուլիսի 19-ին: Բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության են ենթարկվել դատախազների և Քննչական կոմիտեի քննիչների՝ շուրջ 14 տոկոսը, ինչպես նաև ուսումնասիրվել է 37 գործող դատավորների բարեվարքություն:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի համաձայն՝ ԿԿՀ-ին վերապահվել է պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքն ընդունելու լիազորություն, ինչի շրջանակներում ընթացել

են վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ Կանոնագիրք) մշակման աշխատանքները, որը հանրային քննարկումների արդյունքում լրամշակվել և հաստատվել է արդեն 2024 թվականի փետրվարին:

Կանոնագրքով առաջարկվող նորմերն ավելի թիրախային են և ներառում են կոնկրետ պաշտոնների առանձնահատկություններից բխող մասնավորեցված կանոններ: Կանոնագիրքն առանցքային կարևորություն ունի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց կամայական վարքագծի բացառման, բարձր մակարդակի կոռուպցիայի զսպման և պետական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ հանրային վստահության ամրապնդման տեսանկյունից:

Կանոնագրքով սահմանվում են համապատասխան պաշտոնատար անձանց վարքագծի 55 պարտադիր կանոն, որոնց միջոցով մեկնաբանվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները և առանձին խրախուսելի կանոնները: Վարքագծի կանոնների խախտումը կարող է առաջացնել կարգապահական պատասխանատվություն: Կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները կիրառելի չեն քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ: Ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները կարող են կիրառվել օրենքով նախատեսված դեպքերում: Վարքագծի կանոնների խախտման վերաբերյալ եզրակացությունները ենթակա են հրապարակման ԿԿՀ-ի կայքէջում:

2024 թվականի ապրիլի 11-ին Ազգային Ժողովի կողմից ընդունվել են ««Պետական գույքի կառավարման մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ««Պետական արարողակարգի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծերը: 2024 թվականի օրենսդրական փոփոխություններից բխող՝ հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ստացած և պետության սեփականությունը հանդիսացող նվերների տնօրինման կառուցակարգերի կիրարկման համար անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերն ընդունվել են:

Մասնավորապես, Արդարադատության նախարարության կողմից մշակվել և Կառավարության կողմից 2024 թվականի հունիսի 20-ին ընդունվել են «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների՝ պետական սեփականություն դարձած նվերների տնօրինման կարգը, գույքի տնօրինման եղանակների ընտրության մեթոդաբանությունը, առանձին տեսակի գույքի տնօրինման առանձնահատկությունները, տնօրինման եղանակի վերաբերյալ «Պետական արարողակարգի մասին» օրենքով սահմանված եզրակացության տրամադրման կարգը, շուտ փչացող և պահպանման էական ծախսեր պահանջող գույքերի ցանկը, շուտ փչացող գույքի ոչնչացման դեպքերը, կարգը և տնօրինման եղանակները սահմանելու մասին» թիվ 956-Ն և «Հայաստանի

Հանրապետության կառավարություն 2021 թվականի ապրիլի 15-ի N 587-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության որոշումները, որոնցով ամբողջականացվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվերներ ընդունելու սահմանափակումների, օրենքով սահմանված դեպքերում պետության սեփականությունը դարձող նվերների հետագա ճակատագիրը որոշելու վերաբերյալ կարգավորումները, ապահովվել են համապատասխան օրենսդրական կարգավորումների՝ գործնականում ամբողջական և պատշաճ իրացման համար անհրաժեշտ կառուցակարգերը:

Մշակվել են ««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերը:

Ազգային Ժողովի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 5-ին ընդունվել են «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերը, որոնցով բարելավվել է կուսակցություններին կատարվող նվիրատվությունների, կուսակցությունների պետական ֆինանսավորման, կուսակցությունների կողմից ներկայացվող հաշվետվությունները:

Կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների արդյունավետության բարձրացման նպատակով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից Ընտրական համակարգերի միջազգային հաստատության աջակցությամբ մշակվել է ««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերը:

Նախատեսվել է, որ նախընտրական գործընթացում կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի փոխարեն իրականացվելու է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից: Հստակեցվել են նաև այս երկու մարմինների լիազորությունների շրջանակը՝ լուծելով գործնականում առկա խնդիրները:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի շրջանակներում ձևավորվել է Հակակոռուպցիոն կոմիտեն, որն իր լիազորությունների շրջանակներում

իրականացնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն: Միաժամանակ, Գլխավոր դատախազության կազմում ձևավորվել են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը, ինչպես նաև Գլխավոր դատախազության կազմում Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը, հակակոռուպցիոն դատարանները:

Նախորդ ռազմավարության միջոցառումները մեծ մասամբ նպատակաուղղված էին հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ձևավորմանը, մինչդեռ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությունն ուղղված է նշյալ մարմինների ինստիտուցիոնալ հզորացմանը, մասնավորապես՝ Հակակոռուպցիոն կոմիտեին վերապահված գործառույթների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Հակակոռուպցիոն կոմիտեի կարողությունների զարգացմանը, վերջինիս անկախության, գործունեության թափանցիկության և հաշվետվողականության երաշխիքների ամրապնդմանը:

Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորումից՝ 2021 թվականի հոկտեմբերի 23-ից ի վեր Հակակոռուպցիոն կոմիտեի թափուր հաստիքների համալրման նպատակով անցկացվել են բազմաթիվ մրցույթներ: 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հակակոռուպցիոն կոմիտեում օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող 120 պաշտոններից համալրված է 77-ը, ինքնավար 80 պաշտոններից՝ 71-ը:

2024 թվականի ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թափուր հաստիքներում նշանակվել են 26 թեկնածու՝ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող և 24 թեկնածու՝ ինքնավար պաշտոններում:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները, ինչպես նաև համալրված հաստիքներում նշանակված պաշտոնատար անձինք մասնագիտական կարողությունների զարգացման շրջանակներում անցել են մի շարք վերապատրաստումներ՝ միջազգային չափանիշներին և պահանջներին համապատասխան:

Այսպես, 2024 թվականին սահմանված կարգով պարտադիր վերապատրաստում են անցել Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող 19 անձ՝ Արդարադատության ակադեմիայում, իսկ օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման 35 ծառայողներ՝ ՆԳՆ կրթահամալիրում:

2024 թվականին կոռուպցիայի դեմ պայքարի թեմաներով մասնագիտական վերապատրաստումներ են անցել ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության 133 դատախազ:

➤ 2024 թվականի մայիսին 62 դատախազ մասնակցել է ՈՀՀ-ում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պետության կողմից ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ հիմնահարցերով վերտառությամբ դասընթացին:

➤ 2024 թվականի հոկտեմբերին 15 դատախազ մասնակցել է «Կոռուպցիոն հանցագործությունների քննության առանձնահատկությունները» և «Կոռուպցիոն հանցանքների որակման հիմնահարցերը» վերտառությամբ դասընթացներին:

➤ 2024 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին 15 դատախազ մասնակցել է «Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորություն, կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմը» վերտառությամբ դասընթացին:

➤ 2024 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին 41 դատախազ մասնակցել է ՈՀանրային ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործությունների որակման և քննության առանձնահատկությունները վերտառությամբ դասընթացին:

2024 թվականի ընթացքում հակակոռուպցիոն դատարանների դատավորների համար անցկացված վերապատրաստումների արդյունքում Արդարադատության ակադեմիայում վերապատրաստվել են Հակակոռուպցիոն դատարանի 15 դատավոր (100%), Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի 12 դատավոր (100%) և Վճռաբեկ դատարանի Հակակոռուպցիոն պալատի 10 դատավոր (100%):

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Ռազմավարության կարևոր ուղղություններից է հակակոռուպցիոն կրթությունը՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ միջոց: 2024 թվականի ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից նշյալ ուղղությամբ տարվել են մի շարք աշխատանքներ: Մասնավորապես, նախադպրոցական ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերում, «Հասարակագիտություն» առարկայի շրջանակներում ներդրվել է հակակոռուպցիոն բաղադրիչը, ԲՈՒՀ-երին են ներկայացվել կոռուպցիայի կանխարգելման

Թեմաներով մոդուլներ՝ ըստ անհրաժեշտության դրանք ուս. ծրագրերում ներդնելու նպատակով, «Հայկական կրթական միջավայր» պորտալում գործարկվել է հակակոռուպցիոն թեմատիկ գրականության աղբյուրների առանձին բաժին, իրականացվել է նշված ուսումնական հաստատությունների մանկավարժների և պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումներ: ԵՄ ԹՎԻՆԻՆԳ «Բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում Հայաստանի պետական ոլորտում» ծրագրի շրջանակներում, միջազգային և տեղական համանման փորձի հիման վրա մշակված «Կոռուպցիայի կանխարգելումը բուհական համակարգում» և «Վարքագծի կանոնները» թեմաներով բուհական մոդուլների նախագծերը ուսումնասիրվել, լրամշակվել և վերջիններիս կողմից, որպես պիլոտային ծրագիր ներդրվել են բոլոր կրթական ծրագրերի պարտադիր կամ կամրնտրական դասընթացների ցանկում:

Հանրային իրազեկումը հանդիսանում է 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության կարևորագույն ուղղություններից մեկը: Ռազմավարության հաշվառմամբ 2023թ. դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի շրջանակներում 2024-2026 թվականների հաղորդակցման հայեցակարգը և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Արդարադատության նախարարի N 819-Լ հրամանով հաստատվել է հաղորդակցման գործողությունների ծրագիրը, որի շրջանակներում ձևավորվել է հակակոռուպցիոն հաղորդակցության միջգերատեսչական աշխատանքային խումբը և հաստատվել հանդիպումների ժամանակացույցը: Հաղորդակցման ռազմավարության շրջանակներում ապահովվել է ակտիվ համագործակցություն քաղաքացիական հասարակության, փորձագիտական և ակադեմիական շրջանակի հետ, ապահովվել է գործարար ոլորտի ներգրավվածությունը, իրականացվել են մի շարք աշխատանքներ ուղղված հաղորդակցման ռազմավարության իրականացման ուղղությամբ

Հաղորդակցման գործողությունների ծրագրով հաստատվել է նաև վերջինիս մոնիթորինգի իրականացման կառուցակարգերը:

Վերոգրյալի շրջանակներում Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրվան ընդառաջ՝ Արդարադատության նախարարությունն ԱՄՆ ՄՁԳ-ի հետ համագործակցությամբ նախաձեռնել և իրականացրել է «Համախմբենք ուժերը, կանխենք կոռուպցիան» խորագիրը կրող մեկամսյա իրազեկման արշավ: Արշավի շրջանակներում իրականացվել են բազմաբնույթ իրազեկման գործողություններ, որոնք ապահովել են բարձր ներառականություն: Մեկամսյա իրազեկման արշավը մեկնարկել է «Երիտասարդներն ընդդեմ կոռուպցիայի» մարաթոնով, որին մասնակցում էին շուրջ 200 երիտասարդներ ՀՀ տարբեր մարզերից և Երևան քաղաքից: Կազմակերպվել են բուհերի ուսանողների այցեր հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող պետական մարմիններ:

Վերոգրյալ բոլոր նախաձեռնությունները վկայում են, որ հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման ուղղությամբ տարվող հետևողական աշխատանքները միտված են հանրությանը անմիջական մասնակից դարձնելուն կոռուպցիայի դեմ պայքարին:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Հակակոռուպցիոն ռազմավարության սույն նպատակի շրջանակներում առաջնային էր հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակի գործարկումը՝ զեկույցներ գեներացնելու, հակակոռուպցիոն քաղաքականության ոլորտին առնչվող տեղեկություններ ներբեռնելու, գնահատելու, առանձին վիճակագրական տվյալներ ներբեռնելու հնարավորություններով: Հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային կատարելագործված հարթակի գործարկումը նախատեսված է 2025 թվականին՝ Հակակոռուպցիոն ռազմավարության կատարող մարմիններին հարթակին հասանելիության ապահովմամբ: 2024 թվականին մեկնարկել են հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակի մշակման աշխատանքները: Արդյունքում նախատեսված էր հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման հարթակի տեխնիկական առաջադրանքի վերանայում, ինչի ապահովման անհնարիությունը պայմանավորված էր ԱՄՆ ՄԶԳ կողմից սկզբնական փուլում ֆինանսավորման դադարեցմամբ, այնուհետև՝ ԱՄՆ ՄԶԳ լուծարմամբ:

Վերոնշյալ նպատակի շրջանակներում Արդարադատության նախարարությունը մշակել է «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի N 808-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագիծը, որի ընդունման արդյունքում բարելավվելու է հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի գործունեությունը: Նախագծով հստակեցվել են Խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների մրցույթի անցկացման կարգավորումները, ընդլայնվել է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (այսուհետ նաև՝ ՔՀԿ) շրջանակը, ինչի արդյունքում հնարավոր կլինի համալրել Խորհրդի կազմում հասարակական կազմակերպություններին հատկացված բոլոր յոթ տեղերը: Մինչև ժամանակ, նախագծով սահմանվել է Խորհրդի հիմնական կազմում ներառել նաև հակակոռուպցիոն բոլոր մարմինները: Նախագիծը դեռևս չի ներկայացվել Խորհրդի անդամների քննարկմանը, ինչի արդյունքում համապատասխան գործողությունը գնահատվել է մասնակի կատարված:

Հակակոռուպցիոն ոլորտում ՔՀԿ-ների մասնակցության վերաբերյալ հարկ է նախնառաջ ընդգծել, որ Արդարադատության նախարարությունն ապահովել է ՔՀԿ-ների ակտիվ ներգրավվածությունը և ներառականությունը դեռևս Հակակոռուպցիոն

ռազմավարության նախանշման փուլում: Հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2023-2026թթ. գործողությունների ծրագիրը մշակվել են Արդարադատության նախարարի՝ 2023 թվականի փետրվարի 14-ի 75-Ա որոշմամբ ձևավորված աշխատանքային խմբի կողմից, որի անդամ են հանդիսացել 6 ոլորտային հասարակական կազմակերպություն, իսկ հինգ հասարակական կազմակերպություն լրացուցիչ հրավիրվել է տեխնիկական/մասնագիտական ներդրում ապահովելու համար²:

2024 թվականի մարտի 3-ից մինչև ապրիլի վերջն ընկած ժամանակահատվածում կազմակերպվել են աշխատանքային խմբի և դրա թեմատիկ ենթախմբերի շուրջ 10 (տասը) հանդիպումներ³՝ ինչպես ամբողջական կազմով, այնպես էլ մասնագիտական առանձին թեմատիկ խմբերի շրջանակներում: Հանդիպումների ընթացքում քննարկվել են ինչպես միջազգային պարտավորություններից բխող խնդիրներն ու առաջնահերթությունները (ՏՀԶԿ հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան գործողությունների ծրագիր, ԵԽ կոռուպցիայի դեմ պայքարի երկրներ (ԳՐԵԿՈ)), այնպես էլ պետական մամիների հետ քննարկումների արդյունքում վերհանված խնդիրները: Աշխատանքային խմբի շրջանակներում քննարկվել են Հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի կառուցվածքի և դրա բաղադրիչների (ռազմավարական նպատակների, ուղղություններ), Հակակոռուպցիոն ռազմավարության վերաբերյալ առկա մոտեցումները և իրականացված աշխատանքները: Աշխատանքներին ներգրավված ՔՀԿ-ներն ակտիվ մասնակցություն են ունեցել ողջ գործընթացի ընթացքում, ներկայացրել առաջարկություններ գրեթե բոլոր ռազմավարական ուղղություններով:

² Արդարադատության նախարարի՝ 2024 թվականի փետրվարի 14-ի թիվ 75-Ա հրամանով հաստատված աշխատանքային խմբի կազմը հետևյալն էր՝ Արդարադատության նախարարություն, Բարձրագույն դատական խորհուրդ, Կենտրոնական ընտրական հանձնաժողով, «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, Մարդու իրավունքների պաշտպան, Ազգային Ժողով/պատգամավոր, Քննչական կոմիտե, Վարչապետի աշխատակազմ, Հակակոռուպցիոն կոմիտե, Ֆինանսների նախարարություն, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Կենտրոնական բանկ, Գլխավոր դատախազություն, Էկոնոմիկայի նախարարություն, Մրցակցության պաշտպանության հանձնաժողով, Հայաստանի Ֆոնդային բորսա, «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպություն, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն, «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպություն, «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն, «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպություն, Փաստաբան: Կազմին անդամակցության դիմում է ներկայացրել և Ռազմավարության մշակման աշխատանքներին մասնակցել է նաև «Կորպորատիվ կառավարման կենտրոն» հիմնադրամը:

³ <https://www.moj.am/article/3613>
<https://www.moj.am/article/3608>
<https://www.moj.am/article/3589>
<https://www.moj.am/article/3587>
<https://www.moj.am/article/3525>

Այսպես, 2024 թվականի ընթացքում ՔՀԿ-ները, ի հավելումն իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը և հանրային կլոր սեղան քննարկումներին մասնակցությանը⁴, ներգրավվել են նաև Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության գործընթացին՝ որպես Սրբութային խորհրդի անդամ⁵:

Ինչ վերաբերում է հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման գործընթացին ՔՀԿ-ների մասնակցությանը, հարկ է նշել, որ Իրավաբանների հայկական ասոցիացիան և Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնն Արդարադատության նախարարություն են ներկայացրել Հակակոռուպցիոն ռազմավարության 2024 թվականի մոնիթորինգի և գնահատման զեկույցի այլընտրանքային գնահատումը: Գնահատման արդյունքներով զեկույցի կառուցվածքին առնչվող տեխնիկական բնույթի դիտարկումները մեծ մասամբ ընդունվել են: Ինչ վերաբերում է բովանդակային առաջարկություններին, հարկ է նշել, որ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնն իրականացրած մոնիթորինգի արդյունքում առաջարկել է.

- Զեկույցի «Կոռուպցիայի հակազդման իրավական և ինստիտուցիոնալ համակարգերի կատարելագործում» ենթաբաժինը շարադրել Հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված կոռուպցիայի հակազդման ռազմավարական նպատակների 11 վերջնարդյունքների առաջընթացի համաձայն՝ արձանագրելով նաև բացերը, առկա մարտահրավերները և դրանց լուծման վերաբերյալ առաջարկությունները: Վերջնարդյունքների առաջընթացի գնահատումն իրականացնել համեմատական ցուցիչներով կատարման կամ առաջընթացի մակարդակը գնահատելու համար՝ ապահովելով վերջնարդյունքներին հասնելու խոչընդոտների բացահայտման և դրանց վերացմանը միտված առաջարկությունների ներկայացումը:

- Զեկույցից դուրս բերել ընդհանրական ոչ չափելի գնահատականները, որոնք բնորոշ են հոետորաբանական փաստաթղթերին:

- Հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների կատարման գնահատման ձևաթղթի «Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները» բաժնում ներկայացնել կոնկրետ գործողության կատարմանը խոչընդոտող, այդ թվում կառավարության կողմից դրանք հավանության չարժանացնելու, լրամշակման ուղարկելու հանգամանքները և զեկույցում ներկայացնել առաջարկություններ դրանց վերացման ուղղությամբ:

- Ռազմավարական յուրաքանչյուր նպատակի ներքո թողնել 1-ից 3 առանցքային գործողություն, որոնք նշանակալի ազդեցություն կունենան կոռուպցիայի կանխարգելման, հակազդման և հակակոռուպցիոն կրթության ոլորտներում և

⁴<https://www.primeminister.am/hy/press-release/item/2023/10/23/Nikol-Pashinyan-23-10/>, <https://www.moj.am/article/3613>, <https://www.moj.am/article/3608>, <https://www.moj.am/article/3589>, <https://www.moj.am/article/3587>, <https://www.moj.am/article/3525>,

⁵ <https://anticorruption.am/public/uploads/files/file-6nlGUhmCV9.pdf>, <https://www.youtube.com/watch?v=XMsfhyUSE0>

օրենսդրական փոփոխությունների արդյունքում կապահովեն գործնականում կիրառելի արդյունք: Օրինակ, կոռուպցիայի կանխարգելման մասով կարելի է դիտարկել կոռուպցիոն ռիսկերի գնահատման հիման վրա պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում հակակոռուպցիոն/բարեկարգության ծրագրերի մշակման գործիքակազմի ներդրման գործողության ապահովումը կամ գնումների գործընթացում շահերի բախման իրավիճակներում բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար նրանց և ընտանիքի անդամների կամ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց մասնակցությամբ ընկերությունների գնումների գործընթացին մասնակցությունն արգելելու գործողությունը:

- Դիտարկել Հակակոռուպցիոն ռազմավարության այնպիսի գործողությունների իրականացումը, որոնք գործնականում չեն պահանջելու կոնկրետ օրենքներում փոփոխությունների և լրացումների կատարում, այլ ենթաօրենսդրական ակտերում փոփոխությունների իրականացման միջոցով ապահովվելու են գործնականում կիրառելի արդյունքներ:

Իրավաբանների հայկական ասոցիացիան⁶ մոնիթորինգի նպատակով կիրառել է արդյունքների համադրման մոտեցումը՝ համադրելով առաջնային և երկրորդային աղբյուրներից հավաքագրված որակական և քանակական տվյալները: Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից իրականացված հետազոտության մեթոդները ներառում են տեղեկատվության հարցումներ, գրասենյակային ուսումնասիրություն/փաստաթղթերի վերլուծություն, այդ թվում՝ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի մոնիթորինգի 2023 և 2024 թվականների զեկույցները, միջազգային կազմակերպությունների զեկույցները, համապատասխանության գնահատումները և խորհրդատվական եզրակացությունները, ֆոկուս խմբային քննարկումները: Կազմակերպվել է երկու ֆոկուս խմբային քննարկում՝ ներառական և մասնակցային ձևաչափով, որին մասնակցել են գործողությունների կատարման համար պատասխանատու պետական գերատեսչությունների և այլ շահագրգիռ կառույցների ու ՔՀԿ ներկայացուցիչներ, ոլորտային փորձագետներ և իրավաբաններ:

Իրավաբանների հայկական ասոցիացիան իրականացված մշտադիտարկման արդյունքում վերհանված խնդիրների հաշվառմամբ՝ առաջարկել է

- վերանայել գործողությունների միջանկյալ գնահատման ցուցանիշները՝ ապահովելով դրանց համապատասխանությունը վերջնական գնահատման մեթոդաբանությանը: Առաջիկա նոր Հակակոռուպցիոն ռազմավարության և գործողությունների ծրագրի մշակման փուլում հաշվի առնել ներկա փորձի թերությունները և ապահովել միջանկյալ ու վերջնական գնահատման գործիքների միջև կառուցվածքային համապատասխանություն՝ նախատեսելով միջանկյալ փուլերի համար նույնպես համակարգված և արդյունավետ ստուգման մեխանիզմներ:

⁶ Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից ներկայացված առաջարկությունները վերջինիս կողմից կազմված այլընտրանքային գնահատման զեկույցի վերջնական տարբերակում ներառելուն և Արդարադատության նախարարություն ներկայացնելուն պես՝ կարտացոլվեն սույն զեկույցում:

• Վերանայել արդյունքային ցուցանիշների ձևակերպումը՝ ապահովելով դրանց տարեկան բաշխումը և կոնկրետ ժամկետների սահմանումը: Առաջիկա նոր ռազմավարության մշակման ժամանակ ապահովել, որ յուրաքանչյուր գործողության արդյունքային և քանակական ցուցանիշները լինեն տարեկան կտրվածքով տարբերակված՝ բացառելով ուշացած կատարման հնարավորությունը և ապահովելով ծրագրի տարեկան հավասարաչափ կատարողականը:

• Հաշվի առնելով, որ Ռազմավարության Գործողությունների ծրագրով նախատեսված վերապատրաստումների ոլորտում առկա են որակական գնահատման և արդյունավետության չափման համակարգային բացեր՝ Մշակել վերապատրաստման որակական գնահատման և արդյունավետության չափման համապարփակ համակարգ: Ստեղծել ելակետային տվյալների հավաքագրման մեխանիզմներ և մշակել ձեռք բերված գիտելիքների ստուգման գործիքներ: Սահմանել վերապատրաստումների ազդեցության գնահատման պարբերական ընթացակարգեր, որոնք կապահովեն վերապատրաստումների իրական ազդեցության փաստագրումը:

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի դեկտեմբերին մեկնարկել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Մտամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի Հայաստանի գնահատման հինգերորդ փուլը (այսուհետ՝ Գնահատում), որի շրջանակներում գնահատվել են հակակոռուպցիոն քաղաքականության մշակմանը և իրականացմանն առնչվող ուղենիշները, հայտարարագրման համակարգի և հայտարարատուների շրջանակի ընդլայմանը, դատավորների համար սահմանված չափանիշներին, դատավորների նշանակման, առաջխաղացման և լիազորությունների դադարեցման առնչվող կարգավորումներին, Բարձրագույն դատական խորհրդի կազմին և գործառույթներին, Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորների ընտրության կառուցակարգերին, Բարձրագույն դատական խորհրդի գործունեության թափանցիկությանը, գնումների ոլորտի բարեփոխումներին, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանը, կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերի բարելավմանը, իրավաբանական անձանց համար քրեական պատասխանատվության ինստիտուտի ստեղծմանն առնչվող բազմաթիվ ուղենիշներ:

Գնահատման արդյունքներով՝ 2023 թվականի հոկտեմբերին ՏՀԶԿ հակակոռուպցիոն ցանցի լիազումար նիստին ընդունվել է ՏՀԶԿ հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան գործողությունների ծրագրի Հայաստանի գնահատման 5-րդ փուլի զեկույցը՝ «Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում» վերտառությամբ (այսուհետ՝ ՏՀԶԿ զեկույց): ՏՀԶԿ զեկույցը ներառում է 9 կատարողական ոլորտ, որոնք վերաբերում են ինչպես ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների, անկախ և ինքնավար մարմինների, իրավապահ մարմինների գործունեության ոլորտներին, այնպես էլ մասնավոր ոլորտի իրավաբանական անձանց, պետական մասնակցությամբ կազմակերպությունների գործունեությանը:

ՏՀԶԿ զեկույցում նշված հանձնարարականների կատարման ընթացքի և առաջընթացի վերաբերյալ 2025 թվականի հունվարին հաշվետվություն է ներկայացվել ՏՀԶԿ հակակոռուպցիոն ցանցի քարտուղարություն՝ վերջինիս կողմից ուղարկված հարցաշարի հիման վրա, իսկ 2025 թվականի մարտի 10-ից 13-ը տեղի է ունենալու ՏՀԶԿ հակակոռուպցիոն ցանցի քարտուղարության և մոնիթորինգի թիմի այցը Հայաստան՝ շահագրգիռ մարմինների հետ հանդիպումներ և քննարկումներ կազմակերպելու նպատակով: 2025 թվականի հուլիսին ՏՀԶԿ հակակոռուպցիոն ցանցի լիազումար նիստերին քննարկվելու և հաստատվելու է ՏՀԶԿ զեկույցի հետագա առաջընթացը գնահատող զեկույցը:

ՏՀԶԿ զեկույցում ներկայացված կատարողական դաշտերի շրջանակներում անդրադարձ է կատարվել ինչպես հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգին, այնպես էլ գնահատվել է կոռուպցիայի դեմ պայքարը դատական, դատախազական համակարգերում և քննչական մարմիններում: Գնահատման արդյունքներով արձանագրված խնդիրների հաշվառմամբ՝ 2022 թվականին իրականացվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ: Մասնավորապես՝

➤ կատարելագործվել են շահերի բախման, անհամատեղելիության պահանջների և նվերների ինստիտուտի վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումները: Վերանայվել է շահերի բախման հասկացությունը, շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված գործիքների, շահերի բախման կարգավորումների դեպքում պատասխանատվության միջոցների շրջանակը: Որպես շահերի բախման դրսևորում՝ օրենսդրական մակարդակով ամրագրվել է պոտենցիալ շահերի բախման իրավիճակը: Կատարելագործվել է հավատարմագրային կառավարման ինստիտուտը: Ընդլայնվել է փոխկապակցված անձանց շրջանակը, սահմանվել պաշտոնատար անձի և հավատարմագրային կառավարչի փոխկապակցվածությունը բացառող կարգավորում: Փոխկապակցված անձանց շրջանակում ներառվել են ոչ միայն ազգակցական կապերով կապված անձինք, այլև ոչ ազգակցական սերտ անձնական հարաբերությունների մեջ գտնվող, ինչպես նաև առևտրային իրավաբանական անձինք:

➤ Օրենսդրական մակարդակով ընդլայնվել են ազդարարման տեսակները, սահմանվել է ազդարարման նոր տեսակ՝ Ուազդարարում հանրությանը: Փոփոխությունների արդյունքում հնարավոր դարձավ ազդարարման էլեկտրոնային հարթակի (azdararir.am) միջոցով ազդարարել նաև շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների

կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտումների մասին: Իրականացված փոփոխություններով ազդարարման հետ կապված հարաբերությունները տարածվել են նաև մասնավոր ոլորտի առևտրային և ոչ առևտրային, ինչպես նաև համայնքային կազմակերպությունների վրա:

➤ Մարդու իրավունքների պաշտպանը սահմանվել է որպես իրավասու մարմին, որը հավաքագրում է պետական մարմինների կողմից ստացված ազդարարման վերաբերյալ վիճակագրությունը: Մարդու իրավունքների պաշտպանին լիազորություն է տրվել ազդարարի կամ նրա փոխկապակցված անձի խնդրանքով խորհրդապահական կարգով խորհրդատվություն տրամադրել և ներկայացնել անձին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները:

Արդարադատության ոլորտը գնահատող միջազգային հարթակներում հակակոռուպցիոն ոլորտում Հայաստանի Հանրապետության դիրքերի շարունակական բարելավման առնչությամբ աշխատանքները կրում են շարունակական բնույթ: Հայաստանի Հանրապետությունը ստացել է հրավեր մասնակցելու ՏՀԶԿ Հանրային բարեվարքության ցուցիչների (OECD Public Integrity Indicators/PII) համար տվյալների հավաքագրմանը, ինչն էական նշանակություն ունի հակակոռուպցիոն փաստահեն տվյալների շտեմարանի ստեղծման հարցում ՏՀԶԿ-ին օժանդակելու և երկրի բարեվարքության համակարգի ամբողջական շրջանակը նշյալ ցուցիչներում արտացոլելու տեսանկյունից: 2024թ. հուլիսին Հայաստանը միացել է ՏՀԶԿ Հանրային բարեվարքության ցուցիչներին նախաձեռնությանը:

Նշվածի շրջանակներում 2024 թվականի սեպտեմբերի 10-ին ՏՀԶԿ-ին ներկայացվել է անհրաժեշտ տեղեկատվությունը՝ գնահատման գործընթացի մեկնարկի նպատակով:

Ցուցիչների շրջանակը պահանջում է տվյալների հավաքագրում գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների սուբյեկտների լայն շրջանակից և մինչ այժմ հրապարակվել է երեք տվյալների հավաքածու. Ռազմավարական շրջանակի որակի վերաբերյալ 3-րդ սկզբունքի տվյալները հրապարակվել են 2021 թվականին, Հանրային քաղաքականության մշակման հաշվետվողականության վերաբերյալ 13-րդ սկզբունքի տվյալները՝ 2022 թվականին, իսկ Ներքին վերահսկողության և ռիսկերի կառավարման արդյունավետության վերաբերյալ 10-րդ սկզբունքի տվյալները՝ 2023 թվականին:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության գնահատումը իրականացվում է Ռազմավարական շրջանակի որակի և Հանրային քաղաքականության մշակման հաշվետվողականության վերաբերյալ սկզբունքների շրջանակներում:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՍ ՊԱՅՔԱՐՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՒՄԲ (ԳՐԵԿՈ)

2015թ. հոկտեմբերին ԳՐԵԿՈ-ի կողմից ընդունված գնահատման չորրորդ փուլի (խորագիր՝ «Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում») զեկույցով Հայաստանին ներկայացված 18 հանձնարարականների մեծ մասի «անբավարար» կամ «մասնակի» կատարման արդյունքներով Հայաստանը 2023 թվականի մարտի դրությամբ ունեցել է «համընդհանուր անբավարար» կարգավիճակ: 2023 թվականի մարտին ընդունված համապատասխանության միջանկյալ զեկույցի արդյունքում 18 հանձնարարականներից 9-ի «բավարար» գնահատվելու արդյունքում Հայաստանը հաղթահարել է «համընդհանուր անբավարար» կարգավիճակ:

Պատգամավորներին առնչվող 4 մասնակի կատարված հանձնարարականներով ԳՐԵԿՈ-ն առաջարկում էր՝

• Ազգային Ժողովում՝ ապահովել և էլ ավելի բարձրացնել օրենսդրական գործընթացների թափանցիկությունը՝ i) ապահովելով օրենքների նախագծերի շուրջ հանրային քննարկումների պահանջի կատարումը.

• (i) ընդունել պատգամավորների վարքագծի կանոնագիրք՝ հստակ սահմանելով շահերի բախման և հարակից ոլորտների, մասնավորապես՝ նվերների և այլ առավելությունների ընդունման, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ֆինանսական շահերի, տեղեկատվության և պետական ռեսուրսների ոչ իրավաչափ օգտագործման և երրորդ կողմերի, օրինակ՝ լոբբիստների հետ շփումներին առնչվող հարցերի վերաբերյալ ուղղորդիչ կարգավորումներ, (ii) դրա կիրարկումն ապահովել անհրաժեշտ գործնական միջոցներով, օրինակ՝ մասնագիտական վերապատրաստում, խորհրդատվություն, իրազեկվածության մակարդակի բարձրացում:

• Կանխել պատգամավորների կողմից առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կամ ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում այլ վճարովի աշխատանք կատարելու սահմանափակումների շրջանցման հնարավորությունները:

• Ամրապնդել պատգամավորների էթիկայի և վարքագծի նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողության համակարգ՝ ապահովելու (i) էթիկայի կանոնների և անհամատեղելիության դեպքերի և այլ սահմանափակումների, շահերի բախման և նվերների ընդունման վերաբերյալ կանոնների անկախ, շարունակական և նախաձեռնողական վերահսկողությունը:

Դատավորներին առնչվող 4 մասնակի կատարված հանձնարարականներով ԳՐԵԿՈ-ն առաջարկում էր՝

• Բարեփոխել դատավորների պաշտոնների համալրման առաջխաղացման և պաշտոնից ազատման ընթացակարգերը, այդ թվում՝ (i) ամրապնդելով այդ ընթացակարգերում դատական իշխանության դերը և նվազեցնելով Հանրապետության նախագահի դերը և պահանջելով նրանից տալ իր որոշումների գրավոր հիմնավորումները, և (ii) ապահովելով այդ ընթացակարգերի ժամանակ

ընդունված ցանկացած որոշման դատական կարգով բողոքարկման հնարավորությունը: ((i) մասը կատարված է բավարար, (ii) մասը՝ մասնակի)

• (i) Վերանայել դատավորների նկատմամբ հարուցվող կարգապահական վարույթում Արդարադատության նախարարության դերակատարությունը, (ii) ներդնել համապատասխան երաշխիքներ՝ ապահովելու համար, որ կարգապահական վարույթը չօգտագործվի որպես ներգործություն կամ դատավորների նկատմամբ հաշվեհարդար իրականացնելու միջոց, ներառյալ՝ դատավորների համար կարգապահական որոշումները դատարան բողոքարկելու հնարավորությունը:

• Ներդնել արդյունավետ կանոններ և մեխանիզմներ՝ արդարադատություն իրականացնելիս դատավորների գործունեությանն անհարկի միջամտելու դեպքերը բացահայտելու և այդպիսի միջամտություն իրականացնող կամ իրականացնելու փորձ կատարող դատավորներին պատասխանատվության ենթարկելու համար:

• Իրականացնել նպատակաուղղված քաղաքականություն՝ դատավորների գործունեությանն անհարկի միջամտությունը, դատական իշխանությունում շահերի բախումը և կոռուպցիան կանխարգելելու ուղղությամբ, ինչը ներառում է (...) ii) դատական համակարգում գաղտնի խորհրդատվության տրամադրում՝ դատավորների իրազեկության մակարդակը բարձրացնելու, էթիկայի և վարքագծի, դատական անաչառության և անկախության, ինչպես նաև շահերի բախումը և կոռուպցիան կանխարգելելու նպատակով:

Բոլոր խումբ անձանց (պատգամավորներ, դատավորներ և դատախազներ) առնչվող հանձնարարականով ԳՐԵԿՈ-ն առաջարկում էր՝

• մշակել պատգամավորների, դատավորների և դատախազների կողմից նվերներ ընդունելու նկատմամբ կիրառվող կանոններ:

2024 թվականի նոյեմբերին ԳՐԵԿՈ-ի 98-րդ լիազումար նիստի ընթացքում ընդունվել է ԳՐԵԿՈ-ի 4-րդ փուլի գնահատման Հայաստանի համապատասխանության երկրորդ զեկույցը, որի արդյունքերով ԳՐԵԿՈ-ն եզրակացրել է, որ ներկայացված 18 հանձնարարականներից Հայաստանի Հանրապետությունը բավարար չափով կատարել է 12, իսկ մասնակի՝ 6 հանձնարարական:

Պատգամավորներին առնչվող հանձնարարականների վերաբերյալ ԳՐԵԿՈ-ն ընդգծել է Ազգային Ժողովի աշխատանքներին հանրային ներգրավվածության ապահովումը և պատգամավորների շրջանում նվերներ ընդունելու սահմանափակումների վերաբերյալ կարգավորումների ներդրումը:

ԳՐԵԿՈ-ն նշել է, որ դեռևս պետք է ընդունվի պատգամավորների վարքագծի կանոնադիրք, որը պետք է զուգակցվի վերահսկողության, խորհրդատվական և իրազեկվածության բարձրացման արդյունավետ միջոցառումներով:

Դատավորներին առնչվող հանձնարարականների վերաբերյալ ԳԲԿՆ-ն նշել է, որ Հայաստանի Հանրապետությունում արդեն օրենսդրական մակարդակով ներդրվել է Բարձրագույն դատական խորհրդի՝ դատավորների կարգապահական հարցերով որոշումների բողոքարկման մեխանիզմ, որի գործարկումը, սակայն, դեռևս ապահովված չէ:

Նշյալ զեկույցի ընդունմամբ Հայաստանն ավարտել է ԳԲԿՆ-ի համապատասխանության ընթացակարգի 4-րդ փուլը:

2024 թվականի մարտին ընդունվել է Հայաստանի գնահատման 5-րդ փուլի (խորագիր՝ «Կոռուպցիայի կանխարգելումը և բարեվարքության խթանումը իշխանության կենտրոնական մարմիններում (բարձրագույն գործադիր մարմիններում և իրավապահ մարմիններում)» ԳԲԿՆ-ի զեկույցը, որով ներկայացվել է 22 հանձնարարական գործադիր իշխանության մարմինների և ՀՀ ՆԳՆ ոստիկանության համար:

Զեկույցը գնահատում է Հայաստանում առկա կոռուպցիայի կանխարգելման շրջանակի արդյունավետությունը բարձրագույն ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց և իրավապահ մարմինների աշխատակիցների շրջանում: Այն նպատակ ունի աջակցել Հայաստանին հանրային կյանքում թափանցիկության, բարեվարքության և հաշվետվողականության ամրապնդման գործում՝ ԳԲԿՆ-ի չափանիշներին համապատասխան:

Գնահատման շրջանակում ուսումնասիրվում և գնահատվում է լիազորությունների լայն շրջանակ և ինքնուրույն որոշում կայացնելու իրավասություն ունեցող հանրային պաշտոն զբաղեցնող անձանց (PTEF), այն է՝ վարչապետի, փոխվարչապետների, նախարարների, վերջիններիս խորհրդականների (ներառյալ հասարակական հիմունքներով խորհրդականների) և նախարարների տեղակալների, ինչպես նաև ոստիկանության ողջ համակարգի առնչությամբ առկա կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության համակարգի կառուցակարգերը: Գնահատվում է նաև նշյալ կառուցակարգերի օրենսդրական և իրավակիրառ մակարդակը, ինչպես նաև՝ դրանց վերաբերյալ ընկալումները հասարակության և ՁԼՄ շրջանակներում:

ԳԲԿՆ-ի գնահատման 5-րդ փուլի զեկույցով Հայաստանին ներկայացված որոշ հանձնարարականների իրականացումն արդեն իսկ նախատեսված է հակակոռուպցիոն ռազմավարությամբ և դրա 2023-2026թթ. գործողությունների ծրագրով: Այսպես,

ԳԲԿՆ-ն առաջարկում է (i) բարձրագույն գործադիր մարմիններում պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության որոշակի ռիսկերը ներառող ռիսկերի վերլուծություն իրականացնել կանոնավոր կերպով և դրանք շտկելու միջոցները ներառել հակակոռուպցիոն ռազմավարությունում և գործողությունների ծրագրում և (ii) բարձրագույն գործադիր մարմիններում պաշտոն զբաղեցնող անձինք նշանակումից առաջ կամ անմիջապես հետո անցնեն բարեվարքության ստուգում՝ շահերի բախման հնարավորությունը բացահայտելու և կառավարելու համար:

Ռազմավարության գործողությունների ծրագրի 1.9-րդ գործողությամբ նախատեսված է օրենսդրական նախագծի մշակում՝ ԿԿՀ-ին վերապահելով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, գնահատման, դրանց զսպմանն ուղղված միջոցառումների իրականացումը, իսկ 1.12-րդ և 1.14-րդ գործողությունների շրջանակներում (ընդլայնել բարեվարքության ուսումնասիրության ենթակա պաշտոնների ցանկը) նախատեսվում է ընդլայնել բարեվարքության ուսումնասիրության ենթակա պաշտոնների ցանկը՝ ըստ ԳՐԵԿՈ 5-րդ փուլի գնահատման շրջանակում նախատեսված բարձրագույն գործադիր մարմիններում պաշտոն զբաղեցնող անձանց շրջանակի:

➤ **ԳՐԵԿՈ-ն առաջարկում է (i) ընդունել բարձրագույն գործադիր մարմիններում պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրք, հրապարակել այն վերահսկողության և իրավակիրառության վստահելի և արդյունավետ մեխանիզմի հետ համատեղ և (ii) որ այն վերապատրաստումների (պաշտոնավարման սկզբում և կանոնավոր պարբերականությամբ), հատուկ ուղեցույցի և խորհրդատվության միջոցով բարձրագույն գործադիր մարմիններում պաշտոն զբաղեցնող անձանց շրջանում լինի համակարգված իրազեկվածության բարձրացման առարկա:**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 6-ի թիվ 02 որոշմամբ սահմանվել է պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը: Հետագայում ակնկալվում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց և այլ շահառուների համար իրականացնել վերապատրաստումներ՝ կանոնագրքի արդյունավետ ներդրումն ապահովելու համար:

➤ **ԳՐԵԿՈ-ն առաջարկում է (i) բարձրագույն գործադիր մարմիններում պաշտոն զբաղեցնող անձանց շահերի բախման վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու և որոշումներ կայացնելու պատասխանատվությունը վերապահել ԿԿՀ-ին և (ii) մշակել ուղեցույցներ/ձեռնարկներ բարձրագույն գործադիր մարմիններում պաշտոն զբաղեցնող անձանց շահերի բախման կառավարման վերաբերյալ և վիճակագրական տվյալներ հավաքագրել:**

Ռազմավարությամբ նախատեսվում էր 2024 ավարտին մշակել «Կոռուպցիայի կանխարգելման մասին» վերտառությամբ օրենքի նախագիծ, որով կամբողջականացվեն բարեվարքության համակարգի տարրերի՝ շահերի բախման, նվերների ընդունման սահմանափակումների, վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների միասնական կիրառման և կառավարման, կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող այլ կառուցակարգերի օրենսդրական կարգավորումները:

➤ **ԳՐԵԿՈ-ն առաջարկում է Մարդու իրավունքների պաշտպանի դերը ազդարարների պաշտպանության գործում ամբողջությամբ իրականացնել գործնականում:**

Ռազմավարության գործողությունների ծրագրի 2.20-րդ կետով նախատեսված է կատարելագործել ազդարարների իրավունքների պաշտպանության մեխանիզմները՝ վերանայելով ազդարարներին տրվող պաշտպանության միջոցների շրջանակը, հզորացնելով ՄԻՊ-ի կողմից ազդարարների իրավունքների պաշտպանությանն ուղղված կազմակերպական կառուցակարգերը:

Հարկ է նշել, որ Հանձնարարականների շրջանակներում իրականացված աշխատանքների և առաջընթացի վերաբերյալ անհրաժեշտ է հաշվետվություն ներկայացնել ԳՐԵԿՈ-ի քարտուղարություն մինչև 2025թ. սեպտեմբերի 30-ը:

ՄԱԿ-Ի «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ» ԿՈՆՎԵՆՏԻԱՅՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

2010 թվականից մեկնարկել է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի կիրարկման վերանայման գործընթացը (Գնահատման գործընթաց)⁷՝ հնգամյա երկու շրջափուլով:

Ներկայում ընթանում է երկրորդ շրջափուլը (ի սկզբանե 2015-2020թթ.⁷), որն ընդգրկում է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» II գլուխը (Կանխարգելիչ միջոցառումներ) և V գլուխը (Ակտիվների վերադարձ): Հայաստանի Հանրապետության զեկույցի ամփոփագիրը հրապարակվել է 2021թ., որի արդյունքներով ինստիտուցիոնալ համակարգի առնչությամբ Հայաստանին առաջարկվել է երաշխավորել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմինների գործառնական, ֆինանսական և որոշում կայացնելու հարցերում անհրաժեշտ անկախությունը: Ներկայում Հայաստանի Հանրապետության վերաբերյալ զեկույցի նախագիծը լրամշակման փուլում է:

Հարկ է նշել, որ Գնահատման գործընթացի շրջանակներում Հայաստանի Հանրապետության կողմից կոնվենցիոն պարտավորությունների կատարումը գնահատում են Սերբիան և Դոմինիկյան Հանրապետությունը⁸:

ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

⁷ Ջգալի հետաձգումների պատճառով ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի անդամ երկրների համաժողովը որոշել է երկրորդ փուլի տևողությունը **երկարաձգել** մինչև **2024 թվականի հունիս**:

⁸ [2023.09.08 - Country pairings for the second review cycle.pdf \(unodc.org\)](https://www.unodc.org/documents/corruption/2023/09/08_Country_pairings_for_the_second_review_cycle.pdf)

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.1

ՎԵՐԱՆԱՅԵԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ, ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԵՐԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Օրենսդրորեն վերանայվել են անդամներին ներկայացվող պահանջները, ընտրության կարգը՝ ապահովելով քաղաքացիական հասարակության մասնագիտացված ինստիտուտների մասնակցությունը, ինչպես նաև պատասխանատվության և գործունեության դադարեցման կարգավորումները, որով բարձրացվել է հանձնաժողովի անդամի, որպես ինքնուրույն ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի, անհատական հաշվետվողականությունը, գործունեության արդյունավետությունը, պատասխանատվություն կրելու գործիքակազմը:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն, Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային զեկույցներ

Կատարող մարմին

Արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ (համաձայնությամբ)

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Արդարադատության նախարարության կողմից իրականացվել է հանրային մարմինների, այդ թվում նաև հակակոռուպցիոն մարմինների անդամների նշանակման գործընթացում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (այսուհետ՝ ՔՀԿ) մասնակցության դերի վերաբերյալ, միջազգային փորձի ուսումնասիրություն՝ ներպետական կարիքների հաշվառմամբ:

Ուկրաինայի, Մոլդովայի, Վրաստանի, Բոսնիա և Հերցեգովինայի և Ալբանիայի փորձը ցույց է տալիս, որ ՔՀԿ-ների ներգրավվածությունը նշանակալի ազդեցություն է ունենում հանրային մարմինների թափանցիկության, հաշվետվողականության և վստահելիության վրա:

Ուսումնասիրության շրջանակներում անդրադարձ է կատարվել նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների պատասխանատվության մեխանիզմների և կարգապահական պատասխանատվության կիրառման ընթացակարգերին:

Ուսումնասիրության արդյունքում Արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ): Նախագիծը ներկայացվել է շահագրգիռ մարմիններին կարծիքի: Ստացված կարծիքների հիման վրա լրամշակվել է և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: Ներկայումս իրականացվում է Նախագծի լրամշակման աշխատանքները:

Նախագծով առաջարկվում է ներդնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) անդամների ընտրության առավել ներառական մեխանիզմ, մասնավորապես՝ Հանձնաժողովի անդամների ընտրության մրցութային խորհրդի կազմում առաջարկվում է ներգրավել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ: Միաժամանակ, Նախագծով առաջարկվում է բարձրացնել Հանձնաժողովի անդամների անհատական հաշվետվողականությունը, ինչպես նաև հստակեցնել Հանձնաժողովի անդամի կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և ընթացակարգը: Հանձնաժողովի անդամների անհատական հաշվետվողականության բարձրացման համատեքստում առաջարկվում է ներդնել Հանձնաժողովի որոշումների և եզրակացությունների ընդունման ընթացակարգում Հանձնաժողովի անդամների կողմից հատուկ կարծիք ներկայացնելու կառուցակարգեր:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախագիծը 2024 թվականի նոյեմբերի 3-ին դրվել է հանրային քննարկման e-draft.am հարթակում (<https://www.e-draft.am/projects/7873>):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ուղղակի արդյունքային	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
--------------------	----------------------	---	----------------------

	<p>քանակական որակական ցուցանիշներ</p>		
<p>Օրենսդրորեն վերանայվել են անդամներին ներկայացվող պահանջները, ընտրության կարգը՝ ապահովելով քաղաքացիական հասարակության մասնագիտացված ինստիտուտների մասնակցությունը, ինչպես նաև պատասխանատվության և գործունեության դադարեցման կարգավորումները, որով բարձրացվել է հանձնաժողովի անդամի, որպես ինքնուրույն ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի, անհատական հաշվետվողականությունը, գործունեության</p>	<p>Անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում և այլ հարակից իրավական ակտերում հավանության են արժանացել Կառավարության կողմից և ներկայացվել են ՀՀ Ազգային Ժողով</p>	<p>«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակվել և ներկայացվել է շահագրգիռ մարմիններին կարծիքի: Ստացված կարծիքների հիման վրա նախագիծը լրամշակվել է և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: Վարչապետի աշխատակազմի կողմից համապատասխան դիտարկումներով նախագիծը 2024 թվականի դեկտեմբերի 24-ին վերադարձվել է Արդարադատության նախարարություն: Ներկայում ընթացքի մեջ են նախագծի լրամշակման աշխատանքները: Գործողության ուղղակի արդյունքային և քանակական ցուցանիշների համաձայն՝ նախագիծը պետք է արժանանար կառավարության հավանությանը, գործողությունը կատարվել է մասնակի:</p>	<p>Կատարված է մասնակի</p>

արդյունավետությունը, պատասխանատվություն կրելու գործիքակազմը			
Այլընտրանքային գնահատում			
<p>Օրենսդրական փոփոխությունների արդյունքում Մրցութային խորհրդի կազմում միայն քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավվածության ապահովումը չի լուծելու Մրցութային խորհրդի արդյունավետության և ԱԺ-ի կողմից ընտրության գործընթացին մասնակցության համակարգային խնդիրները: Անհրաժեշտ է արձանագրել, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը 2019 թվականից մինչ օրս լիարժեք համալրված չի եղել և տևական ժամանակ է շարունակում է գործել թերհամալրված կազմով: Նախագծի լրամշակման ժամանակ առաջարկվում է վերանայել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր հաստիքի համալրման գործող կարգը՝ նոր մոտեցումներով:</p>			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.2

ԲԱՐԵԼԱՎԵԼ ԿՈՌՈՒՊՏԻԱՑԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ, ՍԱՀՄԱՆԵԼ ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՍՏԱԿԵՑՆԵԼ ԿԿՀ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ

2024 թվականի կատարողականի թիրախ

Մշակվել են օրենսդրական փոփոխությունների նախագծեր, որոնցով նախատեսվել են ԿԿՀ-ի կողմից հարուցվող վարույթների առանձնահատկությունները, հստակեցվել են կիրառվող եզրույթները, ինչպես նաև սահմանվել են ժամկետները:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կատարող մարմին

Արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Մշակվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր): Նախագծերով նախատեսվում է սահմանել Հանձնաժողովի կողմից հարուցվող վարույթների առանձնահատկությունները: Միաժամանակ, առաջարկվում է բարեփոխել Հանձնաժողովի կողմից իրականացվող հայտարարագրերի ստուգման գործընթացի արդյունավետությունը՝ սահմանելով ստուգման հասկացությունը, դրա հիմքերը, իրականացման ժամկետները:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախատեսվում է Նախագծերը 2025 թվականին ներկայացնել շահագրգիռ մարմինների կարծիքին՝ միաժամանակ դնելով հանրային քննարկման e-draft.am հարթակում:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
<p>Մշակվել են օրենսդրական փոփոխությունների նախագծեր, որոնցով նախատեսվել են ԿԿՀ-ի կողմից հարուցվող վարույթների առանձնահատկությունները, հստակեցվել են կիրառվող եզրույթները, ինչպես նաև սահմանվել են ժամկետները:</p>	<p>Անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում և այլ հարակից իրավական</p>	<p>«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը մշակվել են: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2024 թվականի կատարողականի թիրախով նախատեսված է եղել համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախագծերի մշակման վերաբերյալ գործողություն, գործողությունը գնահատվել է ամբողջությամբ կատարված:</p>	<p>Կատարված է ամբողջությամբ</p>

	ակտերում հավանության են արժանացել Կառավարության կողմից և ներկայացվել են ՀՀ Ազգային Ժողով:		
--	---	--	--

Այլընտրանքային գնահատում

Գործողության ուղղակի արդյունքային ցուցանիշով սահմանված է, որ Կառավարությունը 2024 թվականին պետք է հավանության տար նշված օրենսդրական ակտերի նախագծերին⁹: Ավելին, գործողության համար 2024 թվականի համար սահմանված չէ ստուգման միջոց: Ձեկույցի մեջ անդրադարձ չի կատարվում նրան, թե այդ նախագծերի մեջ նախատեսվող փոփոխությունների և լրացումների համար ինչ ուսումնասիրություններ են կատարվել և ինչով է հիմնավորվում ընտրված փոփոխությունների անհրաժեշտությունը, արդյոք ներգրավված են եղել ՔՀԿ ներկայացուցիչներ կամ ինչքանով են հաշվի առնվել մասնագիտական հանրույթի առաջարկությունները:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

⁹ Նշում ԱՆ-ի կողմից գործողության համար սահմանված ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշները գործողության կատարման վերջնական ժամկետի համար են սահմանված, տվյալ դեպքում՝ 2025 թվականի ավարտը: Գնահատման համար հիմք է հանդիսացել 2024 թվականի համար սահմանված կատարողականի թիրախը, ինչի արդյունքում գործողությունը 2024 թվականի համար գնահատվել է ամբողջությամբ կատարված:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.3

ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Գույքագրվել են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում բարեվարքության հարցերով կազմակերպչի գործառույթների իրականացման խոչընդոտները և կատարվել է ուսումնասիրություն բարեվարքության հարցերով կազմակերպիչների կարգավիճակի վերաբերյալ:

Կատարված գույքագրման և միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության և չափանիշների հիման վրա վերանայվել է բարեվարքության հարցերով կազմակերպիչների կարգավիճակը:

Անհրաժեշտության դեպքում մշակվել են օրենսդրական նախագծեր, որով վերանայվել է բարեվարքության հարցերով կազմակերպիչների կարգավիճակը՝ ապահովելով վերջիններիս անկախությունը և անկողմնակալությունը:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կատարող մարմին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ (համաձայնությամբ)

Համակատարող մարմին

Արդարադատության նախարարություն

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից 2024 թվականի առաջին կիսամյակում իրականացվել է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում բարեվարքության հարցերով կազմակերպչի գործառույթների իրականացման խոչընդոտների գույքագրում: Մասնավորապես՝ Հանձնաժողովը 2024 թվականի հունվար ամսին մշակել և շրջանառել է առցանց հարցաթերթիկ՝ պետական և տեղական ինքնակառավարման բոլոր մարմիններ՝ բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի խնդիրների վերհանման և հավաքագրման նպատակով: Հանձնաժողովը Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի և Արդարադատության նախարարության հետ ունեցել է աշխատանքային քննարկումներ, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ և ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի աջակցությամբ 2024 թվականի ապրիլի 11-ին կազմակերպել է միջգերատեսչական աշխատաժողով-քննարկում՝ «Բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտը, խնդիրները և բարեփոխման հեռանկարները» խորագրով, որի շրջանակներում Հանձնաժողովը ներկայացրել է նաև իր կողմից իրականացված հարցման արդյունքները: Ինստիտուտի խնդիրների գույքագրման և դրա արդյունքների վերաբերյալ տեղեկանքը Հանձնաժողովի կողմից ներկայացվել է Արդարադատության նախարարություն և Քաղաքացիական ծառայության գրասենյակ: Միաժամանակ, Հանձնաժողովի կողմից մշակվել և հրապարակվել է Բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ 2023 թվականի տարեկան հաղորդումը, որի առանձին բաժին նույնպես նվիրված է սույն կետով սահմանված խնդրին, իսկ իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկությունները և ստացված վիճակագրությունը ներկայացվել է, այդ թվում նաև նշված հաղորդման ներքո:

Գործողություն 1.3-ի շրջանակներում Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից իրականացվել է բարեվարքության հարցերով կազմակերպիչների կարգավիճակի, գործառույթների և պարտավորությունների վերաբերյալ միջազգային վերաբերելի փորձի ուսումնասիրություն, ինչը ցույց է տվել, որ բարեվարքության հարցերով կազմակերպիչների կամ պատասխանատուների (էթիկայի պատասխանատու, խորհրդատու, հանձնակատար) ինստիտուտները մի շարք երկրներում ներդրվել են դեռևս շատ վաղուց և ունեն բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործառույթների արդյունավետ իրացման համար անհրաժեշտ հիմքեր: Բարեվարքության հարցերով կազմակերպիչների լիազորությունների շրջանակը հստակ է, իսկ գործառույթների արդյունավետ իրականացման նպատակով իրավունքների ու պարտականությունների սահմանման տեսանկյունից՝ համապարփակ: Ուսումնասիրված երկրներից շատերում հստակ ներկայացված են տվյալ պաշտոնին ներկայացվող պահանջները (կրթություն, ուսուցում, փորձ, հատուկ հմտություններ և(կամ) լիցենզիա(ներ): Ուսումնասիրված երկրների փորձը ցույց է տալիս, որ բարեվարքության հարցերով կազմակերպիչների կամ պատասխանատուների գերակշիռ մասը

քաղաքացիական ծառայողներ են, որոնք նշանակվում են համապատասխան պետական մարմնի կողմից՝ կրելով տվյալ երկրում իրենց կարգավիճակով պայմանավորված առանձնահատկությունները:

Բարեվարքության հարցերով կազմակերպիչների կարգավիճակի վերանայման և վերջիններիս գործառույթների հստակեցման նպատակով և հիմք ընդունելով նաև վերոգրյալ ուսումնասիրությունները և վեր հանված խնդիրները՝ Արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր): Նախագծերը ներկայացվել են շահագրգիռ մարմիններին կարծիքի: Ստացված կարծիքների հիման վրա Նախագծերը լրամշակվել են և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: Ներկայումս իրականացվում է Նախագծի լրամշակման աշխատանքները:

Նախագծերով առաջարկվում է բարեվարքության հարցերով կազմակերպիչների համար սահմանել կարգավորումներ՝ հստակեցնելով բարեվարքության հարցերով կազմակերպիչների կարգավիճակը՝ ապահովելով վերջիններիս անկախությունը և անկողմնակալությունը: Միաժամանակ, Նախագծերով նախատեսվում է, որ բարեվարքության հարցերով կազմակերպիչները մասնագիտական կարողությունների զարգացման նպատակով պարբերաբար վերապատրաստում անցնեն՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կազմված բարեվարքության հարցերով կազմակերպիչների տարեկան վերապատրաստումների ծրագրի հիման վրա, որը պետք է հաստատվի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի որոշմամբ: Բարեվարքության հարցերով կազմակերպիչների համար վերապատրաստումները իրականացվելու են անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի, ինչպես նաև նվերների ընդունման սահմանափակումների վերաբերյալ:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Քննարկումներն իրականացվել են երկու փուլով՝ համակատարող մարմինների հետ , ինչպես նաև միջգերատեսչական մակարդակով՝ պետական մարմինների շուրջ 40 ներկայացուցիչների հետ:

Նախագծերը 2024 թվականի նոյեմբերի 3-ին դրվել են հանրային քննարկման e-draft.am հարթակում (<https://www.e-draft.am/projects/7873>):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
<p>Գույքագրվել են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում բարեվարքության հարցերով կազմակերպչի գործառույթների իրականացման խոչընդոտները կատարվել է ուսումնասիրություն բարեվարքության հարցերով կազմակերպիչների կարգավիճակի վերաբերյալ:</p> <p>Կատարված գույքագրման միջազգային լավագույն փորձի</p>	<p>Գույքագրված տվյալների հիման վրա անհրաժեշտության դեպքում վերանայվել է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում բարեվարքության հարցերով կազմակերպչի կարգավիճակը:</p> <p>Անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները «Հանրային ծառայության մասին» օրենքում,</p>	<p>Վերոնշյալ գործողության շրջանակներում «Գործողության 1.3»-ի 2024 թվականի առաջին կիսամյակի կատարողականի թիրախի հաշվառմամբ իրականացվել է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում բարեվարքության հարցերով կազմակերպչի գործառույթների իրականացման խոչընդոտների գույքագրում: Գույքագրված տվյալների հիման վրա պետական մարմիններում բարեվարքության հարցերով կազմակերպիչների կարգավիճակը, գործառույթները համադրվել են միջազգային փորձի հետ, կատարվել են համեմատական վերլուծություններ, վերհանվել են առկա խնդիրները: Այդ խնդիրների ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործառույթների, դրանցից բխող իրավունքների և պարտականությունների յուրացման ու կիրառման, բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի կատարելագործման համար խիստ կարևորվում է իրավական և մեթոդաբանական գործիքակազմի ձևավորման հարցը:</p> <p>«Գործողության 1.3»-ի 2024 թվականի երկրորդ կիսամյակի կատարողականի թիրախի շրջանակում</p>	<p>Կատարված է մեծամասամբ:</p>

<p>ուսումնասիրության և չափանիշների հիման վրա վերանայվել է բարեվարքության հարցերով կազմակերպիչների կարգավիճակը: Անհրաժեշտության դեպքում մշակվել են օրենսդրական նախագծեր, որով վերանայվել է բարեվարքության հարցերով կազմակերպիչների կարգավիճակը՝ ապահովելով վերջիններիս անկախությունը և անկողմնակալությունը:</p>	<p>«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում և այլ հարակից իրավական ակտերում հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված են ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:</p>	<p>Արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը: Նախագծերը շահագրգիռ մարմինների կարծիքների հիման վրա լրամշակվել են և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: Ներկայումս իրականացվում է Նախագծի լրամշակման աշխատանքները: Չնայած այն հանգամանքին, որ կատարողականի թիրախով նախատեսված գործողությունները ամբողջությամբ կատարվել են, որպես ուղղակի արդյունքային քանակական ցուցանիշ է նախատեսված եղել մշակված օրենսդրական փոփոխությունների փաթեթի ներկայացումը Ազգային Ժողով: Վերոգրյալի հաշվառմամբ գործողությունը գնահատվում է մեծամասամբ կատարված:</p>	
<p>Այլընտրանքային գնահատում</p>			
<p>Գործողությամբ նախատեսված օրենսդրական նախագծերը չեն արժանացել Կառավարության հավանությանը, ավելին՝ դրանք վերադարձվել են լրամշակման, ինչը նշանակում է, որ բովանդակային տեսանկյունից առկա են խնդիրներ և խոչընդոտներ:</p>			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.4

ԲԱՐԵԼԱՎԵԼ ԷԹԻՎԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Գույքագրվել են հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովների գործառույթների իրականացման խոչընդոտները:

Օրենսդրորեն նախատեսվել է պատգամավորների էթիկայի հարցերով հանձնաժողովի ձևավորումը և գործունեության կարգը:

Ուսումնասիրվել են պետական ծառայության առանձին տեսակների և համայնքային ծառայության էթիկայի հանձնաժողովների ձևավորման հնարավորությունը և գործունեության երաշխիքները:

Անհրաժեշտության դեպքում օրենսդրական փոփոխությունների փաթեթը հաստատվել է Կառավարության կողմից և ներկայացվել է ՀՀ Ազգային Ժողովի ընդունմանը:

Մտուզման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կատարող մարմին

Արդարադատության նախարարություն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Համակատարող մարմին

Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովների գործառույթների իրականացման խոչընդոտները գույքագրելու նպատակով Արդարադատության նախարարությունը բոլոր պետական մարմիններից, որտեղ գործում են պետական ծառայության առանձին տեսակներ, հավաքագրել է համապատասխան տեղեկատվություն: Դրա հիման վրա Արդարադատության նախարարությունը ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի բարեվարքության ծրագրի» (ՀԲԾ) հետ համատեղ իրականացրել է պետական ծառայության առանձին տեսակների և համայնքային ծառայության ոլորտում էթիկայի հանձնաժողովների համակարգի իրավական և գործնական խնդիրների վերաբերյալ ուսումնասիրություն:

Ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել էթիկայի հանձնաժողովների գործունեության առկա խնդիրները, մասնավորապես՝ ուսումնասիրվել է հանրային ծառայության առանձին տեսակներում էթիկայի հանձնաժողովների ձևավորման օրենսդրական առանձնահատկությունները: Պարզ է դարձել, որ ներկայում հանրային ծառայության ոչ բոլոր տեսակներում են գործում էթիկայի հանձնաժողովներ. մի շարք դեպքերում ոլորտային օրենսդրությունը ուղղակիորեն չի նախատեսում էթիկայի հանձնաժողովների ձևավորում և համապատասխան խախտումները ուսումնասիրվում են ծառայողական կամ կարգապահական քննության շրջանակներում: Որոշ դեպքերում առկա է էթիկայի հանձնաժողովների վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ, սակայն դրանք դեռևս չեն ձևավորվել և այլն: Համայնքային ծառայությունը կարգավորող օրենսդրությունում էթիկայի

հանձնաժողովների ձևավորման հստակ կառուցակարգեր ևս առկա չեն:

Ընդհանուր առմամբ, ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ պետական ծառայության առանձին տեսակների համար առանձին էթիկայի հանձնաժողովների ձևավորման օրենսդրական կառուցակարգերի տեղայնացումը ոլորտային օրենսդրությունում իրականացվել է ոչ միասնական եղանակով, առանձին ծառայության տեսակներում էթիկայի հանձնաժողովների ձևավորման գործընթացում ըստ էության չի դրսևորվել միասնական մոտեցում:

Ինչ վերաբերում է պատգամավորների էթիկայի հարցերով հանձնաժողովի ձևավորմանը, գործունեության կարգին և Ազգային Ժողովի անդամների վարքագծի կանոններին, ապա հարկ է նշել, որ դրանք Ազգային Ժողովի իրավասությունների ներքո են և իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի հաշվառմամբ ենթակա են իրականացման Ազգային Ժողովի կողմից:

Հարկ է նշել նաև, որ դեռևս 2023 թվականին Արդարադատության նախարարության և ԵԽ ներգրավմամբ Ազգային Ժողովի կողմից մշակվել են «Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորի վարքագծի կանոնագիրքը հաստատելու մասին» Ազգային Ժողովի որոշման և «Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծերը:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից 2024 թվականին մշակված փաստաթղթերով, մասնավորապես՝ Բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ տարեկան զեկույցում, ինչպես նաև Բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվության կառուցակարգերի խնդիրների վերաբերյալ տեղեկանքում (https://drive.google.com/file/d/10fY1q2rI3HPn7_xW7Gezu9nA629WvXtY/view), ի թիվս այլնի, արձանագրվել են նաև էթիկայի հանձնաժողովների ձևավորման և գործունեության համատեքստում առկա իրավական և պրակտիկ խնդիրները: Միաժամանակ, տարեկան վիճակագրության համատեքստում իրականացված հարցումների շրջանակներում որպես պարզաբանման ենթակա հարցեր սահմանվել է նաև էթիկայի հանձնաժողովների գործունեությանն առնչվող հարցեր, որոնց միջոցով ևս հավաքագրվել են վերջիններիս գործունեության հիմնական խնդիրները:

Կատարված ուսումնասիրությունների հիման վրա Արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր):

Նախագծերը ներկայացվել են շահագրգիռ մարմիններին կարծիքի: Ստացված կարծիքների հիման վրա Նախագծերը լրամշակվել են և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: Ներկայումս իրականացվում է Նախագծերի լրամշակման աշխատանքները:

Նախագծերով նախատեսվել է պետական ծառայության առանձին տեսակներում, համայնքային ծառայությունում, ՏԻՄ ավագանիներում ստեղծել էթիկայի հանձնաժողովներ և հստակեցվել է էթիկայի հանձնաժողովների իրավասությունների շրջանակը:

Փաստաթուղթը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.e-draft.am/projects/7848>:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Միջոցառման շրջանակներում քննարկումներ են տեղի ունեցել Ազգային Ժողովի պատգամավորների, շահագրգիռ մարմինների և միջազգային կառույցների ներկայացուցիչների ներգրավմամբ՝ ուղղված «Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորի վարքագծի կանոնագիրքը հաստատելու մասին» Ազգային Ժողովի որոշման և «Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծերի քննարկմանը:

2024 թվականի հոկտեմբերի 21-ին տեղի է ունեցել Հակակոռուպցիոն աշխատանքային խմբի հերթական հանդիպում, որի ընթացքում պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ համատեղ, ի թիվս այլնի, քննարկվել են նաև պետական ծառայության առանձին տեսակներում, համայնքային ծառայությունում, ՏԻՄ ավագանիներում էթիկայի հանձնաժողովների ստեղծման և էթիկայի հանձնաժողովների իրավասությունների շրջանակին առնչվող կառուցակարգերը(<https://www.moj.am/article/4182>):

Նախագծերը 2024 թվականի հոկտեմբերի 29-ին դրվել են հանրային քննարկման e-draft.am հարթակում (<https://www.e-draft.am/projects/7848>):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը

<p>Գույքագրվել են հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովների գործառույթների իրականացման խոչընդոտները: Օրենսդրորեն նախատեսվել է պատգամավորների էթիկայի հարցերով հանձնաժողովի ձևավորումը և գործունեության կարգը: Ուսումնասիրվել են պետական ծառայության առանձին տեսակների և համայնքային ծառայության էթիկայի հանձնաժողովների ձևավորման հնարավորությունը</p>	<p>1. Մշակվել են անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները «Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում: 2. Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ օրենսդրական փոփոխությունները պետական և համայնքային առանձին տեսակները կարգավորող օրենքներում և այլ հարակից իրավական ակտերում հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:</p>	<p>«Գործողության 1.4»-ի 2024 թվականի առաջին կիսամյակի կատարողականի թիրախի շրջանակում իրականացրել է պետական ծառայության առանձին տեսակների և համայնքային ծառայության ոլորտում էթիկայի հանձնաժողովների համակարգի իրավական և գործնական խնդիրների վերաբերյալ ուսումնասիրություն, որի արդյունքում վեր են հանվել էթիկայի հանձնաժողովների գործունեության առկա խնդիրները, մասնավորապես՝ ուսումնասիրվել է հանրային ծառայության առանձին տեսակներում էթիկայի հանձնաժողովների ձևավորման օրենսդրական առանձնահատկությունները: Դեռևս 2023 թվականին Արդարադատության նախարարության և ԵՄ ներգրավմամբ Ազգային Ժողովի կողմից մշակվել են «Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորի վարքագծի կանոնագիրքը հաստատելու մասին» Ազգային Ժողովի որոշման և «Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծերը: «Գործողության 1.4»-ի 2024 թվականի երկրորդ կիսամյակի կատարողականի թիրախի շրջանակում Արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերը, որոնք ներկայացվել են շահագրգիռ մարմինների կարծիքի: Ստացված կարծիքների հիման վրա նախագծերը լրամշակվել են և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: Հաշվի առնելով, որ գործողության կատարողականի թիրախով նախատեսված էր օրենսդրական</p>	<p>Կատարված է մեծամասամբ:</p>
---	--	--	-------------------------------

<p>և գործունեության երաշխիքները: Անհրաժեշտության դեպքում օրենսդրական փոփոխությունների փաթեթը հաստատվել է Կառավարության կողմից և ներկայացվել է ՀՀ Ազգային Ժողովի ընդունմանը:</p>		<p>փոփոխությունների փաթեթի հաստատում Կառավարության կողմից և ընդունման նպատակով ՀՀ Ազգային Ժողովի ներկայացում՝ գործողությունը գնահատվել է մեծամասամբ կատարված:</p>	
<p>Այլընտրանքային գնահատում</p>			
<p>Գործողությամբ նախատեսված իրավական ակտերի նախագծերը մշակվել են և գտնվում են լրամշակման փուլում: Հաշվի առնելով, որ օրենսդրական փոփոխությունների փաթեթը չի հաստատվել Կառավարության կողմից և չի ներկայացվել Ազգային ժողովի ընդունմանը, գործողությունը գնահատվում է որպես մասնակի կատարված:</p>			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.5

ԲԱՐԵԼԱՎԵԼ ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ԹՎԱՅԻՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Մշակել կոռուպցիայի կանխարգելման ոլորտում թվային վիճակագրության վարման մեթոդաբանություն և ուղեցույց:

Ստուգման միջոց

Ուղեցույցի և միասնական մեթոդաբանության առկայություն

Կատարող մարմին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Համակատարող մարմին

Արդարադատության նախարարություն

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Հանձնաժողովը սույն գործողության շրջանակներում, ինչպես նաև հիմք ընդունելով կոռուպցիայի կանխարգելման ոլորտում վիճակագրության հավաքագրման իր գործառնությունը և «Հանրային ծառայության մասին» օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերը՝ 2024 թվականի առաջին կիսամյակում մշակել և հանրային իշխանության մարմիններին շրջանառել է բարեվարքության

համակարգի վերաբերյալ վիճակագրության հավաքագրման առցանց հարցաթերթիկ՝ հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի, ինչպես նաև նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ մարմիններում առկա վիճակագրությունը ստանալու նպատակով:

2024 թվականի երկրորդ կիսամյակում Հանձնաժողովի կողմից մշակվել և 2024 թվականի սեպտեմբերի 13-ի որոշմամբ հաստատվել է Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում թվային վիճակագրության վարման մեթոդաբանական ուղեցույցը (<https://drive.google.com/file/d/1-Rp9jO5JfAPW4sTMN34C9T5T4h4RT7OP/view>): Ի լրումն վերոգրյալի՝ Վիճակագրության պետական խորհրդի՝ 2024 թվականի դեկտեմբերի 9-ի 63-Ս որոշմամբ հաստատվել է «Բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով իրականացված քննությունների մասին» տարեկան վիճակագրական ամփոփ ձևը, որով Հանձնաժողովը տարեկան կտրվածքով պաշտոնական վիճակագրություն է ներկայացնելու Վիճակագրական կոմիտե: Տարեկան վիճակագրության վարման նպատակով Հանձնաժողովը 2024 թվականի դեկտեմբերին մշակել և շրջանառել է էլեկտրոնային հարցաթերթեր: 2024 թվականի վերաբերյալ վիճակագրությունը Հանձնաժողովի կողմից կիրառարակվի 2025 թվականի առաջին կիսամյակում:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Մեթոդաբանական ուղեցույցը մշակվել է Վիճակագրական կոմիտեի հետ քննարկումների արդյունքում:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Մշակել կոռուպցիայի կանխարգելման ոլորտում թվային վիճակագրության վարման	Մշակվել են կոռուպցիայի կանխարգելման ոլորտում թվային վիճակագրության վարման	Հանձնաժողովի կողմից մշակվել և 2024 թվականի սեպտեմբերի 13-ի որոշմամբ հաստատվել է Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում թվային վիճակագրության վարման մեթոդաբանական ուղեցույցը: Հաստատված մեթոդաբանությամբ 2024 թվականի տարեկան վիճակագրության հավաքագրման գործընթացն արդեն մեկնարկել է:	Կատարված է ամբողջությամբ

մեթոդաբանություն և ուղեցույց:	մեթոդաբանություն և ուղեցույցներ:	Վիճակագրությունը վարվում է տարեկան կտրվածքով:	
Այլընտրանքային գնահատում			
Գործողությամբ սահմանված կատարողականի թիրախով, ինչպես նաև ուղղակի արդյունքային քանակական ցուցանիշներով նախատեսված թվային վիճակագրության վարման մեթոդաբանությունը և ուղեցույցները մշակվել են: Գործողությունը կատարված է ամբողջությամբ:			

4.Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.6

ԸՆԴԼԱՅՆԵԼ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԿԱ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Մշակվել և հաստատվել է թվայնացման հայեցակարգը:

Հայեցակարգի հիման վրա իրականացվել է տեխնիկական աջակցության գնահատում, դոնորների հետ համագործակցություն և համաձայնեցված իրականացման ապահովում:

Արդիականացվել են գործող էլեկտրոնային գործիքակազմերը՝ իրականացվել է.

1. Հայտարարագրման նոր էլեկտրոնային համակարգի խնդիրների շտկում
2. Հայտարարագրման նոր էլեկտրոնային համակարգի վերլուծական մոդուլի կառուցում
3. Նվերների հայտարարագրման մոդուլի կառուցում, ինտեգրում
4. Բարեվարքության ուսումնասիրության մոդուլի կառուցում, ինտեգրում
5. Կուսակցությունների ֆինանսական վերահսկողության, ներառյալ նախընտրական քարոզչության ժամանակահատվածը, մոդուլի կառուցում, ինտեգրում:

Ստուգման միջոց

Հայեցակարգ

Գործարկվող էլեկտրոնային գործիքներ

Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ

Կատարող մարմին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Համակատարող մարմին

Արդարադատության նախարարություն

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ)

Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)

Կենտրոնական ընտրական հանձնաժողով (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Որպես գործողության 1.6-ի ելակետային տվյալ նախատեսվել է բարեվարքության ուսումնասիրության գործընթացի շրջանակներում առկա գործիքակազմի ընդլայնում, մասնավորապես՝ բժշկական գաղտնիք կազմող տեղեկությունների, ինչպես նաև թեկնածուների հետ համատեղ բնակվող ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց վերաբերյալ տեղեկատվության ստացման հնարավորության նախատեսում: Մինչդեռ, որպես 2024 թվականի կատարողականի թիրախ նախատեսվել է մշակել օրենսդրական փոփոխության նախագծեր, որոնցով կնախատեսվի բարեվարքության ուսումնասիրության առանձին էլեկտրոնային հարթակ, դրա կիրառման կարգը, ինչպես նաև կկարգավորվի բարեվարքության ուսումնասիրության ընթացքում թվային այլ գործիքների կիրառման դեպքերն ու մանրամասները: Նշվածի առնչությամբ հարկ է նշել, որ 2024 թվականի մայիսի 17-ին ուժի մեջ մտած «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքով Հանձնաժողովին է վերապահվել՝ անձի հետ համատեղ բնակության հանգամանքը ստուգելու նպատակով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին դիմելու և տեղեկություններ ստանալու իրավասություն:

2024 թվականին մշակվել է թվայնացման հայեցակարգը ԱՄՆ ՄԶԳ կազմակերպության փորձագետի աջակցությամբ՝ «Միներջի» ընկերության կողմից: Բացի այդ, 2024 թվականի մայիսի 17-ին ուժի մեջ է մտել ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-160-Ն օրենքը, որի հիման վրա Հանձնաժողովի կողմից 2024 թվականի հուլիսի 19-ին սահմանվել է բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի և բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկի ձևանմուշները և դրանցում ներառվող տվյալների մանրամասները: «Միներջի» ընկերությունը հայտարարագրերի էլեկտրոնային համակարգի կառուցման աշխատանքների շրջանակներում մշակում է բարեվարքության հարցաթերթիկների թվային գործիքը, որը վերջնականացնելուց և Հանձնաժողովի կողմից թեստավորման փուլն անցնելուց հետո կներկայացվի Թվայնացման խորհրդում:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Օրենսդրական փոփոխությունների նախագիծը սահմանված կարգով շրջանառվել է, ներկայացվել է հարնային քննարկման, 2024 թվականի հունիսին և օգոստոսին տեղի են ունեցել շահագրգիռ մարմինների մասնակցությամբ քննարկումներ:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
<p>Մշակվել և հաստատվել է թվայնացման հայեցակարգը: Հայեցակարգի հիման վրա իրականացվել է տեխնիկական աջակցության գնահատում, դոնորների հետ համագործակցություն և համաձայնեցված իրականացման ապահովում: Արդիականացվել են գործող էլեկտրոնային գործիքակազմերը՝ իրականացվել է.</p>	<p>1. Մշակվել է թվայնացման հայեցակարգ: 2. Կատարելագործված և արդիականացված են գործող էլեկտրոնային գործիքակազմերը կամ ներդրված են նոր էլեկտրոնային գործիքակազմեր:</p>	<p>Հանձնաժողովին վերապահվել է բարեվարքության ուսումնասիրության լրացուցիչ գործիքակազմ, մշակվել է թվայնացման հայեցակարգը, Հանձնաժողովի իրավասության շրջանակներում հաստատվել են մի շարք իրավական ակտեր:</p>	<p>Կատարված է մասնակի</p>

<p>1.1. Հայտարարագրման նոր էլեկտրոնային համակարգի խնդիրների շտկում,</p> <p>1.2. Հայտարարագրման նոր էլեկտրոնային համակարգի վերլուծական մոդուլի կառուցում,</p> <p>1.3. Նվերների հայտարարագրման մոդուլի կառուցում, ինտեգրում,</p> <p>1.4. Բարեվարքության ուսումնասիրության մոդուլի կառուցում, ինտեգրում,</p> <p>1.5. Կուսակցությունների ֆինանսական վերահսկողության, ներառյալ նախընտրական քարոզչության ժամանակահատվածը, մոդուլի կառուցում, ինտեգրում</p>			
--	--	--	--

Այլընտրանքային գնահատում

Թվայնացման հայեցակարգի հաստատման մասին տեղեկությունը բացակայում է: Զեկույցի շրջանակներում անդրադարձ չի կատարվում գործողության մյուս կատարողականի թիրախների և ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշների կարգավիճակին: Նշյալի հաշվառմամբ՝ գործողությունը գնահատվում է մասնակի կատարված:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ

Հարկ է նշել, որ թիվ 1; 1.1; 1.2; 1.3; 1.5 կետերում ներկայացված կատարողականի թիրախները չեն բխում 1.6 գործողությունից և ելակետային տվյալներից, ինչի առնչությամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի Արդարադատության նախարարության կողմից 2024 թվականի հոկտեմբերին ներկայացված՝ «ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի քննարկման շրջանակներում ներկայացրել է իր դիտարկումները:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.7

ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄՇԱԿՎՈՂ ԱԿՏԵՐԻ (EX ANTE) ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ՝ ԴՐԱՆՑ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ (EX POST) ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Ուսումնասիրվել է իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության լավագույն մոդելի վերաբերյալ միջազգային փորձը՝ ներպետական կարիքների հաշվառմամբ:

Միջազգային փորձի հաշվառմամբ ընտրվել է իրավական ակտերի նախագծերի փորձաքննության կիրառելի մոդելը: Սահմանվել է իրավական ակտերի նախագծերի փորձաքննություն իրականացնող լիազոր մարմինը՝ գործադիրի կառուցակարգում:

Անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների փաթեթը հավանության է արժանացել Կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ-ի ընդունմանը:

Սահմանվել է փորձաքննության իրականացման մեթոդաբանությունը գործադիր/ԿԿՀ համագործակցությամբ:

Զարգացվել են իրավական ակտերի նախագծերի փորձաքննության լիազոր մարմնի կարողությունները:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Ձևավորված մարմին/ ստորաբաժանում

Կատարող մարմին

Արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

Կատարված է ամբողջությամբ

- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Արդարադատության նախարարությունը ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի բարեվարքության ծրագրի» (ՀԲԾ) հետ համատեղ իրականացրել է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության լավագույն մոդելի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն՝ ներպետական կարիքների հաշվառմամբ:

Ուսումնասիրության շրջանակներում միջազգային փորձի հաշվառմամբ անդրադարձ է կատարվել նորմատիվ իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննություն իրականացնող մարմիններին: Ըստ այդմ, տարբեր երկրների փորձից պարզ է դառնում, որ փորձաքննությունն իրականացվում է կամ մասնագիտացված հատուկ մարմինների, կամ մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանումների կողմից: Որոշ երկրներում ուսումնասիրությունն իրականացվում է ոչ թե մեկ, այլ մի քանի պետական մարմինների կողմից, որոշ երկրներում էլ փորձաքննության գործընթացին կարող են ներգրավվել նաև ակադեմիական ինստիտուտներ:

Ուսումնասիրության շրջանակներում անդրադարձ է կատարվել նաև իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննության էությանը և բովանդակությանը: Բացահայտվել են փորձաքննության հիմնական բովանդակային տարրերը, քննարկվել են դրանց առանձնահատկությունները:

Ուսումնասիրված միջազգային փորձի հիման վրա Արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ): Նախագիծով սահմանվել է իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննության առանձնահատկությունները, դրա իրականացման շրջանակը և հակակոռուպցիոն փորձաքննություն իրականացնող իրավասու մարմինը:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախագիծը 2024 թվականին ներկայացվել է հանրային քննարկման: Նախատեսվում է Նախագիծը 2025 թվականին ներկայացնել շահագրգիռ մարմինների կարծիքին:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
<p>Ուսումնասիրվել է իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության լավագույն մոդելի վերաբերյալ միջազգային փորձը՝ ներպետական կարիքների հաշվառմամբ: Միջազգային փորձի հաշվառմամբ ընտրվել է իրավական ակտերի նախագծերի փորձաքննության կիրառելի մոդելը: Մահմանվել է իրավական ակտերի նախագծերի փորձաքննություն իրականացնող լիազոր</p>	<p>Օրենսդրական փոփոխությունները «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում և այլ հարակից իրավական ակտերում հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:</p> <p>Իրավական ակտերի նախագծերի փորձաքննության լիազոր մարմինը</p>	<p>Իրականացրել է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության լավագույն մոդելի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն՝ ներպետական կարիքների հաշվառմամբ: Ուսումնասիրված միջազգային փորձի հիման վրա մշակվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը: Հաշվի առնելով, որ գործողության կատարողականի թիրախով նախատեսված էր օրենսդրական փոփոխությունների փաթեթի հաստատում Կառավարության կողմից, ընդունման նպատակով ՀՀ Ազգային Ժողովի ներկայացում և իրավասու մարմնի սահմանում՝ գործողությունը գնահատվել է մասնակի կատարված:</p>	<p>Կատարված է մասնակի</p>

<p>մարմինը՝ գործադիրի կառուցակարգում: Անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների փաթեթը հավանության է արժանացել Կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ-ի ընդունմանը: Սահմանվել է փորձաքննության իրականացման մեթոդաբանությունը գործադիր/ԿԿՀ համագործակցությամբ: Զարգացվել են իրավական ակտերի նախագծերի փորձաքննության լիազոր մարմնի կարողությունները:</p>			
<p>Այլընտրանքային գնահատում</p>			

Գործողության կատարողականի թիրախով նախատեսված օրենսդրական փոփոխությունների փաթեթի հաստատումը
Կառավարության կողմից չի ապահովվել, հետևաբար նաև նախագծերի փաթեթը չի ներկայացվել Ազգային Ժողով:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.8

ՄԻԱՄՆԱԿԱՆԱՑՆԵԼ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅՈՒՆԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Մշակվել է «Կոռուպցիայի կանխարգելման մասին» վերտառությամբ օրենքի նախագիծ, որով ամբողջականացվել են բարեվարքության համակարգի տարրերի՝ շահերի բախման, նվերների ընդունման սահմանափակումների, վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների միասնական կիրառման և կառավարման, կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող այլ կառուցակարգերի օրենսդրական կարգավորումները:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կատարող մարմին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին

Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

«Կոռուպցիայի կանխարգելման մասին» միասնական օրենքի մշակման համատեքստում 2024 թվականին մեկնարկել են համապատասխան աշխատանքները: Մասնավորապես, նախագծի մշակման նպատակով ԵՄ-ԵԽ «Լավ կառավարման

գործընկերություն III» շրջանակներում Եվրոպայի խորհրդի փորձագետների կողմից մշակվել և Արդարադատության նախարարություն է ներկայացվել տեխնիկական փաստաթուղթ, որը քննարկվել է Արդարադատության նախարարության և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հետ: Փաստաթղթով ներկայացվել են կոռուպցիայի կանխարգելման ոլորտում օրենսդրության միասնականացման վերաբերյալ համապատասխան առաջարկություններ:

Միաժամանակ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը իր կողմից մշակված՝ օրենսդրական բացերի և պրակտիկայում վերհանված խնդիրների գույքագրմամբ կազմված տեղեկանքները (զեկույցները) և վերաբերելի փաստաթղթերը ներկայացրել է Արդարադատության նախարարություն և ԵԽ՝ փոփոխությունները դրանց համատեքստում նախագծելու նպատակով:

Վերոգրյալի համատեքստում Արդարադատության նախարարությունը ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության հետ համատեղ մեկնարկել է նախագծի մշակման աշխատանքները, որոնք գտնվում են ընթացիկ փուլում:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախատեսվում է նախագիծը 2025 թվականին ներկայացնել շահագրգիռ մարմինների կարծիքին՝ միաժամանակ դնելով հանրային քննարկման e-draft.am հարթակում:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
--------------------	---	---	----------------------

<p>Մշակվել է «Կոռուպցիայի կանխարգելման մասին» վերտառությամբ օրենքի նախագիծ, որով ամբողջականացվել են բարելավարքության համակարգի տարրերի՝ շահերի բախման, նվերների ընդունման սահմանափակումների, վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների միասնական կիրառման և կառավարման, կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող այլ կառուցակարգերի օրենսդրական կարգավորումները:</p>	<p>«Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի և հարակից այլ ակտերում փոփոխությունների նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:</p>	<p>Օրենսդրական ակտի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները հստակեցվել են: Նախագծի մշակման աշխատանքները գտնվում են ընթացիկ փուլում:</p>	<p>Կատարված է մեծամասամբ</p>
<p>Այլընտրանքային գնահատում</p>			

Կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող օրենսդրության միասնականացման գործընթացը գտնվում է նախագծի լրամշակման փուլում, և այլընտրանքային գնահատման պահին վերջնական տարբերակ դեռևս առկա չէ: Հստակ չէ՝ արդյոք միասնական իրավական ակտում ներառվելու է նաև հակակոռուպցիոն կրթության և իրազեկման բաղադրիչը:

Մոնիթորինգ և գնահատում իրականացնող պատասխանատու մարմնի կողմից գործողության գնահատումը որպես մեծամասամբ կատարված բավական խնդրահարույց է: Օրենսդրական նախագծի մշակումը իրականացվել է առանց քաղաքացիական հասարակության մասնակցության:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.9

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՆԵՐՂՆԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՅԼԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

2024 թվականի կատարողականի թիրախ

Մշակել օրենսդրական նախագիծ՝ պետական և ՏԻՄ-երի համար սահմանելով կոռուպցիոն ռիսկերի գնահատումների հիման վրա կոռուպցիոն ռիսկերի մեղմացմանը, այդ թվում՝ բարեվարքության մեղմացմանն ուղղված ոլորտային գործողությունների մշակման (առողջացման ծրագիր) գործառույթ՝ նախատեսելով ԿԿՀ-ի հետ համագործակցության մեխանիզմներ:

Մշակել օրենսդրական նախագիծ՝ ԿԿՀ-ին վերապահելով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, գնահատման, դրանց զսպմանն ուղղված միջոցառումների իրականացումը, այն է՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման մեթոդաբանությունների մշակման և հաստատման, արտաքին ընտրանքային գնահատման մեթոդական և մասնագիտական աջակցության, կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունքների հիման վրա պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի զսպման (առողջացման) ծրագրերի մշակմանն ու իրականացմանը աջակցության գործառույթները:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային զեկույցներ

Մամուլի հաղորդագրություններ

ԶԼՄ հրապարակումներ

Կատարող մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Համակատարող մարմին

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Պետական կառավարման համակարգի մարմիններ

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից մշակվել և 2024 թվականի ապրիլի 4-ին Արդարադատության նախարարություն է ներկայացրել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր), որով առաջարկվում է Հանձնաժողովին վերապահել հանրային իշխանության մարմիններում, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում, պետության կողմից հիմնադրված հիմնադրամներում, 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության և համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման գործիքակազմի միասնականության ապահովման, իրավասու մարմիններ առաջարկությունների ներկայացման գործառույթները, մեթոդաբանության մշակման և հաստատման, մասնագիտական խորհրդատվության և մեթոդական աջակցության տրամադրման լիազորությունները:

Նախագծով առաջարկվում է նաև համապատասխան փոփոխություններ իրականացնել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում, որի ընդունումը հնարավորություն կտա ապահովել կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման գործընթացի միասնականությունը:

Նախագծերը լրամշակվել են շահագրգիռ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված կարծիքների հիման վրա և ներկայացվել են Վարչապետի աշխատակազմ: Ներկայումս ընթացքի մեջ են Նախագծերի լրամշակման աշխատանքները:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախագծերը 2024 թվականի մայիսի 3-ին ներկայացվել են հանրային քննարկման իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am հարթակում (<https://www.e-draft.am/projects/7187>):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
<p>2. Մշակել օրենսդրական նախագիծ՝ պետական և ՏԻՄ-երի համար սահմանելով կոռուպցիոն ռիսկերի գնահատումների հիման վրա կոռուպցիոն ռիսկերի մեղմացմանը, այդ թվում՝ բարեվարքության մեղմացմանն ուղղված ոլորտային գործողությունների մշակման (առողջացման ծրագիր) գործառույթ՝ նախատեսելով ԿԿՀ-ի</p>	<p>1. Օրենսդրական փոփոխությունները «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքում և հարակից այլ ակտերում հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: 2. Ընտրվել է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի</p>	<p>Նախագծերը մշակվել են, այնուհետև շահագրգիռ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված կարծիքների հիման վրա լրամշակվել և ներկայացվել են Վարչապետի աշխատակազմ:</p>	<p>Կատարված է ամբողջությամբ</p>

<p>հետ համագործակցության մեխանիզմներ (1-ին կիսամյակ, 2024): Մշակել օրենսդրական նախագիծ՝ ԿԿՀ-ին վերապահելով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, զնահատման, դրանց զսպմանն ուղղված միջոցառումների իրականացումը, այն է՝ պետական և տեղական կոռուպցիոն ռիսկերի զնահատման և կառավարման մեթոդաբանությունների մշակման և հաստատման, արտաքին ընտրանքային զնահատման մեթոդական և</p>	<p>զնահատման և կառավարման լավագույն մոդելը:</p>		
--	---	--	--

<p>մասնագիտական աջակցության, կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունքների հիման վրա պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման (առողջացման) ծրագրերի մշակմանն ու իրականացմանը աջակցության գործառույթները:</p>			
---	--	--	--

Այլընտրանքային գնահատում

Ներկայացված նկարագրի համաձայն՝ նախագծերը լրամշակվել են շահագրգիռ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված կարծիքների հիման վրա և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: Հարկ է նշել, որ նախագծերի վերաբերյալ 2024 թվականի մայիսի 17-ին e-draft հարթակում տեղադրված ԹԻՀԿ նկատառումների վերաբերյալ ոչ մի արձագանք մինչ օրս չկա և պարզ չէ, թե ԿԿՀ-ն կամ Արդարադատության նախարարությունը նշված նկատառումներից որոնք են ընդունել, որոնք՝ ոչ: Այդ մասին ԹԻՀԿ-ն չի տեղեկացվել, համատեղ քննարկումներ տեղի չեն ունեցել: Բացի այդ, հաշվի առնելով, որ մինչ օրս նախագիծը գտնվում է լրամշակման փուլում, կարելի է եզրակացնել, որ այն վերջնականացված չէ և «ամբողջությամբ կատարված» կարգավիճակի գնահատականին չի համապատասխանում:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.10

ԸՆԴԼԱՅՆԵԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆԱԿԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Օրենսդրական փոփոխությունների միջոցով ընդլայնվել է հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը՝ ներառելով՝

1) պետական և համայնքային կազմակերպությունների՝ ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց՝ ըստ այդմ սահմանելով սույն խմբի համար ֆինանսատնտեսական չափանիշներ և վերանայելով իրավիճակային հայտարարագիր ներկայացնելու կարգավորումները.

2) այլ ռիսկային պաշտոններ ստանձնող անձանց:

2. Օրենսդրական փոփոխությունների միջոցով հայտարարատու բոլոր պաշտոնատար անձանց համար սահմանվել է շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կատարող մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Հանրային ծառայության մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ): Նախագծով նախատեսվում է ընդլայնել հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը, ինչպես նաև հայտարարատու բոլոր պաշտոնատար անձանց համար սահմանել շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն:

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ Նախագծի մշակումը բխում է նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի գնահատման հինգերորդ փուլի շրջանակներում առկա հանձնառություններից:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախատեսվում է Նախագիծը 2025 թվականին ներկայացնել շահագրգիռ մարմինների կարծիքին՝ միաժամանակ դնելով հանրային քննարկման e-draft.am հարթակում:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Օրենսդրական փոփոխությունների միջոցով ընդլայնվել է հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը՝ ներառելով՝	Օրենսդրական փոփոխությունները «Հանրային ծառայության մասին» օրենքում և հարակից այլ ակտերում հավանության են արժանացել ՀՀ	«Հանրային ծառայության մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակվել է, որով նախատեսվում է ընդլայնել հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը, ինչպես նաև հայտարարատու բոլոր պաշտոնատար անձանց համար սահմանել շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն:	Կատարված է ամբողջությամբ:

<p>1) պետական և համայնքային կազմակերպությունների՝ ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց՝ ըստ այդմ սահմանելով սույն խմբի համար ֆինանսատնտեսական չափանիշներ և վերանայելով իրավիճակային հայտարարագիր ներկայացնելու կարգավորումները.</p> <p>2) այլ ռիսկային պաշտոններ ստանձնող անձանց: Օրենսդրական փոփոխությունների միջոցով հայտարարատու բոլոր պաշտոնատար անձանց համար սահմանվել է շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն:</p>	<p>կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԾ-ի ընդունմանը:</p>		
---	---	--	--

Այլընտրանքային գնահատում

Նախագիծը 2024 թվականին չի ներակայացել e-draft հարթակում հանրային քննարկման և պարզ չէ, որ պաշտոններին են ներառվել նախագծում: Ելնելով վերոնշյալից՝ առաջարկվում է վերանայել կատարման կարգավիճակի գնահատականը:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.13

ՏԱՐԱՆՋԱՏԵԼ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՍ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ (ՇՐՋԱՆԱԿԸ, ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐԸ)

2024 թվականի կատարողականի թիրախ

Վերանայվել են այն հանրային պաշտոնները, որոնցով բարեվարքության ուսումնասիրությունը վերապահված չէ ԿԿՀ-ին, համապատասխան մարմնում իրականացնելու կառուցակարգը:

Ընտրվել է պետական մարմիններում, ՏԻՄ-երում և պետական մասնակցությամբ ընկերություններում բարեվարքության ուսումնասիրության ստուգման պատշաճ և գործող կառուցակարգեր:

Մշակվել են օրենսդրական փոփոխությունների նախագծեր՝ հստակեցնելով ընթացիկ բարեվարքության ուսումնասիրության շրջանակը, ստուգող մարմինները, ինչպես նաև իրականացման մեխանիզմները:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կատարող մարմին

Արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Արդարադատության նախարարության կողմից իրականացվել է ուսումնասիրություն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության ուսումնասիրության կառուցակարգերի հաշվառմամբ: Ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության միջազգային առկա հանձնառությունները, միջազգային մոնիթորինգային մարմինների կողմից ինչպես Հայաստանի Հանրապետությանը, այնպես էլ այլ երկրներին տրված հանձնարարականները: Բացի այդ, ուսումնասիրության շրջանակներում անդրադարձ է կատարվել միջազգային լավագույն փորձին: Մասնավորապես, ուսումնասիրվել է նաև Ալբանիայի, Դանիայի, Գերմանիայի, Իսլանդիայի, Նորվեգիայի, Լիտվայի, Էստոնիայի և մի շարք այլ երկրների միջազգային փորձը և նշյալ երկրներում տարբեր պետական մարմինների և պաշտոնատար անձանց բարեվարքության ուսումնասիրության առանձնահատկությունները:

Դեռևս 2023 թվականին մշակվել էր «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» սահմանադրական օրենքի, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Քննչական կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր), որոնք հավանության էին արժանացել Կառավարության կողմից 2023 թվականի դեկտեմբերի 14-ին և ներկայացվել էին Ազգային Ժողով: ԱԺ կողմից վերոգրյալ նախագծերն ընդունվել են 2024 թվականի ապրիլի 11-ին:

Իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանվել են բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության կառուցակարգեր դատավորների, դատախազների և քննիչների համար: Բացի այդ, սահմանվել են բարեվարքության ուսումնասիրության կառուցակարգեր Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոնների թեկնածուների, ինչպես նաև Քննչական կոմիտեում և Հակակոռուպցիոն կոմիտեում առաջխաղացման ենթակա անձանց համար: Նաև հստակեցվել են «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված բարեվարքության ուսումնասիրության առկա կառուցակարգերը: Վերոգրյալ օրենսդրական փոփոխությունների հիման վրա կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից 2024 թվականի հուլիսի 19-ին ընդունվել է «Բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի և բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկի ձևանմուշները և դրանցում ներառվող տվյալների մանրամասները սահմանելու մասին» N 04-Ն որոշումը:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն
Նախագծերի մշակման շրջանակներում անցկացվել են քննարկումներ շահագրգիռ մարմինների հետ:

Նախագծերը 2023 թվականի մայիսի 19-ին դրվել են հանրային քննարկման e-draft.am հարթակում (<https://www.e-draft.am/projects/5756/>):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
<p>Վերանայվել են այն հանրային պաշտոնները, որոնցով բարեվարքության ուսումնասիրությունը վերապահված չէ ԿԿՀ-ին, համապատասխան մարմնում իրականացնելու կառուցակարգը:</p> <p>2. Ընտրվել է պետական մարմիններում, ՏԻՄ-երում և պետական մասնակցությամբ ընկերություններում բարեվարքության</p>	<p>Օրենսդրական փոփոխությունները «Հանրային ծառայության մասին» օրենքում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում և հարակից այլ ակտերում հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք անցնում են ընթացիկ</p>	<p>Նախագծերը մշակվել են: Շահագրգիռ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված կարծիքների հիման վրա լրամշակվել և ներկայացվել են Վարչապետի աշխատակազմ: Ազգային Ժողովի կողմից վերոգրյալ նախագծերն ընդունվել են 2024 թվականի ապրիլի 11-ին: Միաժամանակ, 2024 թվականին ներդրվել են ընթացիկ բարեվարքության ուսումնասիրության կառուցակարգեր, որոնք սկսել են գործել 2024 թվականից: Ուստի գործողությունը գնահատվում է մեծամասամբ կատարված:</p>	<p>Կատարված է մեծամասամբ</p>

<p>ուսումնասիրության ստուգման պատշաճ և գործող կառուցակարգեր: Մշակվել են օրենսդրական փոփոխությունների նախագծեր՝ հստակեցնելով ընթացիկ բարեվարքության ուսումնասիրության շրջանակը, ստուգող մարմինները, ինչպես նաև իրականացման մեխանիզմները:</p>	<p>բարեվարքության ուսումնասիրություններ:</p>		
---	--	--	--

Այլընտրանքային գնահատում

Գործողության համար դիտարկվող ժամանակահատվածի համար նախատեսված էր երեք խումբ գործողություն: Առաջին՝ վերանայել այն հանրային պաշտոնները, որոնցով բարեվարքության ուսումնասիրությունը վերապահված չէ ԿԿՀ-ին, համապատասխան մարմնում իրականացնելու կառուցակարգը: Երկրորդ և երրորդ գործողություններն են՝ ընտրել պետական մարմիններում, ՏԻՄ-երում և պետական մասնակցությամբ ընկերություններում բարեվարքության ուսումնասիրության ստուգման պատշաճ և գործող կառուցակարգեր, ինչպես նաև մշակել օրենսդրական փոփոխությունների նախագծեր՝ հստակեցնելով ընթացիկ բարեվարքության ուսումնասիրության շրջանակը, ստուգող մարմինները, ինչպես նաև իրականացման մեխանիզմները:

Բարեվարքության ուսումնասիրության վերաբերյալ օրենսդրական որոշ փոփոխություններ արդեն իրականացվել են, ուստի գործողությունը կարելի է գնահատել որպես մեծամասամբ կատարված:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.14

ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԿԿԶ ԿՈՂՄԻՑ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՆՇԱՆԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Հետազոտվել է բարեվարքության ուսումնասիրության չափորոշիչների միջազգային լավագույն փորձը՝ ներպետական կարիքների հաշվառմամբ (համապատասխանաբար պաշտոնի նշանակման, առաջխաղացման, ընթացիկ և լիազորությունների լայն շրջանակ ունեցող և ինքնուրույն որոշումների կայացման իրավասություն ունեցող հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ստուգումների համար):

Բարեվարքության ուսումնասիրության չափորոշիչների միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության արդյունքների հիման վրա՝ մշակվել են օրենսդրական փոփոխություններ, որոնց համաձայն՝ թափուր հաստիքների համալրման մրցութային և առաջխաղացման գործընթացներում թեկնածուների բարեվարքությունը ստուգելու համար կիրառվում են գրավոր/բանավոր առաջադրանքներ, ներդնել հանրային պաշտոնը ստանձնելու կամ առաջխաղացման համար թեկնածուների բարեվարքության գնահատման չափորոշիչներ, ԿԿԶ-ի կողմից թեկնածուի բարեվարքության բացասական եզրակացության պարագայում, նրա՝ համապատասխան պաշտոնի նշանակումը կամ առաջխաղացումն իրականացվում է պատճառաբանված որոշման հիման վրա: Նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ-ի ընդունմանը:

Կատարող մարմին

Արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Արդարադատության նախարարությունը իրականացրել է ուսումնասիրություն բարեվարքության ուսումնասիրության չափորոշիչների միջազգային լավագույն փորձի վերաբերյալ: Ուսումնասիրությունն իրականացվել է նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում: Մասնավորապես, ուսումնասիրվել է Լիտվայի, Բուլղարիայի, Նիդերլանդների, Մոլդովայի, Ուկրաինայի և այլ երկրների փորձը, ինչի արդյունքում պարզ է դարձել, որ բարեվարքության ուսումնասիրությունն իրականացվում է տարբեր ծավալներով և պաշտոնատար անձանց տարբեր շրջանակների համար:

Միաժամանակ, ուսումնասիրության շրջանակներում վեր են հանվել լիազորությունների լայն շրջանակ ունեցող և ինքնուրույն որոշումների կայացման իրավասություն ունեցող հանրային պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության ուսումնասիրության առանձնահատկությունները: Ուսումնասիրության արդյունքում Արդարադատության նախարարության կողմից «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության աջակցությամբ մշակվել, ինչպես նաև շահագրգիռ մարմիններին կարծիքի են ներկայացվել ԸԲՔադաքացիական ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր): Նախագծերը ներկայացված առաջարկությունների հիման վրա լրամշակվել և ներկայացվել են Վարչապետի աշխատակազմ: Ներկայումս ընթացքի մեջ են Նախագծերի լրամշակման աշխատանքները:

Նախագծերով նախատեսվում են պետական ծառայության առանձին տեսակներում և համայնքային ծառայությունում ներդնել բարեվարքության ուսումնասիրության մեխանիզմներ: Մասնավորապես, առաջարկվում է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ պետական ծառայության առանձին տեսակներում թափուր հաստիքների համալրման համար անցկացվող հարցազրույցի փուլում գրավոր կամ բանավոր առաջադրանքների եղանակով իրականացնել նաև թեկնածուների բարեվարքության ուսումնասիրություն:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախագծերը 2024 թվականի նոյեմբերի 1-ին դրվել են հանրային քննարկման e-draft.am հարթակում (<https://www.e-draft.am/projects/7869>):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
<p>Հետազոտվել է բարելավրթության ուսումնասիրության չափորոշիչների միջազգային լավագույն փորձը՝ ներպետական կարիքների հաշվառմամբ (համապատասխանաբար պաշտոնի նշանակման, առաջխաղացման, ընթացիկ և լիազորությունների լայն շրջանակ ունեցող և ինքնուրույն որոշումների կայացման իրավասություն ունեցող հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ստուգումների համար): Բարելավրթության ուսումնասիրության չափորոշիչների</p>	<p>Օրենսդրական փոփոխությունները «Հանրային ծառայության մասին» օրենքում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում և հարակից այլ ակտերում հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: Նշանակումներ կատարելիս ԿԿՀ եզրակացությունները հաշվի չառնելու</p>	<p>Նախագծերը մշակվել են: Շահագրգիռ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված կարծիքների հիման վրա լրամշակվել և ներկայացվել են Վարչապետի աշխատակազմ: Հաշվի առնելով, 2024 թվականի կատարողականի թիրախով նախատեսված գործողությունների կատարվածության աստիճանը՝ գործողությունը գնահատվում է մասնակի կատարված:</p>	<p>Կատարված է մասնակի</p>

<p>միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության արդյունքների հիման վրա՝ մշակվել են օրենսդրական փոփոխություններ, որոնց համաձայն՝ թափուր հաստիքների համալրման մրցութային և առաջխաղացման գործընթացներում թեկնածուների բարեվարքությունը ստուգելու համար կիրառվում են գրավոր/բանավոր առաջադրանքներ, ներդնել հանրային պաշտոնը ստանձնելու կամ առաջխաղացման համար թեկնածուների բարեվարքության գնահատման չափորոշիչներ, ԿԿՀ-ի կողմից թեկնածուի բարեվարքության</p>	<p>դեպքում տրվում է պատճառաբանություն:</p>		
---	--	--	--

<p>բացասական եզրակացության պարագայում, նրա՝ համապատասխան պաշտոնի նշանակումը կամ առաջխաղացումն իրականացվում է պատճառաբանված որոշման հիման վրա: Նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ-ի ընդունմանը:</p>			
<p>Այլընտրանքային գնահատում</p>			
<p>Օրենսդրական փոփոխություններ նախատեսող նախագծերը մշակվել են, այնուհետև շահագրգիռ պետական մարմինների և ՀԿ-ների կողմից ներկայացված կարծիքների հիման վրա լրամշակվել և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: Նշյալի հաշվառմամբ՝ գործողությունը գնահատվում է որպես մասնակի կատարված:</p>			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.15

ՄԱՀՄԱՆԵԼ ԿԿՀ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁ

2024 թվականի կատարողականի թիրախ

Հետազոտվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կազմված բարեվարքության վերաբերյալ եզրակացության եզրափակիչ մասը հրապարակային դարձնելու անհրաժեշտությունը, բարեվարքության ուսումնասիրության չափորոշիչների միջազգային լավագույն փորձը՝ ներպետական կարիքների հաշվառմամբ:

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կազմված բարեվարքության վերաբերյալ եզրակացության եզրափակիչ մասը հրապարակային դարձնելու անհրաժեշտության ուսումնասիրության արդյունքների հիման վրա և անհրաժեշտության դեպքում՝ մշակվել են օրենսդրական փոփոխություններ:
2. Նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ-ի ընդունմանը:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կատարող մարմին

Արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Արդարադատության նախարարության կողմից ԱՄՆ ՄԶԳ և ԵՄ աջակցությամբ իրականացվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացության եզրափակիչ մասը հրապարակային դարձնելու անհրաժեշտության մասին ուսումնասիրություն: Նշվածի շրջանակներում ուսումնասիրվել է բարեվարքության ուսումնասիրության արդյունքների հրապարակման միջազգային լավագույն փորձը և միջազգային զեկույցներով արձանագրված խնդիրները: Մասնավորապես, ՏՀԶԿ-ն Հայաստանի 5-րդ փուլի գնահատման զեկույցում դատական իշխանության անկախությունը, դատախազների և քննիչների նշանակման գործընթացը գնահատելիս արձանագրում է, որ բարեվարքության ուսումնասիրության եզրակացությունները հրապարակային չեն և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունները ունեն խորհրդատվական բնույթ: Չնայած նրան, որ բարեվարքության ուսումնասիրության արդյունքների հրապարակայնության պահանջ ՏՀԶԿ-ն չի սահմանում, սակայն նշում է, որ պաշտոնատար անձանց նշանակման գործընթացները պետք է լինեն թափանցիկ՝ ամրապնդելով հանրային վստահությունը տվյալ գործընթացների նկատմամբ: Միաժամանակ, հենց այս համատեքստում էլ անդրադարձ է կատարվում բարեվարքության ուսումնասիրության արդյունքներին՝ նշելով որ դրանց ազդեցությունը անհրաժեշտ է ամրապնդել: Նշյալ ուսումնասիրությունն Արդարադատության նախարարության կողմից 2024 թվականի հունիսին ներկայացվել է շահագրգիռ մարմինների կարծիքին դիրքորոշման ստացման նպատակով: Ուսումնասիրության արդյունքում Արդարադատության նախարարության կողմից մշակվել, ինչպես նաև շահագրգիռ մարմիններին կարծիքի է ներկայացվել ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր): Ներկայումս ընթանում են նախագծերի վերաբերյալ շահագրգիռ մարմիններից ստացված կարծիքների ամփոփման աշխատանքները: Նախագծերով նախատեսվում է բարձրացնել բարեվարքության վերաբերյալ եզրակացությունների հիման վրա նշանակում իրականացնող մարմինների հաշվետվողականությունը՝ ապահովելով նշանակումների պատճառաբանվածությունը և եզրակացությունների եզրափակիչ մասի հրապարակայնությունը:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախագծերը 2024 թվականի նոյեմբերի 2-ին դրվել են հանրային քննարկման e-draft.am հարթակում (<https://www.e-draft.am/projects/7871>): Միաժամանակ, ուսումնասիրությունների արդյունքում առկա մոտեցումները քննարկվել են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և շահագրգիռ պետական մարմինների մասնակցությամբ:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
<p>Հետազոտվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կազմված բարեվարքության վերաբերյալ եզրակացության եզրափակիչ մասը հրապարակային դարձնելու անհրաժեշտությունը, բարեվարքության ուսումնասիրության չափորոշիչների միջազգային լավագույն փորձը՝ ներպետական կարիքների հաշվառմամբ: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կազմված</p>	<p>Օրենսդրական փոփոխությունները «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:</p> <p>Բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները հրապարակվում են ԿԿՀ կայքում:</p>	<p>Նախագծերը մշակվել են: Ներկայումս իրականացվում է նախագծերի վերաբերյալ շահագրգիռ մարմիններից ստացված կարծիքների ամփոփման աշխատանքները: Հաշվի առնելով, որ գործողության կատարողականի թիրախով նախատեսվել է մշակված նախագծերի՝ Կառավարության կողմից հավանության արժանանալը և Ազգային Ժողով ներկայացնելը, գործողությունը գնահատվում է մասնակի կատարված:</p>	<p>Կատարված է մասնակի</p>

<p>բարեվարքության վերաբերյալ եզրակացության եզրափակիչ մասը հրապարակային դարձնելու անհրաժեշտության ուսումնասիրության արդյունքների հիման վրա և անհրաժեշտության դեպքում՝ մշակվել են օրենսդրական փոփոխություններ: Նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ- ի ընդունմանը:</p>			
<p>Այլընտրանքային գնահատում</p>			

Գործողության գնահատման կարգավիճակը համընկնում է մոնիթորինգի և գնահատման համար պատասխանատու մարմնի կողմից իրականացված գնահատման հետ:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.16

ԱՄՐԱՊԵՆԵԼ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Մշակվել են օրենսդրական փոփոխության նախագծեր, որոնցով նախատեսվում է բարեվարքության ուսումնասիրության առանձին էլեկտրոնային հարթակ, դրա կիրառման կարգ, ինչպես նաև կարգավորվում է բարեվարքության ուսումնասիրության ընթացքում թվային այլ գործիքների կիրառման դեպքերն ու մանրամասները:

Նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ-ի ընդունմանը:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կատարող մարմին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Համակատարող մարմին

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

Արդարադատության նախարարություն

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված աշխատանքների նկարագիրը

2024 թվականի մայիսի 17-ին ուժի մեջ են մտել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-160-Ն օրենքը, իսկ նույն տարվա օգոստոսի 5-ին՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին»

օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքները, որոնցով սահմանվել են բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը էլեկտրոնային համակարգում ներկայացնելու կարգը:

Միաժամանակ, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-160-Ն օրենքի հիման վրա Հանձնաժողովի կողմից 2024 թվականի հուլիսի 19-ին սահմանվել է բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի և բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկի ձևանմուշները (<https://cpcarmenia.am/wp-content/uploads/2024/09/1641.pdf>) և դրանցում ներառվող տվյալների մանրամասները:

Բացի այդ, ԱՄՆ ՄԶԳ կազմակերպության փորձագետի աջակցությամբ, ինչպես նաև «Միներջի» ընկերության կողմից մշակվել է բարեվարքության էլեկտրոնային համակարգի թվայնացման հայեցակարգը:

Ներկայումս «Միներջի» ընկերության կողմից հայտարարագրերի էլեկտրոնային համակարգի կառուցման աշխատանքների շրջանակներում իրականացվում է բարեվարքության հարցաթերթիկների թվային գործիքի մշակման աշխատանքներ, որը վերջնականացնելուց և Հանձնաժողովի կողմից թեստավորման փուլն անցնելուց հետո կներկայացվի Թվայնացման խորհրդում:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Օրենսդրական փոփոխությունների նախագիծը սահմանված կարգով շրջանառվել է, դրվել են հանրային քննարկման e-draft.am հարթակում (<https://www.e-draft.am/projects/7263>), տեղի են ունեցել շահագրգիռների մարմինների մասնակցությամբ քննարկումներ:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը

<p>Մշակվել են օրենսդրական փոփոխության նախագծեր, որոնցով նախատեսվում է բարեվարքության ուսումնասիրության առանձին էլեկտրոնային հարթակ, դրա կիրառման կարգ, ինչպես նաև կարգավորվում է բարեվարքության ուսումնասիրության ընթացքում թվային այլ գործիքների կիրառման դեպքերն ու մանրամասները: Նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ-ի ընդունմանը:</p>	<p>Օրենսդրական փոփոխությունները «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում և հարակից այլ ակտերում հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: Ստեղծվել է բարեվարքության ուսումնասիրության առանձին էլեկտրոնային հարթակ:</p>	<p>2024 թվականի մայիսի 17-ին ուժի մեջ են մտել ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-160-Ն օրենքը, իսկ նույն տարվա օգոստոսի 5-ին՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքները, որոնցով սահմանվել են բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը էլեկտրոնային համակարգում ներկայացնելու կարգը: 2024 թվականի հուլիսի 19-ին սահմանվել է բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի և բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկի ձևանմուշները:</p>	<p>Կատարված է ամբողջությամբ</p>
--	---	--	---------------------------------

Այլընտրանքային գնահատում

Գործողության համար սահմանված ուղղակի արդյունքային ցուցանիշի համաձայն պետք է ստեղծվեր բարեվարքության ուսումնասիրության առանձին էլեկտրոնային հարթակ: Թվային հարթակը դեռևս պատրաստ չէ և չի գործում: Առաջարկվում է գնահատել «Կատարված է մեծամասամբ»:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ.

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.17

**ՄԵԾԱՑՆԵԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ
ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ**

2024 թվականի կատարողականի թիրախ

Մշակվել են օրենսդրական փոփոխությունների նախագծեր, որոնցով նախատեսվում են ԿԿՀ-ի և ԿԸՀ-ի, ԿԿՀ-ի և Հակակոռուպցիոն կոմիտեի միջև համագործակցության եղանակները և կարգը, ԿԿՀ-ի կողմից կուսակցությունների ընթացիկ ֆինանսական վերահսկողության գործիքները և կարգը, ինչպես նաև կարգավորվում են ԿԿՀ գործառույթի պատշաճ իրականացման համար այլ հարցերը:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կատարող մարմին

Արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Կենտրոնական ընտրական հանձնաժողով (համաձայնությամբ)

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների արդյունավետության բարձրացման նպատակով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից Ընտրական համակարգերի միջազգային հաստատության աջակցությամբ մշակվել է «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերը:

Զուգահեռաբար Ազգային Ժողովի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 5-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերը:

Ազգային Ժողովի կողմից իրականացված օրենսդրական փոփոխություններով, ի թիվս այլնի, բարելավվել է նաև կուսակցություններին կատարվող նվիրատվությունների, կուսակցությունների պետական ֆինանսավորման, կուսակցությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների վերաբերյալ առկա կարգավորումները: Միաժամանակ, հստակեցվել է նախընտրական գործընթացում կուսակցությունների նախընտրական հիմնադրամների ձևավորման, ֆինանսական տեղեկատվության ներկայացման հետ կապված առկա կառուցակարգերը: Այս համատեքստում կարգավորվել է նաև նախընտրական գործընթացի շրջանակներում կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի գործառույթները: Նախատեսվել է, որ նախընտրական գործընթացում կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի փոխարեն իրականացվելու է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից: Հստակեցվել են նաև այս երկու մարմինների լիազորությունների շրջանակը՝ լուծելով գործնականում առկա խնդիրները:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախատեսվում է Նախագծերը 2025 թվականին ներկայացնել շահագրգիռ մարմինների կարծիքին՝ միաժամանակ դնելով հանրային քննարկման e-draft.am հարթակում:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը

<p>Մշակվել են օրենսդրական փոփոխությունների նախագծեր, որոնցով նախատեսվում են ԿԿՀ-ի և ԿԸՀ-ի, ԿԿՀ-ի և Հակակոռուպցիոն կոմիտեի միջև համագործակցության եղանակները և կարգը, ԿԿՀ-ի կողմից կուսակցությունների ընթացիկ ֆինանսական վերահսկողության գործիքները և կարգը, ինչպես նաև կարգավորվում են ԿԿՀ գործառույթի պատշաճ իրականացման համար այլ հարցերը:</p>	<p>«Կուսակցությունների մասին» օրենքում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում, Ընտրական օրենսգրքում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, ՀՀ քրեական օրենսգրքում և հարակից ակտերում հավանության են արժանացել կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:</p>	<p>Մշակվել է ««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերը:</p> <p>Ազգային Ժողովի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 5-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերը, որոնցով բարելավվել է կուսակցություններին կատարվող նվիրատվությունների, կուսակցությունների պետական ֆինանսավորման, կուսակցությունների կողմից ներկայացվող հաշվետվությունները:</p>	<p>Կատարված է ամբողջությամբ</p>
<p>Այլընտրանքային գնահատում</p>			

Հարկ է նշել, որ բովանդակային իմաստով օրենսդրական փոփոխություններով զգալի նվազել է նվիրատվությունների թափանցիկությունը. կուսակցությունների նախընտրական հիմնադրամների նվիրատվությունների աղբյուրը սահմանափակվել է բացառապես կուսակցությունով, ինչը հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմել նախընտրական հիմնադրամի նվիրատուների մասին: Ջուզահեռաբար բարձրացվել են նվիրատվությունների առավելագույն շեմերը, ինչը հակասում է հավասար մասնակցության սկզբունքին և պարունակում է հանրային շահին խոշոր կապիտալի միջամտության ռիսկեր:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ.

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.18

ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԵՐԸ՝ ՀԻՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ԿԿՀ ՀԱՍՏԱՏԱԾ ՏԻՊԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ, ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ

2024 թվականի կատարողականի թիրախ

Մշակվել են օրենսդրական փոփոխություններ՝ ապահովելով պետական և տեղական ինքնակառավարման համակարգում, պետական մասնակցությամբ կազմակերպություններում վարքագծի միասնական կանոնների կիրառումը և դրանց խախտման հիմքով պատասխանատվության միասնական միջոցների կիրառումը:

Նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ-ի ընդունմանը:

2-րդ կիսամյակ

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների, համայնքային ծառայողների ոլորտային վարքագծի կանոնագրքերի մշակման հաստատման և փուլ առ փուլ կիրարկման միջոցով ապահովվել է դրանց համապատասխանությունը հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոններին: Մասնավորապես, սահմանվել է՝

1. հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի կիրարկման վերաբերյալ ուղեցույց,
2. հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքների և կանոնների մեկնաբանություններ,
3. պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը պատգամավորների վարքագծի կանոնագիրք,
4. դատավորների և դատախազների գործող վարքագծի (էթիկայի) կանոնները միասնականացնել հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոններին՝ հաշվի առնելով ոլորտային առանձնահատկությունները,
5. սահմանել համայնքի ավագանու վարչական շրջանի ղեկավարների և համայնքային հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները,
6. համայնքի ավագանու, վարչական շրջանի ղեկավարի, համայնքային հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքերի մշակման օրենսդրական կանոնակարգումները հաստատող պատասխանատու լիազոր մարմիններին,

7. հանրային (պետական և համայնքային) ծառայողների ոլորտային առանձնահատկություններով պայմանավորված վարքագծի կանոնադրքերը, համայնքային ծառայողների վարքագծի կանոնադրքերի հաստատման և դրանց պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններին և վերջիններիս գործառույթների շրջանակը:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կատարող մարմին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Համակատարող մարմին

Տարածքային կառավարման նախարարություն

Արդարադատության նախարարություն

Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանությունների ուղեցույցը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ԵԽ համագործակցությամբ մշակվել է 2023 թվականին, 2024 թվականին դրա հիման վրա իրականացվել են հանրային ծառայողների վերապատրաստումներ: Մեկնաբանությունների ուղեցույցը հասանելի է Հանձնաժողովի կայքում հետևյալ հղումով՝ https://cpcarmenia.am/wp-content/uploads/2024/12/Int-Manual-to-Model-COC-of-Public-Servants_03.12.2024_final.pdf: Ուղեցույցում վարքագծի կանոնները մեկնաբանվում են վարքագծի համապատասխան սկզբունքների ներքո՝ ներառելով կոնկրետ օրինակներ ներպետական և միջազգային պրակտիկայից:

Հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնադրքերի մշակման և կիրարկման գործընթացը մշակող մարմինների համար պարզեցնելու նպատակով՝ Հանձնաժողովը 2023 թվականին մշակել է Հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնադրքերի նախագծերի մշակման և կիրարկման ուղեցույցը, որը հասանելի է հետևյալ հղումով՝ https://drive.google.com/file/d/1QGu8jHrfWsWH6iDFbI6WenOpDL3_cIO0/view: Ուղեցույցի հիման վրա 2023-2024թթ. մի շարք

մարմինների կողմից մշակվել են ոլորտային կանոնագրքեր, որոնց վերաբերյալ Հանձնաժողովը դիրքորոշում է ներկայացրել ընդունող մարմիններին:

2024 թվականի ապրիլի 1-ից ուժի մեջ է մտել նաև Հանձնաժողովի կողմից մշակված՝ Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը, որն ընդունվել է Հանձնաժողովի՝ 2024 թվականի փետրվարի 6-ի N 02-Ն որոշմամբ: Կանոնագիրքը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=189669>:

Համայնքի ավագանու անդամների համար վարքագծի կանոններ սահմանելու նպատակով Արդարադատության նախարարության կողմից «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության աջակցությամբ մշակվել է «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր): Նախագծերը ներկայացվել են շահագրգիռ մարմիններին կարծիքի: Ստացված կարծիքների հիման վրա նախագծերը լրամշակվել են և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: Ներկայումս իրականացվում է Նախագծերի լրամշակման աշխատանքներ:

Նախագծերով նախատեսվում է, որ համայնքի ավագանիները ընդունում են իրենց համայնքում համայնքի ավագանու անդամի վարքագծի կանոնները՝ հիմքում ունենալով «Հանրային ծառայության մասին» օրենքի վարքագծի սկզբունքները և ղեկավարվելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից մշակված հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցով:

Նախագծերով սահմանվում է, որ վարչական շրջանի ղեկավարի, համայնքային հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքն է հանդիսանում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից սահմանված՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Սույն գործողության վերաբերյալ քննարկում է իրականացվել Արդարադատության նախարարության նախաձեռնությամբ՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ 2023-2026թթ.

Հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսված գործողությունների իրականացման ընթացքի շուրջ կազմակերպված քննարկումների շրջանակներում:

Պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ համատեղ 2024 թվականի հոկտեմբերի 21-ին տեղի ունեցած Հակակոռուպցիոն աշխատանքային խմբի հերթական հանդիպման ընթացքում, ի թիվս այլնի, քննարկվել են նաև ՏԻՄ ավագանիներում վարքագծի կանոնների սահմանման կառուցակարգերը (<https://www.moj.am/article/4182>):

Նախագծերը 2024 թվականի հոկտեմբերի 29-ին դրվել են հանրային քննարկման e-draft.am հարթակում (<https://www.e-draft.am/projects/7848>):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
--------------------	---	---	----------------------

<p>Մշակվել են օրենսդրական փոփոխություններ՝ ապահովելով պետական և տեղական ինքնակառավարման համակարգում, պետական մասնակցությամբ կազմակերպություններում վարքագծի միասնական կանոնների կիրառումը և դրանց խախտման հիմքով պատասխանատվության միասնական միջոցների կիրառումը: Նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ-ի ընդունմանը: 2. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների, համայնքային ծառայողների ոլորտային վարքագծի կանոնագրքերի մշակման հաստատման և փուլ առ փուլ կիրարկման միջոցով ապահովվել է դրանց համապատասխանությունը</p>	<p>Օրենսդրական փոփոխությունները «Հանրային ծառայության մասին» օրենքում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» «Ազգային Ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքում և հարակից այլ ակտերում հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:</p>	<p>Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի, տիպային կանոնների մեկնաբանությունների և ոլորտային կանոնագրքերի մշակման և կիրառման ուղեցույցները մշակվել են: Արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերը: Նախագծերը ներկայացվել է շահագրգիռ մարմիններին կարծիքի: Ստացված կարծիքների հիման վրա լրամշակվել են և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: Ներկայումս իրականացվում է Նախագծերի լրամշակման աշխատանքներ:</p>	<p>Կատարված է մասնակի</p>
--	---	---	---------------------------

<p>հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոններին:</p> <p>Մասնավորապես, սահմանվել է՝ 1.1. հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի կիրարկման վերաբերյալ ուղեցույց, 1.2. հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքների և կանոնների մեկնաբանություններ, 1.3. պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց</p>			
---	--	--	--

<p>վարքագծի կանոնագիրքը պատգամավորների վարքագծի կանոնագիրք, 1.4. դատավորների և դատախազների գործող վարքագծի (էթիկայի) կանոնները միասնականացնել հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոններին՝ հաշվի առնելով ոլորտային առանձնահատկությունները, 1.5. սահմանել համայնքի ավագանու վարչական շրջանի ղեկավարների և համայնքային հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները, 1.6. համայնքի ավագանու, վարչական շրջանի ղեկավարի, համայնքային հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքերի մշակման օրենսդրական կանոնակարգումները</p>			
---	--	--	--

<p>հաստատող պատասխանատու լիազոր մարմիններին, 1.7. հանրային (պետական և համայնքային) ծառայողների ոլորտային առանձնահատկություններով պայմանավորված վարքագծի կանոնագրքերը, համայնքային ծառայողների վարքագծի կանոնագրքերի հաստատման և դրանց պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններին և վերջիններիս գործառույթների շրջանակը:</p>			
---	--	--	--

Այլընտրանքային գնահատում

Գործողության գնահատման կարգավիճակը համընկնում է մոնիթորինգի և գնահատման համար պատասխանատու մարմնի կողմից իրականացված գնահատման հետ:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.19

ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՆՈՐ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԻՐԱՑՈՒՄԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Մշակվել է օրենսդրական փոփոխությունների նախագիծ՝ շահերի բախման նոր սահմանումից բխող՝ դատավորների, ԱԺ պատգամավորների, համայնքի ավագանու անդամների, ինչպես նաև հանրային ծառայության առանձին ոլորտների առանձնահատկություններով պայմանավորված կարգավորումները կանոնակարգելով համապատասխան ոլորտային օրենքներով:

Նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ-ի ընդունմանը:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կատարող մարմին

Արդարադատության նախարարություն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Համակատարող մարմին

ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Արդարադատության նախարարության կողմից մշակվել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր): Նախագծերը 2024 թվականի մայիսին ներկայացվել են շահագրգիռ մարմինների կարծիքին և դրվել են հանրային քննարկման: Նախագծերով առաջարկվում է «Հանրային ծառայության մասին»

օրենքով նախատեսված առանձին ծառայությունների տեսակների գործունեությունը կարգավորող իրավական ակտերում վերանայել կամ լրացնել շահերի բախման վերաբերյալ առկա կառուցակարգերը՝ դրանք համապատասխանեցնելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի դրույթներին: Բացի այդ, առաջարկվում է որպես պարտականություն սահմանել Օրենքի 33-րդ հոդվածով սահմանված վարքագծային դրսևորումներին հետևելը, իսկ նշյալ պահանջին չհետևելը սահմանել որպես կարգապահական պատասխանատվության հիմք:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախագծերը 2024 թվականի մայիսի 3-ին դրվել են հանրային քննարկման e-draft.am հարթակում (<https://www.e-draft.am/projects/7186>), միաժամանակ ներկայացվել է շահագրգիռ մարմիններին կարծիքի:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Մշակվել է օրենսդրական փոփոխությունների նախագիծ՝ շահերի բախման նոր սահմանումից բխող՝ դատավորների, ԱԺ պատգամավորների, համայնքի ավագանու անդամների, ինչպես նաև հանրային ծառայության	Օրենսդրական փոփոխությունների և այլ անհրաժեշտ իրավական ակտերի փաթեթը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և	Արդարադատության նախարարության կողմից մշակվել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերը: Նախագծերը դրվել են հանրային քննարկման և ներկայացվել շահագրգիռ մարմիններին կարծիքի:	Կատարված է մեծամասամբ

<p>առանձին ոլորտների առանձնահատկություններով պայմանավորված կարգավորումները կանոնակարգելով համապատասխան ոլորտային օրենքներով: Նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ-ի ընդունմանը:</p>	<p>ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:</p>		
<p>Այլընտրանքային գնահատում</p>			
<p>Այլընտրանքային գնահատման արդյունքում գործողությունը գնահատվել է որպես մասնակի կատարված: Գործողության նկարագրողական հատվածից պարզ չէ նախագծի կարգավիճակը:</p>			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.20

ԶԱՐԳԱՑՆԵԼ ՆՎԵՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

նդունվել են հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ստացած և պետության սեփականությունը հանդիսացող նվերների տնօրինման կառուցակարգերի կիրարկման համար անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերը: Իրականացվել են «Հանրային ծառայության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված նվերների հաշվառման ռեեստրի ստեղծման և դրա հետ փոխկապակցված մյուս գործողությունները:

Ստուգման միջոց

րավական ակտի առկայությունՄամուլի հաղորդագրություններ

ԶԼՄ հրապարակումներ

Կատարող մարմին

Արդարադատության նախարարություն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Հարկ է նշել, որ դեռևս 2022 թվականին «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» դեկտեմբերի 7-ի ՀՕ-540-Ն օրենքի ընդունմամբ վերանայվել են հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու արգելքին առնչվող իրավակարգավորումները:

Միաժամանակ, 2024 թվականի ապրիլի 11-ին Ազգային Ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, «Պետական արարողակարգի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծերը:

Մույն գործողության 2024 թվականի 1-ին կիսամյակի կատարողականի թիրախով նախատեսված և 2024 թվականի ապրիլի 11-ին իրականացված օրենսդրական փոփոխություններից բխող՝ հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ստացած և պետության սեփականությունը հանդիսացող նվերների տնօրինման կառուցակարգերի կիրարկման համար անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերն ընդունվել են:

Մասնավորապես, Արդարադատության նախարարության կողմից մշակվել և Կառավարության կողմից 2024 թվականի հունիսի 20-ին ընդունվել են «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների՝ պետական սեփականություն դարձած նվերների տնօրինման կարգը, գույքի տնօրինման եղանակների ընտրության մեթոդաբանությունը, առանձին տեսակի գույքի տնօրինման առանձնահատկությունները, տնօրինման եղանակի վերաբերյալ «Պետական արարողակարգի մասին» օրենքով սահմանված եզրակացության տրամադրման կարգը, շուտ փչացող և պահպանման էական ծախսեր պահանջող գույքերի ցանկը, շուտ փչացող գույքի ոչնչացման դեպքերը, կարգը և տնօրինման եղանակները սահմանելու մասին» թիվ 956-Ն և «Հայաստանի Հանրապետության կառավարություն 2021 թվականի ապրիլի 15-ի N 587-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության որոշումները, որոնցով ամբողջացվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվերներ ընդունելու սահմանափակումների, օրենքով սահմանված դեպքերում պետության սեփականությունը դարձող նվերների հետագա ճակատագիրը որոշելու վերաբերյալ կարգավորումները, ինչպես նաև ապահովվել են համապատասխան օրենսդրական կարգավորումների՝ գործնականում ամբողջական և պատշաճ իրացման համար անհրաժեշտ կառուցակարգերը:

Հանձնաժողովի կողմից 2023 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունվել է «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, նվերների հաշվառման ռեեստրի վարման և ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը, ինչպես նաև ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկերը սահմանելու մասին» թիվ 01-Ն որոշումը, որով սահմանվել են նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, Ռեեստրի վարման կարգերը, Ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկը, ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման կարգերը: Որոշումը հրապարակված է նաև իրավական տեղեկատվական համակարգում (arlis.am):

2024 թվականի հունիսին Հանձնաժողովը մշակել է նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ստացվող նվերների թույլատրելիության վերաբերյալ խորհրդատվական կարծիքի տրամադրման մեթոդական ուղեցույցը, որով հստակեցվում են

նվերների թույլատրելիության վերաբերյալ դիմելու, խորհրդատվություն ստանալու ընթացակարգերը: Ուղեցույցը հրապարակվել է Հանձնաժողովի կայքէջում:

Միաժամանակ, Արդարադատության նախարարության կողմից մշակված՝ ««Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և հարակից օրենքներում լրացումներ կատարելու մասին» օրենսդրական փաթեթի ընդունմամբ պայմանավորված Հանձնաժողովը փոփոխություններ է կատարել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 01-Ն որոշման մեջ՝ ապահովելով դրա համապատասխանությունը օրենսդրական փոփոխություններին: Փոփոխություններով հստակեցվել են արարողակարգային նվերների հաշվառման և հանձնման հետ կապված հարաբերությունները:

Որպես սույն գործողության 2024 թվականի 2-րդ կիսամյակի կատարողականի թիրախ՝ նախատեսվել է իրականացնել նվերների հաշվառման ռեեստրի ստեղծման և դրա հետ փոխկապակցված գործողությունները: Նվերների հաշվառման ռեեստրի կառուցման հետ կապված գործողությունները, այդ թվում՝ տեխնիկական բնութագրի մշակումը և հարթակի կառուցման համար մրցույթի անցկացումն իրականացվել է 2024 թվականի առաջին կիսամյակում՝ ԱՄՆ ՄԶԳ կողմից: Ռեեստրի կառուցումն իրականացնող ընկերության ընտրության նպատակով հայտարարվել է թվով երկու մրցույթ՝ պայմանավորված առաջին մրցույթի ժամանակ հայտերի բացակայությամբ: Ռեեստրի կառուցման նպատակով ընտրված կազմակերպության հետ պայմանագիրը կնքվել է 2024 թ. նոյեմբերի 4-ին: Տեխնիկական առաջադրանքով սահմանված առաջին երկու բաղադրիչները պատրաստ են, նախատեսվում է 3-րդ բաղադրիչի ներքո իրականացնել ամբողջական կառուցումը՝ ինտեգրելով այն Հանձնաժողովի հայտարարագրման էլեկտրոնային համակարգին որպես առանձին մոդուլ: Նախատեսվում է աշխատանքներն ավարտել 2025 թ. առաջին կիսամյակում:

Մինչև Ռեեստրի գործարկումը նվերների հաշվառման գործընթացը կազմակերպվում է Հանձնաժողովի կողմից մշակված էլեկտրոնային ձևաթղթերի լրացման միջոցով: 2024 թվականի ընթացքում հաշվառվել է 30 նվեր, որոնց ձևաթղթերը հրապարակված են Հանձնաժողովի կայքէջում:

2. Անցկացված հանրային կամ այլ քննարկումներ

Վերոգրյալ իրավական ակտերի մշակման շրջանակներում իրականացվել են մի շարք քննարկումներ շահագրգիռ մարմինների, հասարակական կազմակերպությունների, ԱԺ գլխադասային հանձնաժողովի և խմբակցությունների և միջազգային գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ, այդ թվում՝ Բաց Կառավարման Գործընկերության «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների

ռեեստր» հանձնառության շրջանակում անցկացվել են չորս ֆոկուս խմբային քննարկումներ: Կազմակերպվել է նաև Կառավարություն-ՔՀԿ ձևաչափով մեկ քննարկում Արդարադատության նախարարության, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, Իրավաբանների հայկական ասոցիացիայի և ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կողմից համատեղ՝ նույն հանձնառության շրջանակում: Զանգվածային լրատվության միջոցներով ներկայացվել է առկա և իրականացվող փոփոխությունների շրջանակը:

Իրավական ակտերի նախագծերը սահմանված կարգով հանրային քննարկման են ներկայացվել իրավական ակտերի նախագծերի e-draft.am հարթակում (<https://www.e-draft.am/projects/7121>, <https://www.e-draft.am/ru/projects/6456>), ինչպես նաև ներկայացվել են կարծիքի՝ շահագրգիռ գերատեսչություններ:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
--------------------	---	---	----------------------

<p>Ընդունվել են հանրային ծառայողների հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ստացած և պետության սեփականությունը հանդիսացող նվերների տնօրինման կառուցակարգերի կիրարկման համար անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերը:</p> <p>Իրականացվել են «Հանրային ծառայության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված նվերների հաշվառման ռեեստրի ստեղծման և դրա հետ</p>	<p>Օրենսդրական փոփոխությունների փաթեթը՝ «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում, «Հանրային ծառայության մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:</p> <p>Կառավարության որոշումներով սահմանվել են պետական սեփականություն դարձած նվերների տնօրինման կարգը, շուտ փչացող և պահպանման էական ծախսեր պահանջող գույքերի ցանկը, շուտ փչացող գույքի ոչնչացման դեպքերը, կարգը և տնօրինման եղանակները,</p>	<p>«Գործողության 1.20»-ի 2024 թվականի առաջին կիսամյակի կատարողականի թիրախի շրջանակում ընդունվել են համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերը: Միաժամանակ, ռեեստրի գործարկման ժամկետի երկարաձգումը պայմանավորված է եղել կազմակերպության ընտրության համար անցկացված մրցույթի ժամկետների փոփոխմամբ, քանի որ առաջին փուլով հայտեր չեն ներկայացվել: Ամբողջ գործընթացն իրականացվել է ԱՄՆ ՄԶԳ կողմից՝ կազմակերպության ընթացակարգերի և դրանց ժամկետների համաձայն: Այդուհանդերձ, երկրորդ կիսամյակի կատարողականի թիրախով սահմանված՝ ռեեստրի ստեղծմանն ուղղված աշխատանքները Հանձնաժողովի կողմից ամբողջ ծավալով իրականացվել են:</p>	<p>Կատարված է ամբողջությամբ</p>
---	--	--	---------------------------------

<p>փոխկապակցված մյուս գործողությունները:</p>	<p>առանձին տեսակի գույքի տնօրինման առանձնահատկությունները, տնօրինման եղանակների ընտրության մեթոդաբանությունը, տնօրինման եղանակի վերաբերյալ եզրակացության տրամադրման կարգը: Ձևավորվել և գործարկվել է նվերների ռեեստրը:</p>		
--	---	--	--

Այլընտրանքային գնահատում

Նվերների ռեեստրն ու դրա հետ փոխկապակցված գործիքակազմը դեռևս հասանելի չեն: Տինանսավորման բացակայության պատճառով գործողությունները չեն հասցվել ավարտին: Ներկայում ԿԿՀ-ի կողմից նվերների հաշվառումը կատարվում է էլեկտրոնային ձևաթղթերի (excel) միջոցով: Ձևաթուղթն իր էությունից չի համապատասխանում «ռեգիստրի» չափանիշներին. այն միայն ձևաթուղթ տվյալների հավաքագրման միջոց է և ոչ թե հստակ կառուցվածքային, կարգավորված և ինքնաշխատ համակարգ: Մինչդեռ Հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսված ռեեստրը ենթադրում է տեղեկատվության կանոնակարգված

դաշտ՝ հստակ կառուցվածքով, որոնողական, դասակարգման և վերլուծական գործիքակազմով, ինչպես նաև ինքնաշխատության նվազագույն մակարդակով: Այսպիսով, ձևաթուղթը չի կատարող դիտարկվել որպես նվերների ռեեստր:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.21

ԶԱՐԳԱՑՆԵԼ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Միջազգային փորձի հիման վրա ներդնել՝

հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, (հատկապես քաղաքական պաշտոնյաների) և հանրային ծառայողների ղեկավար (բարձրագույն ու գլխավոր) խմբի ծառայողների կողմից ոչ առևտրային կազմակերպություններում կարգադրիչ կամ կառավարման գործառույթներով օժտված պաշտոնների զբաղեցումը, ինչպես նաև գիտական, կրթական և ստեղծագործական գործունեություն իրականացնող առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում լրիվ հաստիքով վարձատրություն ստանալը սահմանափակման մեխանիզմները:

Հստակեցնել գիտական, կրթական գործունեության և ստեղծագործական աշխատանքի շրջանակները՝ ըստ գիտական, կրթական կազմակերպությունների և ստեղծագործական աշխատանքի ոլորտների՝ սահմանելով նշված գործունեությանը համապատասխանող կազմակերպությունների ու գործունեության տեսակների ցանկերը:

Միջազգային փորձի հիման վրա դիտարկել առողջապահության, սպորտի և լրագրության, ինչպես նաև հումանիտար այլ ոլորտներում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից այլ վճարովի աշխատանք կատարելու կամ համատեղությամբ աշխատելու դրույթները և դրանց նկատմամբ վերահսկողության իրականացման կառուցակարգեր սահմանելը:

Ուսումնասիրվել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից գույքի հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ միջազգային փորձը՝ ներպետական կարիքների հաշվառմամբ (հնարավոր տարբերակներ՝ ներկա կառուցակարգերի բարելավում կամ նոր կառուցակարգերի ներդրման դիտարկում)

Ուսումնասիրության արդյունքում ներկա կառուցակարգի պահպանման դեպքում օրենսդրությամբ սահմանել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից գույքի հավատարմագրային կառավարման հանձնելու պայմանագրերի գրանցման և հաշվառման ռեեստր և վարման կարգ:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ

Մամուլի հաղորդագրություններ

ԶԼՄ հրապարակումներ

Կատարող մարմին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Համակատարող մարմին

Արդարադատության նախարարություն

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)

Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Գործողություն 1.21-ի՝ 2024 թվականի 1-ին կիսամյակի կատարողականի թիրախ նախատեսվել է միջազգային փորձի հիման վրա ներդնել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, (հատկապես քաղաքական պաշտոնյաների) և հանրային ծառայողների ղեկավար (բարձրագույն ու գլխավոր) խմբի ծառայողների կողմից ոչ առևտրային կազմակերպություններում կարգադրիչ կամ կառավարման գործառույթներով օժտված պաշտոնների զբաղեցումը, ինչպես նաև գիտական, կրթական և ստեղծագործական գործունեություն իրականացնող առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում լրիվ հաստիքով վարձատրություն ստանալու սահմանափակման մեխանիզմները: Թիրախի առաջին մասի հետ կապված հարկ է նշել, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ոչ առևտրային կազմակերպություններում կարգադրիչ կամ կառավարման գործառույթներով օժտված պաշտոնների զբաղեցումը գործող օրենսդրությամբ արդեն իսկ կարգավորված է:

Նույն գործողության «կատարողականի թիրախներ» սյունակի 2024 թվականի 1-ին կիսամյակի 2-րդ ենթակետով նախատեսվել է հստակեցնել գիտական, կրթական գործունեության և ստեղծագործական աշխատանքի շրջանակները՝ ըստ գիտական, կրթական կազմակերպությունների և ստեղծագործական աշխատանքի ոլորտների՝ սահմանելով նշված գործունեությանը համապատասխանող կազմակերպությունների ու գործունեության տեսակների ցանկերը: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի դիրքորոշմամբ՝ թեև այլ վճարովի աշխատանքի վերաբերյալ կարգավորումները և թույլատրելի աշխատանքի շրջանակը ենթակա է ընդլայնման, այդուհանդերձ, գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի

պարագայում ոլորտային կազմակերպությունների անգամ մոտավոր ցանկի սահմանումը խիստ ռիսկային է և չի բխում նաև Ռազմավարության ու դրա գործողությունների նախանշված նպատակներից: Միաժամանակ, նման ցանկի սահմանման գործընթացն ինքնին կարող է պարունակել կոռուպցիոն բնույթի ռիսկեր, ավելին՝ այն կարող է հանգեցնել նաև հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց՝ օրենքի իմաստով թույլատրելի համարվող աշխատանքի իրականացման իրավունքի չհիմնավորված սահմանափակումների: Նշվածի հաշվառմամբ՝ առաջարկվել է թիրախը վերաշարադրել: Այս համատեքստում անհրաժեշտ է հաշվի առնել, որ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից արդեն իսկ մշակվել է օրենսդրական փոփոխությունների հայեցակարգ, որով նախատեսվում է հանրային ծառայության ոչ ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց դեպքում, շահերի կառավարման լրացուցիչ գործիքակազմի ներդրմամբ, թույլատրել իրականացնել նաև այլ վճարովի աշխատանք:

Ակնկալվող մյուս գործողության առնչությամբ՝ հարկ է նշել, որ Հանձնաժողովի կողմից իրականացվում է միջազգային փորձի ուսումնասիրություն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից գույքի հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ՝ ներպետական կարիքների հաշվառմամբ՝ գործող կառուցակարգերի բարելավման առաջարկությունների մշակման նպատակով:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Հանրային քննարկում չի կազմակերպվել:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Միջազգային փորձի հիման վրա ներդնել՝	Օրենսդրական փոփոխությունների փաթեթը	Հարկ է նշել, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ոչ առևտրային կազմակերպություններում կարգադրիչ կամ կառավարման գործառույթներով	Կատարված է մասնակի

<p>հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, (հատկապես քաղաքական պաշտոնյաների) և հանրային ծառայողների ղեկավար (բարձրագույն ու գլխավոր) խմբի ծառայողների կողմից ոչ առևտրային կազմակերպություններում կարգադրիչ կամ կառավարման գործառույթներով օժտված պաշտոնների զբաղեցումը, ինչպես նաև գիտական, կրթական և ստեղծագործական գործունեություն իրականացնող առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում լրիվ հաստիքով վարձատրություն ստանալը սահմանափակման մեխանիզմները:</p>	<p>«Հանրային ծառայության մասին» օրենքում և այլ հարակից իրավական ակտերում հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:</p>	<p>օժտված պաշտոնների զբաղեցումը գործող օրենսդրությամբ արդեն իսկ կարգավորված է: Հանձնաժողովի կողմից իրականացվում է միջազգային փորձի ուսումնասիրություն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից գույքի հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ: Միաժամանակ, թույլատրելի այլ վճարովի աշխատանք կատարելու վերաբերյալ դրույթները կարգավորվում են ՔԾԳ կողմից մշակվող օրենսդրական նախագծով:</p>	
---	--	--	--

<p>Հստակեցնել գիտական, կրթական գործունեության և ստեղծագործական աշխատանքի շրջանակները՝ ըստ գիտական, կրթական կազմակերպությունների և ստեղծագործական աշխատանքի ոլորտների՝ սահմանելով նշված գործունեությանը համապատասխանող կազմակերպությունների ու գործունեության տեսակների ցանկերը:</p> <p>Միջազգային փորձի հիման վրա դիտարկել առողջապահության, սպորտի և լրագրության, ինչպես նաև հումանիտար այլ ոլորտներում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից այլ վճարովի աշխատանք կատարելու կամ համատեղությամբ</p>			
---	--	--	--

<p>աշխատելու դրույթները և դրանց նկատմամբ վերահսկողության իրականացման կառուցակարգեր սահմանելը:</p> <p>Ուսումնասիրվել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից գույքի հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ միջազգային փորձը՝ ներպետական կարիքների հաշվառմամբ (հնարավոր տարբերակներ՝ ներկա կառուցակարգերի բարելավում կամ նոր կառուցակարգերի ներդրման դիտարկում)</p> <p>Ուսումնասիրության արդյունքում ներկա կառուցակարգի պահպանման դեպքում օրենսդրությամբ</p>			
--	--	--	--

<p>սահմանել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից գույքի հավատարմագրային կառավարման հանձնելու պայմանագրերի գրանցման և հաշվառման ռեեստր և վարման կարգ:</p>			
Այլընտրանքային գնահատում			
<p>Գործողության բաղադրիչների ճնշող մեծամասնությունը չի իրականացվել կամ ներկայացված չեն դրանց կատարման վերաբերյալ հստակ ապացույցներ: Բացակայում է ստուգման միջոցով պահանջվող իրավական ակտի նախագիծը: Ներկայացված հիմնավորումները, թե ինչու որոշ գործողություններ չեն կատարվել կամ ինչու դրանք նպատակահարմար չէ իրականացնել, չեն կարող դիտարկվել որպես գործողության կատարման հիմնավորում:</p>			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Կատարողականի թիրախը և գործողությունները (դրանց ձևակերպումները) վերանայման/վերաշարադրման կարիք ունեն, որի վերաբերյալ Հանձնաժողովը ներկայացրել է իր մտահոգությունները և վերաձևակերպման առաջարկները: Դրանք՝ ելակետային տվյալների արձանագրման իմաստով, համահունչ չեն նաև գործող իրավակարգավորումների սահմանումներին: Այսպիսով՝ գործողության ելակետային տվյալների և սահմանված թիրախի միջև առկա են անհամապատասխանություններ, ինչը խոչընդոտում է գործողությունների ամբողջական կատարմանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.23

ՆԵՐԴՆԵԼ ԼՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ (ՈՉ ԻՐԱՎԱԶԱՓ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

2024 թվականի կատարողականի թիրախի

Հիմք ընդունելով ՀՀ միջազգային պարտավորությունները՝ ուսումնասիրվել է լոբբիստական գործունեության կարգավորումների միջազգային լավագույն փորձը:

Լավագույն միջազգային փորձի լույսի ներքո՝ մշակվել են լոբբիստական գործունեության թափանցիկության վերաբերյալ կարգավորումներ:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կատարող մարմին

Արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Արդարադատության նախարարության կողմից ուսումնասիրվել է լոբբիստական գործունեության կարգավորումների վերաբերյալ միջազգային լավագույն փորձը: Ուսումնասիրության արդյունքում մշակվել է փաստաթուղթ՝ հանրային իշխանության գործունեության թափանցիկության բարձրացման, պետական կառույցների նկատմամբ հանրության վստահության ամրապնդման և պետական մարմինների կողմից որոշումների կայացման գործընթացին մասնակցության առնչությամբ լոբբիստական գործունեության առանձնահատկությունների վերհանմամբ:

Իրականացված վերլուծությամբ պարզ է դարձել, որ ուսումնասիրված երկրներում երրորդ անձանց հետ հարաբերությունները կարգավորվում են ինչպես օրենսդիր, այնպես էլ գործադիր մարմիններում՝ համապատասխան օրենքների կամ գործող օրենքների շրջանակներում երրորդ անձանց հետ շփումների կարգավորման վերաբերյալ առանձին դրույթների ներդրմամբ: Նման կարգավորումներ ներդրված են նաև ուսումնասիրված երկրների մեծ մասի օրենսդիր և գործադիր իշխանություններում պաշտոնատար անձանց համար սահմանվող վարքագծի կանոններում:

2024 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում լոբբիստական գործունեության թափանցիկությանն ուղղված կարգավորումները Հայաստանում ներդնելու նպատակով Արդարադատության նախարարությունը համագործակցել է Ընտրական համակարգերի միջազգային հաստատության (IFES) հետ: Վերջինիս կողմից ներկայացված միջազգային փորձագետի կողմից իրականացվել է լոբբիստական գործունեության վերաբերյալ միջազգային փորձի համապարփակ ուսումնասիրություն: Միջազգային փորձագետի կողմից համեմատական վերլուծությամբ ներկայացվել են լոբբիստական գործունեության վերաբերյալ ՏՀԶԿ-ի և ԳԲԵԿՈ-ի չափանիշները, ՏՀԶԿ անդամ մի շարք երկրներում լոբբիստների ռեեստրի ստեղծման և վարման առանձնահատկությունները: Արդյունքում՝ IFES-ի աջակցությամբ ներգրավվել է ազգային փորձագետ, ով իրականացված ուսումնասիրության հաշվառմամբ մշակել է «Լոբբիստական գործունեության մասին» օրենքի նախագիծը:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Լոբբիստական գործունեության վերաբերյալ կարգավորումներ նախատեսող իրավական ակտերի նախագծերի մշակումը նախատեսված է 2025 թվականին:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
--------------------	---	---	----------------------

<p>Հիմք ընդունելով ՀՀ միջազգային պարտավորությունները՝ ուսումնասիրվել է լոբբիստական գործունեության կարգավորումների միջազգային լավագույն փորձը: Լավագույն միջազգային փորձի լույսի ներքո մշակվել են լոբբիստական գործունեության թափանցիկության վերաբերյալ կարգավորումներ:</p>	<p>Օրենսդրական փոփոխությունների փաթեթը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:</p>	<p>Արդարադատության նախարարության կողմից ուսումնասիրվել է լոբբիստական գործունեության կարգավորումների միջազգային լավագույն փորձը: Այնուհետև Ընտրական համակարգերի միջազգային հաստատության (IFES) աջակցությամբ Արդարադատության նախարարությանը տրամադրվել է միջազգային լավագույն փորձի վերաբերյալ վերլուծական փաստաթուղթ: Իրականացված ուսումնասիրության արդյունքում կրկին IFES-ի կողմից տրամադրված ազգային փորձագետի կողմից մշակվել է «Լոբբիստական գործունեության մասին» օրենքի նախագիծ:</p>	<p>Կատարված է ամբողջությամբ</p>
<p>Այլընտրանքային գնահատում</p>			
<p>Պարզ չէ, թե միջազգային փորձագետի կողմից իրականացված ուսումնասիրության հիման վրա ազգային փորձագետի կողմից մշակված օրենքի նախագիծը վերջնական և ընդունելի է Հայաստանյան իրականության համար, թե ոչ: Նախագիծը դեռ նոր է նախատեսվում դնել քննարկման: Ելնելով վերոնշյալից՝ առաջարկվում է կատարման կարգավիճակը գնահատել «մասնակի կատարված»:</p>			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.25

ՆԵՐԴՆԵԼ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԱՐՐԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԻՄՔՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2024 թվականի կատարողականի թիրախ

Գույքագրվել են բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվության գործող կառուցակարգերի առկա խնդիրները:

Գույքագրման հիման վրա մշակվել են իրավական ակտերի նախագծեր, որոնցով ներդրվել են հանրային ծառայության և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվություն սահմանող համապարփակ կառուցակարգեր, ներառյալ միասնական և հստակ պատասխանատվության սանկցիաները բոլոր սուբյեկտների համար:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կատարող մարմին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ (համաձայնությամբ)

Համակատարող մարմին

Արդարադատության նախարարություն

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Գործողության շրջանակներում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից մշակվել է վերլուծական փաստաթուղթ (<https://shorturl.at/BPj9D>)՝ անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների, շահերի բախման կարգավորումների խախտման հիմքով պատասխանատվության կիրառման դաշտում առկա

խնդիրների վերաբերյալ, որոնց գույքագրումը կարևոր է դրանց լուծման՝ այդ թվում օրենսդրական անհրաժեշտ փոփոխությունների նախանշման համար: Բացի գործող օրենսդրական կարգավորումների թերություններից՝ փաստաթուղթն անդրադառնում է պատասխանատվության միջոցների կիրառման՝ Հանձնաժողովում, ինչպես նաև հանրային իշխանության առանձին մարմիններում ձևավորված պրակտիկային:

Հարկ է նշել, որ ԱՄՆ ՄՁԳ ծրագրի փորձագետի կողմից դեռևս 2022 թվականին Հանձնաժողովի կարիքների հիման վրա իրականացվել է բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվության միջոցների համակարգի խնդիրների վերհանում և վերոգրյալի համատեքստում օրենսդրական-իրավական վերլուծություն: Վերլուծությունն ուղղված է հիմնականում Հանձնաժողովի՝ վարքագծի կանոնների սահմանման, այդ կանոնների խախտման արդյունքում իրականացվող վարույթների, հանրային ծառայության առանձին տեսակներով վարքագծի կանոնների խախտման վարույթի առանձնահատկությունների ուսումնասիրությանը, օրենսդրական բացերի և հակասությունների բացահայտմանը և խնդիրների լուծման առաջարկությունների ներկայացմանը, այդուհանդերձ, դրանում անդրադարձ է կատարվում բարեվարքության համակարգի այլ տարրերին ևս: Նշված վերլուծությունը հիմք է ծառայել Հանձնաժողովի կողմից պատասխանատվության կիրառման կառուցակարգերի վերաբերյալ տեղեկանքի մշակման համար: Բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվության խնդիրների գույքագրման շրջանակներում 2022 թվականին օրենսդրական կարգավորումների վերլուծություն է իրականացվել նաև ԵԽ փորձագետի կողմից: Համապատասխան վերլուծությունը 2022 թվականին իրականացվող՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի նախագծի շրջանակներում ներկայացվել է Արդարադատության նախարարություն:

Քաղաքացիական ծառայության գրասենյակը 1.25-րդ գործողության իրականացման նպատակով, կարևորելով Հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախանշված թիրախներին հասնելուն ուղղված համատեղ ջանքերը, ուսումնասիրել է ներպետական օրենսդրական կարգավորումները, միջազգային փորձը և իրավակիրառ պրակտիկան:

Ուսումնասիրության արդյունքում Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից ներկայացվել է դիրքորոշում Արդարադատության նախարարություն, ըստ որի՝ բարեվարքության համակարգի տարրերի խախտման դեմ ուղղված պատժամիջոցները միասնական չեն կարող լինել: Մասնավորապես՝ հանրային ծառայության պաշտոն և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար (բոլոր սուբյեկտների) բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվություն սահմանող միասնական պատասխանատվության սանկցիաներ նախատեսելը խնդրահարույց է և չի բխում առաջին հերթին համաչափության սահմանադրական սկզբունքի պահանջից: Ասվածն ամրապնդվում է նաև այն հանգամանքով, որ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ կարգապահական տույժ նշանակելիս հաշվի են առնվում խախտման բնույթը, բովանդակությունը, այն հանգամանքները, որի պարագայում

կատարվել է խախտումը, խախտման հետևանքները, նախկինում ծառայողի նկատմամբ կարգապահական տույժեր կիրառված լինելու և (կամ) խախտումներ կատարած լինելու հանգամանքները:

Հարկ է նշել նաև, որ քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակ ներբեռնված տվյալների համաձայն՝ վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները առերևույթ խախտելու դեպքով նշանակվել և էթիկայի հանձնաժողովի կողմից անցկացվել է 7 (յոթ), անհամատեղելիության պահանջի խախտման դեպքով՝ 1 (մեկ), այլ սահմանափակումները առերևույթ խախտելու դեպքով 2 (երկու) և նվերներ ընդունելու արգելքի խախտման դեպքով 1 (մեկ) ծառայողական քննություն: Այսինքն՝ իրավակիրառ պրակտիկայում բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով նշանակված մի քանի ծառայողական քննությունները նույնպես հնարավորություն չեն տալիս վեր հանել կամ գնահատել պատասխանատվության գործող կառուցակարգերում առկա խնդիրները:

Կատարողականի թիրախի 2-րդ մասով նախատեսվել է գույքագրման հիման վրա մշակել իրավական ակտերի նախագծեր, որոնցով ներդրվել են հանրային ծառայության և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվություն սահմանող համապարփակ կառուցակարգեր: Վերոգրյալի հաշվառմամբ Արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր), որով կարգավորվում է նաև հանրային ծառայության և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով իրականացվող քննություններին վերաբերող կառուցակարգերը: Նախագծերը ներկայացվել են շահագրգիռ մարմիններին կարծիքի: Ստացված կարծիքների հիման վրա լրամշակվել են և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: Ներկայումս իրականացվում է Նախագծերի լրամշակման աշխատանքները:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախագծերը 2024 թվականի հոկտեմբերի 29-ին դրվել են հանրային քննարկման e-draft.am հարթակում (<https://www.e-draft.am/projects/7848>):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ուղղակի արդյունքային քանակական և	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
--------------------	----------------------------------	---	----------------------

	որակական ցուցանիշներ		
<p>Գույքագրվել են բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվության գործող կառուցակարգերի առկա խնդիրները:</p> <p>Գույքագրման հիման վրա մշակվել են իրավական ակտերի նախագծեր, որոնցով ներդրվել են հանրային ծառայության և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվություն սահմանող համապարփակ կառուցակարգեր, ներառյալ միասնական և</p>	<p>Օրենսդրական փոփոխությունների փաթեթը «Հանրային ծառայության մասին» օրենքում և այլ հարակից իրավական ակտերում հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:</p>	<p>2024 թվականի առաջին կիսամյակի կատարողականի թիրախի շրջանակում գույքագրվել են բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվության գործող կառուցակարգերի առկա խնդիրները:</p> <p>ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ծրագրի փորձագետի կողմից Հանձնաժողովի կարիքների հիման վրա իրականացվել է բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվության միջոցների համակարգի խնդիրների վերհանում և վերոգրյալի համատեքստում օրենսդրական-իրավական վերլուծություն:</p> <p>Արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերը:</p>	<p>Կատարված է ամբողջությամբ</p>

հստակ պատասխանատվության սանկցիաները բոլոր սուբյեկտների համար:			
--	--	--	--

Այլընտրանքային գնահատում

Պարզ չէ՝ արդյոք մշակված նախագծերը պարունակում են թիրախում նշված բոլոր կարևոր տարրերը, մասնավորապես՝ «համապարփակ կառուցակարգեր» և «միասնական և հստակ պատասխանատվության սանկցիաներ բոլոր սուբյեկտների համար»: Պետք է հաշվօ առնել, որ նախագծերը դեռևս չեն ընդունվել և գտնվում են լրամշակման փուլում, մինչդեռ թիրախն արդեն իրականացված կառուցակարգեր է պահանջում: ՔՕԳ-ն դեմ է արտահայտվել միասնական սանկցիաների ներդրմանը, ինչը հակասում է թիրախի հիմնական պահանջներից մեկին՝ «միասնական և հստակ պատասխանատվության սանկցիաները բոլոր սուբյեկտների համար»: Ըստ այդմ, գործողությունը գնահատվում է մասնակի կատարված:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.1

ՎԵՐԱՆԱՅԵԼ ՀԱՎԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Կատարել Հակակոռուպցիոն կոմիտեի անկախության երաշխիքների, մասնավորապես՝ Կոմիտեի նախագահի և վերջինիս տեղակալների նշանակման կարգի փոփոխության վերաբերյալ ուսումնասիրություն, որի արդյունքում կդիտարկվեն նշյալ պաշտոնյաների նշանակման/ազատման կառուցակարգերի և անկախության երաշխիքների ամրապնդման հնարավորությունները, այդ թվում՝ Ազգային Ժողովի:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կատարող մարմին

Արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին

Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության արդյունավետությունն ապահովելու նպատակով դեռևս 2021 թվականին ստեղծվել է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեն:

Ներկայում, թեև ստեղծվել են Հակակոռուպցիոն կոմիտեի բնականոն գործունեության ապահովման նախապայմանները, այնուհանդերձ Հակակոռուպցիոն կոմիտեին վերապահված գործառույթների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է երաշխավորել վերջինիս ինստիտուցիոնալ հզորացումը, որն իրենից ներկայացնում է շարունակական աշխատանք՝ Կոմիտեի կարողությունների զարգացման, վերջինիս անկախության, գործունեության թափանցիկության և հաշվետվողականության երաշխիքների ամրապնդման ուղղությամբ: Միաժամանակ, Հակակոռուպցիոն

կոմիտեի անկախության երաշխավորման տեսանկյունից կարևորվում է նաև վերջինիս ձևավորման կարգի վերանայումը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և վերջինիս տեղակալների նշանակման առնչությամբ հնարավոր ռիսկերի մեղմացման անհրաժեշտությունը:

Հակակոռուպցիոն կոմիտեի անկախության երաշխիքներն ապահովելու, մասնավորապես՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և վերջինիս տեղակալների նշանակման ընթացակարգում փոփոխություն կատարելու նպատակով Արդարադատության նախարարության կողմից իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն: Հակակոռուպցիոն իրավապահ մարմինների նշանակման, անկախության և գործունեության միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել տարբեր երկրների մոտեցումները՝ հիմնված թափանցիկության, ժողովրդավարական վերահսկողության և անկախության երաշխիքների վրա: Երկրների մեծամասնությունում հակակոռուպցիոն իրավապահ մարմինների ղեկավարների նշանակումներն ու պաշտոնանկությունները հաստատվում են խորհրդարանի կամ գործադիր մարմնի կողմից՝ ապահովելով հաշվետվողականություն և ժողովրդավարական վերահսկողություն: Օրինակ՝ Մոլդովայում, Լատվիայում և Լիտվայում խորհրդարանի դերը հակակոռուպցիոն իրավապահ մարմինների ղեկավարների նշանակման գործընթացում առանցքային է և սահմանում է հրապարակային վերահսկողության գործառույթ: Որոշ երկրներում ընդունված է բաց մրցութային ընթացակարգ, որտեղ թեկնածուները գնահատվում են բազմաբնույթ մասնագիտական և հանրային կազմակերպությունների կողմից: Այս ընթացակարգերը նպաստում են թափանցիկությանը, բարձրացնում են նշանակման գործընթացի արժանահավատությունը և ապահովում են որակավորված մասնագետների ներգրավվածությունը:

Միջազգային փորձի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ հակակոռուպցիոն մարմինների աշխատանքը կախված է ոչ միայն դրանց կառուցվածքային անկախությունից, այլև գործնականում կիրառվող քաղաքական կամքից: Արտաքին ազդեցությունից զերծ լինելու համար կարևոր է կանխել հակակոռուպցիոն մարմինների աշխատանքում ոչ իրավաչափ միջամտությունները և ապահովել ապաքաղաքականացման միջոցներ:

Հարկ է նշել, որ ՏՀԶԿ հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան գործողությունների ծրագրի 5-րդ փուլի գնահատումը, որը, ի թիվս այլնի, ներառում է նաև քննչական մարմինների՝ ներառյալ հակակոռուպցիոն գործեր քննող մարմինների գործունեությունը և այն կարգավորող իրավական շրջանակը, կարևորում է հակակոռուպցիոն իրավապահ մարմինների թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքը: ՏՀԶԿ-ն ընդգծել է նաև հրապարակային հասանելի չափանիշների ներդրման անհրաժեշտությունը, որը չի սահմանափակում նշանակման գործընթացը և երաշխավորում է արդար և անաչառ ընտրություն:

Վերոգրյալ գործողության շրջանակներում հավաքագրվել է նաև շահագրգիռ մարմինների կարծիքները Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության առկա կառուցակարգերի և Հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսվող միջոցառման վերաբերյալ:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն
 Հանրային քննարկումներ չեն իրականացվել:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Կատարել Հակակոռուպցիոն կոմիտեի անկախության երաշխիքների, մասնավորապես՝ Կոմիտեի նախագահի և վերջինիս տեղակալների նշանակման կարգի փոփոխության վերաբերյալ ուսումնասիրություն, որի արդյունքում կղիտարկվեն նշյալ պաշտոնյաների	Իրավական ակտի առկայություն	Արդարադատության նախարարության կողմից կատարվել է Կոմիտեի անկախության երաշխիքների, մասնավորապես՝ Կոմիտեի նախագահի և վերջինիս տեղակալների նշանակման կարգի փոփոխության վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն:	Կատարված է ամբողջությամբ

նշանակման/ազատման կառուցակարգերի և անկախության երաշխիքների ամրապնդման հնարավորությունները, այդ թվում՝ Ազգային Ժողովի:			
Այլընտրանքային գնահատում			
<p>Գործողության շրջանակներում Արդարադատության նախարարությունը քննարկումներ չի իրականացրել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: ԹԻՀԿ-ն իրականացրել է Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության գնահատում, որտեղ առկա են Կոմիտեի ղեկավար կազմի նշանակմանը վերաբերելի խնդիրների համապարփակ ներկայացում՝ անկախության երաշխիքների տեսանկյունից, ինչպես նաև օրենսդրական առաջարկներ: Առաջարկում ենք կատարման կարգավիճակը նշել «Կատարված է մասնակի»:</p> <p>Գործողության կատարողական թիրախի համաձայն ուսումնասիրությունը պետք է կատարվի 2024 թվականին, իսկ 2025 թվականի համար ստուգման միջոց նախատեսված է իրավական ակտի առկայությունը: Այս տեսանկյունից ուսումնասիրությունը թեև կատարվել է, սակայն Կոմիտեի անկախության հիմնահարցերը դեռևս առկա են:</p>			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.2

ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԶՈՐԱՑՈՒՄԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Կազմակերպվել և անցկացվել են Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքների համալրման մրցույթները:

Կազմակերպվել և անցկացվել են Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքների համալրման մրցույթները:

Ստուգման միջոց

Մամուլի հաղորդագրություններ

ԶԼՄ հրապարակումներ

Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ

Կատարող մարմին

Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Հակակոռուպցիոն կոմիտեն ամբողջությամբ ձևավորվել է 2021 թվականի հոկտեմբերի 23-ին: Ստեղծման օրվանից առ այսօր Հակակոռուպցիոն կոմիտեի թափուր հաստիքների համալրման նպատակով անցկացվել են բազմաթիվ մրցույթներ:

Մասնավորապես՝ *2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ* Հակակոռուպցիոն կոմիտեում օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող 120 պաշտոններից համալրված է 77-ը, ինքնավար 80 պաշտոններից՝ 71-ը:

2024 թվականի ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թափուր հաստիքներում նշանակվել են 26 թեկնածու՝ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող և 24 թեկնածու՝ ինքնավար պաշտոններում:

Օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող թափուր պաշտոնների համար 2024 թվականի ընթացքում հայտարարվել են հետևյալ մրցույթները՝

1) 2024 թվականի հունվարի 4-ին հայտարարվել է Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ավագ օպերլիազորի՝ 20 և օպերլիազորի՝ 36 պաշտոնների համալրման համար մրցույթ: Մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված 12 թեկնածուները նշանակվել են համապատասխան պաշտոնների (հղում՝ <https://www.anticorruption.am/hy/announcement/view/244>):

2) 2024 թվականի մարտի 11-ին հայտարարվել է Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնի անձնագրով սահմանված տեղեկատվական տեխնոլոգիաների կամ տնտեսագիտության կամ պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթներով պայմանավորված այլ բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ և հմտություններ պահանջող՝ ավագ օպերլիազոր-տնտեսագետի՝ 1, օպերլիազոր-տնտեսագետի՝ 1, ավագ օպերլիազոր-կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետի՝ 1 և օպերլիազոր-կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետի՝ 1 պաշտոնների համալրման համար մրցույթ: Մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչվածներ չեն եղել (հղում՝ <https://www.anticorruption.am/hy/announcement/view/258>):

3) 2024 թվականի մայիսի 23-ին հայտարարվել է Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ավագ օպերլիազորի՝ 10 և օպերլիազորի՝ 35 պաշտոնների համալրման համար մրցույթ: Մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված 8 թեկնածուները նշանակվել են համապատասխան պաշտոնների (հղում՝ <https://www.anticorruption.am/hy/announcement/view/267>):

4) 2024 թվականի մայիսի 23-ին հայտարարվել է Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնի անձնագրով սահմանված տեղեկատվական տեխնոլոգիաների կամ տնտեսագիտության կամ պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթներով պայմանավորված այլ բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ և հմտություններ պահանջող՝ ավագ օպերլիազոր-տնտեսագետի՝ 1, օպերլիազոր-տնտեսագետի՝ 1, ավագ օպերլիազոր-կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետի՝ 1 և օպերլիազոր-կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետի՝ 1 պաշտոնների համալրման համար մրցույթ: Մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչվածներ չեն եղել (հղում՝ <https://www.anticorruption.am/hy/announcement/view/266>):

5) 2024 թվականի սեպտեմբերի 2-ին հայտարարվել է Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող բաժնի պետի՝ 1, ավագ օպերլիազորի՝ 1 և օպերլիազորի՝ 37 պաշտոնների համալրման համար մրցույթ (հղում՝ <https://www.anticorruption.am/hy/announcement/view/286>):

6) 2024 թվականի սեպտեմբերի 2-ին հայտարարվել է Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնի անձնագրով սահմանված տեղեկատվական տեխնոլոգիաների կամ

տնտեսագիտության կամ պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթներով պայմանավորված այլ բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ և հմտություններ պահանջող՝ ավագ օպերիվագոր-տնտեսագետի՝ 1, օպերիվագոր-տնտեսագետի՝ 1, ավագ օպերիվագոր-կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետի՝ 1 և օպերիվագոր-կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետի՝ 1 պաշտոնների համալրման համար մրցույթ, (հղում՝ <https://www.anticorruption.am/hy/announcement/view/285>):

Ինքնավար թափուր պաշտոնների համար 2024 թվականի ընթացքում հայտարարվել են հետևյալ մրցույթները՝

1) 2024 թվականի հունվարի 4-ին հայտարարվել է Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար 19 թափուր պաշտոնների (հատկապես կարևոր գործերով ավագ քննիչի՝ 8, հատկապես կարևոր գործերով քննիչի՝ 2, ավագ քննիչի՝ 5, քննիչի՝ 4) համալրման համար մրցույթ: Մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված 10 թեկնածուները նշանակվել են համապատասխան պաշտոնների (հղում՝ <https://www.anticorruption.am/hy/announcement/view/243>):

2) 2024 թվականի ապրիլի 11-ին հայտարարված Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար 1 թափուր պաշտոնի /ՀԿԳ քննիչի/ համար մրցույթը համարվել է չկայացած՝ դիմողների բացակայության պատճառով (հղում՝ <https://www.anticorruption.am/hy/announcement/view/260>):

3) 2024 թվականի մայիսի 23-ին հայտարարվել է Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար 11 թափուր պաշտոնների (հատկապես կարևոր գործերով ավագ քննիչի՝ 3, հատկապես կարևոր գործերով քննիչի՝ 1, ավագ քննիչի՝ 5, քննիչի՝ 2) համալրման համար մրցույթ: Մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված 2 թեկնածուները նշանակվել են համապատասխան պաշտոնների (հղում՝ <https://www.anticorruption.am/hy/announcement/view/265>):

4) 2024 թվականի սեպտեմբերի 2-ին Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար 9 թափուր պաշտոնների (հատկապես կարևոր գործերով ավագ քննիչի՝ 4, հատկապես կարևոր գործերով քննիչի՝ 1, ավագ քննիչի՝ 4) համալրման համար հայտարարվել է մրցույթ, որն ընթացքի (բարեվարքության ուսումնասիրության փուլում) մեջ է (հղում՝ <https://www.anticorruption.am/hy/announcement/view/287>):

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
--------------------	----------------	---	----------------------

<p>Կազմակերպվել և անցկացվել են Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքների համալրման մրցույթները:</p>	<p>Մամուլի հաղորդագրություններ, ՋԼՄ հրապարակումներ, Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ</p>	<p>2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հակակոռուպցիոն կոմիտեում օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող 120 պաշտոններից համալրված է 77-ը, ինքնավար 80 պաշտոններից՝ 71-ը: 2024 թվականի ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թափուր հաստիքներում նշանակվել են 26 թեկնածու՝ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող և 24 թեկնածու՝ ինքնավար պաշտոններում:</p>	<p>Կատարված է ամբողջությամբ</p>
---	---	---	---------------------------------

Այլընտրանքային գնահատում

Գործողության գնահատման արդյունքներում ներկայացված քանակական տվյալները չեն համապատասխանում Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաղորդմամբ ներկայացված տվյալներին: 2024 թվականի ընթացքում Կոմիտեի քննչական և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների պաշտոնները համալրելու նպատակով հայտարարված 10 մրցույթներից անցկացվել է 9-ը, որի ընթացքում ուսումնասիրվել և մրցութային համապատասխան փուլերով ստուգվել են 146 թեկնածուներ: Մրցույթներին մասնակցած թեկնածուներից հաղթող են ճանաչվել 32-ը (12-ը ինքնավար պաշտոնների համար, իսկ 20-ը՝ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոնների համար դիմած թեկնածու), որոնք էլ նշանակվել են համապատասխան պաշտոնների: 2024 թվականի ընթացքում անցկացված մրցույթներում հաղթող ճանաչվածներից 11-ը վերապատրաստում են անցել ՀՀ ոստիկանության ակադեմիայում, իսկ 7-ը՝ մասնագիտական պատրաստում են անցել ՀՀ արդարադատության ակադեմիայում (<https://www.anticorruption.am/hy/pages/show/report>): Բացի այդ, բազմաթիվ մրցույթների արդյունքում ապահովվել է ընդամենը կոմիտեի հաստիքների համալրման 64 տոկոսանոց շեմը, որը ցածր է վերջնարդյունքում սահմանված 80 տոկոսանոց շեմից, ինչի արդյունքում համալրման 80 տոկոսանոց շեմը դեռևս հաղթահարված չէ:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.4

ԱՆՑԿԱՑՆԵԼ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԹԵՄԱՆԵՐՈՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՔՆՆԻՉՆԵՐԻ, ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ, ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2024 թվականի կատարողականի թիրախ

Հաստատվել են կոռուպցիայի դեմ պայքարին՝ այդ թվում կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության առնչությամբ թեմաներն ու մոդուլները, վերապատրաստման ծրագիրն ու մեթոդաբանությունը, ինչպես նաև վերապատրաստում/պատրաստում անցնող խմբերը:

Իրականացվել է կոռուպցիայի դեմ պայքարին՝ այդ թվում կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության առնչությամբ թեմաներով վերապատրաստումներ և պատրաստումներ հաստատված խմբերից 30%-ի հետ:

Ստուգման միջոց

Վերապատրաստումների զեկույցներ

Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և աշխատակիցների շրջանում կատարվող հարցումներ

Մամուլի հոդորդագրություններ

Կատարող մարմին

Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)

ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

ՀՀ արդարադատության ակադեմիա

Համակատարող մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Արդարադատության ակադեմիայի Կառավարման խորհրդի կողմից 2023 թվականի նոյեմբերի 16-ին թիվ ԿԽ-013/23/2 որոշմամբ հաստատվել է դատախազների 2024 թվականի տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագիրը (հղումը՝ <https://aoj.am/full-time-education/training-programs/2024/prosecutor>), իսկ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ 19.12.2023 թվականի դեկտեմբերի 19-ին թիվ 60-Լ հրամանով՝ Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների 2024թ. տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագիրը (հղումը՝ <https://aoj.am/full-time-education/training-programs/2024/investigator>), որում ներառվել են կոռուպցիայի դեմ պայքարի՝ այդ թվում կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության վերաբերյալ թեմաներ:

Մասնավորապես, նախատեսված են ՈՀայաստանի Հանրապետության հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հիմնահարցերը, «Կոռուպցիոն հանցագործությունների քննության առանձնահատկությունները», «Կոռուպցիոն հանցանքների որակման հիմնահարցեր» վերտառությամբ դասընթացներ ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազների համար, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման արդի հիմնահարցեր», «Ապօրինի ծագում ունեցող գույքի նկատմամբ հայցի (նախնական) ապահովման միջոցների կիրառումը և ապացույցների (նախնական) ապահովումը», «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի քննությունը դատարանում», «ՀՀ վերաքննիչ, վճռաբեկ և ՄԻԵԴ-ի պրակտիկան ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի վերաբերյալ», «Միջազգային պայմանագրերի անմիջական կիրառման առանձնահատկությունները և միջազգային համագործակցությունն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացում» վերտառությամբ դասընթացներ Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության դատախազների համար և «Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորություն և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմը» վերտառությամբ հեռավար դասընթաց բոլոր դատախազների համար: «Կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր», «Փողերի լվացման ոլորտի արդի հարցեր» վերտառությամբ դասընթացներ են նախատեսվել Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վերապատրաստման ծրագրում և «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր» վերտառությամբ դասընթացի շրջանակում մոդուլներ են նախատեսվել կոռուպցիոն հանցանքների բացահայտման, որակման և քննության առանձնահատկությունների վերաբերյալ:

Վերապատրաստման ծրագրերը և մեթոդաբանությունը համապատասխանեցվել է միջազգային չափանիշներին և պահանջներին՝ միաժամանակ հիմնվելով շահառուների կողմից ներկայացված կարիքների վրա: Ուսուցման նյութերը թարմացվել

են, միջազգային և ներպետական գործընկերների հետ մշակվել են նոր դասընթացներ նշված թեմաներով: Վերապատրաստման ենթակա դատախազների և քննիչների խմբերը կազմավորվել են, իսկ վերջիններս իրազեկվել են վերապատրաստման ժամանակացույցի վերաբերյալ:

Բացի այդ, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքով սահմանված կարգով մասնագիտական պատրաստում են անցնում Արդարադատության ակադեմիայում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Պետք է նշել, որ մասնագիտական պատրաստման թեմաներում ևս ներառված են կոռուպցիայի դեմ պայքարի՝ այդ թվում կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության վերաբերյալ թեմաներ: Մասնավորապես՝

2024 թվականի ընթացքում մրցույթների արդյունքում հաղթող ճանաչված և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանցից 11-ը համապատասխան վերապատրաստման դասընթաց են անցել ՆԳՆ կրթահամալիրում, իսկ ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանցից 7-ը մասնագիտական պատրաստում են անցել Արդարադատության ակադեմիայում:

2024 թվականին սահմանված կարգով պարտադիր վերապատրաստում են անցել 19 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք՝ Արդարադատության ակադեմիայում (ապահովված է գրեթե 30 տոկոսի մասնակցությունը), իսկ օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման 35 ծառայողներ՝ ՆԳՆ կրթահամալիրում:

Հարկ է նշել, որ 2024 թվականի 1-ին կիսամյակում Հակակոռուպցիոն կոմիտեի 8 քննիչ Հունգարիայում մասնակցել է Բուդապեշտի միջազգային իրավապահ ակադեմիայի (ILEA) կողմից կազմակերպված հակակոռուպցիոն շարքի դասընթացներին, որոնք վերաբերել են ֆինանսական քննություններին: 2024 թվականի ապրիլի 16-ին և 17-ին ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության (ԹՊԻՀ) գրասենյակի կողմից Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների համար կազմակերպվել է միջազգային իրավական փոխօգնության հարցումների վերաբերյալ վերապատրաստում:

2024 թվականի մայիսի 31-ից հունիսի 1-ը Եվրոպայի խորհրդի կողմից Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների և օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման ծառայողների համար կազմակերպվել է վերապատրաստում, որը վերաբերել է փողերի լվացման և ֆինանսական բնույթի հանցագործությունների բացահայտմանն ու քննությանը: Առաջիկայում ևս նախատեսվում են մի շարք վերապատրաստումներ, որոնք կազմակերպվելու են ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության, IRZ-ի և ԵԱՀԿ-ի կողմից:

2024 թվականի երկրորդ կիսամյակում Հակակոռուպցիոն կոմիտեի 3 քննիչ (18.07.2024թ.-19.07.2024թ.) մասնակցել է ԵԱՀԿ-ի կողմից կազմակերպված «Առգրավված և բռնագանձված վիրտուալ ակտիվների տնօրինում» թեմայով վերապատրաստմանը: 26.09.2024թ.-27.09.2024թ. 3 քննիչ մասնակցել է ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան ԹՊԻՀ-ի կողմից կազմակերպված «Փողերի լվացման

գործերով քննություն, քրեական հետապնդում և դատական գործընթաց» թեմայով վերապատրաստմանը: 21.11.2024թ.-22.11.2024թ. 3 քննիչ մասկացել է ՀՀ-ում ԱՄԴ դեսպանատան ԹՊԻՀ-ի կողմից կազմակերպված «Գնման գործընթացում կատարվող խարդախություններ, իրավաբանական անձանց քրեական հետապնդում, հաջողված դեպքերի ուսումնասիրություն, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության տեխնիկա» թեմայով վերապատրաստմանը:

2024 թվականի նոյեմբերի 27-ին 20 օպերիվագոր մասնակցել է IRZ-ի կողմից կազմակերպված «Փողերի լվացում, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, կրիպտոարժույթ» թեմայով վերապատրաստմանը:

2024 թվականի նոյեմբերի 25-ին և 26-ին 1 քննիչ Սոլոդովայի մայրաքաղաք Քիշնևում մասնակցել է Եվրոպայի խորհրդի կողմից կազմակերպված «Ֆինանսական հանցագործությունը բացահայտելու, կանխելու և խափանելու համար հանրային մասնավոր գործընկերության նախաձեռնությունների ստեղծում, օգտագործում և օգուտի քաղում» թեմայով վերապատրաստմանը:

2024 թվականի ընթացքում Արդարադատության ակադեմիայում Արդարադատության ակադեմիայում վերապատրաստման դասընթացներ են անցել՝

2024 թվականի մայիս ամսին 62 դատախազ ՈՀՀ-ում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պետության կողմից ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ հիմնահարցեր՝ վերտառությամբ դասընթացին:

2024 թվականի հոկտեմբեր ամսին 15 դատախազ «Կոռուպցիոն հանցագործությունների քննության առանձնահատկությունները» և «Կոռուպցիոն հանցանքների որակման հիմնահարցերը» վերտառությամբ դասընթացներին:

2024 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին 15 դատախազ «Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորություն, կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմը» վերտառությամբ դասընթացին:

2024 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին 41 դատախազ ՈՀանրային շահերի դեմ ուղղված հանցագործությունների որակման և քննության առանձնահատկությունները՝ վերտառությամբ դասընթացին:

Բացի այդ, 2024 թվականի մայիսի 13-ից 17-ը Բուդապեշտում ԱՄՆ դեսպանության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի (ԹՊԻՀ) հրավերով Միջազգային Իրավապահ Ակադեմիայի (ILEA) կողմից կազմակերպվող Հակակոռուպցիոն շարքի դասընթացին մասնակցել են Գլխավոր դատախազության համապատասխան ստորաբաժանումների 4 դատախազներ:

2024 թվականի նոյեմբերի 28-ից Գլխավոր դատախազության համապատասխան ստորաբաժանումների 4 դատախազներ մասնակցում են HELP առցանց հարթակում «Կոռուպցիայի կանխարգելման ներածություն» խորագրով դասընթացին (դասընթացը տևելու է մինչև 2025 թվականի հունվարի 28-ը):

Բացի այդ, Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդաստական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության թվով 3 դատախազներ 2024 թվականի փետրվարի 4-ից մինչև 11-ն ընկած ժամանակահատվածում Բուդապեշտ քաղաքում մասնակցել են միջազգային իրավապահ մարմինների կողմից կազմակերպված կոռուպցիոն հանցագործությունների դեմ համատեղ պայքարի շրջանակներում միջազգային համագործակցության խթանման հիմնախնդիրների դասընթացին:

Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդաստական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության թվով 5 դատախազներ 2024 թվականի փետրվարի 14-ին մասնակցել են «Ահաբեկչության, ծայրահեղականության և ապօրինի միգրացիայի դեմ պայքարի արդի հարցեր», «Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտի օրենսդրության պահպանման նկատմամբ դատախազական հսկողություն», «Ներդրողների և ձեռնարկատերերի իրավունքների պաշտպանությունը» թեմաներով դասախոսությանը:

Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կազմում ընդգրկված դատախազները ևս պարբերաբար վերապատրաստվել են ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային փորձագետների կողմից: Մասնավորապես՝ «Ակտիվների կառավարման բալկանյան միջգերատեսչական ցանց»-ի (BAMIN) քարտուղարության կողմից կազմակերպված «Ակտիվների կառավարման բալկանյան միջգերատեսչական ցանց»-ի կազմակերպած ժողովին մասնակցել է 2 դատախազ, Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի քարտուղարության կողմից իրականացվող երկօրյա ուսուցմանը՝ 1 դատախազ, Արդարադատության ակադեմիայի կողմից կազմակերպված հատուկ մասնագիտական դասընթացներին՝ 6 դատախազ, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության (ԹՊԻՀ/INL) գրասենյակի կողմից կազմակերպված «Իրական շահառուի ապացուցման շեմը և ապացուցման բեռի առանձնահատկությունները» վերտառությամբ վերապատրաստման ծրագրին՝ 9 դատախազ:

Միննույն ժամանակ, հարկ է նշել, որ Գլխավոր դատախազության դատախազները մասնակցել են նաև մի շարք վեբինարների, մասնավորապես՝ Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազները 2024 թվականի հունիսի 27-ին մասնակցել են Դատախազների միջազգային ասոցիացիայի կողմից կազմակերպված «Ուժեղացնել միջազգային քննչական և դատախազական համագործակցությունը միջազգային կոռուպցիոն հանցագործությունների ոլորտում. համաշխարհային ցանցի օգտագործում արդյունավետ համագործակցության համար» վեբինարին, իսկ Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդաստական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազները՝ Դատախազների միջազգային ասոցիացիայի կողմից 2024 թվականի մարտի 14-ին և ապրիլի 30-ին հակակոռուպցիոն թեմաներով անցկացված վեբինարներին և 2024 թվականի հուլիսի 4-ին Հոնգ Կոնգ «IAACA» (Երիտասարդների ներգրավվածության կարևորությունը. Խնամելով և հզորացնելով մեր ապագան: Ղեկավարներ Հակակոռուպցիոն աշխատանքում. պատմություններ ոլորտից) վեբինար-կոնֆերանսին:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
<p>Հաստատվել են կոռուպցիայի դեմ պայքարին՝ այդ թվում կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության առնչությամբ թեմաներն ու մոդուլները, վերապատրաստման ծրագիրն ու մեթոդաբանությունը, ինչպես նաև վերապատրաստում/ պատրաստում անցնող խմբերը: Իրականացվել է կոռուպցիայի դեմ պայքարին՝ այդ թվում կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և</p>	<p>Վերապատրաստումների գեկույցներ Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և աշխատակիցների շրջանում կատարվող հարցումներ Մամուլի հոդորդագրություններ</p>	<p>2024 թվականի ընթացքում մրցույթների արդյունքում հաղթող ճանաչված և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանցից 11-ը համապատասխան վերապատրաստման դասընթաց են անցել ՆԳՆ կրթահամալիրում, իսկ ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանցից 7-ը մասնագիտական պատրաստում են անցել Արդարադատության ակադեմիայում:</p> <p>2024 թվականին սահմանված կարգով պարտադիր վերապատրաստում են անցել 19 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք՝ Արդարադատության ակադեմիայում, իսկ օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման 35 ծառայողներ՝ ՆԳՆ կրթահամալիրում:</p> <p>Այսպիսով, ապահովված է գրեթե 30 տոկոս քննիչների մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին:</p> <p>2024 թվականին սահմանված կարգով վերապատրաստում են անցել 133 դատախազ:</p>	<p>Կատարված է ամբողջությամբ</p>

<p>քննության առնչությամբ թեմաներով վերապատրաստումներ և պատրաստումներ հաստատված խմբերից 30%-ի հետ:</p>		<p>Ապահովվել է մասնակցություն նաև միջազգային վերապատրաստումներին:</p>	
Այլընտրանքային գնահատում			
<p>Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակիցների, դատախազների վերապատրաստումների վերաբերյալ վերջնարդյունքների կատարման մակարդակները ներկայացված են բացարձակ թվերով և վերապատրաստման դասընթացների անվանումների թվարկումներով, որոնք կրկնում են գործոնային մակարդակում համապատասխան գործողության ուղղակի արդյունքները: Այսպես, իրականացվել են վերապատրաստումներ թիրախային խմբերի համար, սակայն ապահովվել է մասնակի արդյունք, քանի որ չկան ազդեցության գնահատման մեխանիզմներ, բացակայում են փաստեր, որոնք կվկայեն մասնավոր խնդրի և ապա՝ ռազմավարական նպատակի մակարդակում սպասվող արդյունքի ամբողջական իրականացումը:</p> <p>Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է կատարված, սակայն ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրն (արդյունքը) իրականացված է ոչ ամբողջական: Գործողության շրջանակներում իրականացված գործողությունները ամբողջապես չեն նպաստել հակակոռուպցիոն հակազդման իրավապահ մարմինների ինստիտուցիոնալ հզորացմանը:</p>			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.6

ՄՇԱԿԵԼ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՄԵԹՈԴԻԿԱ ԵՎ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

2024 թվականի կատարողականի թիրախ

Մշակվել են կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության համապարփակ մեթոդիկա և ուղեցույցներ, որը կներառի մինչդատական քրեական վարույթի փուլից մինչև դատական քննության փուլը:

Մեթոդիկան և ուղեցույցը ներկայացվել են համապատասխան մարմիններին՝ դրանք վերապատրաստման նյութերի մեջ ներառելու համար:

Ստուգման միջոց

Ուղեցույցի և միասնական մեթոդիկայի առկայություն

Կատարող մարմին

ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)

Համակատարող մարմին

Արդարադատության նախարարություն

Արդարադատության ակադեմիա (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Դեռևս 2023 թվականին մշակվել և «Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի մարտի 2-ի նիստում ընդունվել է Փողերի լվացման գործերի քննության ուղեցույցը: Բացի այդ,

ներկայումս վերանայման փուլում է գտնվում Գլխավոր դատախազի՝ 2022 թվականի մարտի 22-ի թիվ 35 հրամանով հաստատված «Կոռուպցիոն հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության առանձնահատկությունների վերաբերյալ մեթոդական ուղեցույցը»՝ միտված ի թիվս այլնի նաև քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերին համապատասխանությունն ապահովելուն:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Մշակվել են կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության համապարփակ մեթոդիկա և ուղեցույցներ, որը կներառի մինչդատական քրեական վարույթի փուլից մինչև դատական քննության փուլը: Մեթոդիկա և ուղեցույցը	Ուղեցույցի և միասնական մեթոդիկայի առկայություն	Ներկայումս վերանայման փուլում է գտնվում Գլխավոր դատախազի՝ 2022 թվականի մարտի 22-ի թիվ 35 հրամանով հաստատված «Կոռուպցիոն հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության առանձնահատկությունների վերաբերյալ մեթոդական ուղեցույցը», որի ընդունման ձգձգումը պայմանավորված է համապատասխան փորձագետ ներգրավելու հետ կապված դժվարություններով:	Կատարված է մասնակի

ներկայացվել են համապատասխան մարմիններին՝ դրանք վերապատրաստման նյութերի մեջ ներառելու համար:			
Այլընտրանքային գնահատում			
2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ մինչդատական քրեական վարույթի փուլից մինչև դատական քննության փուլը ներառող կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության համապարփակ մեթոդիկա և ուղեցույցներ չեն մշակվել: Որպես ստուգման միջոց սահմանված ուղեցույցի առկայությունն ապահովված չէ:			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Ուղեցույցի ընդունման ձգձգումը պայմանավորված է համապատասխան փորձագետ ներգրավելու հետ կապված դժվարություններով:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.7

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԵՐԳՐԱՎԵԼ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ/
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ**

2024 թվականի կատարողականի թիրախ

Գնահատվել է հակակոռուպցիոն հակազդման իրավապահ մարմինների՝ տնտեսագիտական/ֆինանսական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետների ներգրավման կարիքները:

Ըստ կարիքի՝ փորձագետներին իրավապահ մարմիններին աշխատանքներին ներգրավվելու աշխատանքներ են իրականացվել:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Մամուլի հաղորդագրություններ

ԶԼՄ հրապարակումներ

Կատարող մարմին

Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)

ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

Համակատարող մարմին

Արդարադատության նախարարություն

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացը և դրան համապատասխան փոփոխությունները հանգեցրել են նաև հանցագործությունների կատարման եղանակների փոփոխության, հատկապես՝ կոռուպցիոն հանցագործությունների դեպքում

հաճախ անհրաժեշտություն է առաջանում ներգրավել համապատասխան որակավորում ունեցող մասնագետների, որոնք կօժանդակեն, համապատասխան վերլուծություններ կիրականացնեն նեղ մասնագիտական ոլորտներում, ինչն էլ կօգնի բացահայտել և կանխել նոր հանցագործությունները: Նման պահանջները կապված են հիմնականում տնտեսագիտական/ֆինանսական, տեղեկատվական տեխնոլոգիաների և անհրաժեշտ այլ ոլորտներում մասնագիտական հմտությունների և կարողությունների հետ:

Անհերքելի է այն փաստը, որ կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման նպատակով իրականացվող գործունեությունը մեծ մասամբ կապված է տեղեկատվական տիրույթում առկա, այդ թվում՝ ֆինանսական գործունեության վերաբերյալ տեղեկությունների վերլուծության հետ: Տվյալ ոլորտում լավագույն կերպով աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ է կոնկրետ տվյալ մասնագիտացումն ունեցող մասնագետների ներգրավում: Բացի այդ, հարկ է նշել, որ քրեական վարույթին զուգահեռ պետք է իրականացվի նաև ֆինանսական քննություն, ինչը լավագույնս կարող են իրականացնել բացառապես տվյալ ոլորտում մասնագիտացված անձինք:

2022 թվականի հունվարի 1-ից 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Հակակոռուպցիոն կոմիտեում քննվել է 4188 քրեական վարույթ, որոնցից 184-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածով (խարդախություն) նախատեսված հանցագործության հատկանիշներով, 839-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածով (վստահված գույքը հափշտակելը) նախատեսված հանցագործության հատկանիշներով, 78-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով (փողերի լվացում) նախատեսված հանցագործության հատկանիշներով, 765-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածով (կաշառք ստանալը) նախատեսված հանցագործության հատկանիշներով, 223-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածով (կաշառք տալը) նախատեսված հանցագործության հատկանիշներով, 100-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 444-րդ հոդվածով (ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելը, հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելը կամ հայտարարագիր չներկայացնելը) նախատեսված հանցագործության հատկանիշներով: Նշված ժամանակահատվածում Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթների շրջանակներում հանրային քրեական հետապնդումներ են հարուցվել 1589 անձի նկատմամբ:

Վերը թվարկված քրեական վարույթներով իրականացվող նախաքննության ընթացքում մոտավորապես 70-80 տոկոս դեպքերում վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռք են բերվել մեղադրյալներին առնչվող բանկային գաղտնիք կազմող մեծածավալ տեղեկություններ, ինչպես նաև այդ անձանց և այլ իրավաբանական անձանց ֆինանսական, տնտեսական գործունեության վերաբերյալ հաշվապահական փաստաթղթեր, որոնց ուսումնասիրման և դրանց շրջանակներում

համապատասխան մասնագիտական վերլուծություններ կատարելու համար առաջացել է ֆինանսատնտեսագիտական ոլորտում համապատասխան որակավորում և գիտելիքներ ունեցող փորձագետների ներգրավման անհրաժեշտություն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն՝ «1. Փորձագետը վարույթի առարկայով չշահագրգռված այն անձն է, որը հատուկ գիտելիքների կամ հմտությունների օգտագործմամբ օժանդակում է վարույթին՝

(...)

1) ապացուցողական կամ վարութային այլ գործողության կատարմանը մասնակցելով:

(...)

3. Փորձագետը պետք է տիրապետի գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառի բավարար հատուկ գիտելիքների:»:

Այս համատեքստում հարկ է նշել, որ ներկայումս Հակակոռուպցիոն կոմիտեում ներգրավված է 4 փորձագետ, որից 2-ը փորձագետ-տնտեսագետ են: Վերջիններիս հետ կնքվել են քաղաքացիաիրավական պայմանագրեր, այսինքն՝ հաստիքային աշխատակիցներ չեն հանդիսանում (հայտարարությունները և նշանակված անձանց վերաբերյալ տեղեկատվության հղումները՝ <https://www.anticorruption.am/hy/announcement/view/253>, <https://www.anticorruption.am/hy/announcement/view/256>, <https://www.anticorruption.am/hy/announcement/view/268>, <https://www.anticorruption.am/hy/announcement/view/257>, <https://www.anticorruption.am/hy/announcement/view/270>):

Վերոնշյալի առնչությամբ հարկ ենք համարում նշել նաև, որ Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից մշակված «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-361-Ն օրենքի շրջանակներում (հղում՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=186223>) «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 16-րդ հոդվածը լրացվել է 12.1-ին մասով, որի հիման վրա Հակակոռուպցիոն կոմիտեում նախատեսվել են ավագ օպերիվագորտնտեսագետի, օպերիվագորտնտեսագետի, ավագ օպերիվագոր-կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետի, օպերիվագոր-կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետի հաստիքները: Նշյալ հաստիքների համալրման դեպքում ծառայողներն, ըստ էության, իրականացնելու են նաև տեղեկատվական տեխնոլոգիաների, ինչպես նաև տնտեսագիտության ոլորտներին բնորոշ գործառույթներ: Այս փոփոխությամբ պայմանավորված՝ Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքացուցակում, ինչպես նաև ներքին իրավական ակտերում ևս կատարվել են համապատասխան լրացումներ: Բացի այդ, նշված հաստիքները համալրելու նպատակով 2024 թվականի ընթացքում հայտարարվել է երկու մրցույթ:

2024 թվականի 2-րդ կիսամյակում իրականացված կարիքների գնահատման հիման վրա Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կազմում ներգրավվել է մեկ տնտեսագետ: Արդյունքում

վարչության կազմում ընդգրված են թվով 10 տնտեսագետներ, ովքեր իրականացնում են եկամուտ-ծախս հարաբերակցության վերլուծություն: Բացի այդ, հարկ է նշել, որ Գլխավոր դատախազի երկու խորհրդականների պաշտոնի անձնագրով նախատեսված է ֆինանսների և (կամ) տնտեսագիտության և (կամ) հաշվապահության ոլորտում բարձրագույն կրթության և (կամ) աուդիտորի որակավորման պահանջ, որոնք համապատասխան մասնագիտական աջակցություն են ցույց տալիս Գլխավոր դատախազության Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությանը:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Գնահատվել է հակակոռուպցիոն հակազդման իրավապահ մարմինների՝ տնտեսագիտական/ֆինանսական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետների Ըստ կարիքի՝ փորձագետներին իրավապահ մարմիններին	Իրավական ակտի առկայություն, Մամուլի հաղորդագրություններ, ՋԼՄ հրապարակումներ	Հակակոռուպցիոն կոմիտեում ներգրավված է 4 փորձագետ, որից 2-ը փորձագետ-տնտեսագետ են: Վերջիններիս հետ կնքվել են քաղաքացիաիրավական պայմանագրեր: Հակակոռուպցիոն կոմիտեում նախատեսվել են ավագ օպերիւհագոր-տնտեսագետի, օպերիւհագոր-տնտեսագետի, ավագ օպերիւհագոր-կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետի, օպերիւհագոր-կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետի հաստիքները: Հարկ է նկատել, որ նշված հաստիքները համալրվելու դեպքում ծառայողներն, ըստ էության, իրականացնելու են նաև տեղեկատվական տեխնոլոգիաների, ինչպես նաև տնտեսագիտության ոլորտներում բնորոշ գործառույթներ: Այս փոփոխությամբ պայմանավորված Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքացուցակում, ինչպես նաև ներքին իրավական	Կատարված է ամբողջությամբ

<p>աշխատանքներին ներգրավվելու աշխատանքներ են իրականացվել:</p>		<p>ակտերում ևս կատարվել են համապատասխան լրացումներ: Բացի այդ, նշված հաստիքները համալրելու համար 2024 թվականի ընթացքում հայտարարվել է երկու մրցույթ:</p> <p>Կատարված կարիքների գնահատման հիման վրա դեռևս առկա է անհրաժեշտություն ներգրավել տնտեսագետ/ֆինանսիստ փորձագետներ Գլխավոր դատախազության Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության համար:</p>	
<p>Այլընտրանքային գնահատում</p>			
<p>Կատարված գործողությունների նկարագրությունը չի պարունակում հստակ տեղեկություն առ այն, թե արդյոք նշված փորձագետների ներգրավումը տեղի է ունեցել 2024 թվականի ընթացքում: Բացի այդ, «Այս փոփոխությամբ պայմանավորված Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքացուցակում, ինչպես նաև ներքին իրավական ակտերում ևս կատարվել են համապատասխան լրացումներ» պնդումը ապացուցող հղումները բացակայում են:</p>			

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.8

ԱՆՑԿԱՑՆԵԼ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2024 թվականի կատարողականի թիրախ

Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի, Վերաքննիչ դատարանում կոռուպցիոն բնույթի գործեր քննող դատավորների, իսկ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի ստեղծումից հետո այդ դատարանի, Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի դատավորների վերապատրաստման համար նախատեսված ծրագրերը, ինչպես նաև դատավորների թեկնածուների ուսուցման ծրագրերը վերանայվել են՝ կոռուպցիոն բնույթի գործերի քննության առանձնահատկությունների, այդ թվում՝ միջազգային առկա ստանդարտների հաշվառմամբ:

Ծրագրի հաստատումից հետո հակակոռուպցիոն դատարանների դատավորների առնվազն 30%-ը վերապատրաստվել է:

Ստուգման միջոց

Ուսուցման, վերապատրաստման ծրագրեր

Վերապատրաստումների զեկույցներ

Մամուլի հաղորդագրություններ

ԶԼՄ հրապարակումներ

Կատարող մարմին

Արդարադատության նախարարություն

Արդարադատության ակադեմիա (համաձայնությամբ)

Համակատարող մարմին

Ընդհանուր ժողովի Ուսումնական հանձնաժողով (համաձայնությամբ)

Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

Կատարված է ամբողջությամբ

Կատարված է մեծամասամբ

Կատարված է մասնակի

Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

2023 թվականի հոկտեմբերի 3-ի Արդարադատության ակադեմիայի Կառավարման խորհրդի թիվ ԿԽ-012/23/3 որոշմամբ հաստատվել է Դատավորների և դատավորների թեկնածուների տարեկան վերապատրաստման ծրագիրը (հղումը՝ <https://aoj.am/full-time-education/training-programs/2024/judge>)՝ հատուկ առանձին դասընթացներ և մոդուլներ սահմանելով հակակոռուպցիոն մասնագիտացմամբ բոլոր աստիճանի դատավորների համար: Ծրագիրը կազմվել է միջազգային չափանիշներին և պահանջներին համապատասխան, միաժամանակ հաշվի առնելով շահառուների կողմից ներկայացված կարիքները: Մասնավորապես, կոռուպցիոն հանցագործությունների գործեր քննող բոլոր դատավորների համար նախատեսված են հետևյալ թեմաներով դասընթացները. «Կոռուպցիոն հանցագործությունների քննության առանձնահատկությունները», «Կոռուպցիոն հանցանքների որակման հիմնահարցեր», «Հանցավոր ճանապարհով ստացված գույքի օրինականացման (փողերի լվացում) հանցագործության որակումը և քննության մեթոդիկան», «Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ ՄԻԵԴ պրակտիկան և կոռուպցիայի կանխարգելման արդի հարցերը», «Ընտրական հանցագործությունների որակման առանձնահատկությունները», «Տնտեսական հանցագործությունների քննության առանձնահատկությունները», իսկ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման արդի հարցեր», «Ապօրինի ծագում ունեցող գույքի նկատմամբ հայցի (նախնական) ապահովման միջոցների կիրառումը և ապացույցների (նախնական) ապահովումը», «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի քննությունը դատարանում», «ՄԻԵԴ-ի պրակտիկան ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի վերաբերյալ», «Միջազգային պայմանագրերի անմիջական կիրառման առանձնահատկությունները և միջազգային համագործակցությունը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացում» վերտառությամբ դասընթացները՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործեր քննող դատավորների համար: Միջազգային և ներպետական գործընկերների հետ մշակվել են վերոնշյալ թեմաներին վերաբերելի մի շարք նոր դասընթացներ, օրինակ՝ «Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորություն. կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմը» վերտառությամբ հեռավար դասընթացը: Դասընթացներին նախատեսվել է Հակակոռուպցիոն դատարանի, Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի և Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի բոլոր դատավորների մասնակցությունը:

2024 թվականի ընթացքում Արդարադատության ակադեմիայում վերապատրաստվել են Հակակոռուպցիոն դատարանի 15 դատավոր /94%/, 1 դատավոր չի վերապատրաստվել, քանի որ ընթացիկ տարում Արդարադատության ակադեմիայում անցել է մինչ նշանակվելը մասնագիտական պատրաստում/, Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի 12 դատավոր /100%/ և Վճռաբեկ դատարանի Հակակոռուպցիոն պալատի 10 դատավոր /100%/:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
<p>Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի, Վերաքննիչ դատարանում կոռուպցիոն բնույթի գործեր քննող դատավորների, իսկ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի ստեղծումից հետո այդ դատարանի, Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի դատավորների վերապատրաստման համար նախատեսված ծրագրերը, ինչպես նաև դատավորների թեկնածուների ուսուցման ծրագրերը վերանայվել են՝ կոռուպցիոն բնույթի գործերի քննության առանձնահատկությունների,</p>	<p>Ուսուցման, վերապատրաստման ծրագրեր Վերապատրաստումների զեկույցներ Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և աշխատակիցների շրջանում կատարվող հարցումներ Մամուլի հաղորդագրություններ ՁԼՄ հրապարակումներ</p>	<p>2024 թվականի ընթացքում Արդարադատության ակադեմիայում վերապատրաստվել են Հակակոռուպցիոն դատարանի 15 դատավոր /94/ 1 դատավոր չի վերապատրաստվել, քանի որ ընթացիկ տարում Արդարադատության ակադեմիայում անցել է մինչ նշանակվելը մասնագիտական պատրաստում Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի 12 դատավոր /100%/ և Վճռաբեկ դատարանի Հակակոռուպցիոն պալատի 10 դատավոր/100%/:</p>	<p>Կատարված է ամբողջությամբ</p>

այդ թվում՝ միջազգային առկա ստանդարտների հաշվառմամբ: Ծրագրի հաստատումից հետո հակակոռուպցիոն դատարանների դատավորների առնվազն 30 %-ը վերապատրաստվել է:			
--	--	--	--

Այլընտրանքային գնահատում

Հակակոռուպցիոն դատարանի դատավորների վերապատրաստումների վերաբերյալ վերջնարդյունքների կատարման մակարդակները ներկայացված են բացարձակ թվերով և վերապատրաստման դասընթացների անվանումների թվարկումներով, որոնք կրկնում են գործոնային մակարդակում համապատասխան գործողության ուղղակի արդյունքները: Բացի այդ, նշված գործողություններից պարզ չէ, թե սահմանված վերջնարդյունքի կատարման մակարդակն ինչպիսին է: Օրինակ, «Հակակոռուպցիոն դատարանների դատավորների առնվազն 50 %-ը վերապատրաստվել է, իսկ մյուս դատարանների դատավորների առնվազն 80 %-ը վերապատրաստվել է կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ թեմաներով» վերջնարդյունքներին հասնելու միտումը պատկերացնելու համար անհրաժեշտ է ունենալ հակակոռուպցիոն դատավորների վերապատրաստման մակարդակները՝ տոկոսային հարաբերակցությամբ: Առաջարկում ենք կատարման կարգավիճակը նշել «Կատարված է մասնակի»:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2 .10

ՀԱԿԱԿՈՈՒՊՑԻՈՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԵՐԳՐԱՎԵԼ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ

2024 թվականի կատարողականի թիրախ

Գնահատվել է հակակոռուպցիոն դատարաններում՝ տնտեսագիտական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետների ներգրավման կարիքները:

Ըստ կարիքի՝ փորձագետներին դատարանների աշխատանքներին ներգրավվելու քայլեր են իրականացվել:

Հակակոռուպցիոն դատարաններում տնտեսագիտական/ֆինանսական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետները ներգրավվել են:

Ստուգման միջոց

Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային զեկույցներ

Մամուլի հաղորդագրություններ

ԶԼՄ հրապարակումներ

Կատարող մարմին

Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)

Համակատարող մարմին

Արդարադատության նախարարություն

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Սույն գործողության կատարման շրջանակներում Դատական դեպարտամենտը գնահատել է Հակակոռուպցիոն դատարանի, Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի և Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կարիքները տնտեսագիտական և այլ անհրաժեշտ գիտելիքներ ունեցող փորձագետների ներգրավման վերաբերյալ վերջիններիս կողմից տրամադրված տեղեկատվության և Դատական դեպարտամենտի իրավական ակտերի մշակման և փորձաքննության վարչության կողմից իրականացված վերլուծության հիման վրա: Արդյունքում՝ Հակակոռուպցիոն դատարանին տրամադրվել է ընդհանուր թվով 2, իսկ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանին՝ 1 տնտեսագիտական գիտելիքներ ունեցող փորձագետի հաստիքներ: Նշված հաստիքները որակյալ մասնագետներով համալրելու ուղղությամբ ձեռնարկվել են անհրաժեշտ քայլեր՝ հաստիքները համալրելու անհրաժեշտության մասին տեղեկացման միջոցով, սակայն համալրումը դեռևս չի իրականացվել:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Գնահատվել է հակակոռուպցիոն դատարաններում՝ տնտեսագիտական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետների ներգրավման կարիքները: Ըստ կարիքի՝ փորձագետներին դատարանների	Գիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ Մամուլի հաղորդագրություններ ՋԼՄ հրապարակումներ	Տնտեսագիտական գիտելիքներ ունեցող փորձագետների ներգրավման գործողության շրջանակներում՝ Հակակոռուպցիոն դատարանին տրամադրվել է թվով 2 հաստիք, իսկ ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանին՝ 1 հաստիք: Նշված հաստիքները որակյալ մասնագետներով համալրելու ուղղությամբ ձեռնարկվել են անհրաժեշտ քայլեր՝ հաստիքները համալրելու անհրաժեշտության մասին տեղեկացման միջոցով, սակայն համալրումը դեռևս չի իրականացվել:	Կատարված է մեծամասամբ

<p>աշխատանքներին ներգրավվելու քայլեր են իրականացվել: Հակակոռուպցիոն դատարաններում տնտեսագիտական /ֆինանսական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետները ներգրավվել են:</p>			
Այլընտրանքային գնահատում			
<p>Կատարված գործողությունների նկարագրությունը չի պարունակում հստակ վերջնարդյունքներին հասնելու խոչընդոտները, անելիքները և ապահովմանը միտված առաջարկությունները: Համալրված հաստիքացուցակի պայմաններում մրցույթները դեռևս չեն անցկացվել, ըստ այդմ առաջարկում ենք կատարման կարգավիճակը նշել «Կատարված է մասնակի»:</p>			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.11

ՍԱՀՄԱՆԵԼ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՐԳ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ ԱՌԿԱ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Մշակվել է կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության վարման միասնական կարգ՝ ներառելով մինչդաստական և դաստական քննության փուլերը:

Ստուգման միջոց

Ներդրված էլեկտրոնային գործիքներ

Կատարող մարմին

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)

ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)

Համակատարող մարմին

Արդարադատության նախարարություն

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության օժանդակությամբ մշակվել և ներկայումս ավարտական փուլին է հասցվել դատախազի աշխատանքի վիճակագրական տվյալների վերաբերյալ էլեկտրոնային վիճակագրության համակարգը, որը, ի թիվս այլնի, ներառելու է յուրաքանչյուր կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վիճակագրական տվյալներ:

Բացի այդ, արդիականացվել են Գլխավոր դատախազության Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության վիճակագրության վարման մեխանիզմները: Ներկայումս հաշվառվում են ոչ միայն քրեական վարույթները, դրանց ընթացքն ու արդյունքները, այլ նաև՝ վիճակագրական փաստաթղթերում ներառվում են տեղեկություններ մեղադրյալների անձնական տվյալների, զբաղեցրած պաշտոնների, քրեական հետապնդման իրավական գնահատականների, ընտրված խափանման միջոցների վերաբերյալ: Բացի այդ, վիճակագրություն է վարվում չնախաձեռնված քրեական վարույթների, դրանց դեմ ներկայացված բողոքների վերաբերյալ: Առանձին հաշվառվում են դատաքննության փուլում գտվող վարույթները, բողոքարկված դատական ակտերը:

Դատական դեպարտամենտի կողմից կոռուպցիոն հանցագործություններով դատական վիճակագրությունը վարվում է (*ըստ դատարանի և ըստ դատավորների*) ՈՀայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքի սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1542-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ կիսամյակային և տարեկան պարբերականությամբ, որը հրապարակվում է Դատական իշխանության պաշտոնական՝ www.court.am կայքէջում:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Մշակվել է կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության վարման միասնական կարգ՝ ներառելով մինչդատական և դատական քննության փուլերը:	Ներդրված էլեկտրոնային գործիքներ	Հարկ է նկատի ունենալ, որ ձեռնարկված քայլերը բավարար չեն միջոցառման կատարումն ապահովելու համար: Որպես կատարողական թիրախ մատնանշվում է վիճակագրության վարման <i>միասնական</i> կարգի առկայություն, որը հնարավոր է ապահովել միայն իրականացվող աշխատանքները Գլխավոր դատախազության և Արդարադատության նախարարության կողմից համապատասխանաբար մինչդատական և դատական վարույթների մասով փոխհամաձայնեցված համակարգելու միջոցով:	Կատարված է մասնակի

Այլընտրանքային գնահատում			
<p>Գործողության կատարման հետաձգումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հակակոռուպցիոն կոմիտեն 2024 թվականի նոյեմբերին Արդարադատության նախարարությանն առաջարկ է ներկայացրել վերանայել Գործողությունների ծրագրի 2.11-րդ գործողության կատարման ժամկետը և կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության վարման միասնական կարգի ստեղծումը նախատեսել 2025 թվականի առաջին կիսամյակում, իսկ կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության վարման համար օրենսդրական հիմքերի և ծրագրային/տեխնիկական լուծումների ապահովումը նախատեսել 2025 թվականի երկրորդ կիսամյակում:</p> <p>Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է մասնակի կատարված:</p>			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

2024 թվականի նոյեմբերի Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից Արդարադատության նախարարությունն առաջարկ է ներկայացվել առ այն, որ Արդարադատության նախարարության կողմից մշակված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով վերանայվի նաև ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» 1871-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) հավելված 2-ի 2.11-րդ գործողության կատարման ժամկետի հետաձգման հարցը:

Նշվածի առնչությամբ հարկ ենք համարում արձանագրել, որ ներկայումս շարունակվում են էլեկտրոնային նախաքննության ներդրման աշխատանքները, սակայն ծրագիրը դեռևս վերջնականորեն չի գործարկվել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Որոշմամբ կարևոր խնդիր է դիտարկվում կոռուպցիոն հանցագործությունների քննության, բացահայտման, դատապարտման վերաբերյալ տվյալների հավաքագրումն ու վերլուծության համակարգի ստեղծումը՝ կարևոր է, որ առկա գործիքները կատարելագործվեն, վերջնականորեն գործարկվեն, որպեսզի հնարավոր լինի արդյունավետ և փոխլրացնող վիճակագրական համակարգ ներդնել, որը կբարձրացնի հակակոռուպցիոն կառույցների հաշվետվողականությունը և հանրային վստահությունը՝ կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության նկատմամբ:

Ըստ այդմ, առաջարկվել է կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության վարման միասնական կարգի ստեղծումը նախատեսել 2025 թվականի առաջին կիսամյակում, իսկ կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության վարման համար օրենսդրական հիմքերի և ծրագրային/ տեխնիկական լուծումների ապահովումը՝ 2025 թվականի երկրորդ կիսամյակում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.12

ԿՈՌՈՒՊՏԻԱՑԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԵՄԱՆԵՐԸ ՆԵՐԱՌԵԼ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ, ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

2024 թվականի կատարողականի թիրախ

Դատավորների վերապատրաստման համար նախատեսված ծրագրերը, ինչպես նաև դատավորների թեկնածուների ուսուցման ծրագրերը վերանայվել են՝ ներառելով կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի թեմաներ:

Ծրագրերը հաստատվել են և հաստատումից հետո դատավորների թեկնածուների առնվազն 30%-ը վերապատրաստվել է:

Ստուգման միջոց

Ուսուցման, վերապատրաստման ծրագրեր

Մամուլի հաղորդագրություններ

Կատարող մարմին

Արդարադատության ակադեմիա

Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)

Համակատարող մարմին

Արդարադատության նախարարություն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Ընդհանուր ժողովի Ուսումնական հանձնաժողով (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Դատավորների, դատավորների թեկնածուների և դատավորների թեկնածուների հավակնորդների 2024 թվականի ուսումնական ծրագրերում (հղումը՝ <https://aoj.am/full-time-education/training-programs/2024/judge>), նախատեսված է «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հիմնահարցերը վերտառությամբ դասընթացը: Արդարադատության ակադեմիան, համագործակցելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հետ, նշյալ դասընթացի վարման համար հրավիրում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներկայացուցիչներին: Դասընթացի շրջանակում ուսումնասիրվում է հայտարարագրման ինստիտուտի էությունը, տվյալների լրացման, հավաքագրման և ստուգման նշանակությունը, շահերի հայտարարագիրը, նպատակը, բարեվարքության ուսումնասիրության գործընթացը, շահերի բախումը, անհամատեղելիության հիմնահարցերը, նվերների ընդունման արգելքը և այլն: Դասընթացը ընդգրկվել է դատավորների և թեկնածուների տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրի ընդհանուր և հարակից մասնագիտական դասընթացների մոդուլում և նախատեսվել է բոլոր դատավորների և թեկնածուների համար՝ անկախ մասնագիտացումից, ինչպես նաև ներառվել է բոլոր մասնագիտացումներով դատավորների թեկնածուների հավակնորդների մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրերում: 2024 թվականի ընթացքում Արդարադատության ակադեմիայում վերոնշյալ թեմայով վերապատրաստվել է 247 դատավոր, 30 դատավորի թեկնածու և մասնագիտական պատրաստման շրջանակում 10 դատավորի թեկնածուի հավակնորդ:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Մտուցման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Դատավորների վերապատրաստման համար նախատեսված ծրագրերը, ինչպես նաև դատավորների թեկնածուների ուսուցման ծրագրերը	Ուսուցման, վերապատրաստման ծրագրեր Մամուլի հաղորդագրություններ	Դատավորների, դատավորների թեկնածուների և դատավորների թեկնածուների հավակնորդների 2024 թվականի ուսումնական ծրագրերում նախատեսվել է «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հիմնահարցերը վերտառությամբ դասընթացը: Դասընթացը ընդգրկվել է դատավորների և թեկնածուների տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրի ընդհանուր և	Կատարված է ամբողջությամբ

<p>վերանայվել են ներառելով կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի թեմաներ:</p> <p>Ծրագրերը հաստատվել են և հաստատումից հետո դատավորների թեկնածուների առնվազն 30%-ը վերապատրաստվել է:</p>		<p>հարակից մասնագիտական դասընթացների մոդուլում և նախատեսվել է բոլոր դատավորների և թեկնածուների համար՝ անկախ մասնագիտացումից, ինչպես նաև ներառվել է բոլոր մասնագիտացումներով դատավորների թեկնածուների հավակնորդների մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրերում:</p> <p>2024 թվականի ընթացքում Արդարադատության ակադեմիայում վերոնշյալ թեմայով վերապատրաստվել է 247 դատավոր, 30 դատավորի թեկնածու և մասնագիտական պատրաստման շրջանակում 10 դատավորի թեկնածուի հավակնորդ:</p>	
Այլընտրանքային գնահատում			
<p>«Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հիմնահարցեր» վերտառությամբ դասընթացը ներառված չէ դատավորների, դատավորների թեկնածուների և դատավորների թեկնածուների հավակնորդների 2024 թվականի ուսումնական ծրագրերում (հղումը՝ https://aoj.am/full-time-education/training programs/2024/judge): Բացի այդ, «Հակակոռուպցիոն դատարանների դատավորների առնվազն 30 %-ը վերապատրաստվել է կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ թեմաներով» վերջնարդյունքնին հասնելու միտումը պատկերացնելու համար անհրաժեշտ է ունենալ հակակոռուպցիոն դատավորների վերապատրաստման մակարդակները՝ տոկոսային հարաբերակցությամբ: Առաջարկում ենք կատարման կարգավիճակը նշել «Կատարված է մասնակի»:</p>			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.13

ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՆԵԼ ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՒՆԱԳԱՆՁՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Միջազգային փորձի հաշվառմամբ վերանայվել է այս ինստիտուտի կատարելագործման և արդիականացման առնչությամբ՝ այդ թվում կառավարող մարմնի, բռնագանձված գույքի կառավարման մոդելի, քննչական և դատախազական մարմինների միջև տեղեկատվության ակտիվ և անվտանգ փոխանակման հարթակի, կառավարման հանձնված ակտիվների շտեմարանի ստեղծման:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Մամուլի հաղորդագրություններ

ՁԼՄ հրապարակումներ

Կատարող մարմին

ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

Համակատարող մարմին

Արդարադատության նախարարություն

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Գլխավոր դատախազության կողմից ուսումնասիրվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի վերաբերյալ ԵԽ կողմից ներգրավված միջազգային փորձագետների խորհրդատվական կարծիքը, որը հաշվի կառնվի «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելիս:

Մինևույն ժամանակ, հարկ է նշել, որ 2024 թվականի ապրիլի 26-ին Գլխավոր դատախազությունը Եվրոպայի խորհրդի հետ համատեղ անցկացրել է «Միջազգային համագործակցության արդյունավետության ամրապնդումը՝ անդրազգային

կազմակերպված հանցավորության դեմ պայքարում» թեմայով երկօրյա բարձրաստիճան խորհրդածողովը, որը մեծամասամբ նվիրված էր ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման խնդիրներին (<https://www.prosecutor.am/article/4541>):

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Միջազգային փորձի հաշվառմամբ վերանայվել է այս ինստիտուտի կատարելագործման և արդիականացման առնչությամբ՝ այդ թվում կառավարող մարմնի, բռնագանձված գույքի կառավարման մոդելի, քննչական և դատախազական մարմինների միջև տեղեկատվության ակտիվ և անվտանգ փոխանակման հարթակի, կառավարման	Իրավական ակտի առկայություն Մամուլի հաղորդագրություններ	Հաշվի առնելով, որ գործողության կատարողականի թիրախով նախատեսված միջոցառումների արդյունքում պետք է մշակվի իրավական ակտերի նախագծեր, գործողությունը գնահատվում է մասնակի կատարված:	Կատարված է մասնակի

հանձնված ակտիվների շտեմարանի ստեղծման:			
---	--	--	--

Այլընտրանքային գնահատում

2024 թվականի թիրախային արդյունքը սահմանում է կոնկրետ պահանջներ, որոնք պետք է կատարված լինեին այդ ժամանակահատվածում: Այն է՝ միջազգային փորձի հաշվառմամբ պետք է վերհանված լինեին ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի, այդ թվում՝ կառավարող մարմնի, բռնագանձված գույքի կառավարման մոդելի, քննչական և դատախազական մարմինների միջև տեղեկատվության փոխանակման հարթակի, կառավարման հանձնված ակտիվների շտեմարանի ստեղծման վերաբերյալ խնդիրները: Ընդ որում, թվարկվածներից կառավարող մարմնի և բռնագանձված գույքի կառավարման մոդելի վերաբերյալ իրավական ակտերի նախագծերը (կամ մեկ միասնական իրավական ակտը) պետք է մշակվեն 2025 թվականին:

Զեկույցի համաձայն՝ Գլխավոր դատախազությունը ուսումնասիրել է ԵՄ փորձագետների խորհրդատվական կարծիքը: Ուսումնասիրության արդյունքները հանրայացված չեն, սակայն նախատեսվում է դրանք «հաշվի առնել» ապագայում օրենքում փոփոխություններ կատարելիս: Այսպես, կատարված գործողությունների նկարագրությունից պարզ չէ, թե արդյունքում ինչ գործողություններ են արվել 2024 թվականի համար նախատեսված թիրախներին հասնելու համար: Չի հստակեցվում, թե կոնկրետ ինչպես են վերանայվել նշված թիրախային ուղղությունները: Առաջարկում ենք կատարման կարգավիճակը նշել «Կատարված չէ»:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.14

ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՐԳԵԼԱԴՐՎԱԾ ԵՎ (ԿԱՄ) ԲՈՒՆԱԳՐԱՎՎԱԾ, ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՒՆԱԳԱՆՁՄԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԲՈՒՆԱԳԱՆՁՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Միջազգային լավագույն փորձի հիման վրա մշակվել, ներդրվել է կոռուպցիոն հանցագործությունների արդյունքում ստացված, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող բռնագանձված գույքի պատշաճ կառավարման մեխանիզմներ նախատեսող իրավական ակտերի լավագույն փորձը (օրինակ՝ գույքի օգտագործումը հանրային նպատակներով):

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կատարող մարմին

ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ),

ՀՀ արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին

ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտե

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Կատարվել է ապօրինի ծագում ունեցող բռնագանձված գույքի պատշաճ կառավարման մեխանիզմներ նախատեսող միջազգային իրավական ակտերի ուսումնասիրություն, որը հիմք կհանդիսանա համապատասխան իրավական ակտերի մշակման համար:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 5-ի 1922-Ն որոշմամբ սահմանվել են քրեական վարույթներով պետությանը, համայնքին, պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններին և պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին պատճառված վնասի վերականգնման նպատակով դրամական միջոցների վճարման միասնական կարգավորումներ:

Բացի այդ, հիշյալ որոշմամբ կարգավորվել է նաև քրեական վարույթներով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի վերականգնման կարգը, ինչպես նաև վերականգնված դրամական միջոցների և արգելադրված դրամական միջոցների վերաբերյալ տվյալների հրապարակման կարգը:

Մասնավորապես,

1. Քրեական վարույթներով պետությանը, համայնքին, պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններին կամ պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին պատճառված վնասի վերականգնման նպատակով դրամական միջոցները վճարվելու են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կառավարվող՝ գանձապետական հաշվին՝ վերականգնված միջոցների միասնական հաշվին:

2. ՀՀ գլխավոր դատախազությունը եռամսյա պարբերականությամբ ֆինանսների նախարարություն տեղեկատվություն է ներկայացնելու այն քրեական վարույթների վերաբերյալ, որոնցով կատարվել է վնասի վերականգնում և առկա է օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատավարական որոշում, ինչը հնարավորություն կտա ֆինանսների նախարարությանը արդեն որպես եկամուտ տնօրինել նշված գումարները:

3. Անձի ռեաբիլիտացիայի դեպքում Գլխավոր դատախազությունը համապատասխան տեղեկատվությունը փոխանցելու է Ֆինանսների նախարարություն, որպեսզի վնասի վերականգնման նպատակով վճարված գումարները հետ վերադարձվեն վճարում կատարած անձին:

4. Ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի վերականգնման նպատակով գումարները վճարվելու են Դատախազության դեպոզիտ հաշվին և փոխանցվելու են տուժողին եզրափակիչ դատավարական ակտից հետո:

5. Համայնքին, պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններին կամ պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին պատճառված վնասի վերականգնման նպատակով դրամական միջոցները եզրափակիչ դատավարական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո կրկին դատախազության գրության հիման վրա Ֆինանսների նախարարության կողմից կհաշվանցվեն համապատասխան համայնքի, պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպությունների կամ պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաշվին:

6. Առաջարկվող կարգավորումներից բացառություններ են սահմանված հարկային որոշ հանցագործությունների համար, որոնց դեպքում նախատեսվում է դրանք վճարել հարկ վճարողի միասնական հաշվին՝ տնտեսվարողների համար հնարավոր անբարենպաստ հետևանքները (տուգանքներ և այլն) բացառելու նպատակով:

Նախատեսվում է համանման մոդել ներդնել նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթով պետությանն անցած գույքի մասով:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Միջազգային լավագույն փորձի հիման վրա մշակվել, ներդրվել է կոռուպցիոն հանցագործությունների արդյունքում ստացված, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող բռնագանձված գույքի պատշաճ կառավարման մեխանիզմներ նախատեսող իրավական ակտերի լավագույն փորձը (օրինակ՝ գույքի	Իրավական ակտի առկայություն	Հաշվի առնելով, որ գործողության կատարողականի թիրախով նախատեսված միջոցառումների արդյունքում պետք է մշակվի իրավական ակտերի նախագծեր, գործողությունը գնահատվում է մասնակի կատարված:	Կատարված է մասնակի

օգտագործումը հանրային նպատակներով):			
Այլընտրանքային գնահատում			
<p>Թիրախային արդյունքի մի մասն իրականացվել է (ընդունվել է իրավական ակտ քրեական վարույթներով վնասի վերականգնման կարգավորման համար), սակայն մյուս մասը՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների արդյունքում բռնագանձված գույքի կառավարման մեխանիզմների վերաբերյալ, դեռևս ներդրված չէ, ուստի գործողությունը գնահատվում է որպես «կատարվել է մասնակի»:</p>			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.17

ԱՊԱՀՈՎԵԼ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Գույքագրվել են ազդարարման համակարգի հետ կապված գործնական խնդիրները
Վերանայվել է ազդարարման համակարգի ներկա մոդելը՝ հաշվի առնելով նաև ազդարարման տեսակների գործնական կիրառելիությունը ապահովելու անհրաժեշտությունը, ինչպես նաև ՄԻՊ կողմից ազդարարների իրավունքների պաշտպանության կազմակերպական կառուցակարգերը:

Վերանայվել են հանրությանն ազդարարման առկա մեխանիզմները՝ ապահովելով հանրությանն ազդարարելու հնարավորությունը առանց ներքին և/կամ արտաքին ազդարարման տեսակները սպառելու այն դեպքերում, երբ կոռուպցիոն հակաօրինական արարքն անմիջական կամ ակնհայտ վտանգ է ներկայացնում հանրության համար, կամ երբ առկա է հաշվեհարդարի (վնասակար գործողությունների) վտանգ կամ խախտումը վերացնելու ցածր հավանականությունն ազդարարման այլ տեսակներով ազդարարելու դեպքում:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կատարող մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին

ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

«Ազդարարման համակարգի մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ օրենքը չի սահմանել արտաքին ազդարարման այն առանձնահատուկ հատկանիշները, որոնք թույլ կտան ազդարարումը տարանջատել կոռուպցիոն հանցագործության մասին հաղորդումից կամ այլ դիմումներից, ինչը հանգեցրել է մի իրավիճակի, երբ իրավասու տարբեր մարմինների ազդարարման պատասխանատուներն արտաքին ազդարարման և կոռուպցիոն բնույթի դեպքերի վերաբերյալ հաղորդումների հարաբերակցության հարցը որոշելիս գործնականում հանդիպում են որոշակի խնդիրների: Ստեղծված անորոշության արդյունքում արտաքին ազդարարումների պատշաճ հաշվառում չի իրականացվում:

Մասնավորապես՝ Օրենքի ներկայիս կարգավորումները մի դեպքում կարող են մեկնաբանվել այնպես, որ կոռուպցիոն բնույթի դեպքերի առնչությամբ բոլոր դիմումները, այդ թվում՝ առերևույթ կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ հաղորդումները պետք է հաշվառվեն որպես արտաքին ազդարարումներ, որի դեպքում հաղորդում ներկայացրած անձը, ձեռք բերելով ազդարարի կարգավիճակ, հնարավորություն կստանա օգտվելու «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված պաշտպանության միջոցներից: Բացի այդ, ստացվում է, որ կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ հաղորդումները որպես ազդարարում հաշվառելու դեպքում քրեադատավարական ընթացակարգերի փոխարեն պետք է գործեն «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգերը:

Մեկ այլ մեկնաբանմամբ կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ հաղորդումները պետք է դիտարկվեն բացառապես քրեադատավարական ընթացակարգերի շրջանակներում, մասնավորապես՝ դրանք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի կանոնների համաձայն, օրենսգրքով սահմանված քննչական ենթակայության կանոններին համապատասխան դատախազի կողմից պետք է վերահասցեագրվեն իրավասու քննչական մարմնի ղեկավարին՝ քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու համար: Ավելին, Օրենքի 7-րդ հոդվածի 8.1-րդ մասի համաձայն՝ արտաքին ազդարարման՝ Օրենքով նախատեսված ընթացակարգային կանոններն ու ժամկետները կիրառվում են, եթե այլ բան նախատեսված չէ համապատասխան ոլորտային օրենսդրությամբ: Այս կարգավորումից կարելի է եզրակացնել, որ օրենսդիրը նույնպես, կարծես ելնում է հիշատակված երկրորդ մեկնաբանությունից՝ կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ հաղորդումների նկատմամբ կիրառելի համարելով քրեադատավարական ընթացակարգերը: Մակայն, այս դեպքում, իր հերթին, հարց է ծագում, թե կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ որ հաղորդումները պետք է հաշվառվեն որպես արտաքին ազդարարում, համապատասխանաբար՝ կիրառվեն Օրենքով նախատեսված ազդարարման ընթացակարգերը:

Այս համատեքստում խնդրահարույց է նաև այն, որ Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը, ինչպես նաև 7-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը համապատասխանաբար նախատեսում են իրավասու մարմի կողմից ներքին և արտաքին ազդարարում հանդիսացող հաղորդումների իսկությունը ստուգելիս դրանցում հանցագործության առերևույթ հատկանիշներ հայտնաբերելու

դեպքում այդ մասին անհապաղ Դատախազությանը հայտնելու պարտավորություն: Նման պարագայում ստացվում է, որ քննչական մարմինները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կանոններին համապատասխան, ունեն ստացված հաղորդման հիման վրա քրեական վարույթ նախաձեռնելու պարտականություն, մինչդեռ Օրենքով նախատեսված ընթացակարգերի համաձայն՝ վերջիններս որպես իրավասու մարմին ունեն ազդարարման վարույթ հարուցելու և ստացված հաղորդումների մասին Դատախազությանը հայտնելու պարտականություն, ինչը ևս վկայում է քրեադատավարական և Օրենքով նախատեսված նորմերի միջև որոշակի հակասության մասին:

Օրենքի գործող կարգավորումների պայմաններում հստակ չէ նաև կոռուպցիոն հանցանքի հատկանիշներով քրեական վարույթ նախաձեռնվելու դեպքում հարուցված ազդարարման վարույթի հետագա ընթացքը: Մասնավորապես՝ Օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասը նախատեսում է իրավասու մարմնի կողմից ազդարարման վարույթի արդյունքում համապատասխան ակտ ընդունելու պարտականություն՝ չբացահայտելով տվյալ ակտի բովանդակությունը, ինչն իր հերթին, հանգեցնում է նույն հաղորդման հիման վրա քրեական վարույթ նախաձեռնվելու դեպքում հարուցված ազդարարման վարույթի հետագա ընթացքի վերաբերյալ անորոշության:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Օրենքի դրույթների տարրնկալումը և գործնական կիրառության հետ կապված խնդիրները բացառելու նպատակով առկա է «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով նախատեսված արտաքին ազդարարման առարկան և ազդարարման վարույթի ընթացակարգը հստակեցնելու անհրաժեշտություն:

Այսպես, ազդարարման համակարգի հետ կապված գործնական խնդիրների գույքագրման նպատակով Արդարադատության նախարարության կողմից պատրաստվել են հարցումներ և շրջանառվել բոլոր պետական մարմիններին և Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամ հանդիսացող հասարակական կազմակերպություններին: Բացի այդ, խնդիրների գույքագրման նպատակով Արդարադատության նախարարության կայքէջում¹⁰, ինչպես նաև նախարարության ֆեյսբուքյան էջում¹¹ տեղադրվել են համապատասխան հայտարարություններ: Արդյունքում, Արդարադատության նախարարությունը գույքագրել է ազդարարման համակարգի վերաբերյալ առկա խնդիրները, որոնք ամփոփված են «Ազդարարման համակարգի խնդիրներ» վերտառությամբ վերլուծական փաստաթղթում: Փաստաթուղթը կազմվել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի՝ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և ՔՀԿ-ների կառուցողական երկխոսության ցանցի հետ համագործակցությամբ, Եվրոպական միության և «Բաց կառավարման գործընկերություն. Եվրոպա» հիմնադրամի օժանդակությամբ իրականացվող «Ազդարարման բազմակողմանի խթանում Հայաստանում» ծրագրի շրջանակներում

¹⁰ https://www.moj.am/announcements/view/article/2950#_ftn2

¹¹ <https://www.facebook.com/mojofarmenia/posts/pfbid025CkuPmY2yzhJijbJcgMGP5Tni3w5NFikBRyX92fozA7jo4iuP61csceeuHAt5DyCl>

իրականացված ազդարարման համակարգի կատարելագործմանն ուղղված փորձագիտական վերլուծությունների, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի», ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող Հայաստանի բարեվարքության ծրագրի կողմից իրականացված վերլուծությունների, ինչպես նաև պետական մարմինների կողմից արձանագրված խնդիրների հաշվառմամբ:

Վերոնշյալի հաշվառմամբ Արդարադատության նախարարության կողմից «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության աջակցությամբ մշակվել են «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի, «Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր), որոնցով նախատեսվել է արտաքին ազդարարման դեպքում ազդարարումը նաև լիազորված անձին ներկայացնելու իրավական հնարավորությունը, հստակեցվել ներքին և արտաքին ազդարարման տեսակներով հաղորդումը ստանալուց հետո լիազորված անձի կողմից դրանք քննելու և լուծելու նպատակով իրավասու մարմիններին ներկայացնելու կարգը, ինչպես նաև սահմանվել է ազդարարի հետ՝ իր ներկայացրած հաղորդման ընթացքի վերաբերյալ հետադարձ կապ ապահովող սուբյեկտին:

Նախագծերը ներկայացվել են շահագրգիռ մարմիններին կարծիքի: Ստացված առաջարկությունների հիման վրա լրամշակվել են և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: Ներկայումս իրականացվում է Նախագծերի լրամշակման աշխատանքները:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախագծերը 2024 թվականի նոյեմբերի 1-ին դրվել են հանրային քննարկման e-draft.am հարթակում (<https://www.e-draft.am/projects/7870>):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
--------------------	----------------	---	----------------------

<p>1.Վերանայվել է ազդարարման համակարգի ներկա մոդելը՝ հաշվի առնելով նաև ազդարարման տեսակների գործնական կիրառելիությունը ապահովելու անհրաժեշտությունը, ինչպես նաև ՄԻՊ կողմից ազդարարների իրավունքների պաշտպանության կազմակերպական կառուցակարգերը:</p> <p>2.Վերանայվել են հանրությանն ազդարարման առկա մեխանիզմները՝ ապահովելով հանրությանն ազդարարելու հնարավորությունը առանց ներքին և/կամ</p>	<p>Իրավական ակտի առկայություն</p>	<p>Ազդարարման համակարգի հետ կապված գործնական խնդիրները գույքագրվել են:</p> <p>Արդարադատության նախարարության կողմից մշակվել են Նախագծերը:</p> <p>Նախագծերը ներկայացվել են շահագրգիռ մարմիններին կարծիքի: Ստացված առաջարկությունների հիման վրա լրամշակվել են և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ:</p>	<p>Կատարված է մեծամասամբ</p>
---	-----------------------------------	--	------------------------------

<p>արտաքին ազդարարման տեսակները սպառելու այն դեպքերում, երբ կոռուպցիոն հակաօրինական արարքն անմիջական կամ ակնհայտ վտանգ է ներկայացնում հանրության համար, կամ երբ առկա է հաշվեհարդարի (վնասակար գործողությունների) վտանգ կամ խախտումը վերացնելու ցածր հավանականություն ազդարարման այլ տեսակներով ազդարարելու դեպքում:</p>			
---	--	--	--

Այլընտրանքային գնահատում

Նախագծերը ներկայացվել են շահագրգիռ մարմիններին կարծիքի և այժմ գտնվում են լրամշակման փուլում, որպես արդյունքային ցուցիչ նախատեսված է իրավական ակտի ընդունումը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է կատարվել է մեծամասամբ:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.18

ԶԱՐԳԱՑՆԵԼ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԵԼՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

2-րդ կիսամյակ

Ներդրվել են վիճակագրության վարման պարտադիր և միասնական կանոններ՝ ներառելով նաև ազդարարների նկատմամբ կիրառված պաշտպանության միջոցների վերաբերյալ տվյալները:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կատարող մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Արդարադատության նախարարության կողմից «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության աջակցությամբ մշակվել են «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի, «Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ

կատարելու մասին» օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր): Նախագծերը ներկայացվել են շահագրգիռ մարմիններին կարծիքի: Ստացված առաջարկությունների հիման վրա լրամշակվել են և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: Ներկայումս իրականացվում է Նախագծերի լրամշակման աշխատանքները:

Նախագծերի ընդունմամբ ակնկալվում է զարգացնել ազդարարման դեպքերի վերաբերյալ վիճակագրություն վարելու համակարգը՝ ներդնելով առավել գործուն մեխանիզմներ:**2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն**

Նախագծերը 2024 թվականի նոյեմբերի 1-ին դրվել են հանրային քննարկման e-draft.am հարթակում (<https://www.e-draft.am/projects/7870>):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
--------------------	----------------	---	----------------------

Ներդրվել են վիճակագրության վարման պարտադիր և միասնական կանոններ՝ ներառելով նաև ազդարարների նկատմամբ կիրառված պաշտպանության միջոցների վերաբերյալ տվյալները:	Իրավական ակտի առկայություն	Արդարադատության նախարարության կողմից մշակվել են Նախագծերը, որոնք ներկայացվել են շահագրգիռ մարմիններին կարծիքի: Ստացված առաջարկությունների հիման վրա լրամշակվել են և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ:	Կատարված է մեծամասամբ
--	----------------------------	---	-----------------------

Այլընտրանքային գնահատում

ՄԻՊ գրասենյակը չի իրականացնում ստացված տվյալների բովանդակային վերիֆիկացիա, այլ սահմանափակվում է միայն տարբեր գերատեսչություններից ստացված թվային տվյալների մեխանիկական հավաքագրմամբ և ամփոփմամբ: Գործողությունը գնահատվում է «կատարված է մեծամասամբ» այն պատճառաբանությամբ, որ իրավական ակտի նախագիծը մշակված է և քննարկումների արդյունքում գտնվում է լրամշակման փուլում:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.19

ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Վեր են հանվել ազդարարման էլեկտրոնային հարթակի հիմնական խնդիրները:

Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի անվտանգության լրացուցիչ երաշխիքների սահմանման շրջանակներում դիտարկվել է հարթակի ծրագրային ապահովման իրականացումը մասնավոր ընկերության կողմից «Ekeng» էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակին հանձնելը:

Մշակվել է ազդարարման էլեկտրոնային հարթակի նոր տեխնիկական բնութագիրը:

Ստուգման միջոց

Տեխնիկական բնութագրերի առկայություն

Կատարող մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

Համակատարող մարմին

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)

Բարձր տեխնոլոգիաների և արդյունաբերության նախարարություն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Ազդարարման էլեկտրոնային հարթակի ծրագրային ապահովման իրականացումը մասնավոր ընկերության կողմից «Ekeng» էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակին հանձնելու վերաբերյալ հարկ է նշել, որ

Արդարադատության նախարարությունը նշյալ խնդրի առնչությամբ դիմել է Գլխավոր դատախազությանը, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը, Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն հիմնադրամին, «Ekeng» էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակին: Շահագրգիռ մարմինները առարկություններ չեն ներկայացրել և պատրաստակամություն են հայտնել մասնակցել հարցի շուրջ հետագա քննարկումներին: Ռազմավարության 2024 թվականի երկրորդ կիսամյակի կատարողականի թիրախով նախատեսված է մշակել ազդարարման էլեկտրոնային հարթակի նոր տեխնիկական բնութագիր, իսկ 2025 թվականին՝ տեխնիկական բնութագրի հիման վրա գործարկել ազդարարման նոր՝ արդիականացված էլեկտրոնային հարթակը: Գործողությունների հաջորդականությունն ապահովելու տեսանկյունից տեխնիկական առաջադրանքը մշակվելուց հետո հետագա ընթացքն ու պայմանագրի կնքումն իրականացվելու է «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով, որի շրջանակներում կդիտարկվեն համապատասխան կազմակերպությունները:

Միաժամանակ, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի, «Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը շրջանակներում առաջարկվում է ներդնել հարթակում վարվող վիճակագրության որոշակի նոր կառուցակարգեր:

Հարկ է նաև նշել, որ Գործողություն 2.17-ի շրջանակներում իրականացված ուսումնասիրության շրջանակներում վեր են հանվել նաև ազդարարման էլեկտրոնային հարթակի հիմնական խնդիրները:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Սույն գործողության շրջանակներում անցկացվել են քննարկումներ շահագրգիռ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ համատեղ:

Նախագծերը 2024 թվականի նոյեմբերի 1-ին դրվել են հանրային քննարկման e-draft.am հարթակում (<https://www.e-draft.am/projects/7870>):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
<p>Վեր են հանվել ազդարարման էլեկտրոնային հարթակի հիմնական խնդիրները:</p> <p>Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի անվտանգության լրացուցիչ երաշխիքների սահմանման շրջանակներում դիտարկվել է հարթակի ծրագրային ապահովման իրականացումը մասնավոր ընկերության կողմից «Ekeng» էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման</p>	<p>Տեխնիկական բնութագրերի առկայություն</p>	<p>Իրականացված ուսումնասիրության շրջանակներում վեր են հանվել ազդարարման էլեկտրոնային հարթակի հիմնական խնդիրները:</p>	<p>Կատարված է մասնակի</p>

գրասենյակին հանձնելը: Մշակվել է ազդարարման էլեկտրոնային հարթակի նոր տեխնիկական բնութագիրը:			
Այլընտրանքային գնահատում			
<p>Գործողության շրջանակներում վեր են հանվել ազդարարման էլեկտրոնային հարթակի հիմնական խնդիրները, որը համապատասխանում է առաջին թիրախին: Երկրորդ թիրախով Արդարադատության նախարարությունը դիմել է համապատասխան շահագրգիռ մարմիններին հարթակի ծրագրային ապահովման «Ekeng»-ին հանձնելու հարցով և ստացել է պատրաստակամություն հետագա քննարկումներին մասնակցելու վերաբերյալ, սակայն կոնկրետ որոշում այս հարցով չի կայացվել, միայն դիտարկվել է այդ հնարավորությունը: Միննույն ժամանակ, առկա չեն փաստեր այն մասին, որ իրականացվել է երրորդ թիրախը՝ մշակվել է ազդարարման էլեկտրոնային հարթակի նոր տեխնիկական բնութագիրը: Այսպիսով, քանի որ առանցքային բաղադրիչը՝ տեխնիկական բնութագիրը, չի մշակվել, գործողությունը գնահատվում է որպես «կատարվել է մասնակի»:</p>			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.20

**ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ ԱԶԴԱՐԱՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ, ԴԻՏԱՐԿԵԼ
ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՆԱԽԱՏԵՍՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

2024 թվականի կատարողականի թիրախ

Միջազգային լավագույն փորձի լույսի ներքո դիտարկվել է ազդարարման խրախուսմանն ուղղված մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը, վերանայվել է ազդարարներին տրվող պաշտպանության միջոցների շրջանակը, հզորացվել են Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ազդարարների իրավունքների պաշտպանությանն ուղղված կազմակերպական կառուցակարգերը:

Հստակեցվել է ազդարարման վարույթի իրավական բնույթը, նախատեսվել են ազդարարման հիման վրա հարուցված վարույթի արդյունքում ընդունվող ակտերին ներկայացվող հիմնական պահանջները՝ ապահովելով դրանց պատշաճ պատճառաբանվածությունը և հիմնավորվածությունը:

Նախատեսվել է ազդարարման վարույթի արդյունքում ընդունվող ակտերի բողոքարկման հնարավորություն:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կատարող մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

Համակատարող մարմին

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)

Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Սույն գործողության կատարման նպատակով Արդարադատության նախարարության կողմից շրջանառվել են համապատասխան գրություններ բոլոր պետական մարմիններին ու Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամ հանդիսացող հասարակական կազմակերպություններին: Բացի այդ, խնդիրների գույքագրման նպատակով Արդարադատության նախարարության կայքէջում¹², ինչպես նաև նախարարության ֆեյսբուքյան էջում¹³ տեղադրվել են համապատասխան հայտարարություններ: Մասնավորապես, պատրաստվել է հետոզատություն միջազգային լավագույն փորձի լույսի ներքո ազդարարման խրախուսմանն ուղղված մեխանիզմների, ազդարարներին տրվող պաշտպանության միջոցների շրջանակի, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ազդարարների իրավունքների պաշտպանությանն ուղղված կազմակերպական կառուցակարգերի վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ, միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ ԵՄ անդամ երկրներից միայն տասն ունեն ազդարարների պաշտպանության համալիր օրենքներ (Ֆրանսիա, Հունգարիա, Իռլանդիա, Իտալիա, Լիտվա, Մալթա, Նիդերլանդներ, Սլովակիա, Շվեդիա, Միացյալ Թագավորություն), իսկ մնացած երկրներում պաշտպանությունը մասնակի է՝ ընդգրկելով միայն հանրային ծառայողներին կամ միայն որոշակի ոլորտներ կամ իրավախախտումների որոշակի տեսակներ (օրինակ՝ կոռուպցիոն)՝ հանգեցնելով դրանից բխող բազմապիսի խնդիրների¹⁴:

Հարկ է նշել, որ պաշտպանության մեխանիզմների մի զգալի շրջանակ արդեն իսկ նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ. դիցուք՝ «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված է ազդարարների անձնական տվյալների գաղտնիությունը պահպանելը, որն առաջինն է մատնանշվում մի շարք միջազգային փաստաթղթերով (Նախարարների կոմիտեի՝ ազդարարների պաշտպանության մասին ռեկոմենդացիայի 18-րդ կետը ամրագրում է, որ ազդարարները պետք է իրավունք ունենան պահպանելու իրենց ինքնության գաղտնիությունը՝ միննույն ժամանակ պահպանելով արդար դատաքննության երաշխիքները), ամրագրված է նաև ազդարարի նկատմամբ ձեռնարկված գործողության կամ անգործության իրավաչափությունն ապացուցելու պարտականությունը պատասխանողի վրա դնելը, գաղտնի խորհրդատվություն ստանալու իրավունքը և այլն (Օրենքի 10-րդ, 11-րդ, 12-րդ հոդվածներ):

Պաշտպանության միջոցների շրջանակի առնչությամբ ՀՀ օրենսդրությունը բավականին հստակ է և հիմնականում ներառում է միջազգային փաստաթղթերով նախատեսված մեխանիզմները:

¹² https://www.moj.am/announcements/view/article/2950#_ftn2

¹³ <https://www.facebook.com/mojofarmenia/posts/pfbid025CkuPmY2yzhJijbJcgMGP5Tni3w5NFikBRyX92fozA7jo4iuP61csceeuHAt5DyCl>

¹⁴ Տե՛ս https://commission.europa.eu/document/download/08fc8e7c-83c3-4448-8d4f-cf296a32cfb3_en?filename=whistleblower-factsheet.pdf:

Սակայն, նշվածը միայն բավարար չէ ազդարարման արդյունավետ ու գործուն կիրառությունն ապահովելու տեսանկյունից: Վերոգրյալի համատեքստում Արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի, «Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր): Նախագծերը ներկայացվել են շահագրգիռ մարմիններին կարծիքի: Ստացված առաջարկությունների հիման վրա լրամշակվել են և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: Նախագծերի ընդունմամբ ակնկալվում է հստակեցնել ազդարարման վարույթների շրջանակներում իրավասու մարմինների գործառնությունների շրջանակը:

Ներկայումս իրականացվում է Նախագծերի լրամշակման աշխատանքները:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից «Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» 2023 թվականի տարեկան հաղորդմամբ առաջին անգամ ամփոփվել և ներկայացվել են ազդարարման հետ կապված հաշվետվությունը և վիճակագրությունը, որի շրջանակում, բացի համապատասխան հաշվետվությունից և վիճակագրությունից, արձանագրվել են ոլորտում առկա առանձին խնդիրներ :

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Սույն գործողության շրջանակներում անցկացվել են քննարկումներ շահագրգիռ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ համատեղ:

Նախագծերը 2024 թվականի նոյեմբերի 1-ին դրվել են հանրային քննարկման e-draft.am հարթակում (<https://www.e-draft.am/projects/7870>):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողա կանի թիրախ	Մտուզման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
---------------------	----------------	---	----------------------

<p>Միջազգային լավագույն փորձի լույսի ներքո ղիտարկվել է ազդարարման խրախուսմանն ուղղված մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը, վերանայվել է ազդարարների տրվող պաշտպանության միջոցների շրջանակը, հզորացվել են Մարդու իրավունքների պաշտպանի</p>	<p>Իրավական ակտի առկայություն</p>	<p>Արդարադատության նախարարության կողմից շրջանառվել են համապատասխան գրություններ բոլոր պետական մարմիններին ու Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամ հանդիսացող հասարակական կազմակերպություններին: Բացի այդ, խնդիրների գույքագրման նպատակով Արդարադատության նախարարության կայքէջում¹⁵, ինչպես նաև նախարարության ֆեյսբուքյան էջում¹⁶ տեղադրվել են համապատասխան հայտարարություններ: Պատրաստվել է հետոզատություն միջազգային լավագույն փորձի լույսի ներքո ազդարարման խրախուսմանն ուղղված մեխանիզմների, ազդարարներին տրվող պաշտպանության միջոցների շրջանակի, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ազդարարների իրավունքների պաշտպանությանն ուղղված կազմակերպական կառուցակարգերի վերաբերյալ:</p> <p>Արդարադատության նախարարության կողմից մշակվել են Նախագծեր, որոնք ներկայացվել են շահագրգիռ մարմիններին կարծիքի: Ստացված առաջարկությունների հիման վրա Նախագծերը լրամշակվել են և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ:</p>	<p>Կատարված է ամբողջությամբ</p>
---	-----------------------------------	--	---------------------------------

¹⁵ https://www.moj.am/announcements/view/article/2950#_ftn2

¹⁶ <https://www.facebook.com/mojofarmenia/posts/pfbid025CkuPmY2yzhJijbJcgMGP5Tni3w5NFikBRyX92fozA7jo4iuP61csceeuHAt5DyClu>

<p>կողմից ազդարարնե րի իրավունքներ ի պաշտպանու թյանն ուղղված կազմակերպ ական կառուցակար գերը: Հստակեցվել է ազդարարմա ն վարույթի իրավական բնույթը, նախատեսվե լ են ազդարարմա ն հիման վրա հարուցված վարույթի արդյունքում ընդունվող ակտերին</p>			
--	--	--	--

<p>ներկայացվող հիմնական պահանջները՝ ապահովելով դրանց պատշաճ պատճառաբանվածությունը և հիմնավորվածությունը:</p> <p>2.Նախատեսվել է ազդարարման վարույթի արդյունքում ընդունվող ակտերի բողոքարկման հնարավորություն:</p>			
<p>Այլընտրանքային գնահատում</p>			
<p>Գործողությունների ծրագրով նախատեսված բոլոր քանակական ցուցիչներն իրականացվել են, ուստի գործողությունը գնահատվում է որպես ամբողջությամբ կատարված:</p>			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.1

ՄՇԱԿԵԼ ԵՎ ՆԵՐԴՆԵԼ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՆԱԵՎ ՆՈՒՀ) 5-6 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԹԻԿԱՅԻ, ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2024 թվականի կատարողականի թիրախ

Մշակվել և հաստատվել են ՆՈՒՀ-երում բարեվարքության, էթիկայի և հակակոռուպցիոն ծրագրի մեթոդաբանությունը և մոդուլները, պիլոտային ՆՈՒՀ-երի ընտրության չափանիշները: Ընտրվել են պիլոտային ՆՈՒՀ-երը: Մշակվել է գիտելիքների գնահատման համակարգը: Կատարվել է գիտելիքների ելակետային գնահատումը ընտրված ՆՈՒՀ-երում:

Պիլոտային ծրագիրն իրականացվել է ՀՀ 4 մարզերի և Երևան քաղաքի 20 ՆՈՒՀ-երում, որոնցից 10-ը գյուղական համայնքներում:

Մտուզման միջոց

Մշակված և կիրառվող ծրագրեր, ներառյալ հստակ մեթոդաբանությունները և մոդուլները, պիլոտային ՆՈՒՀ-երի ընտրության չափանիշները

Կատարող մարմին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Համակատարող մարմին՝

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Կրթության տեսչական մարմին

Տեղական ինքնակառավարման մարմիններ

Տարածքային կառավարման մարմիններ

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

2021 թվականի մայիսի 13-ին ՀՀ կառավարության 744-Ն որոշմամբ հաստատվել է «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը», որը հանդիսանում է հանրակրթության պետական կրթական չափորոշիչի բաղկացուցիչ մաս կազմող նորմատիվ իրավական ակտ, և որը սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների (ըստ տարիքային խմբերի) զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, նրանց ներկայացվող վերջնարդյունքները, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքի ապահովման հիմքերը: Չափորոշիչի ներդրման նպատակով Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի մի շարք հրամաններով հաստատվել են նախադպրոցական կրթական համալիր ծրագրերը տարիքային բոլոր խմբերի համար: Մասնավորապես 2021 թվականի նոյեմբերի 16-ի N 58-Լ հրամանով հաստատված «Նախադպրոցական ավագ խմբի կրթական ծրագրի» ծրագրում ներառված են էթիկայի և բարեվարքության վերաբերյալ թեմաներ, մասնավորապես՝ «Բարեկիրթ վարքագիծ», «Իմ իրավունքներն ու պարտականությունները», «Անվտանգ միջավայր, անվտանգ վարքագիծ»: Պիլոտային նախադպրոցական ուսումնա՝ն հաստատություններ (այսուհետ՝ հաստատություն) ընտրելու համար որպես չափանիշ է սահմանվել նոր չափորոշիչի անցումը հաստատության կողմից:

Այս պահին ծրագիրը ներդրված է և իրականացվում է ՀՀ բոլոր մարզերը և Երևան քաղաքը ընդգրկող 542 նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Որպես նորմատիվ բնույթի իրավական ակտ ունեցել է հանրային քննարկում և քննարկվել է համապատասխան շահագրգիռ մարմինների հետ

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Մշակվել և հաստատվել են ՆՈՒՀ-երում բարեվարքության, էթիկայի և հակակոռուպցիոն ծրագրի մեթոդաբանությունը և	Մշակված և կիրառվող ծրագրեր	Նախադպրոցական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ նաև ՆՈՒՀ) 5-6 տարեկան երեխաների համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով կրթական ծրագիր ներդնելը հնարավոր է միայն պետական չափորոշիչի միջոցով, որը իրականացվել է, և Հակակոռուպցիոն թեմայի բովանդակությունը	Կատարված է ամբողջությամբ

<p>մողուկները, պիլոտային ՆՈՒՀ-երի ընտրության չափանիշները: Ընտրվել են պիլոտային ՆՈՒՀ-երը: Մշակվել է գիտելիքների գնահատման համակարգը: Կատարվել է գիտելիքների ելակետային գնահատումը ընտրված ՆՈՒՀ-երում: Պիլոտային ծրագիրն իրականացվել է ՀՀ 4 մարզերի և Երևան քաղաքի 20 ՆՈՒՀ-երում, որոնցից 10-ը գյուղական համայնքներում:</p>		<p>նախադպրոցական կրթական հիմնական ծրագրերի ավագ խմբում ներկայացված է «Իմ իրավունքներն ու պարտականությունները» թեմայի համատեքստում՝ հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները: Այս պահին ծրագիրը ներդրված է և իրականացվում է ՀՀ բոլոր մարզերը և Երևան քաղաքը ընդգրկող 542 նախադպրոցական ուսումնական հաստատություններում:</p>	
---	--	--	--

Այլընտրանքային գնահատում

Ներկայացված տեղեկատվության ավելի մանրակրկիտ վերլուծությունը ցույց է տալիս, որ իրականացվել է «Հասարակագիտություն» առարկայի առարկայական ծրագրի լրամշակումը՝ ներառելով հակակոռուպցիոն բաղադրիչ (N 38-Ն հրաման): Մշակվել է «Հանրակրթությունում հակակոռուպցիոն կրթության ներդրման հայեցակարգի և մեթոդական ձեռնարկի» նախագիծը: Պիլոտային կերպով ծրագիրը ներդրվել է Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում: Մակայն չի նշվում, թե կոնկրետ ինչ չափանիշներով են ընտրվել պիլոտային դպրոցները (միայն նշվում է, որ դրանք Տավուշի մարզում են) և չկա որևէ հիշատակում, որ կատարվել է գիտելիքների ելակետային գնահատումը ընտրված դպրոցներում, որը թիրախային արդյունքներից վերջինն էր և կարևոր նշանակություն ունի ծրագրի արդյունավետության ապագա չափման համար: Բացի այդ, մշակվել է, սակայն դեռևս չի հաստատվել «Հանրակրթությունում հակակոռուպցիոն կրթության ներդրման հայեցակարգի և մեթոդական ձեռնարկի» նախագիծը:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.2

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՇԱԿԵԼ ԵՎ ՆԵՐԴՆԵԼ ԷԹԻԿԱՅԻ, ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

2024 թվականի կատարողականի թիրախ

1-ին կիսամյակ

Մշակվել և հաստատվել են վերապատրաստման ծրագրի մեթոդաբանությունը և մոդուլները, պիլոտային ՆՈՒՀ-երի ընտրության չափանիշները:

2-րդ կիսամյակ

Ընտրվել են պիլոտային ՆՈՒՀ-երը: Մշակվել է գիտելիքների գնահատման համակարգը: Կատարվել է գիտելիք ների ելակետային գնահատումը ընտրված ՆՈՒՀ երում: Պիլոտային ծրագիրը իրականացվել է ՀՀ 4 մարզերի և Երևան քաղաքի 20 ՆՈՒՀ-երում, որոնցից 10-ը գյուղական համայնքներում:

Ստուգման միջոց

Վերապատրաստումների ծրագրեր

Կատարող մարմին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Համակատարող մարմին՝

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Տեղական ինքնակառավարման մարմիններ

Տարածքային կառավարման մարմիններ

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստումների ծրագիրը մշակվել է, իսկ վերապատրաստումները կկազմակերպվեն 2021 թվականի մայիսի 13-ին ՀՀ կառավարության 744-Ն որոշմամբ հաստատված «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը» ներդրած համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների շրջանում: Պիլոտային նախադպրոցական ուսումնական հաստատություններ ընտրելու համար որպես չափանիշ է սահմանվել նոր չափորոշիչի անցումը հաստատության կողմից: Վերը նշված կարգի համաձայն 2024 թվականին վերապատրաստվել է շուրջ 1500 մանկավարժական աշխատող, ներառյալ ՀՀ 4 մարզերի և Երևան քաղաքի 20 ՆՈՒՀ-երում, որոնցից 10-ը գյուղական համայնքներում:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն — Չի անցկացվել

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Մշակվել և հաստատվել են վերապատրաստման ծրագրի մեթոդաբանությունը և մոդուլները, պիլոտային ՆՈՒՀ-երի ընտրության չափանիշները: Ընտրվել են պիլոտային ՆՈՒՀ-երը: Մշակվել է գիտելիքների գնահատման համակարգը: Կատարվել է գիտելիքների	Վերապատրաստումների ծրագրեր	Մանկավարժական աշխատողների պարտադիր վերապատրաստման կարգի համաձայն 2024 թվականին վերապատրաստվել է շուրջ 1500 մանկավարժական աշխատող, ներառյալ ՀՀ 4 մարզերի և Երևան քաղաքի 20 ՆՈՒՀ-երում, որոնցից 10-ը գյուղական համայնքներում: Պետք է նկատի ունենալ, որ «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից մշակվել է էթիկայի, բարևարքության և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստումների ծրագիր, որի նպատակն է նպաստել մանկավարժական աշխատողների կողմից բարևարքության և էթիկայի կանոնների յուրացմանը, կոռուպցիայի նկատմամբ	Կատարված է ամբողջությամբ

<p>Ելակետային գնահատումը ընտրված ՆՈՒՀ երում: Պիլոտային ծրագիրը իրականացվել է ՀՀ 4 մարզերի և Երևան քաղաքի 20 ՆՈՒՀ-երում, որոնցից 10-ը գյուղական համայնքներում:</p>		<p>անհանդուրժողականության ձևավորմանը, արժեքների արմատավորմանը և կարողությունների զարգացմանը, որոնք անհրաժեշտ են մանկավարժական աշխատողների համապատասխան քաղաքացական դիրքորոշման ձևավորման, հասարակության բարեկեցությանը և պետության անվտանգությանը սպառնացող կոռուպցիայի վտանգը գիտացելու, կոռուպցիայի բոլոր դրսևորումների նկատմամբ անհանդուրժողականության ձևավորման համար: Ծրագրի աշխատանքային տարբերակը ներկայում լրամշակվում է «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի հետ:</p>	
---	--	---	--

Այլընտրանքային գնահատում

2024 թվականի կատարողականի թիրախում սահմանված հետևյալ պահանջները կատարվել են`

- մշակվել է նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստումների ծրագիր,
- սահմանվել է պիլոտային ՆՈՒՀ-երի ընտրության չափանիշ` նոր չափորոշչի անցումը հաստատության կողմից,
- 2024 թվականին վերապատրաստվել է շուրջ 1500 մանկավարժական աշխատող,
- վերապատրաստումներն իրականացվել են ներառյալ ՀՀ 4 մարզերի և Երևան քաղաքի 20 ՆՈՒՀ-երում, որոնցից 10-ը` գյուղական համայնքներում

Այնուամենայնիվ, վերապատրաստումների որակական գնահատումն անհնար է, քանի որ վերապատրաստման ծրագրի մեթոդաբանությունը և մոդուլները հասանելի չեն, բացակայում են վերապատրաստումների արդյունավետության մասին մասնակից մանկավարժների կողմից կատարված գնահատումները: Գործողությունը գնահատվում է կատարված:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.3

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ «ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Հակակոռուպցիոն կրթական բաղադրիչի մշակման համար տեխնիկական առաջադրանքը պատրաստվել և հաստատվել է: Ընտրվել են պիլոտային դպրոցները: Մշակվել է գիտելիքների գնահատման համակարգը: Կատարվել է գիտելիքների ելակետային գնահատումը ընտրված դպրոցներում:

Ստուգման միջոց

Մշակված և հաստատված «Հասարակագիտություն» առարկայի ծրագիր

Կատարող մարմին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Համակատարող մարմին՝

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Կրթության տեսչական մարմին

Տեղական ինքնակառավարման մարմիններ

Տարածքային կառավարման մարմիններ

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի մայիսի 7-ի N 38-Ն հրամանով հաստատված «Հասարակագիտություն» առարկայի առարկայական լրամշակված ծրագրերում ներառված է հակակոռուպցիոն բաղադրիչը:

ԿԿՀ-ն՝ որպես գործողության համակատարող մարմին, մշակել է «Հանրակրթությունում հակակոռուպցիոն կրթության ներդրման հայեցակարգի և մեթոդական ձեռնարկի» նախագիծը՝ նախատեսված կրթության կազմակերպիչների, հանրակրթական դպրոցների ուսուցիչների և հակակոռուպցիոն, ինչպես նաև ժողովրդավարության խմբակներ վարողների համար: Հանրակրթությունում հակակոռուպցիոն կրթության հայեցակարգն ու մեթոդական ձեռնարկը առանձին բաժիններով ներկայացնում է հակակոռուպցիոն կրթության առաքելությունը, նպատակները, նպատակային ցուցանիշները, խնդիրները, ուղղորդող սկզբունքները, թիրախային խմբերը: Ձեռնարկը մշակվել է Հանձնաժողովի կրթության փորձագետի կողմից՝ հաշվի առնելով ՏՀԶԿ անդամ երկրների լավագույն փորձը:

Այն պարունակում է հետևյալ բաժինները՝

1. Հայեցակարգ (Հանրակրթությունում հակակոռուպցիոն կրթության ներդրման նպատակը, խնդիրները, բովանդակությունը, հիմնական թեմաները, ինտեգրված ծրագիր, վերաբերմունքի փոփոխություն, ինտեգրման մեթոդական ցուցումներ և այլն).

2. Հանրային բարեվարքության ամրապնդմանն ուղղված կրթության իրականացման մոտեցումները (շահագրգիռ կողմերի հետ համագործակցություն և պիլոտային ծրագրի ներդրում, մանկավարժների վերապատրաստումներ, հակակոռուպցիոն կրթության ազդեցության վերաբերյալ ապացույցների բազայի ստեղծում).

3. Դասարանում հանրային բարեվարքությանը միտված կրթության իրականացում (դասի պլանների և առաջադրանքների մշակում, ուսումնաօժանդակ նյութերի և հնարների ընտրություն, սովորողների համար ազդեցության և համապատասխանության ապահովում).

4. Հակակոռուպցիոն կրթության վերաբերյալ առաջադրանքների և օրինակելի դասի պլանների օրինակներ (գործնական առաջադրանքների հավաքածու, հակակոռուպցիոն կրթության ռեսուրսների հավաքածու ուսուցիչների համար, օրենքի գերակայության վերաբերյալ առաջադրանքներ և դասի պլաններ, հակակոռուպցիոն կրթությունը տարբեր առարկաների դասաժամերին. դասի պլանների օրինակներ և այլն).

Հավելված՝ Հանրային բարեվարքության և հակակոռուպցիոն ծրագրերի ուսուցման նախագծման վերաբերյալ օրինակներ ՏՀԶԿ անդամ երկրներից:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Որպես նորմատիվ բնույթի իրավական ակտ ունեցել է հանրային քննարկում և քննարկվել է համապատասխան շահագրգիռ մարմինների հետ

«Հանրակրթությունում հակակոռուպցիոն կրթության ներդրման հայեցակարգի և մեթոդական ձեռնարկի» նախագիծը՝ Հանձնաժողովի առաջարկը, ներկայացվել է ԿԳՄՍ նախարարություն՝ պատրաստակամություն հայտնելով վերոնշյալ փաստաթղթի ուսումնասիրությունից հետո, կազմակերպել քննարկում աշխատանքային խմբի ձևաչափով:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
<p>Հակակոռուպցիոն կրթական բաղադրիչի մշակման համար տեխնիկական առաջադրանքը պատրաստվել և հաստատվել է: Ընտրվել են պիլոտային դպրոցները: Մշակվել է գիտելիքների գնահատման համակարգը: Կատարվել է գիտելիքների ելակետային գնահատումը ընտրված դպրոցներում:</p>	<p>Մշակված և հաստատված «Հասարակագիտություն» առարկայի ծրագիր</p>	<p>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի մայիսի 7-ի N 38-Ն հրամանով հաստատված «Հասարակագիտություն» առարկայի առարկայական լրամշակված ծրագրերում ներառված է հակակոռուպցիոն բաղադրիչը, որը ներդրված է Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում:</p> <p>Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները հաստատված են Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի փետրվարի 24-ի N 11-Ն հրամանով, որով կարգավորվում է պետական հանրակրթական ուսումնական</p>	<p>Կատարված է ամբողջությամբ</p>

		<p>հաստատությունների սովորողների գնահատման հետ կապված իրավահարաբերությունները:</p> <p>ԿԿՀ-ն՝ մշակել և ԿԳՄՍ նախարարություն է ներկայացրել «Հանրակրթությունում հակակոռուպցիոն կրթության ներդրման հայեցակարգի և մեթոդական ձեռնարկի» նախագիծը՝ Հանձնաժողովի առաջարկը, նախատեսված կրթության կազմակերպիչների, հանրակրթական դպրոցների ուսուցիչների և հակակոռուպցիոն, ինչպես նաև ժողովրդավարության խմբակներ վարողների համար:</p>	
--	--	---	--

Այլընտրանքային գնահատում

Իրականացվել է «Հասարակագիտություն» առարկայի առարկայական ծրագրի լրամշակումը՝ ներառելով հակակոռուպցիոն բաղադրիչ (N 38-Ն հրաման)

Մշակվել է «Հանրակրթությունում հակակոռուպցիոն կրթության ներդրման հայեցակարգի և մեթոդական ձեռնարկի» նախագիծը: Պիլոտային կերպով ծրագիրը ներդրվել է Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում: Չի նշվում, սակայն, թե կոնկրետ ինչ չափանիշներով են ընտրվել պիլոտային դպրոցները (միայն նշվում է, որ դրանք Տավուշի մարզում են) և չկա որևէ հիշատակում, որ կատարվել է գիտելիքների ելակետային գնահատումը ընտրված դպրոցներում, որը թիրախային արդյունքներից վերջինն էր և կարևոր նշանակություն ունի ծրագրի արդյունավետության ապագա չափման համար: Բացի այդ, մշակվել է, սակայն դեռևս չի հաստատվել «Հանրակրթությունում հակակոռուպցիոն կրթության ներդրման հայեցակարգի և մեթոդական ձեռնարկի» նախագիծը:

Քանի որ ներկայացված տեղեկատվությունը հաստատում է, որ թիրախային արդյունքների միայն մի մասն է իրականացվել և գիտելիքների ելակետային գնահատման մասին ընդհանրապես տեղեկատվություն չի ներկայացվել, գործողությունը առաջարկում ենք գնահատել է որպես «կատարված է մասնակի»:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.4

ՄՇԱԿԵԼ ԵՎ ՆԵՐԴՆԵԼ «ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Մշակվել և հաստատվել են վերապատրաստման ծրագրի մեթոդաբանությունը և մոդուլները, պիլոտային դպրոցների ընտրության չափանիշները:

2-րդ կիսամյակ

Ընտրվել են պիլոտային դպրոցները: Մշակվել է գիտելիքների գնահատման համակարգը: Կատարվել է գիտելիքների ելակետային գնահատումը ընտրված դպրոցներում: Պիլոտային ծրագիրն իրականացվել է ՀՀ 4 մարզերի և Երևան քաղաքի 1520 դպրոցներում, որոնցից կեսը 10-ը գյուղական համայնքներում:

Ստուգման միջոց

Մշակված և հաստատված ծրագիր

Կատարող մարմին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Համակատարող մարմին՝

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Կրթության տեսչական մարմին

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից մշակվել է «Հասարակագիտություն» առարկան դասավանդող ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը և մոդուլը (15 էջ): Այն իր մեջ ներառում է նաև տեսանյութերի փաթեթ: Երրորդ եռամսյակում

կիրականացվի թվով 1000 ուսուցիչների վերապատրաստում: Մշակված մոդուլով իրականացվել են վերապատրաստումներ երկու փուլով: Առաջին փուլին մասնակցել են 79 ուսուցիչներ՝ ՀՀ բոլոր մարզերի և Երևան քաղաքի մենթոր դպրոցներից յուրաքանչյուրից 1-2-ական, իսկ երկրորդ փուլում արդեն վերապատրաստված 79 ուսուցիչներից ընտրվել են 8 մենթոր ուսուցիչներ՝ նույն թեմայի շրջանակում մյուս ուսուցիչներին վերապատրաստելու համար: Արդյունքում «Հակակոռուպցիոն կրթությունը ավագ դպրոցում» թեմայով վերապատրաստվել են շուրջ 1000 ուսուցիչ ՀՀ մարզերի և Երևանի դպրոցներից: Վերապատրաստումներին մասնակցել են հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների «Հասարակագիտություն» առարկան դասավանդող բոլոր ուսուցիչները:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն — Չի անցկացվել

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
<p>Մշակվել և հաստատվել են վերապատրաստման ծրագրի մեթոդաբանությունը և մոդուլները, պիլոտային դպրոցների ընտրության չափանիշները: Ընտրվել են պիլոտային դպրոցները: Մշակվել է գիտելիքների</p>	<p>Մշակված և հաստատված ծրագիր</p>	<p>Մշակված վերապատրաստման ծրագրի հիման վրա կազմակերպվել են շուրջ 1000 ուսուցիչ վերապատրաստումներ ՀՀ մարզերի և Երևանի դպրոցներից: Վերապատրաստումներին մասնակցել են հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների «Հասարակագիտություն» առարկան դասավանդող բոլոր ուսուցիչները: 7-12-րդ դասարաններում հակակոռուպցիոն կրթության, ինչպես նաև դպրոցականների և ուսուցիչների շրջանում կոռուպցիայի և դրա դեմ պայքարի մասին իրազեկվածության բարձրացման նպատակով «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ն մշակել է «Ի՞նչ և ինչպե՞ս խոսել կոռուպցիայի մասին» ուսուցչի ուսումնաօժանդակ ձեռնարկը, որը հաստատվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի հունիսի 26-ի N 1151-Ա/2 հրամանով:</p>	<p>Կատարված է ամբողջությամբ</p>

<p>գնահատման համակարգը: Կատարվել է գիտելիքների ելակետային գնահատումը ընտրված դպրոցներում: Պիլոտային ծրագիրն իրականացվել է ՀՀ 4 մարզերի և Երևան քաղաքի 1520 դպրոցներում, որոնցից կեսը 10-ը գյուղական համայնքներում:</p>			
--	--	--	--

Այլընտրանքային գնահատում

Որակական գնահատումն անհնար է իրականացնել, քանի որ՝ բացակայում են վերապատրաստումների գնահատման ելակետային և պոստ-ֆակտում տվյալները՝ գիտելիքների նախաթեստավորման և հետթեստավորման արդյունքները, բացակայում են վերապատրաստումների արդյունավետության մասին մասնակից մանկավարժների կողմից կատարված գնահատումները: Միևնույն ժամանակ խնդրահարույց է գործողության ամբողջական կատարումը՝ առանց պիլոտային փուլի անցկացման: Պիլոտային փուլի նախատեսումը, դրա արդյունքների հիման վրա ծրագրի բարելավման անհրաժեշտությունը նախանշված են 2024թ. կատարողականի թիրախներով: Կատարման կարգավիճակը առաջարկվում է թողնել «Կատարված է ամբողջությամբ»:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.5

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) և ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ՈՒՍՈՒՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՆԵՐԴՆԵԼ ԷԹԻԿԱՅԻ, ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ և ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍԵԼ ՆՇՎԱԾ ԹԵՄԱՆԵՐՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

2024 թվականի կատարողականի թիրախ

Հաստատվել են բարեվարքության, էթիկայի և հակակոռուպցիոն ծրագրի մեթոդաբանությունը և մոդուլները, պիլոտային ուսումնական հաստատու թյունների ընտրության չափանիշները: Պիլոտային ծրագիրը իրականացվել է ՀՀ 4 մարզերի և Երևան քաղաքի 20 ուսումնական հաստատություններում, որոնցից կեսը գյուղական համայնքներում:

Գիտելիքների ելակետային գնահատումը կատարվել է և ծրագիրն իրականացվել է ուսումնական հաստատությունների ընդհանուր թվի 30% հաստատություն ներում, որոնցից կեսը գյուղական համայնքներում: Իրականացված ծրագրերի արդյունքները գնահատվել են:

Ստուգման միջոց

Մշակված և հաստատված ծրագիր

Կատարող մարմին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Համակատարող մարմին՝

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Կրթության տեսչական մարմին

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Մշակվել է «Հակակոռուպցիոն կրթությունը ՄԿՈՒ ոլորտում» մոդուլի մեթոդական ձեռնարկը: Վերը նշված ձեռնարկի հիման վրա կազմվել է վերապատրաստման դասընթացի ծրագիր՝ «Կոռուպցիայի կանխարգելումը կրթության միջոցով» թեմայով: ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնի համակարգմամբ կազմվել է վերապատրաստվողների 2 խումբ (ՄԿՈՒ հաստատությունների մանկավարժների և տնօրեն-փոխտնօրենների համար)՝ ընդհանուր թվով 44 մարդ, համապատասխանաբար 4 մարզային և 20 Երևան քաղաքի ուսումնական հաստատությունում:

ԿԿՀ-ն մշակել է նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության և ուսուցման շրջանակում «Հակակոռուպցիոն կրթությունը ՄԿՈՒ ոլորտում» մոդուլի մեթոդական ձեռնարկի նախագիծը:

Ձեռնարկը մշակվել է Հանձնաժողովի կրթության փորձագետի կողմից:

Մշակված նախագիծը ներկայացվել է Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն /ՄԿՈՒԶԱԿ/ կարծիքի: Ներկայացված առաջարկությունների հիման վրա խմբագրվել է, և փորձարկվել է հունիսի 25-ին՝ ՄԿՈՒ հաստատությունների դասավանդողների համար նախատեսված վերապատրաստման դասընթացի ժամանակ, որի ընթացքում մասնակիցները ներկայացրել են առաջարկություններ՝ հակակոռուպցիոն կրթության ներդրման և ձեռնարկի վերաբերյալ: Վերապատրաստմանը մասնակցել են ՀՀ 4 մարզերի թվով 16 ՄԿՈՒ հաստատություններից և ք. Երևանի թվով 2 հաստատություններից 24 դասավանդողներ: Հունիսի 28-ին նմանատիպ քննարկում կազմակերպվել է նաև ՄԿՈՒ հաստատությունների տնօրենների, փոխտնօրենների համար, որին մասնակցել են ք. Երևանի 14 ուսումնական հաստատությունների 20 ներկայացուցիչներ:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Քննարկվել է շահագրգիռ կողմերի հետ

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Հաստատվել են բարեվարքության, էթիկայի և հակակոռուպցիոն ծրագրի մեթոդաբանությունը և մոդուլները, ուսումնական հաստատու	Մշակված և հաստատված ծրագիր	Կազմակերպվել է համատեղ հանդիպում-քննարկում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնի և կոռուպցիայի	Կատարված է ամբողջությամբ

<p>թյունների ընտրության չափանիշները: Պիլոտային ծրագիրը իրականացվել է ՀՀ 4 մարզերի և Երևան քաղաքի 20 ուսումնական հաստատություններում, որոնցից կեսը գյուղական համայնքներում: Գիտելիքների ելակետային գնահատումը կատարվել է և ծրագիրն իրականացվել է ուսումնական հաստատությունների ընդհանուր թվի 30% հաստատություններում, որոնցից կեսը գյուղական համայնքներում: Իրականացված ծրագրերի արդյունքները գնահատվել են:</p>		<p>կանխարգելման հանձնաժողովի աշխատակիցների մասնակցությամբ;</p> <p>Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը մշակել է «Հակակոռուպցիոն կրթությունը ՄԿՈՒ ոլորտում» մոդուլի մեթոդական ձեռնարկը, որը քննարկվել և լրամշակվել է ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնի հետ:</p> <p>Վերը նշված ձեռնարկի հիման վրա կազմվել է վերապատրաստման դասընթացի ծրագիր՝ «Կոռուպցիայի կանխարգելումը կրթության միջոցով» թեմայով, որին մասնակցել է մասնակիցներ ուսումնական հաստատությունների ընդհանուր թվի 30% հաստատություններից, որոնցից կեսը գյուղական համայնքներից:</p>	
--	--	--	--

Այլընտրանքային գնահատում

- Որակական գնահատումն անհնար է իրականացնել, քանի որ՝
- վերապատրաստման մոդուլը և ձեռնարկը հասանելի չեն ԿԿՀ կամ ՄԿՈՒ զարգացման Կատարված է ամբողջությամբ ազգային կենտրոնի կայքերում կամ այլ բաց հարթակներում,
 - բացակայում են վերապատրաստումների գնահատման ելակետային և պոստ-ֆակտում տվյալները՝ գիտելիքների նախա և հետթեստավորման արդյունքները,
 - բացակայում են վերապատրաստումների արդյունավետության մասին մասնակիցների կողմից կատարված գնահատումները:

- Հասանելի չէ 2024թ. 2-րդ կիսամյակի կատարողականի թիրախով նախատեսված իրականացված՝ ծրագրերի արդյունքների գնահատումը: Կատարման կարգավիճակը առաջարկվում է թողնել «Կատարված է ամբողջությամբ»:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.6

ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՏՎԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2024 թվականի կատարողականի թիրախ

Կարիքների գնահատման հիման վրա մշակվել է պետական պատվերի հիման վրա հակակոռուպցիոն բնագավառի գիտական հետազոտություններ իրականացնել ու ծրագիր և ներկայացվել ֆինանսավորման: Ծրագիրը հաստատվել և ներկայացվել է ֆինանսավորման:

Ստուգման միջոց

Մշակված և ֆինանսավորված ծրագիր

Կատարող մարմին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն համապատասխան պետական մարմինների (ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե և ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով) կողմից ներկայացրած կարծիքների հիման վրա վեր է հանել հակակոռուպցիոն բնագավառի ուղղությամբ գիտական հետազոտությունների իրականացման շուրջ 30 թեմաներ, որոնց ուղղությամբ հետազոտություններ կատարելու նպատակով դրանք տրամադրվել են հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող թվով 11 հաստատությունների: Հետազոտությունների ֆինանսավորումը իրականացվում է՝ ելնելով կատարվող հետազոտության բնույթից և ֆինանսավորման առանձնահատկություններից:

2. **Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն** — Քննարկվել է շահագրգիռ կողմերի հետ

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Մտուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
<p>Կարիքների գնահատման հիման վրա մշակվել է պետական պատվերի հիման վրա հակակոռուպցիոն բնագավառի գիտական հետազոտություններ իրականացնել ու ծրագիր և ներկայացվել ֆինանսավորման: Ծրագիրը հաստատվել և ներկայացվել է ֆինանսավորման;</p>	<p>Մշակված և ֆինանսավորված ծրագիր</p>	<p>Միջոցառման շրջանակներում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից, հակակոռուպցիոն բնագավառի ուղղությամբ գիտական հետազոտություններ կատարելու նպատակով՝ 2024 թվականի 1-ին կիսամյակում հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող թվով 11 հաստատություններին տրամադրված շուրջ 30 թեմաներից ներկայումս 5 հաստատություններում հաստատվել են մի շարք ատենախոսության թեմաներ, տարբեր կրթական ծրագրերով իրականացվել և իրականացման փուլում են գտնվում մագիստրոսական թեզեր, մասնավորապես, «Կոռուպցիոն հանցագործությունների քրեաիրավական և քրեագիտական բնութագրերը», «Կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկան, մինչդատական վարույթի առանձնահատկությունները», «Կոռուպցիայի կանխարգելումը ՀՀ-ում և կանխարգելիչ մարմնի դերը», «Կոռուպցիայի կանխարգելման հիմնախնդիրները հանրային իշխանության մարմիններում», «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը, որպես քաղաքացիական</p>	<p>Կատարված է ամբողջությամբ</p>

		<p>դատավարության տարբերակված ձև», «Կոռուպցիոն վարքագծի կրիմինալոգիական և հոգեբանական պատճառները», «Ապօրինի հարստանալու հանցակազմի քրեաիրավական որակման հիմնախնդիրները», «Հանցավոր ճանապարհով ստացված գույք ձեռք բերելու, իրացնելու կամ իրացմանն աջակցելու և փողերի լվացման հանցակազմի տարանջատման հիմնախնդիրը» և «Տնտեսության ոլորտում կոռուպցիոն հանցագործությունների պատասխանատվության հիմնախնդիրները» թեմաներով:</p> <p>Գիտական հետազոտությունների ֆինանսավորումը իրականացվում է՝ ելնելով կատարվող հետազոտության բնույթից և ֆինանսավորման առանձնահատկություններից:</p>	
--	--	---	--

Այլընտրանքային գնահատում

Միջոցառման շրջանակներում ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հակակոռուպցիոն բնագավառի ուղղությամբ գիտական հետազոտություններ կատարելու նպատակով՝ 2024 թվականի առաջին կիսամյակում հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող թվով 11 հաստատություններին տրամադրված շուրջ 30 թեմաներից 5 հաստատություններում հաստատվել են մի շարք ատենախոսության թեմաներ, տարբեր կրթական ծրագրերով իրականացվել և իրականացման փուլում են գտնվում մագիստրոսական թեզեր:

Նույն աղբյուրի համաձայն՝ գիտական հետազոտությունների ֆինանսավորումը իրականացվում է՝ ելնելով կատարվող հետազոտության բնույթից և ֆինանսավորման առանձնահատկություններից:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է կատարված:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.7

**ՍՏԵՂԾԵԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԹԵՄԱՏԻԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՐԹԱԿ՝
«ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ» ՊՈՐՏԱԼՈՒՄ ՆԱԽԱՏԵՍԵԼՈՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁԻՆ ԲԱԺԻՆ**

2024 թվականի կատարողականի թիրախ

Մշակվել է հակակոռուպցիոն թեմատիկ գրականության աղբյուրների հարթակի տեխնիկական բնութագիրը: Տեխնիկական նկարագիրը հաստատվել է և հատկացվել են հարթակի ներդրման ֆինանսական միջոցները:

Ստուգման միջոց

Հարթակը ներդրված է և գործում է:

Կատարող մարմին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Գործողության իրականացումն ապահովելու նպատակով <https://lib.armedu.am/category/33> կայքում արդեն իսկ գործում է հակակոռուպցիոն թեմատիկ գրականության աղբյուրների համար նախատեսված առանձին բաժին, որում համապատասխան հակակոռուպցիոն թեմատիկ նյութերով համալրելու աշխատանքներ են իրականացվում:

- 2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն — Չի իրականացվել
- 3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը

<p>Մշակվել է հակակոռուպցիոն թեմատիկ գրականության աղբյուրների հարթակի տեխնիկական բնութագիրը: Տեխնիկական նկարագիրը հաստատվել է և հատկացվել են հարթակի ներդրման ֆինանսական միջոցները:</p>	<p>Հարթակը ներդրված է և գործում է:</p>	<p>https://lib.armedu.am/category/33 կայքում արդեն իսկ գործում է հակակոռուպցիոն թեմատիկ գրականության աղբյուրների համար նախատեսված առանձին բաժին, որում համապատասխան հակակոռուպցիոն թեմատիկ նյութերով համալրելու աշխատանքներ են իրականացվում:</p>	<p>Կատարված է ամբողջությամբ</p>
--	--	--	---------------------------------

Այլընտրանքային գնահատում

Հաշվի առնելով, որ գործողության ստուգման միջոցը՝ «Հարթակը ներդրված է և գործում է», ապահովված է, գործողությունը գնահատվում է որպես «կատարված»: Միննույն ժամանակ, չնայած գնահատականին, հարկ է նշել, որ գործողության թիրախային արդյունքում հստակ նշված է «տեխնիկական բնութագրի մշակում», «տեխնիկական նկարագրի հաստատում» և «ֆինանսական միջոցների հատկացում», սակայն կատարողականի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը բացարձակապես չի անդրադարձնում այս կետերին: Նաև անհասկանալի է «գործողության կատարման համար ֆինանսավորում» նախատեսելը որպես գործողության առանձին բաղադրիչ: Ռազմավարության իրականացման համար ֆինանսավորման նախատեսումը չի կարող դիտարկվել որպես առանձին գործողություն, քանի որ ֆինանսավորումը գործողության իրականացման նախապայման է, ոչ թե արդյունք:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է կատարված:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.8

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ՄՇԱԿԵԼ ԵՎ ՆԵՐԴՆԵԼ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԹԻԿԱՅԻ, ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՍԸՆԹԱՑ/ԲԱՂԱԴՐԻՉ

2024 թվականի կատարողականի թիրախ

Տիպային դասընթացը մշակվել է: Տիպային դասընթացը առաջարկվել է ԲՈՒՀ-երին՝ նրանց համաձայնությամբ պարտադիր ուսումնական ծրագրի մեջ ընդգրկելու համար:

Ստուգման միջոց

Տիպային մշակված դասընթաց

Կատարող մարմին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համագործակցության արդյունքում, 2024 թվականին մշակված տիպային դասընթացի մոդելը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ուղղարկվել է բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ ըստ անհրաժեշտության պարտադիր ուսումնական ծրագրի մեջ ընդգրկելու և հակակոռուպցիոն դասընթացների թեմաներին վերաբերող միասնական մոտեցում ցուցաբերելու նպատակով:

2. **Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն** — Քննարկվել է շահագրգիռ կողմերի հետ

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
--------------------	----------------	---	----------------------

<p>Տիպային դասընթացը մշակվել է: Տիպային դասընթացը առաջարկվել է ԲՈՒՀ-երին՝ նրանց համաձայնությամբ պարտադիր ուսումնական ծրագրի մեջ ընդգրկելու համար:</p>	<p>Տիպային մշակված դասընթաց</p>	<p>ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում, մասնավորապես, Երևանի պետական, Մ. Հերացու անվան պետական բժշկական, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Հայաստանի ազգային ագրարային, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական համալսարաններում, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում և ՀՀ պետական կառավարման ակադեմիայում տարբեր կրթական ծրագրերի ուսումնական պլաններով մշակված և 2022-2023 ուսումնական տարում ներդրված են հակակոռուպցիոն բնագավառին առնչվող (կամընտրական կամ պարտադիր) դասընթացներ:</p> <p>Միջոցառման շրջանակներում, հակակոռուպցիոն դասընթացների թեմաներին վերաբերող միասնական մոտեցում ցուցաբերելու նպատակով, վերոնշյալ բուհերի հետ համագործակցության արդյունքում 2024 թվականին մշակվել է տիպային դասընթացի մոդել, որն ներկայացվել է բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ վերջիններիս համաձայնությամբ պարտադիր ուսումնական ծրագրի մեջ ընդգրկելու համար:</p>	<p>Կատարված է ամբողջությամբ</p>
<p>Այլընտրանքային գնահատում</p>			

Որակական գնահատումն անհնար է իրականացնել, քանի որ տիպային դասընթացի մոդելը հասանելի չէ ԿԳՄՄ կայքում կամ այլ բաց հարթակներում: Կատարման կարգավիճակը առաջարկվում է թողնել «Կատարված է ամբողջությամբ»:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքներ

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.9

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՇԱԿԵԼ ԵՎ ՆԵՐԴՆԵԼ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ ԷԹԻԿԱՑԻ, ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ և ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

2024 թվականի կատարողականի թիրախ

Միջազգային և տեղական համանման փորձի հիման վրա մշակվել և հաստատվել են վերապատրաստման ծրագրի մեթոդաբանությունը և մոդուլները, պիլոտային բուհերի ընտրության չափանիշները: Ընտրվել են պիլոտային ԲՈՒՀ-երը: Պիլոտային ծրագիրը իրականացվել է ՀՀ 4 մարզերի և Երևան քաղաքի 5 ԲՈՒՀ-երում:

Ստուգման միջոց

Վերապատրաստումների զեկույցներ

Կատարող մարմին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Միջոցառման շրջանակներում ԵՄ ԹՎԻՆԻՆԳ «Բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում Հայաստանի պետական ոլորտում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում միջազգային փորձագետների կողմից մշակվել են բուհական մոդուլների նախագծեր՝ «Կոռուպցիայի կանխարգելումը բուհական համակարգում» և «Վարքագծի կանոնները» թեմաներով, որոնք փորձարկվել են 2024 թվականի մայիսի 31-ին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) և փորձագետների կողմից անցկացված բուհերից (Երևանի պետական, Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական, Հայաստանի պետական տնտեսագիտական, Հայաստանի ազգային ագրարային, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային, Հայ-Ռուսական համալսարաններ, ՀՀ պետական կառավարման ակադեմիա) ներգրավված դասախոսների վերապատրաստման ժամանակ:

Միջազգային փորձագետների կողմից միջազգային և տեղական համանման փորձի հիման վրա մշակված և նշված մոդուլներով արդեն իսկ վերապատրաստում անցկացրած վերապատրաստման նյութերը և մոդուլները Հանձնաժողովի կողմից տրամադրվել են նաև վերապատրաստված բուհերին՝ իրենց կողմից ուսումնասիրելու, լրամշակելու և, անհրաժեշտության դեպքում, ուսումնական ծրագրերում ներդնելու կամ դրանց մոտարկելու նպատակով:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Քննարկվել է շահագրգիռ կողմերի հետ

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Մտուզման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Միջազգային և տեղական համանման փորձի հիման վրա մշակվել և հաստատվել են վերապատրաստման ծրագրի մեթոդաբանությունը և մոդուլները, պիլոտային բուհերի ընտրության չափանիշները: Ընտրվել են պիլոտային ԲՈՒՀ-երը: Պիլոտային ծրագիրը	Վերապատրաստումների զեկույցներ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարձրագույն ուսումնական հաստատություններին տրամադրած՝ ԵՄ ԹՎԻՆԻՆԳ «Բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում Հայաստանի պետական ոլորտում» ծրագրի շրջանակներում, միջազգային և տեղական համանման փորձի հիման վրա մշակված «Կոռուպցիայի կանխարգելումը բուհական համակարգում» և «Վարքագծի կանոնները» թեմաներով	Կատարված է ամբողջությամբ

<p>իրականացվել է ՀՀ 4 մարզերի և Երևան քաղաքի 5 ԲՈՒՀ-երում:</p>		<p>բուհական մոդուլների նախագծերը ուսումնասիրվել, լրամշակվել և վերջիններիս կողմից, որպես պիլոտային ծրագիր ներդրվել են բոլոր կրթական ծրագրերի պարտադիր կամ կամընտրական դասընթացների ցանկում:</p>	
--	--	--	--

Այլընտրանքային գնահատում

2024 թվականի կատարողականի թիրախում սահմանված պահանջների համեմատ ներկայացված տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս բացակայող կամ թերի իրականացված հետևյալ բաղադրիչներ՝

- Չեն ներկայացվել պիլոտային բուհերի ընտրության հստակ չափանիշները
- Թեև իրականացվել են վերապատրաստումներ բուհերում, սակայն չկա տեղեկատվություն թե Երևանի և ՀՀ 4 մարզերի որ բուհերում են իրականացվել պիլոտային ծրագրերը, ինչպես սահմանված էր թիրախային արդյունքում
- Բացակայում են (հաշվետվության մեջ այդ մասին նշված չէ, ինչպես նաև առկա չէ բաց աղբյուրներում) վերապատրաստումների վերաբերյալ զեկույցները, որոնք սահմանված էին որպես ստուգման միջոց

Այսպիսով, թեև վերապատրաստումների քանակական ցուցանիշները կատարվել են, սակայն բացակայում է դրանց որակական գնահատումը: Բացակայում են բուհերում կազմակերպված վերապատրաստումների արդյունավետության չափման գործիքները: Չեն ստուգվել ձեռք բերված գիտելիքները, չկան ելակետային տվյալներ, որոնց հիման վրա հնարավոր կլինեի համադրել արդյունքները:

Ներկայացված փաստերը ցույց են տալիս, որ ապահովվել է միայն մասնակի արդյունք, բայց բացակայում են ապացույցներ, որ վերապատրաստումներն իրապես նպաստել են ռազմավարական նպատակի իրագործմանը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է մասնակի կատարված:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.10

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՇԱԿԵԼ և ՆԵՐԴՆԵԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ և ՓՈՐՁՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ, ՆԱԽԱՏԵՍԵԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2024 թվականի կատարողականի թիրախ

Հակակոռուպցիոն մարմինների և ուսումնական հաստատությունների միջև ստորագրվել են համագործակցության հուշագրեր: Մշակվել և հաստատվել են Ուսանողական պրակտիկայի և փորձնակության գործնական ծրագրերը:

Ստուգման միջոց

Ստորագրված են հուշագրերը

Կատարող մարմին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Բարձրագույն ուսումնական հաստատությունների և Հակակոռուպցիոն պետական մարմինների, մասնավորապես, Կոռուպցիայի կանխարգելման և Մրցակցության պաշտպանության հանձնաժողովների միջև ստորագրված համագործակցության հուշագրերի շրջանակներում, 2024 թվական ընթացքում բուհերի կողմից մշակվել և հաստատվել են ուսանողական և փորձնակության պրակտիկայի ծրագրեր, որի համաձայն իրականացվել են համապատասխան պրակտիկաներ:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Քննարկվել է շահագրգիռ կողմերի հետ

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
<p>Հակակոռուպցիոն մարմինների և ուսումնական հաստատությունների միջև ստորագրվել են համագործակցության հուշագրեր: Մշակվել և հաստատվել են Ուսանողական պրակտիկայի և փորձնակության գործնական ծրագրերը :</p>	<p>Ստորագրված են հուշագրերը</p>	<p>Հակակոռուպցիոն պետական մարմինների և բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև ստորագրվել են հետևյալ համագործակցության հուշագրերը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ ՀՀ պետական կառավարման ալկադեմիայի (այսուհետ՝ Ակադեմիա) և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) միջև ստորագրված համագործակցության հուշագրի շրջանակներում Կողմերը համագործակցում են՝ երկկողմանի հետաքրքրություններ կայացնող իրավաբանական, ուսումնակրթական բնույթի ծրագրերի իրականացման, գիտական կոնֆերանսների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման, գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակման, համատեղ աշխատանքային խմբերի ձևավորման և Կողմերի լիազորված աշխատակիցների միջոցով փոխադարձ հետաքրքրություններ կայացնող հարցերի քննարկման և լուծման ուղղություններով: Մեկ այլ պայմանագրով Ակադեմիան Հանձնաժողովի հետ փոխադարձ համաձայնությամբ լավ կամ 	<p>Կատարված է ամբողջությամբ</p>

		<p>բարձր առաջադիմություն ցուցաբերած իր ուսանողներին ուղարկում է Հանձնաժողով՝ ուսումնական պլանի և սահմանված ժամանակացույցի համաձայն կառավարչական-գիտահետազոտական պրակտիկա անցնելու համար:</p> <p>➤ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր, համաձայն որի ուսանողների ուսումնաարտադրական ու գիտահետազոտական պրակտիկաները կազմակերպվում և անցկացվում են Հանձնաժողովում: Հուշագրի շրջանակներում համալսարանն արդյունավետ համագործակցում է Հանձնաժողովի հետ, ունի ուսումնաարտադրական փորձառության անցկացման փորձ: Համագործության շրջանակներում համալսարանը Հանձնաժողովի հետ համատեղ մշակել ու ավարտական կուրսերում ներդրել է ուսանողների ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի թեմաներ՝ նվիրված էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն բազավառին, որը կնպաստի ուսանողերի հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ</p>	
--	--	--	--

		մարմիններում ուսանողական պրակտիկայի և փորձնակության անցկացման աճին:	
Այլընտրանքային գնահատում			
<p>Հակակոռուպցիոն ինստիտուցիանալ մարմիններից միայն մեկն է կնքել հուշագրեր, այն էլ միայն երկու բուհի հետ: Զեկույցում ներկայացած է ԿԿՀ կողմից ստորագրված երկու հուշագիր՝ ՀՊՏՀ-ի և ՊԿԱ-ի հետ, սակայն ԿԿՀ կայքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այդ երկու հուշագրերը ստորագրվել են մինչև 2024 թվականը: ՀՊՏՀ-ի և ԿԿՀ-ի միջև համագործակցության հուշագիրը ստորագրվել է 2021 թվականին, իսկ ՊԿԱ-ի հետ՝ 2022 թվականին:</p> <p>Գործողությունը գնահատվում է որպես «կատարվել է մեծամասամբ», քանի որ հուշագրերը կնքվել են միայն ԿԿՀ-ի հետ, այլ հակակոռուպցիոն մարմիններ այս գործընթացում ներգրավված չեն եղել:</p> <p>Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է կատարվել է մեծամասամբ:</p>			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.11

ՆՊԱՍՏԵԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ՝ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՀԻՄՆԵԼՈՎ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԱԿՈՒՄԲՆԵՐ, ԻՄԿ ԲՈՒՀ-ԵՐՈՒՄ՝ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ (R&D)՝ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ և ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ և ԱՆԱԼԻՏԻԿ ԲՆՈՒՅԹԻ ԱՅԼ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

2024 թվականի կատարողականի թիրախ

Գնահատվել են դպրոցներում հակակոռուպցիոն ակումբներ, իսկ ԲՈՒՀ-երում՝ Հակակոռուպցիոն լաբորատորիաներ ստեղծելու կարիքները: Կարիքների գնահատման արդյունքում կազմվել են աշակերտական հակակոռուպցիոն ակումբներ և հակակոռուպցիոն լաբորատորիաներ ստեղծելու ծրագրեր: Ծրագրի հիման վրա աշակերտական հակակոռուպցիոն ակումբներ են ստեղծվել ՀՀ դպրոցների ընդհանուր թվի 30% հաստատություններում, որոնցից կեսը գյուղական համայնքներում, իսկ հակակոռուպցիոն լաբորատորիաներ՝ ԲՈՒՀ-երի ընդհանուր թվի 30% հաստատություններում:

Ստուգման միջոց

Մշակված ծրագրեր

Կատարող մարմին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Հանրակրթական ուսումնական հաստատություններում հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացման նպատակով, վերհանված կարիքների հիման վրա, «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից մշակվել է «Հակակոռուպցիոն կրթություն» խմբակի ծրագրի նախագիծ 11-րդ դասարանի սովորողների

համար: Ծրագիրը 2025 թվականին կներդրվի հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ որը կնպաստի հանրակրթական ուսումնական հաստատություններում հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացմանը:

ԲՈՒՀ-երում հակակոռուպցիոն լաբորատորիաների (R&D)՝ հակակոռուպցիոն հետազոտությունների, իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննություն անցկացնելու և հակակոռուպցիոն ծրագրերին հետազոտական և անալիտիկ բնույթի այլ աջակցություն տրամադրելու նպատակով վեր է հանվել հակակոռուպցիոն բնագավառի ուղղությամբ գիտական հետազոտությունների իրականացման շուրջ 30 թեմաներ, որոնց ուղղությամբ հետազոտություններ կատարելու նպատակով դրանք տրամադրվել են բարձրագույն մասնագիտական կրթություն իրականացնող թվով 11 ուսումնական հաստատությունների, որը կազմում է բարձրագույն ուսումնական հաստատությունների շուրջ 30%-ը: Հաշվետու ժամանակահատվածում բարձրագույն ուսումնական հաստատություններում իրականացվում է համապատասխան հետազոտական աշխատանքները: Կապված հետազոտությունների հումանիտար բնույթի առանձնահատկությամբ, հայտնում եմ, որ այն չի ենթադրում առանձին ենթակառուցվածքների ստեղծում:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Չի իրականացվել

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Գնահատվել են դպրոցներում հակակոռուպցիոն ակումբներ, իսկ ԲՈՒՀ-երում՝ Հակակոռուպցիոն լաբորատորիաներ ստեղծելու կարիքները: Կարիքների գնահատման արդյունքում կազմվել են աշակերտական հակակոռուպցիոն ակումբներ և հակակոռուպցիոն լաբորատորիաներ ստեղծելու ծրագրեր: Ծրագրի հիման վրա աշակերտական	Մշակված ծրագրեր	Հանրակրթական ուսումնական հաստատություններում հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացման նպատակով, վերհանված կարիքների հիման վրա, «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից մշակվել է «Հակակոռուպցիոն կրթություն» խմբակի ծրագրի նախագիծ 11-րդ դասարանի սովորողների համար: Ծրագիրը 2025 թվականին կներդրվի հանրակրթական ուսումնական	Կատարված է ամբողջությամբ

<p>հակակոռուպցիոն ակումբներ են ստեղծվել ՀՀ դպրոցների ընդհանուր թվի 30% հաստատություններում, որոնցից կեսը գյուղական համայնքներում, իսկ հակակոռուպցիոն լաբորատորիաներ՝ ԲՈՒՀ-երի ընդհանուր թվի 30% հաստատություններում:</p>		<p>հաստատություններում՝ որը կնպաստի հանրակրթական ուսումնական հաստատություններում հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացմանը: ԲՈՒՀ-երում հակակոռուպցիոն լաբորատորիաների (R&D)՝ հակակոռուպցիոն հետազոտությունների, իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննություն անցկացնելու և հակակոռուպցիոն ծրագրերին հետազոտական և անալիտիկ բնույթի այլ աջակցություն տրամադրելու նպատակով վեր է հանվել հակակոռուպցիոն բնագավառի ուղղությամբ գիտական հետազոտությունների իրականացման շուրջ 30 թեմաներ, որոնց ուղղությամբ հետազոտություններ կատարելու նպատակով դրանք տրամադրվել են բարձրագույն մասնագիտական կրթություն իրականացնող թվով 11 ուսումնական հաստատությունների, որը կազմում է բարձրագույն ուսումնական հաստատությունների շուրջ 30%-ը: Հաշվետու ժամանակահատվածում բարձրագույն ուսումնական հաստատություններում իրականացվում է համապատասխան հետազոտական աշխատանքները: Կապված հետազոտությունների հումանիտար բնույթի առանձնահատկությամբ, հայտնում են, որ այն չի</p>	
--	--	--	--

		ենթադրում առանձին ենթակառուցվածքների ստեղծում:	
Այլընտրանքային գնահատում			
<p>Իրականացված կարիքի հետազոտության մեթոդաբանությունը և բուն հետազոտությունը հասանելի չեն: Հակակոռուպցիոն ակումբներ և հակակոռուպցիոն լաբորատորիաներ ստեղծելու ծրագրերը փաստացիորեն չեն մշակվել: ԿՉՆԱԿ-ի կողմից մշակվել է միայն 11-րդ դասարանի համար նախատեսված «Հակակոռուպցիոն կրթություն» խմբակի ծրագիր, ոչ թե առհասարակ դպրոցներում ակումբերի ստեղծման ծրագիր: ԲՈՒՀ-երում հակակոռուպցիոն լաբորատորիաների ստեղծման ուղղությամբ կատարված աշխատանքների մասին ինֆորմացիան բացակայում է: Համաձայն ստուգման միջոցի՝ հակակոռուպցիոն ակումբները պետք է գործեն դպրոցների ընդհանուր թվի 30% հաստատություններում, իսկ հակակոռուպցիոն լաբորատորիաները՝ ԲՈՒՀ-երի ընդհանուր թվի 30% հաստատություններում: Այս պահանջների կատարման ապացույցներ առկա չեն: Կատարման կարգավիճակը առաջարկվում է գնահատել «Կատարված է մասնակի»:</p>			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.12

ՄՇԱԿԵԼ ԵՎ ՆԵՐԴՆԵԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2024 թվականի կատարողականի թիրախ

1. ա/Հանրային հաղորդակցության և իրազեկման ծրագրի մշակման տեխնիկական առաջադրանքը մշակվել և հաստատվել է: ք/Հանրային հաղորդակցության և իրազեկման ծրագիրը մշակվել և հաստատվել է: գ/Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի պարբերական ուսումնասիրությունների մեթոդոլոգիան մշակվել և հաստատվել է:
2. ա/ Հանրային հաղորդակցության և իրազեկման ծրագրերի արդյունքների պարբերական գնահատման համակարգը մշակվել և հաստատվել է: ք/Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունը կատարվել է և արդյունքների գնահատման զեկույցը հրապարակվել է:

Ստուգման միջոց

ա/Տեխնիկական առաջադրանքի առկայություն: ք/Հանրային կարծիքի ուսումնասիրություն: գ/Մշակված և կիրառվող ծրագրեր: դ/Մշակված և կիրառվող գնահատման համակարգ: ե/Մշակված և հրապարակված զեկույց: զ/Կազմակերպված միջոցառումների հաշվետվություններ, մամուլի հաղորդագրություններ: է/Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ:

Կատարող մարմին

- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)
- ՀՀ պետական կառավարման համակարգի մարմիններ
- Իրավապահ մարմիններ
- Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)
- Հանրային հեռարձակողի խորհուրդ
- Մասնավոր հեռարձակողներ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Որպես կատարողականի թիրախ՝ Հանձնաժողովն առաջարկել է օգտագործել ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ CRRC-ի կողմից 2021 թվականին մշակված և իրականացրած հանրային կարծիքի ուսումնասիրության մեթոդաբանությունը՝ լրամշակված տարբերակով, որն արդյունավետ կլինի արդյունքների համեմատության նպատակով:

2. Հանրային կարծիքի ուսումնասիրության մեթոդաբանությունը և հարցաշարը, 2024 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 07-Լ որոշմամբ, հաստատվել է Հանձնաժողովի կողմից: Ուսումնասիրության մեկնարկը՝ ըստ ԱՄՆ ՄԶԳ գործընկերների տեղեկատվության, տրվել է 2024 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին և դեռևս ընթացքի մեջ է: Ուսումնասիրության արդյունքները նախատեսվում է ամփոփել 2025 թվականի 1-ին կիսամյակում, որի վերաբերյալ առաջարկություն է ներկայացվել Արդարադատության նախարարություն:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Առաջարկվող մեթոդաբանությունը հունիսի 21-ին ուղարկվել է ՀՀ Արդարադատության նախարարություն՝ դիտարկումներ և առաջարկություններ ներկայացնելու նպատակով:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
<p>1. ա/Հանրային հաղորդակցության և իրազեկման ծրագրի մշակման տեխնիկական առաջադրանքը մշակվել և հաստատվել է:</p>	<p>ա/Տեխնիկական առաջադրանքի առկայություն: բ/Հանրային կարծիքի ուսումնասիրություն: գ/Մշակված և կիրառվող ծրագրեր: դ/Մշակված և կիրառվող գնահատման</p>	<p>Ի կատարումն կատարողական թիրախի՝ Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի պարբերական ուսումնասիրությունների մեթոդաբանության մշակման և հաստատմանը՝ Հանձնաժողովը 2024 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 07-Լ որոշմամբ, հաստատել է հանրային կարծիքի ուսումնասիրության մեթոդաբանությունը և հարցաշարը: Միաժամանակ, 2-րդ կիսամյակի կատարողականի թիրախը՝ գնահատման զեկույցի հրապարակումը, Հանձնաժողովի կողմից առաջարկվել է տեղափոխել 2025 թվականի 1-ին կիսամյակ:</p>	<p>Կատարված է մեծամասամբ</p>

<p>բ/Հանրային հաղորդակցության և իրազեկման ծրագիրը մշակվել և հաստատվել է: զ/Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի պարբերական ուսումնասիրությունների մեթոդոլոգիան մշակվել և հաստատվել է:</p> <p>2.ա/ Հանրային հաղորդակցության և իրազեկման ծրագրերի արդյունքների պարբերական գնահատման համակարգը մշակվել և հաստատվել է:</p>	<p>համակարգ: Ե/Մշակված և հրապարակված զեկույց: զ/Կազմակերպված միջոցառումների հաշվետվություններ, մամուլի հաղորդագրություններ: Ե/Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ:</p>		
--	--	--	--

<p>Բ/Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունը կատարվել է և արդյունքների գնահատման զեկույցը հրապարակվել է:</p>			
<p>Այլընտրանքային գնահատում</p>			
<p>Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի պարբերական ուսումնասիրությունների մեթոդաբանությունը մշակվել և հաստատվել է ԿԿՀ թիվ 07-Լ որոշմամբ: Այնուամենայնիվ, հանրային հաղորդակցության և իրազեկման ծրագրի մշակման տեխնիկական առաջադրանքը չի մշակվել և հաստատվել, չի մշակվել հանրային հաղորդակցության և իրազեկման ծրագիրը: Հանրային հաղորդակցության և իրազեկման ծրագրերի արդյունքների պարբերական գնահատման համակարգը նույնպես չի մշակվել: Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունը չի ավարտվել, և արդյունքների գնահատման զեկույցը չի հրապարակվել:</p> <p>Մեթոդոլոգիայի համաձայն, գործողությունը գնահատվում է որպես «կատարվել է մասնակի», քանի որ ստուգման միջոցների և սահմանված թիրախային արդյունքների կատարողականի գնահատման հիման վրա ակնհայտ է, որ դիտարկվող ժամանակահատվածի համար գործողությունը կատարվել է մասնակի:</p>			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Քանի որ ուսումնասիրության մեկնարկը տրվել է 2024 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին՝ դրա արդյունքների ամփոփումը և գնահատումը կիրականացվեն 2025 թվականի 1-ին կիսամյակում: Ժամկետի փոփոխության վերաբերյալ առաջարկություն է ներկայացվել Արդարադատության նախարարություն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.13

ԶԱՐԳԱՑՆԵԼ ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

2024 թվականի կատարողականի թիրախ

2. Կազմվել է կարողությունների հզորացման ծրագիր, ռեսուրսները գնահատվել են:

Ստուգման միջոց

ա/Վերապատրաստումների զեկույցներ: ք/Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և աշխատակիցների շրջանում կատարվող հարցումներ: գ/Գիտելիքների նախա և հետթեստավորման արդյունքներ: դ/Կազմակերպված միջոցառումների հաշվետվություններ, մամուլի հաղորդագրություններ: ե/Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ:

Կատարող մարմին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

ՀՀ պետական կառավարման համակարգի մարմիններ

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

2022 թվականի հունիսի 1-ից մինչև 2024 թվականի մայիսի 31-ը անցկացված, ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող, «Բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում Հայաստանի պետական ոլորտում» Թվինինգ ծրագրի շրջանակներում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցներն անցել են վերապատրաստման դասընթացներ: Որպես հատուկ նպատակ՝ ծրագիրն ուղղված է եղել աջակցելու կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում կրթական ծրագրերի և հանրային իրազեկման միջոցառումների իրականացմանը և ինստիտուցիոնալ կարողությունների

զարգացմանը: Հանձնաժողովի աշխատակիցները մասնակցել են հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ոլորտում մի շարք դասընթացների, վերապատրաստվել են՝ որպես վերապատրաստողներ, որոնց ընթացքում գիտելիքներ են ձեռք բերել նշված բնագավառներում՝ յուրացնելով նաև միջազգային փորձը: Հարկ եղած դեպքում, վերապատրաստված աշխատակիցները կարող են վերապատրաստել նաև Հանձնաժողովի սկսնակ աշխատակիցներին:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
<p>2. Կազմվել է կարողությունների հզորացման ծրագիր, ռեսուրսները գնահատվել են:</p>	<p>ա/Վերապատրաստումների զեկույցներ: բ/Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և աշխատակիցների շրջանում կատարվող հարցումներ: գ/Գիտելիքների նախա և հետթեստավորման արդյունքներ: դ/Կազմակերպված միջոցառումների հաշվետվություններ, մամուլի հաղորդագրություններ: ե/Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ:</p>	<p>ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրով ներգրավված փորձագետների կողմից գնահատվել են Հանձնաժողովի վերապատրաստում անցած աշխատակիցների կարողությունները և գիտելիքները, որի արդյունքում տրվել են հավաստագրեր:</p> <p>Ծրագրի շրջանակներում իրականացրած բոլոր վերապատրաստումները ամփոփվել են ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի արդյունքների ներկայացման <u>միջոցառման</u> ժամանակ:</p>	<p>Կատարված է ամբողջությամբ</p>
<p>Այլընտրանքային գնահատում</p>			

Գործողության կատարումը նախատեսված էր 2024 թվականի երկրորդ կիսամյակին, ինչը ենթադրում է, որ գործողության կատարմանն ուղղված միջոցառումները պետք է իրականացվեին հիշյալ ժամանակահատվածում: Բացի այդ, առկա չէ տեղեկատվություն այն մասին, թե 2024 թվականի համար նախատեսված կատարողական թիրախը՝ կարողությունների հզորացման ծրագիրը, կամզվել է, թե ոչ: Նաև պարզ չէ, թե ԵՄ թվինինգ ծրագրով ԿԿՀ-ի վերապատրաստում անցած աշխատակիցների կարողությունների և գիտելիքների գնահատումը ինչքանով կարող է դիտարկվել որպես ԿԿՀ-ի ռեսուրսների գնահատում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է կատարվել է մասնակի:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.14

ՀԶՈՐԱՑՆԵԼ ՔՀԿ-ՆԵՐԻ ՔՀԿ-ՆԵՐԻ ՑԱՆՑԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖՈՆԴՀԱՅԹԱՅԹՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

2024 թվականի կատարողականի թիրախ

1. Հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ոլորտում ՔՀԿ-ների ֆոնդայթայթման մասնակցային մեխանիզմները մշակվել և հաստատվել են: Բ/ՔՀԿ-ների ֆոնդայթայթման կարողությունները և կարիքները գնահատվել են:
2. Կարողությունների և կարիքների գնահատման արդյունքում կարողությունների հզորացման ծրագիրը կազմվել է, ռեսուրսները գնահատվել են:

Ստուգման միջոց

ա/Մշակված և կիրառվող ծրագրեր: Բ/Վերապատրաստումների զեկույցներ: Գ/Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և մասնակիցների շրջանում կատարվող հարցումներ: Դ/Կազմակերպված միջոցառումների հաշվետվություններ, մամուլի հաղորդագրություններ: Ե/Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ:

Կատարող մարմին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

ՀՀ պետական կառավարման համակարգի մարմիններ

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Հարկ է նշել, որ գործողության ամբողջական կատարումը Հանձնաժողովի իրավասությունների տիրույթում չէ՝ հաշվի առնելով, որ հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ոլորտում ՔՀԿ-ների ֆոնդայթայթման կարողությունների զարգացումը Հանձնաժողովի գործառույթների շրջանակում չի գտնվում և սույն հարցը

վերապատրաստումների շրջանակներում ենթակա է հասցեագրման համապատասխան մասնագետների կամ փորձագետների կողմից: Ըստ այդմ՝ Հանձնաժողովը պայմանավորվածություն է ձեռք բերել գործողությունն իրականացնել ԱՄՆ ՄԶԳ «Հայաստան բարեվարքություն» ծրագրի հետ համագործակցությամբ: Գործողության թիրախները քննարկվել են ԱՄՆ ՄԶԳ գործընկերների հետ աշխատանքային քննարկումներում, տրամադրվել են Հանձնաժողովի կանխարգելման մանդատի շրջանակներում առաջարկվող վերապատրաստման թեմաները: ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի բարեվարքության ծրագիրը նախագծել և ԿԿՀ հաստատմանն է ներկայացրել ՔՀԿ-ների կարողությունների զարգացման համար կազմակերպվող մրցույթի հայտարարությունը, որը հաստատվել է ԿԿՀ կողմից: Հայտարարված մրցույթի արդյունքում ընտրվել է հաղթող կազմակերպություն, որը 2025 թվականից կմեկնարկի հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ոլորտում ՔՀԿ-ների կարողությունների զարգացման ծրագիրը՝ ներառելով նաև ֆոնդհայթայթման մեխանիզմները:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Գործողության թիրախները քննարկվել են ԱՄՆ ՄԶԳ գործընկերների հետ աշխատանքային քննարկումներում, տրամադրվել են Հանձնաժողովի կանխարգելման մանդատի շրջանակներում առաջարկվող վերապատրաստման թեմաները:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
1. Հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ոլորտում ՔՀԿ-ների ֆոնդհայթայթման մասնակցների	ա/Մշակված և կիրառվող ծրագրեր: բ/Վերապատրաստումների զեկույցներ: գ/Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և մասնակիցների	ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի բարեվարքության ծրագիրը նախագծել և ԿԿՀ հաստատմանն է ներկայացրել ՔՀԿ-ների կարողությունների զարգացման համար կազմակերպվող մրցույթի հայտարարությունը, որը հաստատվել է ԿԿՀ կողմից: Հայտարարված մրցույթի արդյունքում ընտրվել է հաղթող կազմակերպություն, որը 2025 թվականից կմեկնարկի հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային	Կատարված է մեծամասամբ

<p>թայթման մասնակցային մեխանիզմները մշակվել են: և հաստատվել են: և Բ/ՔՀԿ-ների ֆոնդայթայթման կարողությունները կարիքները գնահատվել են: և 2. Կարողությունների կարիքների գնահատման արդյունքում կարողությունների հզորացման ծրագիրը կազմվել է, ռեսուրսները գնահատվել են:</p>	<p>շրջանում կատարվող հարցումներ: և/Կազմակերպված միջոցառումների հաշվետվություններ, մամուլի հաղորդագրություններ: և/Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ:</p>	<p>իրագրելի մասնակցային կարողությունների զարգացման ծրագիրը՝ ներառելով նաև ֆոնդայթայթման մեխանիզմները: Հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրագրելի մասնակցային կարողությունների զարգացումը դուրս է ԿԿՀ իրավասությունների շրջանակներից, ուստի այն չի կարող ամբողջովին կատարված լինել Հանձնաժողովի կողմից:</p>	
<p>Այլընտրանքային գնահատում</p>			

Մշտադիտարկման արդյունքներով պարզ է դարձել, որ թեև կատարվել են որոշակի գործողություններ, սակայն դրանք չեն բխում Գործողությունների ծրագրից: Հիշյալ գործողության կատարող մարմինը՝ ԿԿՀ-ն է, իսկ համակատարող մարմինը՝ պետական կառավարման մարմինները: ՔՀԿ-ները կարող են միայն օժանդակիչ դեր ունենալ: Ընդ որում, հիշյալ մարմինները մասնակցել են Ռազմավարության և Գործողությունների ծրագրի մշակման աշխատանքներին, և հնարավորություն են ունեցել ներկայացնել մեթոդական նկատառումներ այդ փուլում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է կատարված չէ:

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ոլորտում ՔՀԿ-ների ֆոնդհայթայթման կարողությունների զարգացումը դուրս է ԿԿՀ իրավասությունների շրջանակներից:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.1

**ԳՈՐԾԱՐԱՐ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐԴՆԵԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐ՝
ԶԱՐԳԱՑՆԵԼՈՎ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ**

2024 թվականի կատարողականի թիրախ

Կորպորատիվ կառավարման նոր կանոնագրքի նախագիծը լրամշակվել է կորպորատիվ կառավարման միջազգային ստանդարտներով ամրագրված հակակոռուպցիոն պահանջներին համապատասխան:

Մահմանվել են Կանոնագրքի կիրառման վերահսկողության մեխանիզմներ:

Կանոնագիրքը հաստատվել է իրավասու մարմնի կողմից:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կատարող մարմին

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Համակատարող մարմին

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ/գործարար շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններ և գործարար անդամակցությամբ զբաղվող կազմակերպություններ (համաձայնությամբ)

ՀՀ արդարադատության նախարարություն

Կորպորատիվ կառավարման կենտրոն (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

2024 թվականի մայիսի 22-ին Ազգային Ժողովի կողմից ընդունվել է «Քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով սահմանվել է Կորպորատիվ կառավարման կանոնագրքի հասկացությունը, դրա ընդունման համար անհրաժեշտ լիազորող նորմը, ինչպես նաև ընկերությունների կողմից Կանոնագրքին միանալու կանոնները: Սահմանվել է Կանոնագրքին ընկերությունների կողմից միանալու կամավորության սկզբունքը՝ մինևս մասնակ առանձին օրենքով դրա ընդունման ու կիրառման պարտադիր հիմքեր նախատեսելու հնարավորությամբ: Բացի այդ, հաշվետու կիսամյակում Էկոնոմիկայի նախարարությունը Ասիական զարգացման բանկի տեխնիկական աջակցությամբ մշակել և շրջանառել է Կորպորատիվ կառավարման նոր կանոնագրքի նախագիծը՝ կորպորատիվ կառավարման միջազգային ստանդարտներ հանդիսացող 2023 թվականին ընդունված G20/SՀԶԿ կորպորատիվ կառավարման սկզբունքների հիման վրա: Էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի հուլիսի 30-ի թիվ 1955-Ն հրամանով հաստատվել է Կորպորատիվ կառավարման նոր կանոնագիրքը, որն ուժի մեջ է մտել 2024 թվականի օգոստոսի 30-ին: Կանոնագրքին միացող կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր հաշվետու տարվա համար պատրաստել և մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունիսի 30-ն իր համացանցային կայքէջում հրապարակել Կանոնագրքով նախատեսված տարեկան հաշվետվությունը, ինչպես նաև դրա մաս կազմող կորպորատիվ կառավարման զեկույցը և կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիրը՝ «Հետևի՛ր կամ Բացատրի՛ր» սկզբունքի հիման վրա: Կորպորատիվ կառավարման տարեկան զեկույցի, այդ թվում՝ տարեկան հայտարարագրի համար հաշվետու ժամանակահատված է համարվում տվյալ տարվա հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընդգրկող ժամանակահատվածը:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Կորպորատիվ կառավարման կանոնագրքի նախագիծը 2024 թվականի մասիսի 8-ին դրվել է հանրային քննարկման edraft.am (<https://www.e-draft.am/projects/7208>) հարթակում: Ներկայացվել է նաև է նաև շահագրգիռ մարմիններին՝ կարծիքի: Ստացված կարծիքների հիման վրա նախագծերը լրամշակվել են:

2024 թվականի սեպտեմբերի 24-ին կազմակերպվել է «Հայաստանի նոր Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը, կիրարկման և հարկադրանքի հարցեր» թեմայով աշխատաժողով՝ բիզնես համայնքի, քաղաքացիական հասարակության, պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Կանոնագրքին համապատասխանելու վերաբերյալ տարեկան հայտարարագրի ձևաչափը մասնավոր հատվածի հետ քննարկումների արդյունքում մշակելու նպատակով 2024 թվականի նոյեմբերի 28-ին և 29-ին կազմակերպվել էրեսմինար-քննարկումներ ցուցակված իրական և ֆինանսական հատվածի ընկերությունների հետ: Հավաքագրված առաջարկների և խնդիրների հիման վրա նախատեսվում է իրականացնել տարեկան հայտարարագրի ձևաչափի մշակում:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
<p>Կորպորատիվ կառավարման նոր կանոնագրքի նախագիծը լրամշակվել է Կորպորատիվ կառավարման միջազգային ստանդարտներով ամրագրված հակակոռուպցիոն պահանջներին համապատասխան: Մահմանվել են Կանոնագրքի կիրառման վերահսկողության մեխանիզմներ Կանոնագիրքը հաստատվել է իրավասու մարմնի կողմից:</p>	<p>Իրավական ակտի առկայություն</p>	<p>2024 թվականի առաջին կիսամյակի կատարողականի թիրախի շրջանակում մշակվել է Կորպորատիվ կառավարման կանոնագրքի նախագիծը: Նախագիծը լրամշակվել է կորպորատիվ կառավարման միջազգային ստանդարտներ հանդիսացող 2023 թվականին ընդունված G20/SՀԶԿ կորպորատիվ կառավարման սկզբունքների հիման վրա: Մահմանվել է, որ Կանոնագրքին հետևելը վերահսկվում է կանոնավոր հաշվետվությունների և բացահայտումների միջոցով, որոնք պետք է ներառված լինեն տարեկան հաշվետվությունում:</p> <p>Մինևույն ժամանակ, հաշվի առնելով, որ այս պահին գործող կարգավորումներով Կանոնագրքին միանալը պարտադիր է միայն ցուցակված ընկերությունների համար՝ բորսայի կանոններով, նույն կանոններով սահմանված են վերահսկողության մեխանիզմներ, այդ թվում արժեթղթերի ցուցակման կասեցում և ապացուցակում:</p> <p>2024 թվականի երկրորդ կիսամյակի կատարողականի թիրախի շրջանակում Էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի հուլիսի 30-ի N 1955-Ն հրամանով հաստատվել է Կորպորատիվ կառավարման նոր կանոնագիրքը, որն ուժի մեջ է մտել 2024 թվականի օգոստոսի 30-ին:</p>	<p>Կատարված է ամբողջությամբ</p>

Այլընտրանքային գնահատում

Ներկայում Կանոնագրքին միանալը պարտադիր է միայն ցուցակված ընկերությունների համար՝ բորսայի կանոններով, նույն կանոններով սահմանված են վերահսկողության մեխանիզմներ, այդ թվում արժեթղթերի ցուցակման կասեցում և ապացուցակում:

Էկոնոմիկայի նախարարի 30.07.2024թ. N 1955-Ն հրամանով հաստատվել է Կորպորատիվ կառավարման նոր կանոնագիրքը, որն ուժի մեջ է մտել 2024 թվականի օգոստոսի 30-ին:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է կատարվել է:

4. Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքները

Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.2

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԵՐԴՆԵԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐ, ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների համար սահմանվել է նոր կորպորատիվ կառավարման կանոնագիրքը պարտադիր կիրառելու պահանջ:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կատարող մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Համակատարող մարմին

ՀՀ ֆինանսների նախարարություն

Կատարման կարգավիճակը (2024 թվականի 2-րդ կիսամյակ)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Սույն գործողության շրջանակներում նախատեսվում է պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների համար ներդնել նոր կորպորատիվ կառավարման կանոնագիրքը կիրառելու պահանջ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ էկոնոմիկայի նախարարության կողմից մեկնարկել են համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներ: Նախագծերի մշակման աշխատանքներին աջակցություն է ցուցաբերում նաև Ասիական զարգացման բանկը և «Կորպորատիվ կառավարման կենտրոն» հասարակական կազմակերպությունը:

Նախագծերի մշակման գործընթացն առավել ներառական իրականացնելու նպատակով կազմակերպվել են մի շարք հանրային քննարկումներ շահագրգիռ պետական մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներգրավմամբ:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Շահագրգիռ պետական մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներգրավմամբ կազմակերպվել են մի շարք հանրային քննարկումներ (<https://corpgov.am/hy/news/2024/12/24/cg-in-soes-workshop/>, <https://corpgov.am/hy/news/2024/12/11/corporate-governance-in-soes-ppd/>):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների համար սահմանվել է նոր կորպորատիվ կառավարման կանոնագիրքը պարտադիր կիրառելու պահանջ:	Իրավական ակտի առկայություն	Էկոնոմիկայի նախարարության կողմից իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները մեկնարկել են, սակայն ընդունված իրավական ակտերի բացակայության պայմաններում գործողության կատարման կարգավիճակը կատարված է մասնակի:	Կատարված է մասնակի

Այլընտրանքային գնահատում

Էկոնոմիկայի նախարարության կողմից իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները մեկնարկել են: Այսպիսով, քանի որ իրավական ակտը դեռևս գտնվում է մշակման փուլում, գործողության կատարման կարգավիճակը գնահատվում է «կատարված է մասնակի»: Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է կատարվել է մասնակի:

4. Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.3

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԵՐԴՆԵԼ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

2024 թվականի կատարողականի թիրախ

Մշակվել է օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որով ԿԿՀ-ին վերապահվել է պետական և համայնքային կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, գնահատման և կառավարման մեթոդաբանության մշակման և հաստատման իրավասություն: Օրենսդրական փաթեթը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:

Հաստատվել է կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման մեթոդաբանությունը:

Մեթոդաբանությունը պիլոտային կարգով փորձարկված է առնվազն 3 տարբեր կազմակերպատիրավական ձև ունեցող կազմակերպություններում:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Վերապատրաստումների զեկույցներ

Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և աշխատակիցների շրջանում կատարվող հարցումներ

Կազմակերպված միջոցառումների հաշվետվություններ, մամուլի հաղորդագրություններ

Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ

Կատարող մարմին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Համակատարող մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Հանձնաժողովը մշակել և Արդարադատության նախարարություն է ներկայացրել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր):, Նախագծերով առաջարկվում է Հանձնաժողովին վերապահել հանրային իշխանության մարմիններում, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում, պետության կողմից հիմնադրված հիմնադրամներում, 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության և համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման գործիքակազմի միասնականության ապահովման, իրավասու մարմիններ առաջարկությունների ներկայացման գործառույթները, կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման մեթոդաբանության մշակման և հաստատման, մասնագիտական խորհրդատվության և մեթոդական աջակցության տրամադրման լիազորությունները:

Նախագծերը լրամշակվել են շահագրգիռ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված կարծիքների հիման վրա և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ Նախագծերի լրամշակման աշխատանքներն ընթացքում են:

«Բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում Հայաստանի պետական հատվածում» ԵՄ ԹՎԻԻԻԳ ծրագրի 4-րդ բաղադրիչի հետ համագործակցությամբ Հանձնաժողովը մշակել է պետական մասնակցությամբ կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը: Հանձնաժողովը կոռուպցիոն ռիսկերի կառավարման մեթոդաբանության նախագիծը պիլոտային կարգով գործարկել է պետական մասնակցությամբ մեկ ընկերությունում («Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ (ԱՆԻՖ)) և պետական (համայնքային) ոչ առևտրային երկու կազմակերպություններում: Ընտրված երեք կազմակերպությունների կողմից՝ Հանձնաժողովի և ԵՄ ԹՎԻԻԻԳ ծրագրի կողմից ձևավորված աջակցող թիմի հետ համատեղ իրականացվել է կոռուպցիոն ռիսկերի ներքին գնահատում, որի արդյունքները Հանձնաժողովը 2024 թվականին ամփոփել է գեկույցի հրապարակմամբ:

Կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման մեթոդաբանությունը 2024 թվականին Հանձնաժողովի կողմից չի հաստատվել, քանի որ օրենսդրական մակարդակում դեռևս Հանձնաժողովին վերապահված չէ մեթոդաբանության մշակման և հաստատման լիազորությունը:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախագծերը ներկայացվել են հանրային քննարկման իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am հարթակում (հղումը՝ <https://www.e-draft.am/projects/7187>):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
<p>Մշակվել է օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որով ԿԿՀ-ին վերապահվել է պետական և համայնքային կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, գնահատման և կառավարման մեթոդաբանության մշակման և հաստատման իրավասություն</p> <p>Օրենսդրական փաթեթը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ-ի ընդունմանը:</p> <p>Հաստատվել է կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման</p>	<p>Իրավական ակտի առկայություն</p> <p>Վերապատրաստումների զեկույցներ</p> <p>Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և աշխատակիցների շրջանում կատարվող հարցումներ</p> <p>Կազմակերպված միջոցառումների հաշվետվություններ, մամուլի հաղորդագրություններ</p> <p>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ</p>	<p>Սույն գործողության 2024 թվականի առաջին կիսամյակի կատարողականի թիրախի շրջանակում մշակվել են «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը:</p> <p>2024 թվականի երկրորդ կիսամյակի կատարողականի թիրախի շրջանակում մշակվել է կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը, որը պիլոտային կարգով գործարկվել է պետական մասնակցությամբ մեկ ընկերությունում («Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ (ԱՆԻՖ)) և պետական (համայնքային) ոչ</p>	<p>Կատարված է մեծամասամբ</p>

<p>մեթոդաբանությունը: Մեթոդաբանությունը պիլոտային կարգով փորձարկված է առնվազն 3 տարբեր կազմակերպչափրավական ձևունեցող կազմակերպություններում</p>		<p>առևտրային երկու կազմակերպություններում: Հաշվի առնելով, որ կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման մեթոդաբանության մշակման և հաստատման լիազորությունը Հանձնաժողովին վերապահող իրավական ակտը դեռևս ընդունված չէ, գործողության կատարումը մեծ մասամբ է ապահովվել:</p>	
Այլընտրանքային գնահատում			
<p>Գործողությունը այլընտրանքային գնահատման արդյունքում գնահատվել է որպես «Կատարված է մասնակի», քանի որ համաձայն ոլորտային ՀԿ-ների դիտարկմանը՝ տվյալ գործողության 2024 թվականի թիրախներից բխող ուղղակի արդյունքային քանակական և որակական երեք ցուցանիշներից կատարվել է միայն մեկը՝ «Մեթոդաբանությունը պիլոտային կարգով փորձարկված է առնվազն 3 տարբեր կազմակերպչափրավական ձև ունեցող կազմակերպություններում»: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը մշակել է օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որը պետք է Հանձնաժողովին վերապահի համապատասխան լիազորություններ: Օրենսդրական փաթեթը դեռևս չի հաստատվել Կառավարության կողմից և չի ներկայացվել ԱԺ: Մեթոդաբանությունը մշակվել է, բայց չի հաստատվել՝ համապատասխան իրավական հիմքի բացակայության պատճառով:</p>			

4. Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.4

**ՀԶՈՐԱՑՆԵԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝
ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

2024 թվականի կատարողականի թիրախ

Համալրվել են ՄԻՊ գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանության համապատասխան ստորաբաժանման հաստիքները:

Կազմակերպվել և անցկացվել են առնվազն 2 վերապատրաստման դասընթացներ ՄԻՊ համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների համար՝ մասնավոր հատվածի և պետական մարմինների միջև հարաբերություններում գործարարների իրավունքների պաշտպանության վերաբերյալ:

Ստուգման միջոց

Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ

Վերապատրաստումների զեկույցներ

Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և աշխատակիցների շրջանում կատարվող հարցումներ

Կատարող մարմին

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ (համաձայնությամբ)

Համակատարող մարմին

Մասնագիտացված ՔՀԿ-ներ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Որպես կատարող մարմին՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի համագործակցության արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, այդ թվում՝ Գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանության բաժնի հաստիքների համալրման գործընթացը գտնվում է ընթացիկ փուլում: Համալրվել են Գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանության բաժնի պետի և ավագ մասնագետի հաստիքները:

Բացի այդ, գործարարների իրավունքների պաշտպանության ոլորտում կարողությունների զարգացման համատեքստում հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը ներգրավված է Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի համապատասխան աշխատանքային խմբում:

Մարդու իրավունքների դանիական ինստիտուտի հետ համաձայնություն է ձեռք բերվել նաև իրականացնել ոլորտին առնչվող միջոցառումներ:

Ինչ վերաբերում է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանության ստորաբաժանման աշխատակիցների համար մասնավոր հատվածի և պետական մարմինների միջև հարաբերություններում գործարարների իրավունքների պաշտպանության վերաբերյալ վերապատրաստումների անցկացմանը, ապա հարկ է նշել, որ 2024 թվականի ընթացքում վերապատրաստման դասընթացների կազմակերպումը համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների համար իրականացվել է մասնակի:

Պաշտպանը մասնագիտացված տարբեր ՔՀԿ-ների հետ քննարկել է համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման դասընթացներ իրականացնելու հարցը: Արդյունքում, «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հասարակական կազմակերպության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել 2024 թվականի երկրորդ կիսամյակում իրականացնել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման դասընթացներ մասնավոր հատվածի և պետական մարմինների միջև հարաբերություններում գործարարների իրավունքների պաշտպանության և գործարարության ոլորտում հակակոռուպցիոն մեխանիզմների վերաբերյալ: Սակայն, կազմակերպչական հանգամանքներով պայմանավորված՝ վերապատրաստման դասընթացների իրականացումը հետաձգվել է և նախատեսվում է իրականացնել 2025 թվականին:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
<p>Համալրվել են ՄԻՊ գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանության համապատասխան ստորաբաժանման հաստիքները:</p> <p>Կազմակերպվել և անցկացվել են առնվազն 2 վերապատրաստման դասընթացներ ՄԻՊ համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների համար՝ մասնավոր հատվածի և պետական մարմինների միջև հարաբերություններում գործարարների իրավունքների պաշտպանության վերաբերյալ:</p>	<p>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ Վերապատրաստումների զեկույցներ Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և աշխատակիցների շրջանում կատարվող հարցումներ</p>	<p>Սույն գործողության շրջանակում համալրվել են ՄԻՊ գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանության ստորաբաժանման հաստիքները:</p> <p>ՄԻՊ գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանության ստորաբաժանման աշխատակիցների կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման դասընթացներ իրականացնելու համար քննարկումներ են անցկացվել մասնագիտացված տարբեր ՔՀԿ-ների հետ:</p> <p>Արդյունքում, «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հասարակական կազմակերպության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել իրականացնել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման դասընթացներ մասնավոր հատվածի և պետական մարմինների միջև հարաբերություններում գործարարների իրավունքների պաշտպանության և գործարարության ոլորտում հակակոռուպցիոն մեխանիզմների</p>	<p>Կատարված է մասնակի</p>

		վերաբերյալ: Նշյալի հաշվառմամբ՝ գործողության կատարումը գնահատվել է մասնակի կատարված:	
Այլընտրանքային գնահատում			
<p>ԻՀԱ-ի մշտադիտարկման արդյունքում պարզ է դարձել, որ վերապատրաստումներ չեն իրականացվել, իսկ ԹԻՀԿ առաջին և միակ հանդիպումը ՄԻՊ-ի հետ տեղի է ունեցել 2024 թվականի դեկտեմբերին (https://www.facebook.com/share/p/166a4U1C7j/), հետևաբար ԹԻՀԿ-ն չէր կարող հանձն առնել 2024թ երկրորդ կիսամյակին վերապատրաստման դասընթացներ անցկացնել: Ավելին, հանդիպման ժամանակ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն ՄԻՊ-ը պետք է տրամադրեր իրենց կարիքների գնահատման արդյունքները, որի հիման վրա ԹԻՀԿ-ն պետք է մշակեր վերապատրաստման դասընթացները:</p>			

4. Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքները

Կազմակերպչական հանգամանքներով պայմանավորված՝ վերապատրաստման դասընթացների իրականացումը հետաձգվել է:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.5

ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԲԻԶՆԵՍ ՀԱՄԱՑՆՔԻ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆ ԻՐԵՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2024 թվականի կատարողականի թիրախ

Կազմակերպվել և իրականացվել են իրազեկվածության բարձրացման առնվազն 2 միջոցառումներ բիզնես համայնքի շրջանում՝ իրենց իրավունքների արդյունավետ միջոցների պաշտպանության և հակակոռուպցիոն մեխանիզմների վերաբերյալ:

Ստուգման միջոց

Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային զեկույցներ

Մամուլի հաղորդագրություններ

ԶԼՄ հրապարակումներ

Կատարող մարմին

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Համակատարող մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ (համաձայնությամբ)

Մասնագիտացված ՔՀԿ-ներ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Էկոնոմիկայի նախարարությունը Կորպորատիվ կառավարման կենտրոնի, ԱՄՆ առևտրի դեպարտամենտի կոմերցիոն իրավունքի զարգացման ծրագրի (CLDP) և Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի (CIPE) հետ համագործակցությամբ 2024 թվականի սեպտեմբերի 24-ին կազմակերպել է «Հայաստանի նոր Կորպորատիվ կառավարման

կանոնագիրքը, կիրարկման և հարկադրանքի հարցեր» թեմայով աշխատաժողով՝ (հղումը՝ <https://mineconomy.am/news/3429>) բիզնես համայնքի, քաղաքացիական հասարակության, պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Աշխատաժողովի նպատակն էր գործարար համայնքին և այլ շահագրգիռ անձանց ներկայացնել ՀՀ կորպորատիվ կառավարման նոր կանոնագիրքը, ինչպես նաև քննարկել կանոնագրքի իրավակիրարկմանը, ներդրումային միջավայրի բարելավման հարցում կորպորատիվ կառավարման դերին վերաբերող հիմնախնդիրները:

2024 թվականի հոկտեմբերի 11-ին Արդարադատության նախարարության նախաձեռնությամբ ԱՄՆ ՄՁԳ ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի շրջանակում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից և Արդարադատության նախարարության մասնակցությամբ իրականացվել է «Ազդարարի՛ր, Հայաստան» ծրագիրը (հղումը՝ <https://moj.am/article/4163>)(այսուհետ՝ Ծրագիր): Ծրագրի նպատակն էր իրականացնել ազդարարման համակարգի հանրային իրազեկում, համակարգի վերաբերյալ հասարակության տարբեր խմբերի ընկալումների փոփոխմանն ուղղված միջոցառումներ, ազդարարման միասնական հարթակից օգտվելու թվային գիտելիքների բարձրացում:

Ծրագրի շրջանակներում կազմակերպել է ազդարարման վերաբերյալ հանրային իրազեկման 21 դասընթաց Երևանում և Հայաստանի Լոռու, Շիրակի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերում՝ հետևյալ թիրախային լսարանների համար.

- 4 մարզի և Երևանի տեղական ինքնակառավարման մարմինների 20 համայնքային ծառայող, հնարավորության դեպքում՝ ազդարարման պատասխանատու անձինք,
- 4 մարզի և Երևանի 15 մասնավոր ընկերությունների 20 ներկայացուցիչ:

Վերոգրյալի համատեքստում՝ Ազդարարման համապետական արշավ դասընթացների 2-րդ փուլին մասնակցելու նպատակով՝ Էկոնոմիկայի նախարարությունը հավաքագրել է գործարար համայնքի ներկայացուցիչների վերաբերյալ տեղեկատվությանը, մասնակիցների ցանկը և տրամադրել Արդարադատության նախարարությանը:

Արդարադատության նախարարության կողմից «Հակակոռուպցիոն իրազեկման շաբաթ» միջոցառման շրջանակում՝ 2024 թվականի դեկտեմբերի 5-ին «Միջազգային մասնավոր ձեռնարկությունների կետրոնի» աջակցությամբ անցկացվել է «Մասնավոր հատվածում իրականացվող գործարար բարեվարքության քաղաքականությունը» խորագրով պանելային քննարկում (հղումը՝ <https://corpgov.am/hy/news/2024/12/09/participation-in-the-uniting-forces-to-prevent-corruption-campaign>), որի ընթացքում ներկայացվել է Կորպորատիվ կառավարման ոլորտում պետական քաղաքականության տեսլականը, նոր կորպորատիվ կառավարման կանոնագրքի հիմնական կարգավորումները: Քննարկվել են ոլորտի բարեփոխմանն ուղղությամբ Էկոնոմիկայի նախարարության նախաձեռնությունները, այդ թվում ընկերությունների մասին նոր օրենքի հայեցակարգային ուղղությունները, կորպորատիվ կառավարման կանոնագրքի կիրարկման հայեցակարգը և այլն:

Սույն գործողության շրջանակում 2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանության բաժինը սկսել է իրագործել գործարարություն իրականացնող անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ հանրային իրազեկման լայնածավալ աշխատանքներ (հղում՝ <https://ombuds.am/am/site/ViewNews/3082>):

Հաշվետու տարվա ընթացքում Մարդու իրավունքների աշտպանի կողմից կատարված մարզային այցերի ընթացքում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և հասարակական կազմակերպությունների հետ քննարկվել են գործարարություն իրականացնող անձանց իրավունքների պաշտպանությանը վերաբերելի հարցեր: Օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը կազմակերպել է «Կանանց իրավունքների պաշտպանություն և խթանում գործարարության ոլորտում» թեմայով մարզային քննարկում (<https://ombuds.am/am/site/ViewNews/3082>) Գեղարքունիքի մարզում, որին մասնակցել է մարզում բիզնես ոլորտում գործունեություն իրականացնելու ցանկություն ունեցող ավելի քան 40 կին, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և բռնի տեղահանված անձինք: Քննարկվել են գործարարության ոլորտում հանդիպող մարտահրավերները և այդ ոլորտում իրավունքների պաշտպանությանը վերաբերելի հարցերը:

Գործարարություն իրականացնող անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ հանրային իրազեկումներ իրականացվել են նաև զանգվածային լրատվության միջոցներով, մասնավորապես՝ Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը Հանրային ռադիոյի «Ձեր փաստաբանը» հաղորդաշարի եթերում (<https://ombuds.am/am/site/VideoGalleryView/1115>) ներկայացրել է գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանության ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը: Հանրային հեռուստաընկերության «Լուրեր» հաղորդաշարի շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը ներկայացրել է Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրության ընթացքում արձանագրված խնդիրը միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի իրազեկվածության պակասի և այդ ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից կազմված ու հրապարակված ուղեցույցի վերաբերյալ:

Հաշվետու տարվա ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մշակվել և հրապարակվել է միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի վերաբերյալ ուղեցույց (<https://www.ombuds.am/images/files/b6cb7a43c158e4cb4627979e69bd709a.pdf>), որի նպատակն է բարձրացնել միկրոձեռնարկատիրության սուբյեկտների իրազեկվածությունը միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի արտոնություններից օգտվելիս:

Մարդու իրավունքների պաշտպանը նաև ակտիվ համագործակցում է ՔՀԿ-ների ներկայացուցիչների հետ, օրինակ՝ «Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ-ի նախագահի հետ քննարկվել են մասնավոր հատվածի և պետական մարմինների միջև հարաբերություններում գործարարների իրավունքների պաշտպանության վերաբերյալ հարցեր (<https://ombuds.am/am/site/VideoGalleryView/1115>):

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Էկոնոմիկայի նախարարության կողմից Կանոնագրքին համապատասխանելու վերաբերյալ տարեկան հայտարարագրի ձևաչափը մասնավոր հատվածի հետ քննարկումների արդյունքում մշակելու նպատակով 2024 թվականի նոյեմբերի 28-ին և 29-ին կազմակերպվել է սեմինար-քննարկումներ ցուցակված իրական և ֆինանսական հատվածի ընկերությունների հետ: Հավաքագրված առաջարկների և խնդիրների հիման վրա նախատեսվում է իրականացնել տարեկան հայտարարագրի ձևաչափի մշակումը:

Արդարադատության նախարարության կողմից «Հակակոռուպցիոն իրազեկման շաբաթ» միջոցառման շրջանակում՝ 2024 թվականի դեկտեմբերի 5-ին «Միջազգային մասնավոր ձեռնարկությունների կետրոնի» աջակցությամբ անցկացվել է «Մասնավոր հատվածում իրականացվող գործարար բարեվարքության քաղաքականությունը» խորագրով պանելային քննարկում (հղումը՝ <https://corpgov.am/hy/news/2024/12/09/participation-in-the-uniting-forces-to-prevent-corruption-campaign>):

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը կազմակերպել է «Կանանց իրավունքների պաշտպանություն և խթանում գործարարության ոլորտում» թեմայով մարզային քննարկում (<https://ombuds.am/am/site/ViewNews/3082>) Գեղարքունիքի մարզում:

Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը Հանրային ռադիոյի «Ձեր փաստաբանը» հաղորդաշարի եթերում (<https://ombuds.am/am/site/VideoGalleryView/1115>) ներկայացրել է գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանության ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը: Հանրային հեռուստաընկերության «Լուրեր» հաղորդաշարի շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը ներկայացրել է Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրության ընթացքում արձանագրված խնդիրը միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի իրազեկվածության պակասի և այդ ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից կազմված ու հրապարակված ուղեցույցի վերաբերյալ:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
<p>Կազմակերպվել և իրականացվել են իրազեկվածության բարձրացման առնվազն 2 միջոցառումներ բիզնես համայնքի շրջանում՝ իրենց իրավունքների արդյունավետ միջոցների պաշտպանության և հակակոռուպցիոն մեխանիզմների վերաբերյալ:</p>	<p>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ Մամուլի հաղորդագրություններ ԶԼՄ հրապարակումներ</p>	<p>2024 թվականի 2-րդ կիսամյակում կազմակերպված «Հայաստանի նոր Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը, կիրարկման և հարկադրանքի հարցեր» թեմայով աշխատաժողովը, . Արդարադատության նախարարության նախաձեռնությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից և Արդարադատության նախարարության մասնակցությամբ իրականացված «Ազդարարի՛ր, Հայաստան» ծրագիրը և Արդարադատության նախարարության կողմից կազմակերպված և Էկոնոմիկայի նախարարության մասնակցությամբ «Հակակոռուպցիոն իրազեկման շաբաթի» միջոցառումն ուղղված է բիզնես համայնքի շրջանում իրազեկվածության բարձրացման և իրենց իրավունքների արդյունավետ հստակեցմանը:</p> <p>2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանության բաժինը սկսել է իրագործել գործարարություն իրականացնող անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ հանրային իրազեկման լայնածավալ աշխատանքներ:</p> <p>Հաշվետու տարվա ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից կատարված մարզային այցերի ընթացքում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և հասարակական</p>	<p>Կատարված է ամբողջությամբ</p>

		<p>կազմակերպությունների հետ քննարկվել են գործարարություն իրականացնող անձանց իրավունքների պաշտպանությանը վերաբերելի հարցեր:</p> <p>Գործարարություն իրականացնող անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ հանրային իրազեկումներ իրականացվել են նաև զանգվածային լրատվության միջոցներով, մասնավորապես՝ Հանրային ռադիոյի «Ձեր փաստաբանը» հաղորդաշարի եթերում ներկայացվել է գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանության ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը: Հանրային հեռուստաընկերության «Լուրեր» հաղորդաշարի շրջանակում ներկայացրել է Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրության ընթացքում արձանագրված խնդիրը միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի իրազեկվածության պակասի և այդ ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից կազմված ու հրապարակված ուղեցույցի վերաբերյալ:</p> <p>Հաշվետու տարվա ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մշակվել և հրապարակվել է միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի վերաբերյալ ուղեցույց:</p>	
--	--	--	--

Այլընտրանքային գնահատում

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ ԻՀԱ-ի կողմից ԱՆ-ի հետ համագործակցությամբ՝ ազդարարման, բարեվարքության, ինչպես նաև այդ հարցերում գործարար ոլորտին առնչվող առանձնահատկությունների և կարգավորումների վերաբերյալ Երևանում և ՀՀ Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի մարզերում կազմակերպվել են վերապատրաստումներ՝ 72 մասնավոր կազմակերպությունների 101 ներկայացուցիչների մասնակցությամբ:

Գործողությունը գնահատվում է կատարված:

4. Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքները

Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.7

ՆԵՐԴՆԵԼ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

2024 թվականի կատարողականի թիրախ

Ներդրվել են իրական շահառուների վերաբերյալ ներկայացված տեղեկությունների արժանահավատության ստուգման միասնական կառուցակարգեր:

1. Մշակվել է իրավաբանական անձանց ստուգման մեթոդաբանությունը և պատրաստվել են տեխնիկական կանոնակարգեր:
2. Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրերի լրացման ԿԿՀ-ի կողմից ընդունված ուղեցույցի մեջ սահմանվել են իրավաբանական անձի իրական շահառու հանդիսանալու բոլոր հիմքերը:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կատարող մարմին

Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր

Համակատարող մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը (Նախագծեր): Նախագծերը ներկայացվել են շահագրգիռ մարմիններին կարծիքի: Ստացված կարծիքների հիման վրա Նախագծերը լրամշակվել են և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: Միաժամանակ Նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության թվայնացման խորհրդի կողմից: Ներկայումս այն գտնվում է լրամշակման փուլում և առաջիկայում կրկին կներկայացվի Վարչապետի աշխատակազմ:

Նախագծերով փաթեթով հստակեցվում է, որ իրական շահառուների վերաբերյալ ներկայացված տեղեկությունների արժանահավատության ստուգումն Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից իրականացվում է վարչական վարույթներ հարուցելու միջոցով: Նախագծով նաև հստակ սահմանվում են վարչական վարույթների առանձնահատկությունները, տեսակները, իրավաբանական անձանց ռիսկայնության չափանիշները (red flagging): Այսպիսով, ապահովվում է իրական շահառուների վերաբերյալ ներկայացված տեղեկությունների արժանահավատության ստուգման միասնական կառուցակարգերի առկայությունը:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախագծերը ներկայացվել են հանրային քննարկման իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am հարթակում (հղումը՝ <https://www.e-draft.am/ru/projects/7217>):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Ներդրվել են իրական շահառուների վերաբերյալ ներկայացված	Իրավական ակտի առկայություն	Նախագծերը մշակվել և ներկայացվել են շահագրգիռ մարմիններին կարծիքի: Ստացված կարծիքների հիման վրա լրամշակվել են և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ:	Կատարված է մասնակի:

<p>տեղեկությունների արժանահավատության ստուգման միասնական կառուցակարգեր:</p> <p>Մշակվել է իրավաբանական անձանց ստուգման մեթոդաբանությունը և պատրաստվել են տեխնիկական կանոնակարգեր:</p> <p>Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրերի լրացման ԿԿՀ-ի կողմից ընդունված ուղեցույցի մեջ սահմանվել են իրավաբանական անձի իրական շահառու հանդիսանալու բոլոր հիմքերը:</p>		<p>Նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության թվայնացման խորհրդի կողմից: Ներկայումս այն գտնվում է լրամշակման փուլում և առաջիկայում կրկին կներկայացվի Վարչապետի աշխատակազմ:</p>	
<p>Այլընտրանքային գնահատում</p>			

Թեև որոշակի նախապատրաստական աշխատանքներ կատարվել են օրենսդրական նախագծերի մշակման ուղղությամբ, սակայն դրանք ներկայացնում են միայն գործընթացի սկզբնական փուլը և էականորեն թերի են թիրախի ամբողջական իրականացման տեսանկյունից: Թիրախի երեք հիմնական բաղադրիչներից ոչ մեկը լիարժեք չի իրականացվել, իսկ երկու բաղադրիչների՝ մեթոդաբանության մշակման և ուղեցույցի փոփոխության վերաբերյալ գեկույցում տեղեկություն չկա:

Իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների արժանահավատության ստուգման կառուցակարգերի ներդրման թիրախային գործողությունը հստակորեն չի հասել այն մակարդակին, որն անհրաժեշտ է «մասնակի կատարված» գնահատականի համար: Ուստի, հիմնվելով ներկայացված տեղեկատվության վրա և համաձայն մշտադիտարկման մեթոդաբանության՝ գործողությունը գնահատվում է որպես «Կատարված չէ»:

4. Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.8

ԱՐԴԻԱԿԱՆԱՑՆԵԼ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Ապահովվել է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի և իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգի արդյունավետ գործարկումը, երաշխավորվել է տվյալների մշակման, վերլուծության, որոնման, ծանուցումների ինքնաշխատ ուղարկման, ըստ ռիսկայնության չափանիշների իրավաբանական անձանց նշման (red flagging), վերլուծական, մեծածավալ (bulk) բաց տվյալների գեներացման հնարավորությունը: 1. Լուծվել են գործնականում ծագած խնդիրները (բացառվել են համակարգի տեխնիկական խափանումները, էլեկտրոնային հայտարարագրերում ապահովվել է օրենսդրությամբ պահանջվող տվյալների պարտադիր լրացումը, անփութության սխալները բացառելու նպատակով ներդրվել են ինելացի գործիքներ, հնարավոր է դարձնել ֆիզիկական անձանց՝ հայտարարագիր ներկայացնելու առցանց լիազորումը:

2. Իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգը գործում է բաց տվյալների (open contracting data standards), բաց աղբյուրների (open source) ստանդարտներով և user-friendly (օգտագործողին հարմար) և machine readable (մեքենայական ընթերցվող) ձևաչափով:

Ստուգման միջոց

Գործարկվող էլեկտրոնային գործիքներ

Մամուլի հաղորդագրություններ

ՁԼՄ հրապարակումներ

Կատարող մարմին

Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր

Համակատարող մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարություն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

ՀՀ կենտրոնական դեպոզիտարիա

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Մշակվել և քննարկման է ներկայացվել «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը: Օրենսդրական նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության թվայնացման խորհրդի կողմից: Ներկայումս այն գտնվում է լրամշակման փուլում և առաջիկայում կներկայացվի Վարչապետի աշխատակազմ:

Ընթացքի մեջ են տեղեկատվական նոր համակարգի ստեղծման աշխատանքները, որը փոխարինելու է e-register.am համակարգին ձեռնարկատիրական գործունեության գրանցման գործառնություն իրականացման հարցում և կարող է ծառայել որպես հարթակ՝ ձեռնարկատիրական գործունեության հետ կապված բոլոր գործառնությունների իրականացումն ապահովելու նպատակով: Առաջարկվող օրենսդրական փոփոխությունների արդյունքում հայտարարագիր չներկայացրած իրավաբանական անձանց էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվելու ենվարչական վարույթ հարուցելու, նախագգուշացում կիրառելու կամ վարույթը կարճելու մասին համապատասխան որոշումները: Մնացած հայտարարագրերի մասով առաջարկվել է հետևալ կարգավորումը. օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացնելու պարտականության կատարումը ստուգելու նպատակով Գործակալությունը յուրաքանչյուր տարի՝ հաշվի առնելով իրավաբանական անձանց գործունեության ռիսկայնության չափանիշները, կարող է հարուցել վարչական վարույթներ:

Մշակվել, շրջանառվել և Կառավարության հաստատմանն են ներկայացվել ««Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը: Նախագծերով հստակ սահմանվում են Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից իրական շահառուների վարչական վարույթի վերաբերյալ գործերը քննելու

որոշակի առանձնահատկություններ՝ նախատեսելով, որ վարչական վարույթը իրականացվում է էլեկտրոնային եղանակով, ինչպես նաև սահմանվում են իրավաբանական անձանց ռիսկայնության չափանիշները (red flagging), որոնց վերաբերյալ ևս էլեկտրոնային եղանակով իրականացվելու է հատուկ նշում համակագում: Ինչ վերաբերում է ծանուցումները ինքնաշխատ եղանակով իրականացնելու ռազմավարական պահանջին, ապա Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդում քննարկվում է ծանուցումների իրականացման միասնական համակարգի ներդրման հնարավորության հարցը, որի ներդրումից հետո հնարավոր կլինի ապահովել նաև Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից ծանուցումները ինքնաշխատ եղանակով ուղարկելու պահանջը: Այսպիսով՝ օրենսդրական փոփոխությունների ընդունումից հետո սեղմ ժամկետներում կիրականացվեն էլեկտրոնային համակարգում համապատասխան կարգաբերումները՝ ապահովելով վարչական վարույթների էլեկտրոնային եղանակով հարուցումը, ըստ ռիսկայնության չափանիշների իրավաբանական անձանց նշումը (red flagging), ինչպես նաև վերլուծական, մեծածավալ տվյալների գներացման հնարավորությունը:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը ներկայացվել է հանրային քննարկման իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am հարթակում (հղումը՝ <https://www.e-draft.am/projects/7217>):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Ապահովվել է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի և իրական շահառուների հայտարարագրման	Գործարկվող էլեկտրոնային գործիքներ Մամուլի հաղորդագրություններ ԶԼՄ հրապարակումներ	Մշակվել, շրջանառվել և Կառավարության հաստատմանն են ներկայացվել «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ	Կատարված է մասնակի

<p>Էլեկտրոնային համակարգի արդյունավետ գործարկումը, երաշխավորվել է տվյալների մշակման, վերլուծության, որոնման, ծանուցումների ինքնաշխատ ուղարկման, ըստ ռիսկայնության չափանիշների իրավաբանական անձանց նշման (red flagging), վերլուծական, մեծածավալ (bulk) բաց տվյալների գեներացման հնարավորությունը:</p>		<p>Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը: Նախագծերով սահմանվում են Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից իրական շահառուների վարչական վարույթի վերաբերյալ գործերը քննելու որոշակի առանձնահատկություններ՝ նախատեսելով, որ վարչական վարույթը իրականացվում է էլեկտրոնային եղանակով, ինչպես նաև սահմանվում են իրավաբանական անձանց ռիսկայնության չափանիշները (red flagging), որոնց վերաբերյալ ևս էլեկտրոնային եղանակով իրականացվելու է հատուկ նշում համակազում:</p>	
--	--	---	--

Այլընտրանքային գնահատում

Իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգի արդիականացման և արդյունավետ գործարկման վերաբերյալ հարկ է նշել, որ համակարգը պետք է ապահովեր տվյալների մշակում, վերլուծություն, որոնում, ծանուցումների ինքնաշխատ ուղարկում, ռիսկային իրավաբանական անձանց նշում (red flagging) և վերլուծական, մեծածավալ տվյալների գեներացում:

Մշակվել են օրենսդրական նախագծեր, որոնք սահմանում են էլեկտրոնային եղանակով վարչական վարույթ

իրականացնելու հիմքերը

Նախագծերը դեռևս չեն ընդունվել: Ընթացքի մեջ են տեղեկատվական համակարգի կատարելագործման աշխատանքները: Այս բաղադրիչը փաստացի չի իրականացվել, քանի որ ոչ միայն չեն ընդունվել անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները, այլև տեղեկատվական համակարգի արդիականացումը չի իրականացվել:

Իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգը պետք է գործեր բաց տվյալների, բաց աղբյուրների ստանդարտներով, օգտագործողին հարմար և մեքենայական ընթերցվող ձևաչափով: Բացակայում է որևէ տեղեկատվություն բաց տվյալների և բաց աղբյուրների ստանդարտներով համակարգի գործարկման մասին:

4. Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքները

Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.9

ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՀԱՐԿԱՑԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ ՍՏՎԵՐԱՑԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԻ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ ԵՎ ՄԵՂՄԱՑՆԵԼ ԲԻԶՆԵՍ-ՀԱՐԿԱՑԻՆ ՄԱՐՄԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՈՒԲՅԵԿՏԻՎԻԶՄԸ ՈՒ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Կատարելագործվել են գործող էլեկտրոնային գործիքակազմերը կամ ներդրվել են «խելացի» հակակոռուպցիոն նոր էլեկտրոնային գործիքակազմեր:

Ստուգման միջոց

Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ

Մամուլի հաղորդագրություններ

ԶԼՄ հրապարակումներ

Կատարող մարմին

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (համաձայնությամբ)

Համակատարող մարմին

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

2021 թվականի մարտի 3-ին ընդունված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ՀՕ-87-Ն օրենքով, համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված հարկային մարմնի քննությանը ենթակա

հողվածներով հարկ վճարողների պաշտոնատար անձանց կատարած իրավախախտումների գործերով վարույթները հարուցվում և վարվում են հարկային մարմնի էլեկտրոնային համակարգի միջոցով:

2024 թվականի ապրիլի 16-ից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված հարկային մարմնի քննությանը ենթակա հողվածներով հարկ վճարողների պաշտոնատար անձանց կատարած իրավախախտումների գործերով վարույթները հարուցվում և վարվում են հարկային մարմնի էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով: Մասնավորապես՝ վարույթի շրջանակում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն չի կազմվում, Համակարգ ներբեռնված ցանկերում ներառված հարկ վճարողներն էլեկտրոնային եղանակով ծանուցվում են հարկային մարմնի կողմից՝ վարչական վարույթ հարուցելու վերաբերյալ, հնարավորություն ունենում ներկայացնել դիրքորոշում՝ այդ կերպ իրացնելով լաված լինելու իրավունքը: Վարույթի հետ կապված գործընթացները Համակարգում ձևավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կանոնակարգումներին համապատասխան: Վարույթի շրջանակներում վարչական ակտն ընդունվում է էլեկտրոնային եղանակով և ստորագրվում վարույթ իրականացնող պաշտոնատար անձի կողմից էլեկտրոնային ստորագրությամբ:

Արդյունքում, վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթներն իրականացվում են առավել օպտիմալ, առանց մարդկային գործոնի ազդեցության: Վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի իրականացման գործընթացում հարկ վճարողների պաշտոնատար անձանց հետ շփումների կրճատման արդյունքում նվազեցվել են սուբյեկտիվիզմը և կոռուպցիոն ռիսկերը, կրճատվել վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթների իրականացման վարչական ծախսերը:

2024 թվականի փետրվարի 28-ին կատարված օրենսդրական փոփոխություններով, մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-104-Ն օրենքով (Օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից) նախատեսվել է չվճարված հարկային պարտավորությունների առաջացման դեպքում նշված պարտավորությունների գանձման նպատակով արգելանք կիրառելու ընթացակարգ, որի համաձայն հարկ վճարողի գույքի վրա արգելանք կիրառելուց հետո 30-օրյա ժամկետում հարկային պարտավորությունները չդադարելու դեպքում հարկային մարմինը չվճարված հարկային պարտավորությունները գանձելու և արգելանք կիրառելու մասին որոշումը և չկատարված պարտավորության չափի վերաբերյալ տեղեկատվությունն էլեկտրոնային եղանակով կներկայացնի Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն՝ հարկադիր կատարման նպատակով:

ՊԵԿ նախագահի 2018 թվականի մարտի 20-ի N 181-Ն և Ֆինանսների նախարարի 2018 թվականի մարտի 30-ի N 126-Ն համատեղ հրամանում կատարված փոփոխություններով 2024 թվականի ապրիլի 25-ից ներդրվել է նոր համակարգ, որի միջոցով մի քանի

աղբյուրից հաշվարկված և փոխանցված սոցիալական վճարների առավելագույն չափը գերազանցող գումարները ֆիզիկական անձանց վերադարձվում են ինքնաշխատ եղանակով և հարկային մարմին դիմելու անհրաժեշտություն այլևս բացակայում է:

Մի քանի աղբյուրից հաշվարկված և փոխանցված սոցիալական վճարների առավելագույն չափը գերազանցող գումարները վերադարձվում են այն ֆիզիկական անձանց, որոնք մի քանի գործատուների մոտ աշխատում են որպես վարձու աշխատող, կամ, միաժամանակ, հանդիսանում են վարձու աշխատող և անհատ ձեռնարկատեր կամ նոտար ու նրանց համար հաշվարկված և փոխանցված սոցիալական վճարի ընդհանուր գումարը գերազանցում է սահմանված առավելագույն չափը: Ի դեպ, երբ շահառուն ցանկանում է, որ գումարները փոխանցվեն իր նախընտրած վավեր հաշվեհամարին, ապա կարող է այցելել ՊԵԿ սպասարկման ցանկացած սրահ կամ հաշվեհամարը ներկայացնել էլեկտրոնային եղանակով՝ Էլեկտրոնային հարցումների միասնական www.e-request.am հարթակի միջոցով:

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի տվյալների հիման վրա մասնակիցների մեկ բանկային հաշվեհամարի կամ մասնակիցների կողմից տրամադրված բանկային հաշիվների պատկանելության եվ վավերականության վերաբերյալ տեղեկության ստացման կարգը սահմանելու մասին» Կենտրոնական բանկի խորհուրդի 2023թ. օգոստոսի 8-ի N° 125-Լ և ՊԵԿ նախագահի 2023թ. օգոստոսի 14-ի N° 344 համատեղ որոշման համաձայն ֆիզիկական անձանց բանկային հաշվեհամարների վերաբերյալ տեղեկատվության ստացումն իրականացվում է առցանց եղանակով:

Արդյունքում՝ հաշվեհամարի բացակայության պատճառով նախկինում չվերադարձված 20534 ֆիզիկական անձի հաշվեհամարներին նոր համակարգի միջոցով արդեն իսկ փոխանցվել է ավելի քան 647,5 մլն դրամ վերադարձման ենթակա սոցիալական վճարի գումար:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը ներկայացվել է հանրային քննարկման իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am հարթակում (հղումը՝ <https://www.e-draft.am/ru/projects/5570>):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը

<p>Կատարելագործվել են գործող էլեկտրոնային գործիքակազմերը կամ ներդրվել են «խելացի» հակակոռուպցիոն նոր էլեկտրոնային գործիքակազմեր:</p>	<p>Իրավական ակտի առկայություն</p>	<p>2021 թվականի մարտի 3-ին ընդունված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսվել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված հարկային մարմնի քննությանը ենթակա հոդվածներով հարկ վճարողների պաշտոնատար անձանց կատարած իրավախախտումների գործերով վարույթները հարուցվում և վարվում են հարկային մարմնի էլեկտրոնային համակարգի միջոցով:</p> <p>2024 թվականի ապրիլի 16-ից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված հարկային մարմնի քննությանը ենթակա հոդվածներով հարկ վճարողների պաշտոնատար անձանց կատարած իրավախախտումների գործերով վարույթները հարուցվում և վարվում են հարկային մարմնի էլեկտրոնային համակարգի միջոցով:</p> <p>2024թ. փետրվարի 28-ին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում, նախատեսվել է չվճարված հարկային պարտավորությունների առաջացման դեպքում նշված պարտավորությունների գանձման նպատակով արգելանք կիրառելու ընթացակարգ, մասնավորապես՝ հարկ վճարողի գույքի վրա արգելանք կիրառելուց հետո 30-օրյա ժամկետում հարկային պարտավորությունները չդադարելու դեպքում հարկային մարմինը չվճարված հարկային պարտավորությունները գանձելու և արգելանք կիրառելու մասին որոշումը և չկատարված պարտավորության չափի վերաբերյալ տեղեկատվությունն էլեկտրոնային եղանակով կներկայացնի Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն՝ հարկադիր կատարման նպատակով:</p>	<p>Կատարված է ամբողջությամբ:</p>
--	-----------------------------------	---	----------------------------------

		<p>2024 թվականի ապրիլի 25-ից ներդրված նոր համակարգի միջոցով մի քանի աղբյուրից հաշվարկված և փոխանցված սոցիալական վճարների առավելագույն չափը գերազանցող գումարները ֆիզիկական անձանց արդեն վերադարձվում են ինքնաշխատ եղանակով և հարկային մարմին ղիմելու անհրաժեշտություն այլևս չկա:</p> <p>Ֆիզիկական անձանց բանկային հաշվեհամարների վերաբերյալ տեղեկատվության ստացումն իրականացվում է առցանց եղանակով: Արդյունքում՝ հաշվեհամարի բացակայության պատճառով նախկինում չվերադարձված 20534 ֆիզիկական անձի հաշվեհամարներին նոր համակարգի միջոցով արդեն իսկ փոխանցվել է ավելի քան 647,5 մլն դրամ վերադարձման ենթակա սոցիալական վճարի գումար:</p> <p>Մի քանի աղբյուրից հաշվարկված և փոխանցված սոցիալական վճարների առավելագույն չափը գերազանցող գումարները վերադարձվում են այն ֆիզիկական անձանց, որոնք մի քանի գործատուների մոտ աշխատում են որպես վարձու աշխատող, կամ, միաժամանակ, հանդիսանում են վարձու աշխատող և անհատ ձեռնարկատեր կամ նոտար ու նրանց համար հաշվարկված և փոխանցված սոցիալական վճարի ընդհանուր գումարը գերազանցում է սահմանված առավելագույն չափը: Ի դեպ, երբ շահառուն ցանկանում է, որ գումարները փոխանցվեն իր նախընտրած վավեր հաշվեհամարին, ապա կարող է այցելել ՊԵԿ սպասարկման ցանկացած սրահ կամ հաշվեհամարը ներկայացնել էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային հարցումների միասնական www.e-request.am հարթակի միջոցով:</p>	
Այլընտրանքային գնահատում			

Էլեկտրոնային համակարգերի ներդրումն ինքնին կարող է դրական համարվել, սակայն առանց պատշաճ վարչարարական երաշխիքների, դրանք կարող են ստեղծել նոր ռիսկեր և չարաշահումների հնարավորություններ: Հետևաբար, նոր համակարգերը պահանջում են հետագա կատարելագործում՝ վարչարարության սկզբունքների և քաղաքացիների իրավունքների պաշտպանության ապահովման նպատակով: Համաձայնել գործողության կատարման կարգավիճակի գնահատականի հետ

4. Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքները

Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.10

**ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ
ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ**

2024 թվականի կատարողականի թիրախ

Մշակվել է համապատասխան օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որով կբացառվեն պետական բարձրաստիճան պաշտոնյաների և նրանց ընտանիքի անդամների, վերջիններիս հետ փոխկապակցված անձանց ուղղակի և անուղղակի մասնակցությունը պետական գնումների գործընթացներում:

Օրենսդրական փաթեթը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կատարող մարմին

ՀՀ ֆինանսների նախարարություն

Համակատարող մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Ֆինանսների նախարարությունը նախաձեռնել է «Գնումների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակման գործընթաց: Նախագծի հայեցակարգը (կոնցեպտը) ներկայացվել է Վարչապետին և հավանության արժանացել: Նախագծով նախատեսվում է ներդնել շահերի բախման ավելի առարկայական գործիքակազմ:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախագծի կոնցեպտը քննարկվել է շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
<p>Մշակվել է համապատասխան օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որով կբացառվեն պետական բարձրաստիճան պաշտոնյաների և նրանց ընտանիքի անդամների, վերջիններիս հետ փոխկապակցված անձանց ուղղակի և անուղղակի մասնակցությունը պետական գնումների գործընթացներում: Օրենսդրական փաթեթը</p>	<p>Իրավական ակտի առկայություն</p>	<p>Ֆինանսների նախարարությունը նախաձեռնել է «Գնումների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակման գործընթաց: Նախագծով նախատեսվում է ներդնել շահերի բախման ավելի առարկայական գործիքակազմ: Պետական գնումների գործընթացներում պետական բարձրաստիճան պաշտոնյաների և նրանց ընտանիքի անդամների, վերջիններիս հետ փոխկապակցված անձանց ուղղակի և անուղղակի մասնակցությունը բացառող համապատասխան օրենսդրական փոփոխությունները դեռևս ընթացքում են: Նշյալի հաշվառմամբ՝ գործողության կարգավիճակը գնահատվել է որպես մասնակի կատարված:</p>	<p>Կատարված է մասնակի</p>

հաստատվել է ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ՀՀ ԱԾ-ի ընդունմանը:			
Այլընտրանքային գնահատում			
<p>Շահերի բախման կառուցակարգերի վերաբերյալ մշակված նախագծում «շահերի բախում» հասկացության և փոխկապակցված անձանց շրջանակի հստակեցումը դեռևս գտնվում են քննարկման փուլում: Բացի այդ, դեռևս պարզ չէ, թե արդյոք իրականացվել է կամ նախատեսվում է քննարկում իրավաբանական անձանց՝ կոռուպցիոն հանցագործությունների համար պատասխանատվություն նախատեսելու մասին:</p> <p>Գործողությունը գնահատվում է մասնակի կատարված:</p>			

4. Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքները:

Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.11

ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՎԵՐՀԱՆՈՂ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՔՐԻՆԻՆԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ, ՄՇԱԿԵԼ ԱՅԴ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՑՑՆԵՐ

2024 թվականի կատարողականի թիրախ

Մշակվել է տնտեսական շուկայում իրավախախտումները վերհանող համակարգչային ապահովման սքրինինգային ծրագրերի և այլ գործիքների տեխնիկական բնութագիրը:

Էլեկտրոնային գործիքակազմերը ներդրվել են և կիրառվում են պրակտիկայում:

Ստուգման միջոց

Տեխնիկական բնութագրերի առկայություն

Կիրառվող էլեկտրոնային գործիքներ

Ուղեցույցների առկայություն

Կատարող մարմին

Մրցակցության պաշտպանության հանձնաժողով (համաձայնությամբ)

Համակատարող մարմին

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից իրականացվել են Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի գործերի կառավարման էլեկտրոնային համակարգի և պաշտոնական կայքի կատարելագործման, արդիականացման աշխատանքներ:

Մասնավորապես՝

• կատարելագործվել է գների մոնիթորինգի գործիքակազմը, ինչը նպատակ ունի գների չհիմնավորված բարձրացման, իջեցման կամ պահպանման հնարավոր դեպքերը Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից վերահսկելու և կանխելու,

• կատարելագործվել է մի շարք պետական մարմինների փոխգործելիությունը Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի էլեկտրոնային համակարգի հետ, մասնավորապես ներդրվել են չհայտարարագրված համակենտրոնացումների բացահայտման նոր գործիքներ,

• ապահովվել է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի որոշումների կատարումների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հնարավորությունը՝ հարթակի յուրաքանչյուր օգտատիրոջ մոտ իր մասով համապատասխան պանակներին հասանելիության տրամադրման միջոցով,

• մշակվել է արտաքին օգտատերերի համար էլեկտրոնային հաղորդակցության հարթակի օգտագործման ուղեցույց:

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի գործերի կառավարման էլեկտրոնային համակարգի կատարելագործումն ու արդիականացումը բարձրացնում են Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի վերահսկողական և կանխարգելիչ լիազորությունների իրականացման արդյունավետությունը: Նոր գործիքակազմերը կնպաստեն գործերի ավելի արագ և արդյունավետ իրականացմանը և կառավարմանը, վարչարարության կրճատմանը, ռեսուրսների առավել օպտիմալ օգտագործմանը, Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի գործունեության թափանցիկության բարձրացմանը:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Գործողության շրջանակներում հանրային կամ այլ քննարկումներ չեն իրականացվել:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Մշակվել է տնտեսական շուկայում իրավախախտումները վերհանող	Տեխնիկական բնութագրերի առկայություն, կիրառվող	Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի գործերի կառավարման էլեկտրոնային համակարգի և պաշտոնական կայքի արդիականացման տեխնիկական առաջադրանքը կատարված է:	Կատարված է ամբողջությամբ

համակարգչային ապահովման սփրինինգային ծրագրերի և այլ գործիքների տեխնիկական բնութագիրը, Էլեկտրոնային գործիքակազմերը ներդրվել են և կիրառվում են պրակտիկայում:	Էլեկտրոնային գործիքներ, Ուղեցույցների առկայություն		
Այլընտրանքային գնահատում			
Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է «կատարվել է»:			

4. Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքները

Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.13

**ՇԱՐՈՒՆԱԿԱԲԱՐ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ**

2024 թվականի կատարողականի թիրախ

Մշակվել է առկա խելացի գործիքակազմերի կամ նոր համակարգերի ներդրմանն ուղղված տեխնիկական բնութագիր:

Ստուգման միջոց

Մամուլի հաղորդագրություններ

ԶԼՄ հրապարակումներ

Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային զեկույցներ

Կատարող մարմին

ՀՀ ֆինանսների նախարարություն

Համակատարող մարմին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

ՀՀ արդարադատության նախարարություն

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Ավարտվել են էլեկտրոնային գնումների նոր համակարգի տեխնիկական բնութագրի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մշակման աշխատանքները: Նախագիծը 2023 թվականի մայիս ամսին դրվել է հանրային քննարկման, ինչպես նաև պատվիրատուների, քաղաքացիական հասարակության և գործարար հատվածի ներկայացուցիչների հետ մայիս-հունիս ամիսներին կազմակերպվել են դրա քննարկման և խմբագրման աշխատանքները: Տեխնիկական բնութագիրը քննարկվել և հավանության է արժանացել Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի կողմից: Մրցույթի կազմակերպման նպատակով մշակվել և հաստատվել է «Գնման գործընթացի կազմակերպման առանձնահատկություններ սահմանելու մասին» ՀՀ

կառավարության որոշում, որից հետո հայտարարվել է երկփուլ մրցույթ: Նախաորակավորվել են չորս կազմակերպություններ՝ AWS, Oracle, Ebidtopay և European Dynamics, որոնց հետ ներկայումս բանակցություններ են իրականացվում տեխնիկական առաջադրանքի և որակավորման չափանիշների գնահատման մեթոդաբանության վերաբերյալ:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Տեխնիկական բնութագրի նախագիծը դրվել է հանրային քննարկման, նաև քննարկվել է պատվիրատուների, քաղաքացիական հասարակության և գործարար հատվածի ներկայացուցիչների հետ:

Նախագիծը 2023 թվականի մայիսի 2-ին ներկայացվել է հանրային քննարկման իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am հարթակում (<https://www.e-draft.am/projects/5680>), ինչպես նաև պատվիրատուների, քաղաքացիական հասարակության և գործարար հատվածի ներկայացուցիչների հետ մայիս-հունիս ամիսներին կազմակերպվել են քննարկումներ:

«Գնման գործընթացի կազմակերպման առանձնահատկություններ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշումը ներկայացվել է հանրային քննարկման իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am հարթակում (<https://www.e-draft.am/projects/6494>):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Մշակվել է առկա խելացի գործիքակազմերի կամ նոր համակարգերի ներդրմանն ուղղված տեխնիկական բնութագիր:	Մամուլի հաղորդագրություններ ՁԼՄ հրապարակումներ Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ	Ավարտվել են էլեկտրոնային գնումների նոր համակարգի տեխնիկական առաջադրանքի նախագծի մշակման աշխատանքները: Նախագիծը դրվել է հանրային քննարկման, ինչպես նաև պատվիրատուների, քաղաքացիական հասարակության և գործարար հատվածի ներկայացուցիչների հետ մայիս-հունիս ամիսներին կազմակերպվել են դրա քննարկման և խմբագրման աշխատանքները: Տեխնիկական առաջադրանքը քննարկվել և հավանության է արժանացել Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի	Կատարված է ամբողջությամբ

		<p>կողմից: Մրցույթի կազմակերպման նպատակով մշակվել և հաստատվել է «Գնման գործընթացի կազմակերպման առանձնահատկություններ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում, որից հետո հարյատարարվել է երկփուլ մրցույթ: Նախատրակավորվել են չորս կազմակերպություններ՝ AWS, Oracle, Ebidtopay և European Dynamics, որոնց հետ ներկայումս բանակցություններ են իրականացվում տեխնիկական առաջադրանքի և որակավորման չափանիշների գնահատման մեթոդաբանության վերաբերյալ:</p>	
Այլընտրանքային գնահատում			
Համաձայնել գնահատման կարգավիճակի հետ:			

4. Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքները

Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.14

ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ ԵՎ ԲԱՐԵԼԱՎԵԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ՝ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՈԼՈՐՏԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՎ ԱՄՐԱՊԵՆԴՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

2024 թվականի կատարողականի թիրախ

Մշակվել է իրազեկման միջոցառումների պլան՝ հանրության և մասնավոր ոլորտի շրջանում գնումների գործընթացի վերաբերյալ վստահության բարձրացման և ամրապնդման ուղղությամբ:

Կազմակերպվել և իրականացվել են առնվազն 4 իրազեկման արշավներ՝ այդ թվում նաև ՋԼՄ-ների և սոցիալական հարթակների միջոցով:

Ստուգման միջոց

Մամուլի հաղորդագրություններ

ՋԼՄ հրապարակումներ

Կատարող մարմին

Ֆինանսների նախարարություն

Համակատարող մարմին

Արդարադատության նախարարություն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Ֆինանսների նախարարության կողմից մշակվել է իրազեկման միջոցառումների պլան, համաձայն որի՝ Քաղաքացիական հասարակության և լրագրողների համար պարզեցվել է գնումների գործընթացի վերահսկողությունը:

Քաղաքացիական հասարակության և լրագրողական համայնքի թիրախային միջոցառումներ են հանդիսանալու՝

1. Կլոր սեղաններ՝ վերահսկողության գործիքի կիրառման արդյունավետության վերաբերյալ

2. Վերապատրաստումներ օրենսդրական կարգավորումների վերաբերյալ

3. Հանրության հետ արդյունավետ կոմունիկացիայի ռազմավարությունը թիրախավորող քննարկումներ՝ ապահովելով իրական խնդիրների բացահայտումը և տարանջատելով պետության և մասնավորի ձախողումները:

Մասնավոր հատվածի համար թիրախային միջոցառումներ են հանդիսանալու՝

1. Վերապատրաստումներ տեխնիկական կարողությունների մասով՝ ընթացակարգեր, իրավունքներ, պարտավորություններ և թվային համակարգի կիրառում:

2. Քննարկումներ են իրականացվելու հաճախ կրկնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները ավելի արդյունավետ դարձնելու և որակական չափանիշների բարելավման ուղղությամբ:

3. Կազմակերպվելու են կլոր սեղաններ գործարար համայնքի հետ՝ տրամադրելով հարթակ իրենց անհանգստացնող խնդիրները բարձրացնելու:

Գործարկվել է Ֆինանսների նախարարության տեղեգրամյան բոտ-ալիքը (https://t.me/raminfin_bot), որի միջոցով հաջողվել է բարձրացնել հանրության իրազեկվածությունը պետական գնումների համակարգին վերաբերող հարցերի մասին: Շահառուները հնարավորություն են ունեցել ավելի արագ և հասանելի եղանակով ստանալ ամենահաճախ տրվող հարցերի պատասխանները:

Միաժամանակ, Ֆինանսների նախարարության կողմից 2024 թվականի ընթացքում իրականացվել է շուրջ 17 հանրային իրազեկման միջոցառումներ, այդ թվում՝ հարցազրույցներ, քննարկումներ, սեմինարներ և այլն:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

2024թ. հունիսի 22-ից 23-ը Աղվերանում «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի հետ համատեղ լրագրողների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների համար «Պետական գնումների դաշտային վերահսկողություն» թեմայով կազմակերպվել է սեմինար քննարկում: Նշված սեմինարի ընթացքում ներկայացվել են շինարարական աշխատանքների և դեղերի գնումների հանրային վերահսկողության առանձնահատկությունները, գնման պայմանագրերի արդյունքների ընդունման գործընթացին քաղաքացիական հասարակության և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների մասնակցության ապահովման նոր պայմանները:

2024 թվականի սեպտեմբերի 14-ից-15-ը Ծաղկաձորում «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ- Freedom House-ի աջակցությամբ և կազմակերպել էր «Հակակոռուպցիոն բարեփոխումների ընթացքը Հայաստանում» խորագրով սեմինարը (<https://www.facebook.com/share/p/dDn2cLpUSFFsQThy/>)՝ նվիրված Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների ընթացքին:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
<p>Մշակվել է իրազեկման միջոցառումների պլան՝ հանրության և մասնավոր ոլորտի շրջանում գնումների գործընթացի վերաբերյալ վստահության բարձրացման ամրապնդման ուղղությամբ:</p> <p>Կազմակերպվել է իրականացվել առնվազն 4 իրազեկման արշավներ՝ յոթ թվում նաև ԶԼՄ-</p>	<p>Մամուլի հաղորդագրություններ ԶԼՄ հրապարակումներ</p>	<p>Ֆինանսների նախարարության կողմից իրականացվել է շուրջ 17 հանրային իրազեկման միջոցառումներ, այդ թվում՝ հարցազրույցներ, քննարկումներ, սեմինարներ և այլն:</p>	<p>Կատարված է ամբողջությամբ</p>

ների և սոցիալական հարթակների միջոցով:			
---------------------------------------	--	--	--

Այլընտրանքային գնահատում

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ իրազեկման միջոցառումների պլանը հասանելի չէր բաց աղբյուրներում: Առանց այս փաստաթղթին հասանելիության հնարավոր չէ գնահատել, թե որքանով է այն եղել համապարփակ, արդյունավետ ու միտված գնումների ոլորտում հանրային վստահության բարձրացմանը:

Բացի այդ, տրամադրված չեն հետևյալ էական տվյալները 17 հանրային իրազեկման միջոցառումների վերաբերյալ՝

- չի հստակեցվել, թե քանի հարցազրույց, քննարկում, սեմինար և այլ տեսակի միջոցառումներ են անցկացվել, դրանց տևողությունն ու մասշտաբը:

- Բացակայում է տեղեկատվությունն այն մասին, թե ինչ տեսակի հարթակների (առցանց, տպագիր մամուլ, ռադիո, հեռուստատեսություն) և կոնկրետ որ ՁԼՄ-ների ու սոցիալական ցանցերի միջոցով են իրականացվել միջոցառումները:

- Բացակայում է տեղեկությունը դիտումների, մասնակիցների քանակի, լսարանի ներգրավվածության աստիճանի վերաբերյալ, որը կօգնի գնահատել միջոցառումների ազդեցությունը:

- Բացակայում է տեղեկությունը կազմակերպված քննարկումներին ու միջոցառումներին ներգրավված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և մասնավոր հատվածի ներկայացուցիչների վերաբերյալ:

- Չեն ներկայացվել որևէ ցուցանիշներ, որոնցով հնարավոր կլինի չափել, թե իրազեկման միջոցառումներն ինչպես են նպաստել գնումների գործընթացի վերահսկողության պարզեցմանը կամ թափանցիկության բարձրացմանը:

- Բացակայում է տեղեկությունն այն մասին, թե արդյոք առկա էին հետադարձ կապի մեխանիզմներ և ինչպես է այդ հետադարձ կապը օգտագործվել իրազեկման աշխատանքների բարելավման համար:

Թեև քանակապես հաշվետվության մեջ նշված 17 միջոցառումները կարող են բավարար համարվել գործողության կատարման համար, սակայն այս միջոցառումների որակի, լսարանի, դրանց արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը հիմք չի տալիս եզրակացնելու, որ իրականացված միջոցառումներն ամբողջությամբ նպաստել են պետական գնումների գործընթացում բարելավարքության, հաշվետվողականության և թափանցիկության կատարելագործմանը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է «կատարված»:

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) իրականացված է ոչ ամբողջական, այս գործողության շրջանակներում իրականացված գործողությունները ամբողջապես չեն նպաստել պետական գնումների գործընթացում բարելավարքության, հաշվետվողականության և թափանցիկության կատարելագործմանը:

4. Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքները

Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.15

ԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԲՆՈՒՅԹԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՒՏՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԲԱՐ ԶԱՐԳԱՑՆԵԼ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

1. Հզորացվել են գլխավոր դատախազության, հակակոռուպցիոն կոմիտեի, քննչական կոմիտեի, հաշվեքննիչ պալատի, պետական վերահսկողության ծառայության, մրցակցության պաշտպանության հանձնաժողովի պաշտոնատար անձանց կարողությունները կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների բացահայտման ուղղությամբ: Կազմակերպվել և անցկացվել են առնվազն 4 վերապատրաստման դասընթացներ:
2. Մշակել կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների քննության վարման ուղեցույցներ և պրոտոկոլներ՝ ապահովելով քննչական գործողությունների միատեսակ պրակտիկան տվյալ մարմիններում:

Ստուգման միջոց

Վերապատրաստումների անցկացում

Ուսումնական ծրագրեր, ուղեցույցի առկայություն:

Կատարող մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին

Պետական վերահսկողական ծառայություն (համաձայնությամբ)

Հաշվեքննիչ պալատ (համաձայնությամբ)

ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ)

ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

Կատարված է ամբողջությամբ

Կատարված է մեծամասամբ

Կատարված է մասնակի

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

2023 թվականի նոյեմբերին Արդարադատության ակադեմիայի Կառավարման խորհրդի կողմից հաստատվել է դատախազների (հղումը՝ <https://aoj.am/full-time-education/training-programs/2024/prosecutor>), դեկտեմբերին Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների (հղումը՝ <https://aoj.am/full-time-education/training-programs/2024/investigator>), իսկ 2024 թվականի մայիսին Քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի կողմից Քննչական կոմիտեի քննիչների տարեկան վերապատրաստման 2024 թվականի ծրագրերը (հղումը՝ <https://aoj.am/full-time-education/training-programs/2024/investigator>), որոնց մեջ ներառվել են կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների բացահայտման և քննության առնչությամբ թեմաներ ու մոդուլներ:

Մասնավորապես, նախատեսվել են «Կոռուպցիոն հանցագործությունների քննության առանձնահատկությունները», «Կոռուպցիոն հանցանքների որակման հիմնահարցեր», «Տնտեսական հանցագործությունների որակման հիմնահարցեր» վերտառությամբ դասընթացներ բոլոր դատախազների համար, Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների տարեկան վերապատրաստման ծրագրում «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր» վերտառությամբ դասընթացի շրջանակում մոդուլներ են նախատեսվել կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների բացահայտման և քննության վերաբերյալ, Քննչական կոմիտեի քննիչների տարեկան վերապատրաստման ծրագրում նախատեսվել է «Սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների քննության մեթոդիկան» վերտառությամբ դասընթացը:

2024 թվականի ընթացքում Արդարադատության ակադեմիայում «Տնտեսական հանցագործությունների որակման հիմնահարցեր» թեմայով դասընթացի շրջանակներում վերապատրաստվել է 28 դատախազ, «Սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների քննության մեթոդիկան» թեմայով՝ 72 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ, իսկ «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր» վերտառությամբ դասընթացի շրջանակում՝ Հակակոռուպցիոն կոմիտեի 19 քննիչ:

Բացի այդ, Գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազները կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների բացահայտման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մասնակցել են մի շարք այլ վերապատրաստումների և դասընթացների, մասնավորապես՝ Մոլդովայի Հանրապետության Քիչն քաղաքում կազմակերպված «Ֆինանսական հանցագործությունների բացահայտման, կանխարգելման և խափանման նպատակով հանրային մասնավոր գործընկերության նախաձեռնությունների ստեղծումը, օգտագործումը և օգուտները» տարածաշրջանային աշխատաժողովին, Կորեայի Հանրապետության Բուսան քաղաքում ֆինանսների ակտիվների

հատուկ հանձնախմբի կողմից կազմակերպված «FATF» հանձնարարականների թեմայով վերապատրաստմանը, ՌԴ Մոսկվա քաղաքում «Հանցավոր ակտիվների, այդ թվում՝ վիրտուալ արժույթների արտերկիր դուրս բերման և դրանք ծագման երկիր վերադարձման» թեմայով քննարկմանը, ՀՀ-ում կազմակերպված «HELP» առցանց հարթակում «Կոռուպցիայի կանխարգելման ներածություն» խորագրով դասընթացին, ՀՀ-ում կազմակերպված «Փողերի լվացման գործերով քննության» վերաբերյալ քննարկմանը:

Գլխավոր դատախազության, Եվրոպական Միության և Եվրոպայի Խորհրդի համատեղ ջանքերով 2024 թվականի նոյեմբերի 15-ին Երևանում կայացել է Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի կարծիքների հայերեն ժողովածուի շնորհանդեսը: Ժողովածուի հրատարակման շնորհիվ ԵԴԽԽ կարծիքները, որոնք ի թիվս այլնի վերաբերում են նաև կոռուպցիայի և հարակից տնտեսական ու ֆինանսական հանցագործությունների դեմ պայքարում դատախազների դերին, հասանելի են դարձել հայերեն, ինչը կնպաստի դատախազների գործունեության մեջ վերոնշյալ կարծիքների առավել արդյունավետ կիրառությանը: Միջոցառման թեմատիկ նիստի ընթացքում, որին ներկա են եղել նաև մի շարք դատախազներ, քննարկվել են կոռուպցիոն բնույթի հանցանքների բացահայտման արդի մարտահրավերներն ու կոռուպցիայի դեմ պայքարի այլ հարցեր:

Բացի այդ, Քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձիք մասնակցել են մի շարք այլ վերապատրաստումների և դասընթացների, մասնավորապես՝ 2024 թվականի մայիսի 30-ից -31-ը և հոկտեմբերի 2-ից 4-ը **Եվրոպայի** խորհրդի և Եվրոպական Միության կողմից համատեղ իրականացվող «CyberEast+» ծրագրի շրջանակներում Քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար կազմակերպված **ֆինանսական և առցանց հանցագործությունների** (ֆինանսական խարդախության և փողերի լվացման հանցագործությունների) **քննության ոլորտում կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման դասընթացին մասնակցել է 48** ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ, 2024 թվականի հունիսի 12-ից 14-ը ԵԱՀԿ տնտեսական և բնապահպանական գործողությունների համակարգողի գրասենյակի և Երևանում ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի կողմից համատեղ կազմակերպված «Կրիպտոակտիվների հետ կապված հետաքննության վերաբերյալ» աշխատաժողովին՝ 6 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ, 4 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ մասնակցել է 2024 թվականի հուլիսի 18-ից 19-ը ԵԱՀԿ տնտեսական և բնապահպանական գործողությունների համակարգողի գրասենյակի կողմից կազմակերպված «Առգրավված և առգրավվող վիրտուալ ակտիվների կառավարում» թեմայով աշխատաժողովին:

Բացի այդ, ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի (INL) հետ համատեղ իրականացվել է 3 վերապատրաստման դասընթաց: Վերապատրաստման դասընթացներին մասնակցել են Հակակոռուպցիոն դատարանի, Հակակոռուպցիոն կոմիտեի, Գլխավոր դատախազության, Մրցակցության պաշտպանության

հանձնաժողովի, Ներքին գործերի նախարարության, Արդարադատության նախարարության և այլ կառույցների ներկայացուցիչներ:

Զուգահեռաբար, ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի հետ համագործակցությամբ տարվում են աշխատանքներ կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների քննության վարման ուղեցույցների մշակման ուղղությամբ:

Քննչական մարմիններում քննվող նշված բնույթի քրեական վարույթներով միասնական պրակտիկա ապահովելու առումով հատկանշական է Փողերի լվացման գործերի քննության ուղեցույցը, որն ընդունվել է 2023 թվականին «Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման գենքի տարածման ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Հզորացվել են գլխավոր դատախազության, հակակոռուպցիոն կոմիտեի, քննչական կոմիտեի, հաշվեքննիչ պալատի, պետական վերահսկողության ծառայության, մրցակցության պաշտպանության հանձնաժողովի	Վերապատրաստումների գեկույցներ Մամուլի հաղորդագրություններ	2024 թվականի ընթացքում Արդարադատության ակադեմիայում «Տնտեսական հանցագործությունների որակման հիմնահարցեր» թեմայով դասընթացի շրջանակներում վերապատրաստվել է 28 դատախազ, «Սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների քննության մեթոդիկան» թեմայով՝ 72 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ, իսկ «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր» վերտառությամբ դասընթացի շրջանակում՝ Հակակոռուպցիոն կոմիտեի 19 քննիչ: 2023 թվականին «Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման,	Կատարված է ամբողջությամբ

<p>պաշտոնատար անձանց կարողությունները կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների բացահայտման ուղղությամբ:</p> <p>Կազմակերպվել և անցկացվել են առնվազն 4 վերապատրաստման դասընթացներ:</p> <p>Մշակել կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների քննության վարման ուղեցույցներ և պրոտոկոլներ՝ ապահովելով քննչական գործողությունների միատեսակ պրակտիկան տվյալ մարմիններում:</p>		<p>ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ընդունվել է Փողերի լվացման գործերի քննության ուղեցույցը:</p> <p>ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի հետ համագործակցությամբ տարվում են աշխատանքներ կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների քննության վարման ուղեցույցների մշակման ուղղությամբ:</p>	
<p>Այլընտրանքային գնահատում</p>			

Մշտադիտարկման շրջանակներում կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ վերապատրաստումներում ընդգրկվել են հիմնականում դատախազներ և քննիչներ, սակայն հաշվեքննիչ պալատի, ՊՎԾ-ի և ՄՊՀ-ի պաշտոնատար անձանց վերապատրաստման վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է: Մշտադիտարկման շրջանակներում իրականացված որակական վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև վերապատրաստումների քանակական ցուցանիշները մասնակի կատարվել են (շուրջ 119 դատախազ, քննիչ և ՔԿ-ում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք մասնակցել են վերապատրաստումներին), սակայն գործողության որակական բաղադրիչների մասով առկա չեն վերապատրաստումների արդյունավետության (ազդեցության) չափման արդյունքներ:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է կատարվել է:

4. Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքները

Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.1

ԳՈՐԾԱՐԿԵԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿ

2024 թվականի կատարողականի թիրախ

Մեկնարկել են հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակի մշակման աշխատանքները: Վերանայվել է հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման հարթակի տեխնիկական առաջադրանքը:

Ստուգման միջոց

Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ
Մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակը շահագործող մարմինների շրջանակում

Կատարող մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակի ստեղծման և տեխնիկական առաջադրանքը վերանայելու նպատակով Արդարադատության նախարարությունը հանդիպումներ է ունեցել դոնոր կազմակերպությունների հետ: Քննարկվել են վերհանված կարիքները և հարթակի ստեղծման համար անհրաժեշտ ռեսուրսները: Աշխատանքները, սակայն, կանգ են առել աջակցության կասեցման պատճառով:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
<p>Մեկնարկել են հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակի մշակման աշխատանքները: Վերանայվել է հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման հարթակի տեխնիկական առաջադրանքը:</p>	<p>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ Մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակը շահագործող մարմինների շրջանակում</p>	<p>Դոնոր կազմակերպության կողմից աջակցության կասեցման արդյունքում 2024 թվականի ավարտին կանգ են առել հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման հարթակի տեխնիկական առաջադրանքի մշակման ուղղությամբ տարվող աշխատանքները: Աջակցության տրամադրման դեպքում հնարավոր կլինի ավարտին հասցնել տեխնիկական առաջադրանքի մշակումը և ապահովել հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման հարթակի գործարկումը:</p>	<p>Կատարված չէ</p>
Այլընտրանքային գնահատում			
<p>Կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքական կամքի դրսևորում է նաև այդ պայքարը հաջողությամբ իրականացնելու համար պետության կողմից «համապատասխան միջոցներ և կարողություններ մոբիլիզացնել»-ը: Դոնոր կազմակերպություններից գատ, անհրաժեշտ է դիտարկել նաև այլ տարբերակներ: Նշյալի հաշվառմամբ՝ գործողության կատարման կարգավիճակը գնահատվում է որպես չկատարված:</p>			

4. Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքները

Գործողության իրականացման հիմնական խոչընդոտն անհրաժեշտ ռեսուրսների բացակայությունն է:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.2

ԲԱՐԵԼԱՎԵԼ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Մոնիթորինգի և գնահատման մեթոդական փաստաթղթերը վերանայվել են՝ բոլոր հնարավոր բացերի վերհանման և լավարկվելու է մոնիթորինգի/գնահատման մեթոդաբանությունը նպատակով:

Մոնիթորինգի և գնահատման մեթոդական փաստաթղթերը հաստատվել են, դրանց հիման վրա լրամշակվել է մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակը:

Ստուգման միջոց

Իրավական ակտերի առկայություն

Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ

ՏՀԶԿ հակակոռուպցիոն ցանցի 5-րդ գնահատման արդյունքների կատարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կատարողականի վերաբերյալ զեկույց

Կատարող մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին

Ոլորտային հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023թ. հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծը

(այսուհետ՝ Նախագիծ), որով առաջարկվում է հաստատել 2023-2026թթ. հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի և գնահատման մեթոդաբանությունը ՏՀԶԿ կողմից սահմանված ցուցանիշներին համապատասխան: Նախագիծը ներկայացվել է շահագրգիռ մարմինների և ոլորտային հասարակական կազմակերպություններին՝ կարծիքի: Նախագիծը ներկայացված առաջարկությունների հիման վրա լրամշակվել և ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:

Ներկայում ընթացքի մեջ են գտնվում Նախագծի լրամշակման աշխատանքները:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախագիծը 2024 թվականի հոկտեմբերի 28-ին դրվել է հանրային քննարկման e-draft.am հարթակում (<https://www.e-draft.am/index.php/projects/7842>):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
<p>Մոնիթորինգի և գնահատման մեթոդական փաստաթղթերը վերանայվել են՝ բոլոր հնարավոր բացերի վերհանման և լավարկվելու է մոնիթորինգի/գնահատման մեթոդաբանությունը նպատակով:</p> <p>Մոնիթորինգի և գնահատման մեթոդական</p>	<p>Իրավական ակտերի առկայություն</p> <p>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ</p>	<p>Նախագիծը մշակվել է Արդարադատության նախարարության կողմից, որը ներկայացվել է շահագրգիռ մարմինների և ոլորտային հասարակական կազմակերպությունների կարծիքին:</p> <p>Նախագիծը ներկայացված առաջարկությունների հիման վրա լրամշակվել և ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:</p>	<p>Կատարված է մասնակի</p>

փաստաթղթերը հաստատվել են, դրանց հիման վրա լրամշակվել է մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակը:			
Այլընտրանքային գնահատում			
Գործողության ավարտի ժամկետը, համաձայն Ռազմավարության միջոցառումների ծրագրի հանդիսանում է 2024 թվականի դեկտեմբերի 31-ը և հայտնի չէ՝ արդյոք e-draft հարթակում դրված նախագիծն ի վերջո կընդունվի, թե՛ ոչ:			

4. Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքները.

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.3

**ՎԵՐԱՆԱՅԵԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ**

2024 թվականի կատարողականի թիրախ

1. Մշակվել են հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի գործունեությունը կարգավորող և այլ իրավական ակտերում փոփոխությունների բարելավումներ նախատեսող իրավական ակտերի նախագծերը՝ ապահովելով շահագրգիռ մարմինների ներառականությունը:

2. Նախագծերը քննարկվել են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամների հետ:

Ստուգման միջոց

Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային զեկույցներ

Կատարող մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին

Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամներ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի N 808-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագիծը: Նախագիծով առաջարկվում է բարելավել հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի

գործունեությունը, սահմանել խորհրդի գործունեությանը հասարակական կազմակերպությունների ներգրավման բարելավված կառուցակարգեր:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախատեսվում է Նախագիծը 2025 թվականին ներկայացնել շահագրգիռ մարմինների կարծիքին՝ միաժամանակ դնելով հանրային քննարկման e-draft.am հարթակում:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Մշակվել են հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի գործունեությունը կարգավորող և այլ իրավական ակտերում փոփոխությունների բարելավումներ նախատեսող իրավական ակտերի նախագծերը՝ ապահովելով շահագրգիռ	Իրավական ակտերի առկայություն	«Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի N 808-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագիծը մշակվել է:	Կատարված է մասնակի

մարմինների ներառականությունը: Նախագծերը քննարկվել են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամների հետ:			
Այլընտրանքային գնահատում			
<p>Արդարադատության նախարարության կայքում առկա չէ որևէ տեղեկություն մշակված նախագծի վերաբերյալ, իսկ նախագիծը նախատեսվում է շահագրգիռ մարմինների կարծիքին ներկայացնել միայն 2025 թվականին: Կատարման կարգավիճակը գնահատելը դժվար է, առավել ևս, որ կատարողականի թիրախով սահմանված է նախագծերի քննարկումը Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամների հետ: Որևէ քննարկում տեղի չի ունեցել:</p> <p>Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է կատարվել է մասնակի:</p>			

4. Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքները:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.4

ՍԱՀՄԱՆԵԼ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ, ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐՑԱԼ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԱՊԱՀՈՎԵԼ ԴՐԱՆՑ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

2024 թվականի կատարողականի թիրախ

Մշակվել է կոռուպցիայի դեմ պայքարի ազդեցության, ներառյալ՝ հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ մեթոդաբանություն:

Մշակվել են պարբերական հարցումներ իրականացնելու իրավական կարգավորումները և լիազոր մարմին սահմանող դրույթը:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Կատարող մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

ԵՄ հետ համագործակցությամբ մեկնարկել են կոռուպցիայի դեմ պայքարի ազդեցության, ներառյալ՝ հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացման վերաբերյալ մեթոդաբանության մշակման աշխատանքները: Նշյալի շրջանակներում ԵՄ փորձագետի կողմից Արդարադատության նախարարություն է ներկայացվել հանրության վրա կոռուպցիայի դեմ պայքարի ազդեցության և հանրային ընկալումների բացահայտման նպատակով հարցումներ իրականացնելու ձևաչափ և տեղեկատվական թերթիկ:

ԵՄ կողմից ներկայացված, ինչպես նաև Արդարադատության նախարարության կողմից զուգահեռ իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի [2024 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 07-Լ որոշմամբ](#) հաստատված՝ կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրության մեթոդաբանությունը և հարցաթերթը կարող են կողմնորոշիչ կամ ուղղորդող դեր խաղալ նաև սույն գործողությամբ նախատեսված՝ կոռուպցիայի դեմ պայքարի ազդեցության, ներառյալ՝ հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացման կառուցակարգերի և դրանց իրագործման ապահովման միջոցառումների իրականացման հարցում:

Պարբերական հարցումներ իրականացնելու համար լիազոր մարմին սահմանելու նպատակով Արդարադատության նախարարությունը մշակել և շահագրգիռ մարմիններին կարծիքի է ներկայացրել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին օրենքում» լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ): Նախագծով սահմանվել է, որ կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումների իրականացման ազդեցության և հասարակական ընկալումների պարզման նպատակով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը տարեկան առնվազն մեկ անգամ իրականացնում է հարցումներ:

Նախագիծը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Մշակվել է կոռուպցիայի դեմ պայքարի ազդեցության, ներառյալ՝ հակակոռուպցիոն միջոցառումների	Իրավական ակտի առկայություն Տարեկան մոնիթորինգի և	Արդարադատության նախարարության կողմից մշակվել, ինչպես նաև շահագրգիռ մարմիններին կարծիքի է ներկայացվել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին օրենքում» լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով առաջարկվում է Հանձնաժողովին տալ պարբերական հարցումներ իրավասություն:	Կատարված է մասնակի

<p>ազդեցության վերաբերյալ մեթոդաբանություն: Մշակվել են պարբերական հարցումներ իրականացնելու իրավական կարգավորումները և լիազոր մարմին սահմանող դրույթը:</p>	<p>գնահատման զեկույց</p>		
<p>Այլընտրանքային գնահատում</p>			
<p>Մշտադիտարկման արդյունքների հիման վրա պարզ է դարձել, որ ԿԿՀ կողմից հաստատած մեթոդաբանությունը մշակվել է կիրառելով Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն Հայաստանի կողմից իրականացվող հանրային կարծիքի ուսումնասիրության մեթոդաբանությամբ նախատեսված մոտեցումները: Գործողությունը գնահատվում է մասնակի կատարված:</p>			

4. Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.5

**ԶԱՐԳԱՑՆԵԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐՈՎ**

2024 թվականի կատարողականի թիրախ

Մշակվել են հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների գործունեության ուղեցույցները, շրջանառվել և հրապարակվել են: Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների համար անցկացվել են վերապատրաստումներ:

Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների գործունեության ուղեցույցները հաստատվել են:

Ստուգման միջոց

Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ

ԶԼՄ-ներում և սոցիալական ցանցերում հրապարակումներ

Ուղեցույցի առկայություն

Կատարող մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին

Պետական կառավարման համակարգի մարմիններ

Վարչապետի աշխատակազմ

Հանրապետության նախագահի աշխատակազմ (համաձայնությամբ)

Ազգային ժողովի աշխատակազմ (համաձայնությամբ)

Անկախ և ինքնավար մարմիններ (համաձայնությամբ)

ՏԻՄ մարմիններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 46.3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հակակոռուպցիոն ռազմավարության և այլ ծրագրերի իրականացման շրջանակներում հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների և մեթոդական աջակցության գործառույթը՝ Արդարադատության նախարարության կողմից մշակվել է հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների գործունեության ուղեցույցը (այսուհետ՝ Ուղեցույց):

Ուղեցույցը միտված է աջակցելու հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուներին՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի 46.1-րդ հոդվածով նախատեսված համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավասության շրջանակներում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հակակոռուպցիոն ոլորտի միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված աշխատանքների համակարգման գործառույթի իրականացման հարցում:

Ուղեցույցը շրջանառվել է շահագրգիռ գերատեսչություններին և հրապարակվել է Արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջում:

Միաժամանակ, Արդարադատության նախարարության կողմից հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների համար անցկացվել է վերապատրաստման 2 դասընթաց՝ նախատեսված ժամաքանակին համապատասխան:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Ուղեցույցի մշակմանը զուգահեռ անցկացվել են քննարկումներ և վերապատրաստումներ հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների հետ:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Մշակվել են հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների	Կիսամյակային և տարեկան	Արդարադատության նախարարության կողմից մշակվել է հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների գործունեության ուղեցույցը:	Կատարված է ամբողջությամբ

<p>գործունեության ուղեցույցները, շրջանառվել և հրապարակվել են:</p> <p>Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների համար անցկացվել են վերապատրաստումներ:</p> <p>Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների գործունեության ուղեցույցները հաստատվել են:</p>	<p>մոնիթորինգային հաշվետվություններ ԶԼՄ-ներում և սոցիալական ցանցերում հրապարակումներ</p> <p>Ուղեցույցի առկայություն</p>	<p>Արդարադատության նախարարության կողմից Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների համար անցկացվել է վերապատրաստման 2 դասընթաց նախատեսված ժամաքանակին համապատասխան:</p>	
--	---	---	--

Այլընտրանքային գնահատում

Մշտադիտարկման շրջանակներում իրականացված որակական վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև գործողության թիրախները մասնակի իրականացվել են, սակայն առկա են որոշակի բացթողումներ, որոնք սահմանափակում են գործողության իրական ազդեցության գնահատման հնարավորությունը: Նշված չէ, թե վերապատրաստումներին մասնակցած հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների թվաքանակը: Բացակայում է վերապատրաստումների արդյունավետության չափման մեխանիզմների մասին, այդ թվում գիտելիքների աճի վերաբերյալ տեղեկությունը: Չկան հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների կարողությունների զարգացման վերաբերյալ տվյալներ:

Ձևական առումով գործողությունը մասնակի իրականացվել է, սակայն դրա իրական ազդեցությունը և արդյունավետությունը հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների կարողությունների զարգացման վրա հնարավոր չէ գնահատել՝ համապատասխան տվյալների և գնահատման մեխանիզմների բացակայության պատճառով:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է մասնակի կատարված:

4. Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքները

Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.6

ԴՈՆՈՐՆԵՐԻ ԲՆԱԿԱՆՈՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

2024 թվականի կատարողականի թիրախ

Հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգման նպատակով վերջիններիս և շահագրգիռ մարմինների հետ իրականացվել է քննարկում, դրա արդյունքների հիման վրա մշակվել է դոնորների աշխատանքների համակարգման ձևաչափ և ընթացակարգ: Մշակվել է հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգման ձևաչափ և ընթացակարգ, այն համաձայնեցվել է վերջիններիս և շահագրգիռ մարմինների հետ:

1. Հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգման նպատակով վերջիններիս և շահագրգիռ մարմինների հետ իրականացվել է քննարկում, դրա արդյունքների հիման վրա մշակվել է դոնորների աշխատանքների համակարգման ձևաչափ և ընթացակարգ:
2. Դոնորների աշխատանքների համակարգման նպատակով անցկացվել է համակարգման նիստ, արդյունքներն արձանագրվել են:

Ստուգման միջոց

Իրավական ակտի առկայություն

Դոնորների աշխատանքների համակարգման նիստերի արձանագրություններ

Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային զեկույցներ

Կատարող մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

Համակատարող մարմին

Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրասենյակ

Կատարման կարգավիճակը (2024 թվական)

- Կատարված է ամբողջությամբ
- Կատարված է մեծամասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ

1. Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը

Հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգման նպատակով Արդարադատության նախարարությունում տեղի են ունեցել շարունակական աշխատանքային քննարկումներ դոնորների և շահագրգիռ բոլոր մարմինների միջև: Արդյունքների հիման վրա մշակվել է «Հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգման կարգը և ձևաչափը», որը հաստատվել է Արդարադատության նախարարի 2024 թվականի հունիսի 19-ի N 348-Լ հրամանով:

Միաժամանակ, Հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող գործողությունների իրականացման շրջանակներում պարբերաբար տեղի են ունեցել հանդիպումներ դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որոնց մասին տեղեկատվությունը պարբերաբար հրապարակվել է Արդարադատության նախարարության կայքում:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Արդարադատության նախարարի հրամանի մշակման գործընթացում հաշվի են առնվել նաև մի շարք քննարկումների (<https://www.moj.am/article/4077>, <https://www.moj.am/article/4067>, <https://www.moj.am/article/4011>) , արդյունքում բարձրացված խնդիրները:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Կատարողականի թիրախ	Ստուգման միջոց	Գնահատման արդյունքները, հիմնավորումներ և մեկնաբանություններ	Կատարման կարգավիճակը
Հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգման նպատակով վերջիններիս և շահագրգիռ	Իրավական ակտի առկայություն Դոնորների աշխատանքների համակարգման նիստերի արձանագրություններ	Արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգման կարգը և ձևաչափը», որը հաստատվել է Արդարադատության նախարարի 2024 թվականի հունիսի 19-ի N 348-Լ հրամանով:	Կատարված է ամբողջությամբ

<p>մարմինների հետ իրականացվել է քննարկում, դրա արդյունքների հիման վրա մշակվել է դոնորների աշխատանքների համակարգման ձևաչափ և ընթացակարգ: Մշակվել է հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգման ձևաչափ և ընթացակարգ, այն համաձայնեցվել է վերջիններիս և շահագրգիռ մարմինների հետ: Հակակոռուպցիոն ոլորտում դոնորների</p>	<p>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ</p>		
---	---	--	--

<p>աշխատանքների համակարգման նպատակով վերջիններիս և շահագրգիռ մարմինների հետ իրականացվել է քննարկում, դրա արդյունքների հիման վրա մշակվել է դոնորների աշխատանքների համակարգման ձևաչափ և ընթացակարգ: Դոնորների աշխատանքների համակարգման նպատակով անցկացվել է համակարգման նիստ, արդյունքներն արձանագրվել են:</p>			
<p>Այլընտրանքային գնահատում</p>			

Ըստ մշտադիտարկման արդյունքների, որպես այդպիսին, դոնորների հետ նիստեր չեն կազմակերպվել, դրանք եղել են երկկողմ հանդիպումներ: Արձանագրություններ առկա չեն, հրապարակվել է միայն հանդիպման վերաբերյալ տեղեկություն: Բացի այդ, աշխատանքների համակարգման կարգը և ձևաչափը հաստատելու մասին իրավական ակտը չի քննարկվել ՔՀԿ- ների հետ, չնայած այն հանգամանքին, որ ՔՀԿ-ները որպես համակատարող մարմիններ/կառույցներ ընդգրկված են Ռազմավարության տարբեր գործողություններում: Ըստ այդմ, գործողությունը գնահատվում է մասնակի կատարված:

4. Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքները.

Գործողության իրականացմանը խոչընդոտող կամ գործողության կատարումն անհնարին դարձնող կամ գործողության կատարումը ձգձգող հանգամանքներ առկա չեն:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հակակոռուպցիոն ռազմավարության 2024 թվականի տարեկան կատարողականը գնահատվել է կատարված 79,3%-ով: Գործոնային մոնիթորինգի և գնահատման շրջանակներում կատարողականի ընդհանուր ցուցանիշը՝ 79,3%, հաշվարկվել է վարիացիոն շարքի համակշռված միջինի հաշվարկման մեթոդով:

Գործոնային մոնիթորինգի և գնահատման շրջանակներում ուսումնասիրվել և գնահատվել է Գործողությունների ծրագրի կատարումը՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր գործողության համար սահմանված գործոնային ցուցիչները: Գործոնային մոնիթորինգով և գնահատմամբ արտահայտվել է Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման արդյունքն արտացոլող հիմնական ցուցանիշը: Այն իրականացվել է ոչ միայն Արդարադատության նախարարության, այլև Հակակոռուպցիոն ռազմավարության կատարող մարմինների կողմից:

Հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրի մոնիթորինգի և գնահատման նպատակներն են՝

- գնահատել Հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի՝ 2024 թվականին իրականացման ենթակա գործողությունների կատարման ընթացքը,
- պարզել ամբողջությամբ, մեծ մասամբ, մասնակի և չկատարված գործողությունները, կատարել այդ գործողությունների ընթացակարգային (քանակական) գնահատումներ,
- որտեղ կիրառելի է, իրականացնել գործողության ազդեցության մակարդակի (որակական) գնահատում:

Այսպես, Հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրով սահմանված 2024 թվականին կատարման ենթակա 69 գործողությունները ներկայացված են հինգ ռազմավարական նպատակի ներքո, որոնցից 21-ը՝ կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության համակարգերի ամրապնդման, 15-ը՝ կոռուպցիայի հակազդման իրավական և ինստիտուցիոնալ համակարգերի կատարելագործման, 14-ը՝ հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման կառուցակարգերի կատարելագործման, 13-ը՝ գործարար բարեվարքության, գործարար իրավունքների պաշտպանության և պետությունբիզնես վարչարարության դյուրացման և 6-ը՝ հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման համակարգի կատարելագործման ոլորտում: 2024 թվականին նախատեսված է եղել ավարտել բոլոր 69 գործողությունների կատարումը, սակայն ամբողջությամբ կատարվել է 36 գործողություն, մեծ մասամբ՝ 11 գործողություն, մասնակի՝ 21 գործողություն, չի կատարվել 1 գործողություն:

Ամբողջությամբ կատարված գործողությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հիմնականում ամբողջությամբ կատարված են այն գործողությունները, որոնք միտված էին իրավական ակտերի նախագծերի մշակմանը (օրինակ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթների ընթացակարգերի բարելավում, դրանց առանձնահատկությունների սահմանում և ԿԿՀ գործառույթների հստակեցում, հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակի ընդլայնում, բարեվարքության ուսումնասիրության համակարգի արդյունավետության ամրապնդում, ազդարարների իրավունքների պաշտպանության մեխանիզմների կատարելագործում, գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի ներդրում, ինչը նշանավորվեց Կորպորատիվ կառավարման կանոնագրքի ընդունմամբ), կոռուպցիայի դեմ պայքարի թեմաներով մասնագիտական վերապատրաստումների և պատրաստումների անցկացմանը հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների, ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդասական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության դատախազների համար, վերապատրաստումների անցկացմանը հակակոռուպցիոն դատարանների դատավորների համար, հակակոռուպցիոն կրթությանն և հանրային իրազեկման կառուցակարգերի կատարելագործմանը (օրինակ, նախադպրոցական ուսումնական հաստատություններում մանկավարժական աշխատողների համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստումների ծրագրի մշակում և ներդրում, բարձրագույն ուսումնական հաստատություններում վերջիններիս համաձայնությամբ ուսանողների համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն դասընթացի/բաղադրիչի մշակում և ներդրում), հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների կարողությունների զարգացմանը՝ վերապատրաստումների իրականացման և ուղեցույցների մշակման եղանակով:

Մեծամասամբ կատարված գործողությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրանց ամբողջական կատարմանը հիմնականում խոչընդոտել են մի շարք իրավական ակտերի նախագծերի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ մոտեցումները, ինչպիսիք են, օրինակ, բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի կատարելագործումը, էթիկայի հանձնաժողովների գործունեության բարելավումը, ազդարարման համակարգի գործունեության արդյունավետության ապահովումը:

Մասնակի կատարված միջոցառումների դեպքում հիմնական խոչընդոտ է հանդիսացել ռեսուրսների անբավարարությունը, այնպիսի գործողությունների դեպքում, ինչպիսիք են օրինակ իրական շահառուների բացահայտման ինստիտուտի արդյունավետությունը ապահովող մեխանիզմների ներդրումը, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի և իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգի և կարգավորումների արդիականացումը և կատարելագործումը:

Չկատարված 1 գործողության (գործողություն 5.1) վերաբերյալ հարկ է նշել, որ ֆինանսական ռեսուրսների և աջակցության տրամադրման բացակայության պայմաններում հնարավոր չէր ավարտին հասցնել հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման հարթակի տեխնիկական առաջադրանքի մշակումը և ապահովել հարթակի գործարկումը:

Հակակոռուպցիոն ռազմավարության կատարող մարմինների ինքնագնահատումների և Մոնիթորինգի և գնահատման համար պատասխանատու մարմնի՝ Արդարադատության նախարարության գնահատման ուսումնասիրությունից և համադրությունից (մանրամասները տես սույն զեկույցի Հավելված 2-ում) պարզ է դարձել, որ գնահատման արդյունքները մեծ մասամբ համապատասխանում են, իսկ տարբերությունները հիմնականում պայմանավորված են այն հանգամանքով, որ կատարող մարմինները գնահատումն իրականացրել են միայն իրենց իրավասության շրջանակում կատարված աշխատանքների մասով՝ որպես համակատարող մարմին:

**ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ (ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԿՑՈՒՆՔՆԵՐ) ԵՎ ՓԱՍՏԱՑԻ
ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՐԿՑՈՒՆՔՆԵՐԸ**

Հակակոռուպցիոն ռազմավարության արդյունքային մոնիթորինգի իրականացման համատեքստում կարևոր է նաև Հակակոռուպցիոն ռազմավարության Հավելված 2-ով սահմանված՝ ռազմավարական նպատակների համար սահմանված արդյունքային ցուցիչների ապահովման առնչությամբ արձանագրված արդյունքների դիտարկումը: Այսպես.

➤ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԻ ԱՐԿՑՈՒՆՔԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉ

Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգերի ամրապնդում ռազմավարական նպատակի և դրա չորս մասնավոր նպատակների համար սահմանված են հետևյալ ակնկալվող վերջնարդյունքները՝

1. «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքը մշակված և ընդունված է:
2. ԿԿՀ աշխատակիցները վերապատրաստվել են, բարելավվել են ԿԿՀ-ի կողմից հարուցվող և իրականացվող վարույթների ընթացակարգերը և իրագործման մեխանիզմները:
3. Բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործառույթների պատշաճ իրացման համար ուղեցույցներ և մեթոդական ձեռնարկներ են մշակված, 2025 թվականի ավարտին վերապատրաստվել են բարեվարքության հարցերով կազմակերպիչների առնվազն 50%-ը:

4. Բարելավվել է Էթիկայի հանձնաժողովների գործունեությունը, մասնավորապես մշակվել և Էթիկայի հանձնաժողովների կողմից կիրառվում են ուղեցույցներ և մեթոդական ձեռնարկներ, իսկ այն մարմիններում, որտեղ դեռևս առկա չեն Էթիկայի հանձնաժողովներ, դրանք ձևավորվել են և հաջողությամբ գործում են:

5. Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում մշակվել և կիրառվում են վիճակագրության վարման մեթոդաբանություն և ուղեցույցներ:

6. Իրականացված է կանխարգելիչ գործիքների թվայնացում, ապահովվել է հայտարարագրման և բարեվարքության հարցաթերթիկների լրացման գործընթացների հնարավորինս ավտոմատացումը:

7. Ստեղծվել է իրավական ակտերի նախագծերի ex ante և իրավական ակտերի ex post փորձաքննության իրականացման նախադրյալները և ընտրվել է լիազոր մարմինը: Իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննության եզրակացությունները գործնականում առկա են:

8. Ներդրվել են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, գնահատման, դրանց զսպմանն ուղղված անհրաժեշտ կազմակերպական իրավական մեխանիզմներ:

9. Ապահովված է հայտարարագրման էլեկտրոնային համակարգի արդյունավետ կիրառումը:

10. Ընդլայնված է բարեվարքության ուսումնասիրության ենթակա պաշտոնների ցանկը:

11. Ապահովվել է կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացման արդյունավետությունը, կուսակցությունների ֆինանսական գործունեության հաշվետվողականությունը:

12. Ներդրված են նվերների ընդունման սահմանափակումների իրացման արդյունավետ մեխանիզմներ, ձևավորվել է նվերների ռեեստրը:

Փաստացի գրացված արդյունքների առնչությամբ հարկ է նշել հետևյալը.

• Մշակվել են «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը, որով նախատեսվում է սահմանել ԿԿՀ կողմից հարուցվող վարույթների առանձնահատկությունները:

• Մշակվել և հանրային իշխանության մարմիններին շրջանառվել է բարեվարքության համակարգի վերաբերյալ վիճակագրության հավաքագրման առցանց հարցաթերթիկ՝ հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի, ինչպես նաև նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ մարմիններում առկա վիճակագրությունը ստանալու նպատակով: ԿԿՀ-ն մշակել և 2024 թվականի սեպտեմբերի 13-ի որոշմամբ հաստատել է կոռուպցիայի կանխարգելման

ուղորտում թվային վիճակագրության վարման մեթոդաբանական ուղեցույցը (<https://drive.google.com/file/d/1-Rp9jO5JfAPW4sTMN34C9T5T4h4RT7OP/view>):

- Մշակվել է «Հանրային ծառայության մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով նախատեսվում է ընդլայնել հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը, ինչպես նաև հայտարարատու բոլոր պաշտոնատար անձանց համար սահմանել շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն:

- ԿԿՀ կողմից սահմանվել են բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի և բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկի ձևանմուշները (<https://cpcarmenia.am/wp-content/uploads/2024/09/1641.pdf>) և դրանցում ներառվող տվյալների մանրամասները: ԱՄՆ ՄԶԳ կազմակերպության փորձագետի աջակցությամբ, ինչպես նաև «Միներջի» ընկերության կողմից մշակվել են բարեվարքության էլեկտրոնային համակարգի թվայնացման հայեցակարգը:

- Կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների արդյունավետությունն ամրապնդելու նպատակով իրականացված օրենսդրական փոփոխություններով բարելավվել են նաև կուսակցությունների կատարվող նվիրատվությունների, կուսակցությունների պետական ֆինանսավորման, կուսակցությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների վերաբերյալ առկա կարգավորումները: Նախընտրական գործընթացում կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի փոխարեն այսուհետ իրականացնելու է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

- Բարելավվել են նվերների ընդունման սահմանափակումների իրացման կառուցակարգերը. համապատասխան ենթաօրենսդրական ակտերի ընդունմամբ որոնցով ամբողջացվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվերներ ընդունելու սահմանափակումների, օրենքով սահմանված դեպքերում պետության սեփականությունը դարձող նվերների հետագա ճակատագիրը որոշելու վերաբերյալ կարգավորումները:

Նվերների ռեեստրի գործարկումը հնարավոր չդարձավ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորման կասեցման պատճառով, սակայն մինչև Ռեեստրի գործարկումը նվերների հաշվառման գործընթացը կազմակերպվում է ԿԿՀ մշակած էլեկտրոնային ձևաթղթերի լրացման միջոցով: 2024 թվականի ընթացքում հաշվառվել է 30 նվեր, որոնց ձևաթղթերը հրապարակված են ԿԿՀ կայքէջում:

- Մշակվել են լոբբիստական գործունեության թափանցիկության վերաբերյալ կարգավորումներ: Ընտրական համակարգերի միջազգային հաստատության (IFES) աջակցությամբ՝ վերձինիս կողմից ներկայացված միջազգային փորձագետի կողմից իրականացվել է լոբբիստական գործունեության վերաբերյալ միջազգային փորձի համապարփակ ուսումնասիրություն: IFES-ի աջակցությամբ ներգրավվել է նաև ազգային փորձագետ, ում կողմից մշակվել է «Լոբբիստական գործունեության մասին» օրենքի նախագիծը:

➤ **ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱԿԱԶԴԻՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

Նշյալ ռազմավարական նպատակի և դրա վեց մասնավոր նպատակների համար սահմանված են հետևյալ ակնկալվող վերջնարդյունքները՝

1. Փոփոխված է Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորման կարգը, կոմիտեի հաստիքները 80 %-ով համալրված են:
2. Կատարելագործված և արդիականացված են կոռուպցիայի հակազդման մարմիններում գործող էլեկտրոնային գործիքները և ներդրված են նոր էլեկտրոնային գործիքակազմեր:
3. Կոռուպցիայի հակազդման իրավապահ մարմիններում ներդրված են վերապատրաստման/պատրաստման ծրագրերը: 2025 թվականի ավարտին դատախազների առնվազն 60%-ը վերապատրաստվել է:
4. Մշակված են կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության համապարփակ մեթոդիկա և ուղեցույցներ, ինչպես նաև հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների և դատավորների կողմից քննվող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերի առանձնահատկություններով պայմանավորված մեթոդական ուղեցույցներ են մշակվել:
5. Մշակված է կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության վարման միասնական կարգ:
6. Տնտեսագիտական/ֆինանսական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետները ներգրավվել են կոռուպցիայի հակազդման իրավապահ բոլոր մարմինների, ինչպես նաև հակակոռուպցիոն դատարանների աշխատանքներին:
7. Հակակոռուպցիոն դատարանների դատավորների առնվազն 50 %-ը վերապատրաստվել է, իսկ մյուս դատարանների դատավորների առնվազն 80 %-ը վերապատրաստվել է կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ թեմաներով:
8. Կատարելագործված է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտը, մշակված են և կիրառվում են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ մեթոդիկան և ուղեցույցները, ընդլայնվել և արդիականացվել են նշված ոլորտում փոխօգնության մեխանիզմները:
9. Կատարելագործված և արդիականացված է ազդարարման համակարգը:
10. Ներդրված են ազդարարման վիճակագրության միասնական և պարտադիր կանոնները, ընդլայնվել է վիճակագրություն վարող սուբյեկտների շրջանակը, վիճակագրության մեջ արտացոլված են օրենսդրությամբ սահմանված հստակ և արժանահավատ տվյալներ:

11. Ներդրված են ազդարարման վարույթի օբյեկտիվությունը, հիմնավորվածությունը ապահովող, ազդարարների իրավունքների արդյունավետ պաշտպանությունը ապահովող անհրաժեշտ կառուցակարգերը:

Փաստացի գրացված արդյունքների առնչությամբ հարկ է նշել հետևյալը.

- Հակակոռուպցիոն կոմիտեի ինստիտուցիոնալ հզորացման շրջանակում թափուր հաստիքների համալրման նպատակով անցկացվել են բազմաթիվ մրցույթներ. 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հակակոռուպցիոն կոմիտեում օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող 120 պաշտոններից համալրված է 77-ը, ինքնավար 80 պաշտոններից՝ 71-ը: 2024 թվականի ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թափուր հաստիքներում նշանակվել են 26 թեկնածու՝ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող և 24 թեկնածու՝ ինքնավար պաշտոններում:

- Կոռուպցիայի հակազդման իրավապահ մարմինների համար նախատեսված վերապատրաստումների արդյունքում ապահովվել է գրեթե 30 տոկոս քննիչների մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին: 2024 թվականին սահմանված կարգով վերապատրաստում են անցել 133 դատախազ: Ապահովվել է մասնակցություն նաև միջազգային վերապատրաստումներին:

- Հակակոռուպցիոն կոմիտեում ներգրավված է 4 փորձագետ, որից երկուսը փորձագետ–տնտեսագետ են: Վերջիններիս հետ կնքվել են քաղաքացիաիրավական պայմանագրեր: Հակակոռուպցիոն կոմիտեում նախատեսվել են ավագ օպերիվազոր-տնտեսագետի, օպերիվազոր-տնտեսագետի, ավագ օպերիվազոր-կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետի, օպերիվազոր-կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետի հաստիքները:

- 2024 թվականի ընթացքում Արդարադատության ակադեմիայում վերապատրաստվել են Հակակոռուպցիոն դատարանի 15 դատավոր /94%/ (1 դատավոր չի վերապատրաստվել, քանի որ ընթացիկ տարում Արդարադատության ակադեմիայում անցել է մինչ նշանակվելը մասնագիտական պատրաստում), Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի 12 դատավոր /100%/ և Վճռաբեկ դատարանի Հակակոռուպցիոն պալատի 10 դատավոր/100%/:

- Գույքագրվել են ազդարարման համակարգի հետ կապված գործնական խնդիրները: Մշակվել են «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի, «Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը:

➤ **ՀԱԿԱԿՈՐՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

ռազմավարական նպատակի շրջանակում սահմանված են հետևյալ ակնկալվող վերջնարդյունքները՝

1. Ուսումնական հաստատություններում ներդրվել և հետևողականորեն իրականացվում են էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն կրթական ծրագրեր՝ նպաստելով հակակոռուպցիոն պայքարի վերաբերյալ գիտելիքների փոխանցմանը, կոռուպցիայի՝ որպես բացասական երևույթ ընկալման կայուն հիմքերի ստեղծմանը:

2. Ուսումնական հաստատությունների անձնակազմը տիրապետում է հակակոռուպցիոն պայքարի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների, ընկալումների և հմտությունների:

3. Վերանայված առարկայական ծրագրերով կրթական գործընթացի կազմակերպումը ապահովում է արդյունավետ հակակոռուպցիոն կրթության իրականացումը՝ այդ թվում կոռուպցիայի կանխարգելմանն ու դրա դեմ պայքարին ուղղված մասնագիտացված կրթությունը:

4. Ներդրվել են հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացման գործուն մեխանիզմներ:

5. Ներդրվել և հետևողականորեն իրացվում է հակակոռուպցիոն հանրային հաղորդակցության և իրազեկման գործողությունները ծրագիրը՝ ապահովելով հասարակության լայն շերտերի իրազեկումը և տեղեկացվածությունը՝ նպաստելով կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքի արմատավորմանը:

Փաստացի գրացված արդյունքների առնչությամբ հարկ է նշել հետևյալը.

- Հակակոռուպցիոն թեմայի բովանդակությունը նախադպրոցական կրթական հիմնական ծրագրերի ավագ խմբում ներկայացված է «Իմ իրավունքներն ու պարտականությունները» թեմայի համատեքստում՝ հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները: Այս պահին ծրագիրը ներդրված է և իրականացվում է ՀՀ բոլոր մարզերը և Երևան քաղաքը ընդգրկող 542 նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

- Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների համար մշակվել է էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստումների ծրագիր 2024 թվականին վերապատրաստվել է շուրջ 1500 մանկավարժական աշխատող, ներառյալ ՀՀ 4 մարզերի և Երևան քաղաքի 20 ՆՈՒՀ-երում, որոնցից 10-ը գյուղական համայնքներում:

- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի մայիսի 7-ի N 38-Ն հրամանով հաստատված «Հասարակագիտություն» առարկայի առարկայական լրամշակված ծրագրերում ներառված է հակակոռուպցիոն բաղադրիչը: ԿԿՀ-ն՝ որպես գործողության համակատարող մարմին, մշակել է «Հանրակրթությունում հակակոռուպցիոն կրթության ներդրման հայեցակարգի և մեթոդական ձեռնարկի» նախագիծը՝ նախատեսված կրթության կազմակերպիչների, հանրակրթական դպրոցների

ուսուցիչների և հակակոռուպցիոն, ինչպես նաև ժողովրդավարության խմբակներ վարողների համար: Հանրակրթությունում հակակոռուպցիոն կրթության հայեցակարգն ու մեթոդական ձեռնարկը առանձին բաժիններով ներկայացնում է հակակոռուպցիոն կրթության առաքելությունը, նպատակները, նպատակային ցուցանիշները, խնդիրները, ուղղորդող սկզբունքները, թիրախային խմբերը:

• Մի շարք ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում տարբեր կրթական ծրագրերի ուսումնական պլաններով մշակված և 2022-2023 ուսումնական տարում ներդրված են հակակոռուպցիոն բնագավառին առնչվող (կամընտրական կամ պարտադիր) դասընթացներ: 2024 թվականին մշակվել է տիպային դասընթացի մոդել, որն ներկայացվել է բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ վերջիններիս համաձայնությամբ պարտադիր ուսումնական ծրագրի մեջ ընդգրկելու համար:

➤ ԳՈՐԾԱՐԱՐ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ, ԳՈՐԾԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ԲԻԶՆԵՍ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՅՈՒՐԱՑՈՒՄ

Նշյալ ռազմավարական նպատակի և դրա վեց մասնավոր նպատակների համար սահմանված են հետևյալ ակնկալվող վերջնարդյունքները՝

1. Կորպորատիվ կառավարման նոր կանոնագիրքը հաստատված է և կիրառվում է: Կանոնագիրքը կիրառող առևտրային կազմակերպություններում ներդրված են կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ կառուցակարգեր և մեխանիզմներ:
2. 2026 թ. ավարտին բոլոր պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում նոր կորպորատիվ կառավարման կանոնագիրքը պարտադիր կերպով կիրառվում է: Բոլոր պետական և համայնքային առևտրային կազմակերպություններում ներդրված են հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերը:
3. Կոռուպցիոն ռիսկերի գնահատման և մեղմացման ծրագրերը հաստատված են և կիրառվել են առնվազն 5 պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում:
4. Ներպետական իրավական համակարգում ներդրված են մասնավոր հատվածում կոռուպցիայի կանխարգելման նոր մեխանիզմներ, գործիքակազմեր և կառուցակարգեր:
5. Մաքսային և հարկային ոլորտներում կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում ներդրված են «խելացի» հակակոռուպցիոն նոր էլեկտրոնային գործիքակազմեր:

6. Կատարելագործված է իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտման ինստիտուտը, մասնավորապես, ներդրված և կիրառվում են իրական շահառուների վերաբերյալ ներկայացված տեղեկությունների արժանահավատության ստուգման միասնական կառուցակարգերը, մշակված և հաստատված է իրավաբանական անձանց ռիսկայնության որոշման մեթոդաբանությունը և տեխնիկական կանոնակարգերը:

7. Օրենսդրորեն բացառված են պետական բարձրաստիճան պաշտոնյաների և նրանց ընտանիքի անդամների ուղղակի և անուղղակի մասնակցությունը պետական գնումների գործընթացներում:

Փաստացի գրացված արդյունքների առնչությամբ հարկ է նշել հետևյալը.

- Էկոնոմիկայի նախարարությունը Ասիական զարգացման բանկի տեխնիկական աջակցությամբ մշակել և շրջանառել է Կորպորատիվ կառավարման նոր կանոնագրքի նախագիծը՝ կորպորատիվ կառավարման միջազգային ստանդարտներ հանդիսացող 2023 թվականին ընդունված G20/SZՋԿ կորպորատիվ կառավարման սկզբունքների հիման վրա: Կորպորատիվ կառավարման նոր կանոնագիրքը հաստատվել է Էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի հուլիսի 30-ի թիվ 1955-Ն հրամանով:

- 2024 թվականի ապրիլի 16-ից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված հարկային մարմնի քննությանը ենթակա հողվածներով հարկ վճարողների պաշտոնատար անձանց կատարած իրավախախտումների գործերով վարույթները հարուցվում և վարվում են հարկային մարմնի էլեկտրոնային համակարգի միջոցով:

- Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից իրականացված Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի գործերի կառավարման էլեկտրոնային համակարգի և պաշտոնական կայքի կատարելագործման, արդիականացման աշխատանքների արդյունքում՝

- կատարելագործվել է գների մոնիթորինգի գործիքակազմը, ինչը նպատակ ունի գների չհիմնավորված բարձրացման, իջեցման կամ պահպանման հնարավոր դեպքերը Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից վերահսկելու և կանխելու,

- կատարելագործվել է մի շարք պետական մարմինների փոխգործելիությունը Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի էլեկտրոնային համակարգի հետ, մասնավորապես ներդրվել են չհայտարարագրված համակենտրոնացումների բացահայտման նոր գործիքներ,

- ապահովվել է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի որոշումների կատարումների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հնարավորությունը՝ հարթակի յուրաքանչյուր օգտատիրոջ մոտ իր մասով համապատասխան պանակներին հասանելիության տրամադրման միջոցով:

• Ավարտվել են էլեկտրոնային գնումների նոր համակարգի տեխնիկական առաջադրանքի նախագծի մշակման աշխատանքները:

• Ֆինանսների նախարարության կողմից մշակվել է իրազեկման միջոցառումների պլան, համաձայն որի՝ Քաղաքացիական հասարակության և լրագրողների համար պարզեցվել է գնումների գործընթացի վերահսկողությունը: Ֆինանսների նախարարության կողմից իրականացվել է շուրջ 17 հանրային իրազեկման միջոցառումներ, այդ թվում՝ հարցազրույցներ, քննարկումներ, սեմինարներ և այլն:

➤ **ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

Ռազմավարական նպատակի և դրա երկու մասնավոր նպատակների համար սահմանված են հետևյալ ակնկալվող վերջնարդյունքները՝

1. Մոնիթորինգի և գնահատման գործընթացը թվայնացվել է, մոնիթորինգի և գնահատման տարեկան և կիսամյակային զեկույցները իրականացվել են հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակի միջոցով:

2. Մոնիթորինգի և գնահատման իրականացման ընթացակարգի հայեցողական դրույթները հստակեցվել են:

3. Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում ներառված են հակակոռուպցիոն բոլոր մարմինները, ՔՀԿ-ի համար նախատեսված 7 տեղերը լրացված են:

4. Սահմանված է կոռուպցիայի դեմ պայքարի ազդեցության և հասարակական ընկալումների պարզման մեթոդաբանությունը, առկա է այդ հարցումների իրականացնող լիազոր մարմին և այգ գործընթացի իրականացման կարգավորումները:

5. Հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգման ձևաչափը և ընթացակարգը հաստատված է:

6. Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի համար պատասխանատու ստորաբաժանումը ունի իր գործունեության արդյունավետ իրականացման համար մարդկային ռեսուրսներ, գործիքակազմ, իսկ աշխատակիցներն ապահովված են իրենց գործառնություններին համարժեք սոցիալական երաշխիքներով:

7. Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուները ամբողջությամբ տիրապետում են իրենց գործառնություններին:

8. Հակակոռուպցիոն ոլորտի ՔՀԿ-ների համար համակարգված ձևով վերապատրաստումներ են իրականացվում:

Փաստացի գրացված արդյունքների առնչությամբ հարկ է նշել հետևյալը.

• Մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023թ. հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծը, որով առաջարկվում է հաստատել 2023-2026թթ. հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի և գնահատման մեթոդաբանությունը ՏՀԶԿ կողմից սահմանված ցուցանիշներին համապատասխան:

• Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների կարողությունները զարգացնելու նպատակով Արդարադատության նախարարությունը մշակել է հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների գործունեության ուղեցույց: Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների համար անցկացվել է վերապատրաստման 2 դասընթաց նախատեսված ժամաքանակին համապատասխան:

Ամփոփելով արդյունքային մոնիթորինգի շրջանակում իրականացված ուսումնասիրության արդյունքները, ըստ ռազմավարական նպատակների, հարկ է նշել հետևյալը.

➤ **ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՍՐԱՊՆԴՈՒՄ**

Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա գործողությունների ծրագրի ընդհանուր 83 գործողությունների մեծ մասի՝ 69 գործողության կատարումը կամ կատարման մեկնարկը նախատեսված է 2024 թվականի համար:

Նշյալ 69 գործողության ամբողջ ծավալով կատարումը անհնար էր նախևառաջ բավարար ռեսուրսների բացակայության պայմաններում: Գործողությունների մեծ մասը նախատեսում է օրենսդրական փոփոխություններ, որի առնչությամբ տարբեր մոտեցումներ էին առկա:

Այսպես,

- մեկնարկել են «Կոռուպցիայի կանխարգելման մասին» միասնական օրենքի նախագծի մշակման աշխատանքները, որը նպատակ ունի ամբողջականացնել բարեվարքության համակարգի տարրերի՝ շահերի բախման, նվերների ընդունման սահմանափակումների, վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների միասնական կիրառման և կառավարման, կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող այլ կառուցակարգերի օրենսդրական կարգավորումները:

- Հանրային իշխանության մարմիններում, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում, պետության կողմից հիմնադրված հիմնադրամներում, 50 և ավելի տոկոս պետության և համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման գործիքակազմի միասնականության ապահովման, իրավասու մարմիններ առաջարկությունների ներկայացման գործառույթները, մեթոդաբանության մշակման և

հաստատման, մասնագիտական խորհրդատվության և մեթոդական աջակցության տրամադրման լիազորությունները ԿԿՀ-ին վերապահելու նպատակով՝ մշակվել են ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը:

- Մշակվել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերը, որով առաջարկվում է «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված առանձին ծառայությունների տեսակների գործունեությունը կարգավորող իրավական ակտերում վերանայել կամ լրացնել շահերի բախման վերաբերյալ առկա կառուցակարգերը՝ դրանք համապատասխանեցնելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի դրույթներին:

- Ընդունվել են հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ստացած և պետության սեփականությունը հանդիսացող նվերների տնօրինման կառուցակարգերի կիրարկման համար անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերը: ԿԿՀ որոշմամբ սահմանվել են նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, Ռեեստրի վարման կարգերը, Ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկը, ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման կարգերը:

- Մշակել է «Լոբբիստական գործունեության մասին» օրենքի նախագիծը:

➤ **ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

- Հակակոռուպցիոն կոմիտեին վերապահված գործառույթների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է երաշխավորել վերջինիս ինստիտուցիոնալ հզորացումը, որն իրենից ներկայացնում է շարունակական աշխատանք՝ Կոմիտեի կարողությունների զարգացման, վերջինիս անկախության, գործունեության թափանցիկության և հաշվետվողականության երաշխիքների ամրապնդման ուղղությամբ: Այսպես, 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հակակոռուպցիոն կոմիտեում օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող 120 պաշտոններից համալրված է 77-ը, ինքնավար 80 պաշտոններից՝ 71-ը:

2024 թվականի ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թափուր հաստիքներում նշանակվել են 26 թեկնածու՝ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող և 24 թեկնածու՝ ինքնավար պաշտոններում:

- 2024 թվականի ընթացքում մրցույթների արդյունքում հաղթող ճանաչված և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանցից 11-ը համապատասխան վերապատրաստման դասընթաց են անցել ՆԳՆ կրթահամալիրում, իսկ ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանցից 7-ը մասնագիտական պատրաստում են անցել Արդարադատության ակադեմիայում:

2024 թվականին սահմանված կարգով պարտադիր վերապատրաստում են անցել 19 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք՝ Արդարադատության ակադեմիայում, իսկ օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման 35 ծառայողներ՝ ՆԳՆ կրթահամալիրում:

- Հակակոռուպցիոն կոմիտեում ներգրավված է 4 փորձագետ, որից երկուսը փորձագետ-տնտեսագետ են: Հակակոռուպցիոն կոմիտեում նախատեսվել են ավագ օպերիվագոր-տնտեսագետի, օպերիվագոր-տնտեսագետի, ավագ օպերիվագոր-կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետի, օպերիվագոր-կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետի հաստիքները:

- 2024 թվականի 2-րդ կիսամյակում իրականացված կարիքների գնահատման հիման վրա Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կազմում ներգրավվել է մեկ տնտեսագետ: Արդյունքում վարչության կազմում ընդգրկված են թվով 10 տնտեսագետներ, ովքեր իրականացնում են եկամուտ-ծախս հարաբերակցության վերլուծություն:

- Կատարված կարիքների գնահատման հիման վրա դեռևս առկա է անհրաժեշտություն ներգրավել տնտեսագետ/ֆինանսիստ փորձագետներ Գլխավոր դատախազության Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդաստական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության համար:

- 2024 թվականի ընթացքում Արդարադատության ակադեմիայում վերապատրաստվել են Հակակոռուպցիոն դատարանի 15 դատավոր /94/ (1 դատավոր չի վերապատրաստվել, քանի որ ընթացիկ տարում Արդարադատության ակադեմիայում անցել է մինչ նշանակվելը մասնագիտական պատրաստում), Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի 12 դատավոր /100%/ և Վճռաբեկ դատարանի Հակակոռուպցիոն պալատի 10 դատավոր /100%/:

- Հարկ է նշել, որ ամբողջությամբ ներդրված չէ կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության միասնական կարգը: Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության օժանդակությամբ մշակվել և ներկայումս ավարտական փուլին է հասցվել դատախազի աշխատանքի վիճակագրական տվյալների վերաբերյալ էլեկտրոնային վիճակագրության համակարգը, որը, ի թիվս այլնի, ներառելու է յուրաքանչյուր կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վիճակագրական տվյալներ: Այնուամենայնիվ, վիճակագրության վարման միասնական կարգը հնարավոր է ապահովել միայն իրականացվող աշխատանքները Գլխավոր

դատախազության և Արդարադատության նախարարության կողմից համապատասխանաբար մինչդատական և դատական վարույթների մասով փոխհամաձայնեցված համակարգելու միջոցով:

➤ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅԱՆՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Հակակոռուպցիոն կրթության կազմակերպման ոլորտում համակարգված և միասնական քաղաքականության վարելու, ինչպես նաև կրթական համակարգի բոլոր մակարդակներում հակակոռուպցիոն կրթության որակի և արդյունավետության բարձրացման նպատակով խիստ կարևորվում է շարունակական հակակոռուպցիոն կրթության միասնական մեթոդաբանության ապահովումը մանկապարտեզ-դպրոց-բուհ-հետբուհական կրթական համակարգի միջոցով:

Այսպես,

- Կառավարության 744-Ն որոշմամբ հաստատվել է «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը», որը սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների (ըստ տարիքային խմբերի) զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, նրանց ներկայացվող վերջնարդյունքները, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքի ապահովման հիմքերը: Չափորոշիչի ներդրման նպատակով ԿԳՄՍ նախարարի մի շարք հրամաններով հաստատվել են նախադպրոցական կրթական համալիր ծրագրերը տարիքային բոլոր խմբերի համար: Պիլոտային նախադպրոցական ուսումնական հաստատություններ ընտրելու համար որպես չափանիշ է սահմանվել նոր չափորոշիչի անցումը հաստատության կողմից: Ծրագիրը ներդրվել և իրականացվում է ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքը ընդգրկող 542 նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

- Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների համար մշակվել է էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստումների ծրագիրը: 2024 թվականին վերապատրաստվել է շուրջ 1500 մանկավարժական աշխատող, ներառյալ՝ ՀՀ 4 մարզերի և Երևան քաղաքի 20 ՆՈՒՀ-երում, որոնցից 10-ը՝ գյուղական համայնքներում:

- Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) կայքէջում (<https://lib.armedu.am/category/33>) գործում է հակակոռուպցիոն թեմատիկ գրականության աղբյուրների համար նախատեսված առանձին բաժին, որտեղ համապատասխան հակակոռուպցիոն թեմատիկ նյութերով համալրելու աշխատանքներ են իրականացվում:

- Ինչ վերաբերում է հակակոռուպցիոն հանրային հաղորդակցության և իրազեկման գործողությունների ծրագիր, այդ թվում՝ հանրային իրազեկման ծրագրի իրականացման արդյունքների գնահատման համակարգ մշակելուն և ներդնելուն, հարկ է նշել, որ

2024 թվականի երկրորդ կիսամյակի համար նախատեսված հանրային հաղորդակցության և իրազեկման ծրագրերի արդյունքների պարբերական գնահատման համակարգը դեռևս ավարտին չի հասցվել: Չի իրականացվել նաև կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն և չի հրապարակվել արդյունքների գնահատման զեկույց:

➤ ԳՈՐԾԱՐԱՐ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ, ԳՈՐԾԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ԲԻԶՆԵՍ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՅՈՒՐԱՑՈՒՄ

Մասնավոր ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի կառուցակարգերի ամրապնդման ու կատարելագործման նպատակով

- Մշակվել և հաստատվել է Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը՝ կորպորատիվ կառավարման միջազգային ստանդարտներ հանդիսացող 2023 թվականին ընդունված G20/SՀԶԿ կորպորատիվ կառավարման սկզբունքների հիման վրա: Բորսայի կանոններով՝ Կանոնագիրքը դեռևս պարտադիր է միայն ցուցակված ընկերությունների համար: Նույն կանոններով սահմանված են վերահսկողության մեխանիզմներ, այդ թվում արժեթղթերի ցուցակման կասեցում և ապացուցակում:

- Ֆինանսների նախարարությունը նախաձեռնել է «Գնումների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակման գործընթաց: Նախագծով նախատեսվում է ներդնել շահերի բախման ավելի առարկայական գործիքակազմ: Պետական գնումների գործընթացներում պետական բարձրաստիճան պաշտոնյաների և նրանց ընտանիքի անդամների, վերջիններիս հետ փոխկապակցված անձանց ուղղակի և անուղղակի մասնակցությունը բացառող համապատասխան օրենսդրական փոփոխությունները դեռևս ընթացքի մեջ են:

- Դեռևս մշակման փուլում են պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների համար նոր կորպորատիվ կառավարման կանոնագիրք կիրառելու պահանջ նախատեսող իրավական ակտերի նախագծերը:

- Դեռևս օրենսդրական մակարդակով ԿԿՀ-ին չի վերապահվել պետական և համայնքային կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, գնահատման և կառավարման մեթոդաբանության մշակման և հաստատման իրավասություն:

➤ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Ռազմավարական նպատակի շրջանակում 2024 թվականի համար նախատեսված է մոնիթորինգի և գնահատման մեթոդական փաստաթղթերի վերանայում՝ բոլոր հնարավոր բացերի վերհանման և մոնիթորինգի/գնահատման մեթոդաբանության լավարկման նպատակով: Այսպես, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-Լ

որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծը, որով առաջարկվում է հաստատել 2023-2026թթ. հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի և գնահատման մեթոդաբանությունը, մշակվել, շրջանառվել, այնուհետև ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:

Հարկ է նշել, որ ֆինանսական ռեսուրսների բացակայության պատճառով համապատասխան ընթացք չեն ստացել Հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակի գործարկման աշխատանքները:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐՁԱՆՔՆԵՐ

Միջոցառման համարը	Կատարման կարգավիճակ			
	Կատարված է	Կատարված է մեծամասամբ	Կատարված է մասնակի	Կատարված չէ
1.1				
1.2				
1.3				
1.4				
1.5				
1.6				
1.7				
1.8				
1.9				
1.10				
1.13				
1.14				
1.15				
1.16				
1.17				
1.18				
1.19				
1.20				
1.21				
1.23				

1.25				
2.1				
2.2				
2.4				
2.6				
2.7				
2.8				
2.10				
2.11				
2.12				
2.13				
2.14				
2.17				
2.18				
2.19				
2.20				
3.1				
3.2				
3.3				
3.4				
3.5				
3.6				
3.7				
3.8				

3.9	Green			
3.10	Green			
3.11	Green			
3.12		Yellow		
3.13	Green			
3.14		Yellow		
4.1	Green			
4.2			Brown	
4.3		Yellow		
4.4			Brown	
4.5	Green			
4.7			Brown	
4.8			Brown	
4.9	Green			
4.10			Brown	
4.11	Green			
4.13	Green			
4.14	Green			
4.15	Green			
5.1				Red
5.2			Brown	
5.3			Brown	
5.4			Brown	
5.5	Green			

5.6				
Ընդամենը (100%)	36	11	21	1
<p>Կատարողականի ընդհանուր ցուցանիշը (%) Օանթագրություն հաշվարկն իրականացվել է վարիացիոն շարքի համակշռված միջինի բանաձևով $(36 \times 1 + 11 \times 0.75 + 21 \times 0.5 + 1 \times 0) / 69 \times 100$</p>	<p>2023-2026 թթ. հակակոռուպցիոն ռազմավարության 2024 թվականի տարեկան կատարողական՝ 79,3%:</p>			